



Հարգելի՛ ընթերցող.


ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*





НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА  
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

ИГИТ ГАРИБЯН

***ГОРОД-КРЕПОСТЬ ЛОРЭ  
И ЕГО РАСКОПКИ***

ЕРЕВАН  
ИЗДАТЕЛЬСТВО "ГИТУТЮН" НАН РА  
2009

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԻԳԻԹ ՂԱՐԻԲՅԱՆ

***ՀՈՌԵ ԲԵՐԴԱՔԱՂԱՔԸ  
ԵՎ ՆՐԱ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ***

ԵՐԵՎԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
2009

ՀՏԴ 941 (479.25):902/904

ԳՄԴ 63.3(2Հ)+63.4(2Հ)

Ղ-471

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհուրդների որոշմամբ

Խմբագիր՝ պ.գ.թ. Գր.Հ. Կարախանյան

Ղարիբյան Իգիթ Գարեգինի

Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները:

Ղ-471 Եր., ՀՀ ԳԱԱ „Գիտություն“ հրատ., 2009, էջ 290 (+ 60 աղյուսակ)

Աշխատությունը նվիրված է Գուգարաց աշխարհի Կյուրիկյան թագավորության առաջացմանը, նրա մայրաքաղաք Լոռեի հիմնադրմանն ու զարգացմանը, բերդաքաղաքի նյութական մշակույթին՝ քաղաքաշինության, արհեստի և առևտրի ուսումնասիրությանը: Գրքում քննարկվում են Հյուսիսային Հայաստանի տնտեսական կապերը հարևան երկրների կենտրոնների հետ, ազդեցություններն ու մշակութային փոխներթափանցումները:

Գիրքը ստեղծվել է հնավայրի պարբերական պեղումների արդյունքների և մատենագրական վկայությունների համադրելի նյութերի հենքի վրա: Աշխատությունը պատկերազարդված է գծագրերով և լուսանկարներով:

Նախատեսվում է պատմաբանների, ճարտարապետների, նյութական մշակույթի ուսումնասիրությանը զբաղվողների և ընթերցող լայն շրջանների համար:

ԳՄԴ 63.3(2Հ)+63.4(2Հ)

ISBN 978-5-8080-0802-1

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն

© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

© Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ

## ԱՌԱՋԱԲԱՆ

Լոռե բերդաքաղաքը միջնադարյան Հայաստանի Գուգարաց աշխարհի ամենանշանավոր պատմահնագիտական հուշարձաններից մեկն է: Այդ նշանավոր, ռազմական տեսակետից համարյա անառիկ քաղաք-ամրոցի ավերակները գտնվում են Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի մոտակայքում՝ նրանից ավտոճանապարհով 5 կիլոմետր հեռավորությամբ, Զորագետ և Մխիթանա (Ուռուտ) գետերի միախառնման տեղում գոյացած զառիվեր ժայռերով եզերվող հարթ հրվանդանի վրա:

Քաղաք-ամրոցը հիմնադրվել է XI դարի առաջին տասնամյակներին. նույն դարի 50-ական թվականներից ծառայել է նախ Կյուրիկյան, ապա Զաքարյան ավատական իշխանությունների մայրաքաղաք-ամրոց: Դարեր շարունակ կրկնվող զինաբախումների հետևանքով քաղաք-ամրոցն ավերվել է: Այժմ տեղում պահպանվել են միջնաբերդի բաղեղապատ բարձր պարսպի մեծ մասը, կոմունալ-կենցաղային և կրոնական կառույցների ավերակները:

Հայաստանում միջնադարյան հնավայրերից պեղվել են հիմնականում միջնադարյան Հայաստանի մայրաքաղաքներ Անին և Դվինը (վերջինիս պեղումները շարունակվում են), ռազմաստրատեգիական առումով ուշագրավ Գառնին, Ամբերդը և Բջին (որի պեղումները շարունակվում են): Տակավին չեն ուսումնասիրվել միջնադարյան Ֆեոդալական մանր թագավորությունների և իշխանությունների կենտրոնները: Բնականաբար առկա նյութը հնարավորություն չի ընձեռում ամբողջովին լուսաբանելու միջնադարյան Հայաստանի նախարարությունների նիստուկացը, կենցաղը, արհեստների ու առևտրի զարգացման մակարդակը և վերջապես շինարարական գործը թե՛ ամրոցաշինության և թե՛ կոմունալ-կենցաղային կառույցների ուսումնասիրության ոլորտում:

Այդօրինակ խնդիրների բացահայտման համար շահեկան կլինեն Բաղաբերդի, Տավուշի, Տիկնունու, Կայենի, Կայծոնի, Հրաշակաբերդի և այլ միջնադարյան կենտրոնների հնագիտական ուսումնասիրությունը, որը ցավոք տակավին չի կատարվել: Այդ առումով շահեկան ձեռքբերում է Տաշիր-Ձորագետի (Կյուրիկյան թագավորության կենտրոն)՝ Լոռե քաղաքամրոցի հնագիտական ուսումնասիրությունը, որին և նվիրված է սույն աշխատությունը:

Հայտնի է, որ միջնադարյան թագավորությունների հասարակական-քաղաքական կյանքում ռազմական առումով կարևոր դեր են խաղացել անառիկ ամրոցները: Այդ նպատակով է, որ Փեոդալական հասարակության անկապտելի մասն է կազմում միջնադարյան քաղաքների և ամրոցների պատմության ուսումնասիրությունը: Ուստի Լոռե քաղաք-ամրոցի պատմահնագիտական ուսումնասիրությունը այս առումով ևս կարևոր նշանակություն ունի միջնադարյան Հայաստանի պատմության ուսումնասիրության համար: Քանզի XI-XIII և հետագա դարերում Լոռեն հանդիսացել է Հայաստանի անառիկ ամրոցներից և միջին մեծության քաղաքներից մեկը:

Լոռե քաղաքը, լինելով միջնադարյան Հայաստանի կարևոր վարչական, քաղաքական և մշակութային կենտրոններից մեկը, չէր կարող դուրս մնալ եվրոպացի ճանապարհորդների և տեղազրոյների ուսումնասիրության տեսադաստից: XVIII դարի առաջին տասնամյակից ամենատարբեր առիթներով հիշատակվում է Լոռե քաղաքը տարբեր հետաքրքրությունների տեր մասնագետների երկերում, ճամփորդական ուշագրավ նոթերում:

1807 թվականի հոկտեմբերին Ֆրանսիայի կայսր Նապոլեոն Բոնապարտի՝ Պարսկաստան այցելած դեսպան գեներալ Գարդանը գրում է. «Քերքեֆից մինչև Լոռի (Lori) տասնմեկ ժամ, ունի 100 տուն: Լավ մշակված անծայր դաշտեր: Սաղաղ [Սաղաղ] գետը անցնելուց հետո բարձրանում և իջնում ենք ձյունապատ մի սարով՝ հասնելու համար այս գյուղաքաղաքը, որը Տրապիզոնից չորս օրվա կարավանի ճանապարհ է»:<sup>1</sup> Այսպիսով, Լոռե ամրոցը դեռևս 1807 թվին որոշ

չափով պահպանում էր իր նշանակությունը, որպես բնակավայր: Գեներալ Գարդանը Լոռեն անվանում է «գյուղաքաղաք», թեև այնտեղ առկա էր ընդամենը 100 տուն:

Այս վկայությունից շուրջ տաս տարի անց՝ 1817 թվի ապրիլին, Լոռե բերդաքաղաքի հնավայրով է ընթացել ռուսաց ցարի դեսպան Ալ.Պ. Երմոլովի դիվանագիտական առաքելությունը Պարսկաստան: Վերջինիս դեսպանության անդամներից մեկը՝ Մորից Ֆոն Կոցբերուն, նկարագրելով Լոռե բերդաքաղաքի ավերակները, դառնում է որոշ պատմական իրողությունների: Ուշադրության առնելով նրա տեղեկատվության կարևորությունը՝ այն ներկայացնում ենք ամբողջությամբ. «Այս ժայռերի, — գրում է Ֆոն Կոցբերուն, — ուշագրավ մի հակադրություն են Լոռիի մերձակա ավերակները: Լոռին փոքր Հայաստանի հին մայրաքաղաքն էր, որ նախապես պարունակում էր վեց հազար տուն, ապաստարան էր թագավորների, և ասում են, թե դիմադրել է յոթ տարի մի պաշարման ժամանակ: Այժմ մնում է միայն երեսուն տուն: Ընդհանրապես տակավին մնում են հայկական մեծության բազմաթիվ մնացորդներ»:<sup>1</sup>

Մեզ անհայտ են այն աղբյուրները, որոնց էջերից օգտվել է Ֆոն Կոցբերուն: Ըստ նրա՝ Լոռեի նախկին բնակչության թիվը կազմել է վեց հազար տուն և որ յոթ տարի դիմադրել է մի պաշարման ժամանակ: Ակներևաբար ճանապարհորդն իր տվյալները քաղել է բանավոր զրույցներից, որոնք ի դեպ քիչ են համապատասխանում իրականությանը: Այն վկայությունները, որ իր այցելության պահին Լոռեն ընդամենը 30 տուն ուներ, կամ դեռևս պահպանվում են հնությունները, առանց վերապահության հավաստի պետք է համարել: Թեև պարզ չի դառնում, թե ինչու 10 տարվա ընդմիջումից հետո Լոռեի բնակչության թիվը հասնում է նվազագույնի՝ 100-ից 30-ի: Իրողությունը թերևս բացատրվում է նրանով, որ Լոռեն այս շրջանում կորցրել էր իր նշանակությունը, և նրա բնակչության մեծ մասը հեռանում և հանգրվանում էր բնակչության համար առավել հարմար վայրերում:

<sup>1</sup> Հովհաննես Հակոբյան, Ուղեգրություններ, Երևան, 1934, հ. 2, էջ 94:

<sup>1</sup> Հովհաննես Հակոբյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 515, և համապատասխան ծանոթագրությունները:

Այս իրողությունը պայմանավորված էր նաև նրանով, որ XIX դարի սկզբում բերդը զրկվել էր խմելու ջրից, որը նախկինում ստանում էր կավե փողրակներով բերված ջրատարով: Վերջինիս խափանումը առիթ դարձավ, որ բնակչությունը հեռանա բերդից և վերջապես XX դարի առաջին տասնամյակներում ամբողջովին լքի զբաղեցրած տարածքը:

Այնուհետև, XIX դարի 30-ական թվականներին Լոռե ամրոց է այցելում հայ տեղագրողներից Սարգիս Զալալյանցը, երբ տակավին կիսականգուն էին ճարտարապետական հուշարձաններից մի քանիսը: Նկարագրություն մեջ ասվում է. «Քաղաքն որ յանուն գաւառին կոչի Լոռի շինեալ է ի մէջ երկուց ձորոց, որոց ծայրքն միացեալ ի մի յերկից կողմանց քաղաքին զվիհ անառիկ պատեն: Իսկ արևմտյան կողմն ամրացեալ է պարսպաւ ... որոյ երկայնութիւնն (պարսպի – Ի.Ղ.) է 406 կանգուն և լայնութիւնն 36, ի մէջն երեւին նշանք շուկայից և զայլոց մեծամեծ շինուածոց. ունի զչորս եկեղեցիս աւերակս, և զմի անորոշ գմբէթ, զորմէ աւանդութեամբ ասեն, թէ տուն է օրիորդաց թագաւորին Դաւթի: Երեք բաղանեաց տեղիք երեւին ի սմա և տունք եղեալ են ի սմա խիտ առ խիտ: Ի կողմանէ արեւելից ունի ընդերկրեայ ճանապարհ ջրգող անուանեալ և մերձ ջրոյն արուարձան ընդարձակ արտաքոյ պարսպին ի մէջ ձորոյն. նմանապէս երեւին նշանք բազմաւոր տանց յարուարձանս բերդին. Աղշահար անուանեալ, յորս են աւերեալ եկեղեցիք, բաղնիք և հանգստարանք երեւելի անձանց»:<sup>1</sup>

Ս. Զալալյանցը պարսպի մոտ՝ խաչքարի վրա, նշմարել է մի արձանագրություն, որն ազդարարում է. «Ի թուին ՈԶ-ին (680+551=1231) ես Սմբատ Բեչքէնայ որդի Սիլառի խազինատար վարկիր ի հնոց, ի վերջն տաճիկ բեռն Գիրգինոյ էրաճուկն այէ սանախարփ զակն ի մովսաւալին երեսն վասն Շահրնշահի Զաքարէի երկար կենաց, որք խափանեն նզովին Աստուծոյ»: Այնուհետև Զալալյանցը շարունակում է. «... Հանդէպ այսր քաղաքի յայնկոյս ձորոյն ի կողմն արեւելից է

աւերակն Ամրակից, զանունն առեալ ի տեղոյն, որովհետև կից է այսր ամուր քաղաքին: Ի կողմն հիւսիսոյ է աւերակն Դարմանաթաղ, նմանապէս առեալ զանունն ի տեղոյն: Ի վերայ ջրոց որք իջանեն յերկուց կողմանց գոն կամուրջք, յորոց մին է այժմ աւեր»:<sup>1</sup>

Ս. Զալալյանցի հիշատակած արվարձանների անունները, հավանաբար, տեղի բնակչության կողմից կնքված անվանումներ են, որոնք Զալալյանցի հետևողությամբ նույնությամբ վերարտադրել են հետագա աշխատասիրողները: Ըստ Զալալյանցի, փաստորեն, Լոռե քաղաքի ընդգրկած տարածքը անջատված է միջնաբերդից և անվանված Աղշահար արվարձան, մի բան, որ իրականությունը չի համապատասխանում:

Ս. Զալալյանցից տարիներ անց Լոռե բերդ է այցելել ոռու ճանապարհորդ, «Վրաստան և Հայաստան» գրքի հեղինակ Ն. Մուրավյովը, որը, դառնալով ամրոցի տեղանքի հաջող ընտրությունը, վկայում է, որ 1826-1828 թվականների ոռուպարսկական պատերազմի միջոցին հանդիսացել է շրջակա գյուղերի բնակիչների ապաստան: Հեղինակի այցելած ժամանակ բերդում բնակվել են ընդամենը հինգ ընտանիք, որոնք զբաղվել են գերազանցապես մեղվապահությամբ: Լոռե քաղաքի ավերակները ներկայացնող տեղեկագրական աշխատություններից շահեկանորեն առանձնանում է Ն. Մուրավյովի «Грузия и Армения» արժեքավոր աշխատությունը:

Ն. Մուրավյովն իրեն հատուկ հնազետի ակնառու հմտությամբ ներկայացնում է նաև կանգուն շենքերից մեկը: Իր հատակագծային կառուցվածքով այն նմանեցնում է հունական եկեղեցու: Հայտնում է նաև մեկ այլ եկեղեցու գոյության մասին, որը, ըստ հեղինակի, հայկական ճարտարապետությունը բնորոշ հուշարձան է. ունի խաչվող կամարներ ու բարձր գմբեթ:<sup>2</sup>

Ի տարբերություն վերը հիշատակված ճանապարհորդների, տեղագիրների, որոնք առավելապես նկարագրել են ամրոցի

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 121-122: Ակներևարար երևում է, որ Ս. Զալալյանցի կողմից կատարված վերձանությունը բովանդակությունը հարազատ չէ բնագրին, ուստի այն պիտի ընդունել վերապահությամբ (ծանոթ. հեղինակի):

<sup>2</sup> Н. Муравьев, Грузия и Армения. Ст. Петербург. 1848, էջ 295-297:

<sup>1</sup> Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, աշխատասիրությամբ Սարգսի վարդապետի Զալալյանց, միաբանի վանաց Սանահնի ի 1841 ամի, մասն Ա, 1842, ք. Տփլիս, էջ 121:

գրաված դիրքը, XIX դարի վերջին Լոռե ամրոց այցելած Իսահակ Հարությունյանը հանգամանորեն է ներկայացնում խնդրո առարկա հնավայրը:<sup>1</sup> Նա միակն է, որ մասնագիտորեն բնութագրել է ճարտարապետական կառույցները: Թեև Հարությունյանի նկարագրությունից անցել է շուրջ 100 տարի, սակայն այժմ էլ կարելի է լրիվ գաղափար կազմել նրա կողմից հիշատակված կիսավեր շենքերի մասին: Հեղինակը հանգամանորեն նկարագրել է այժմ ամբողջովին քանդված մատուռ-գամբարանը, որի մուտքի մոտ նկատել է նաև թվակիր մի արձանագրության բեկոր: Դիմենք Լոռե բերդի Չորագետի կիրճի եզրի՝ Ի. Հարությունյանի նկարագրությանը. «Նույն կողմն են գտնվում այն կամարածև շինություն հետքերը, որի որմերի մեջ գտնվում են ավազանանման խորաններ. որմի մեջ շինված են կավից շինված երկկարգ խողովակներ, թե ըստ ձևիև թե ըստ ավանդության այդ խորանները համարվում են բաղնիքներ...: Բաղնիքից 5-6 սաժեն հեռու, բերդի նույն կողմը գտնվում են մի շենքի հետքեր, որ ըստ ավանդության՝ թագավորական պալատ է եղել...»:<sup>2</sup> Գյուղի երեցփոխանի նոր տան բուխարու վրա Հարությունյանը նշմարել է հետևյալ արձանագրությունը. «Այս է յանգիստ տիկնոջս ... յիշեցէք ի ՔՍ ի թուին ՉԼԲ (722+551=1273)»:<sup>3</sup> Այս ուղագրավ արձանագրությունը չի պահպանվել, անհայտ կորել է:

Ի. Հարությունյանը տեղեկացնում է նույնիսկ այնպիսի հուշարձանների գոյություն մասին, որոնց հետքերն անգամ չեն երևում տեղանքն ուսումնասիրելիս: Նա գրում է. «Արտաքին պարսպի աշտարակների մեջ եղել է մի եկեղեցի, որ այժմ բոլորովին քանդված է և համարյա թե ամբողջովին ավերված»:<sup>4</sup>

Լոռե բերդաքաղաքի ավերակներն ավելի հանգամանորեն է նկարագրում Ս. Էփրիկյանն իր պատկերագրող բառարանի

էջերում:<sup>1</sup> Նրա վկայակոչած բոլոր տվյալները հիմնականում համընկնում են իրենից առաջ նկարագրածներին. նա նոր բան չի ավելացնում արդեն ասվածին: Տարբերությունը միայն այն է, որ մեջ է բերում Լոռեի քաղաքական կյանքին վերաբերող մի քանի դրվագներ միայն, որոնք առնված են Մ. Չամչյանի աշխատությունից:

Լոռե բերդաքաղաքի և նրա հուշարձանների մասին որոշ տեղեկություններ է հաղորդում XX դարի սկզբի հայ անվանի ազգագրագետ Երվանդ Լալայանը:<sup>2</sup> Նա նոր բան չի ավելացնում նախորդների նկարագրությանը, բացի Կյուրիկյան և Զաքարյան ավատական իշխանությունների համառոտ պատմությունը ներկայացնելուց:

Եվ այսպես, XIX դարի սկզբից օտար ճանապարհորդների և տեղագրողների ուշադրությունն իրենց վրա են բեռել Կյուրիկյանների երբեմնի հուշակավոր մայրաքաղաք Լոռեի փլատակները: Հարկ է արձանագրել, որ Լոռե բերդաքաղաքի ավերակները ոչ մի օտար ճանապարհորդ կամ տեղագրող չի շփոթել մեկ այլ բնակավայրի հետ: Իրողությունն արդյունք է այն բանի, որ Լոռեում բնակչություն է եղել ի սկզբանե մինչև XX դարը ներառյալ:

Չնայած ճանապարհորդների և տեղագրող ուսումնասիրողների վերը բերված տեղեկություններին՝ նախախորհրդային շրջանում Լոռե ամրոցը հնագիտական ուսումնասիրությունից առարկա չի հանդիսացել, եթե նկատի չունենանք Պետերբուրգի համալսարանի պրիվատ դոցենտ Նիկողայոս Մառի այցելությունը Լոռե ամրոցի ավերակներ Անիի՝ 1892-1893 թվականների գիտարշավի ժամանակ: Այդ այցելության ժամանակ Ն. Մառը լուսանկարել է քաղաքի միջնաբերդի պարսպատի մեծ հատվածը:<sup>3</sup> Ցավոք, մեր պրպտումները բազմավաստակ գիտնականի անձնական արխիվում ոչ մի դրական արդյունքի չհանգեցրին: Լոռե բերդի մասին գրավոր ոչ

<sup>1</sup> Իսահակ Հարությունյան, Աշակերտի հիշատակարան, տե՛ս Լուժա, 1897, Գիրք Ա, էջ 246-254:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 251:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 252:

<sup>4</sup> Իսահակ Հարությունյան, նշվ. աշխ., էջ 250:

<sup>1</sup> Ս. Էփրիկյան, Պատկերագրող բառարան, հ. 2, Ս. Ղազար, 1903-1905, էջ 117-120:

<sup>2</sup> Երվանդ Լալայան, Բորջալուի գավառը, տե՛ս Ազգագրական հանդես, 1901, № 7-8, Թիֆլիս, էջ 303-328: Նաև, Ազգագրական հանդես, գիրք Գ, Թիֆլիս, 1898, էջ 275-276:

<sup>3</sup> Լուսանկարի նեգատիվը այժմ պահպանվում է Ռուսաստանի Դաշնության ԳԱ Հնագիտության ինստիտուտի Պետերբուրգի բաժանմունքի ֆոտոդարանում:

մի խոսք չի պահպանվել նրա օրագրերում և հաշվետվություններում:

Նիկողայոս Մառի օրագրերից միայն մեկի մեջ առկա է մի դիտողություն, որ նա կատարել է Տիխիսից Անի գնալու ճանապարհին հանդիպած հուշարձանների վերաբերյալ: Լոռե ամրոցի մասին գրում է. «Լոռու ավերակներ Ջալալ-օղլու մոտ, դա փոքր Անին է»:<sup>1</sup>

Լոռե քաղաքը և նրա առանձին հուշարձանները հիշատակվում են խորհրդային շրջանի պատմաբանների, ճարտարապետների, հնագետների աշխատություններում: Բ. Առաքելյանն իր մենագրության մեջ<sup>2</sup> մանրամասն անդրադառնում է Լոռե քաղաքին, նրա զբաղեցրած դիրքին, բնակչության մոտավոր քանակին, արհեստներին և առևտրին նվիրված հարցերին: Նա առաջին հեղինակն է, որ ուշագրություն է նվիրել Ձորագետ և Միսխանա գետերի կիրճերում գոյություն ունեցող բազմաթիվ քարայրներին: Հեղինակը, նկարագրելով այդ քարայրներն ու վերջիններիս գոյության անհրաժեշտությունը պատճառաբանելով, տալիս է նրանցից առավել հատկանշականների մանրամասն նկարագրությունը: Քարայրների պատերին Բ. Առաքելյանը նկատել է փորագրված արձանագրություններ, որոնցից մեկն ունի թվական:<sup>3</sup>

Տարբեր ժամանակներում և տարբեր առիթներով կատարված հետազոտությունների հիման վրա հետագա աշխատություններում ուշագրության են առնվել Լոռեի աշխարհիկ ճարտարապետությունը՝ առանձին հուշարձանները, կոմունալ-կենցաղային կառույցներն ու պաշտպանական համակարգը:<sup>4</sup>

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, արխիվ. Փոնդ 800, գործ 1, № 929, էջ 3:

<sup>2</sup> Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., Երևան, Հ-1, 1958, էջ 82-83 և Հ. 2, 1964, էջ 88-90:

<sup>3</sup> Բ. Առաքելյան, նշվ. աշխ., Հ. 2, էջ 90:

<sup>4</sup> Տե՛ս 1. Н. Токарский, Архитектура древней Армении, Երևան, 1946, էջ 323-324:

2. Նույնի, Архитектура Армении, IV-XIV вв., Երևան, 1961, էջ 277-278:

3. О. Хачатурьян, Средневековые бани Армении, СА, 1960, № 1, էջ 215-229:

4. Վ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Երևան, 1960, էջ 93-96:

5. Նույնի, Լոռի-բերդ քաղաքը, ՊԲՀ, 1962, № 3, էջ 57-76:

6. Նույնի, Միջնադարյան Հայաստանի քաղաքաշինական կուլտուրան, ՊԲՀ, 1963, № 2, էջ 85-100:

XX դարի երկրորդ կեսի հրապարակումներից ուշագրավ է պրոֆ. Վ. Հարությունյանի «Լոռի-բերդ քաղաքը» հոդվածը, որը նվիրված է հուշարձանի հակիրճ պատմությանը, պաշտպանական կառույցներին, քաղաքացիական ճարտարապետությանը, եկեղեցիներին: Հեղինակը նկարագրում է այդ կառույցների ներկա վիճակը, տալիս է նրանց հատակագծերն ու կտրվածքները, դառնում է միջնադարյան շինարվեստի բնորոշ առանձնահատկություններին:

Սույն հոդվածը թեև ուշագրավ աշխատանք է՝ նվիրված Լոռե ամրոցի հուշարձաններին, սակայն հարկ է նշել, որ հեղինակը հնարավորություն չի ունեցել պեղումների օգնությամբ բացահայտել իր իսկ կողմից չափազրված կոմունալ-կենցաղային շինությունների ամբողջական պատկերը:

Հետաքրքրական հրապարակումներից հաջորդը Հ. Խալիֆախյանի հոդվածն է, որը նվիրված է Հայաստանի միջնադարյան բաղնիքներին: Հեղինակը մանրակրկիտ ուսումնասիրել է Լոռե ամրոցի բաղնիքները ճարտարապետության առումով անդրադարձել վերջիններիս քննությանը:

Դեռևս 1948 թվականին Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ճարտարապետական գործերի վարչությունը ճարտարապետական հուշարձանների պահպանության կոմիտեի պատվերով կատարել է քաղաքատեղիի գեոդեզիական հանույթը, որի բուն օրինակը, դժբախտաբար, կորել է Հուշարձանների պահպանության կոմիտեում: Այժմ կոմիտեում պահպանվում է միայն վերջինիս կրկնօրինակը:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ԿՅՈՒՐԻԿՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՌՁԱԿՈՒՄԸ ԼՈՌԵ ԲԵՐԴԱՔԱՂԱՔԸ XI-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

X դարում՝ Բագրատունի թագավորների գահակալության խաղաղ տարիներին, Հայաստանի մի շարք գավառներ տնտեսապես այնքան զորեղացան, որ նրանց տեր Ֆեոդալները հնարավորություն ստացան նյութական խոշոր միջոցներ կուտակել, ավելացնել իրենց ռազմական հզորությունը և առիթը բաց չէին թողնում հռչակելու անկախ իշխանություն: Ավատատիրական հարաբերությունները գնալով զարգանում և խորանում էին ողջ Հայաստանում:

Աբաս Բագրատունուն (928–953) հաջորդած նրա որդին՝ Աշոտ Երրորդը (953–977), որը մեր մատենագրության մեջ հայտնի է նաև Աշոտ «Ողորմած» մակդիրով, իր նախորդների նման քաջ էր ու վճռական, երբ խոսքը վերաբերում էր արտաքին թշնամուն, սակայն նույնքան էլ անվճռական էր ներքին մրցակիցների՝ իր հարազատների նկատմամբ: Նկատի ունենք 961 թվականը, երբ Աշոտը Կարսի փոխարեն գահանիստ կենտրոն հռչակեց Անին, ապա թագավորի եղբայր Մուշեղը Կարսում իրեն անկախ հայտարարեց և նույնիսկ արքայական թագ կրեց: Աշոտ Երրորդը այդօրինակ ոտնձգությունը ոչ միայն չկանխեց, այլև, ըստ պատմիչների վկայության, համակերպվեց կատարված փաստի հետ:<sup>1</sup>

Մեր կարծիքով, Աշոտ Երրորդի նման խոհեմ, հեռատես թագավորը դժվար թե աչք փակեր այդօրինակ արարքի հանդեպ: Ակներևաբար նա փորձել է պատժել անհնազանդ եղբորը, սակայն այդ պայքարում հաջողություն չի ունեցել: Ժամանակակից պատմիչ Ասողիկը լռությամբ է անցնում

<sup>1</sup> Ստեփանոսի *Տարօնեցոյ Ասողկան*, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 180:

այս իրողության կողքով: Իրականում պատմիչները, մանավանդ նրանք, ովքեր փորձում էին միայն դրական ներկայացնել իրենց գահակալներին, լռության են մատնում այն դեպքերը, որի ընթացքում թագավորն անհաջողության է մատնվել, իսկ ընդհակառակը՝ եթե աննշան հաջողություն է ունեցել, ապա այն նկարագրել են բազում հետաքրքիր մանրամասներով:

Աշոտ Ողորմածը տակավին իր կենդանության օրոք իրեն գահակից էր կարգել որդուն՝ Սմբատին: Այդ մասին իմանում ենք Բարսեղ Կեսարացու «Յաղագս ճգնաւորաց» ձեռագիր մատյանի հիշատակարանից, որը արտագրված է Սանահնի վանքում: Հիշատակարանն ազդարարում է. «Ես անարժան ի կրաւնաւորաց, փցուն գրիչս Սիմէաւն, ի թուականութեան ՆԻԱ-ին (421+551=972)... ի թագաւորութեան Աշոտոյ եւ նորին որդւոյ Սմբատայ քաջք եւ յաղթողք թագաւորք Հայոց»:<sup>1</sup>

Այս հանգամանքը միանգամայն բացատրելի է, քանի որ տվյալ ժամանակաշրջանում Բագրատունիների թագավորությունը հիմնականում տարածվում էր Շիրակ, Գուգարք և Այրարատ նահանգների մեծ մասի վրա: Հետևաբար, Աշոտ Ողորմած թագավորը, Գուգարքի իշխաններից երկյուղ ունենալով, որոնք նախկինում անկախանալու փորձեր էին արել, այդ նպատակով իր ավագ որդուն՝ Սմբատին, որպես գահակից թագավոր, ուղարկում է Գուգարք՝ այն կառավարելու համար: Ավելին, Սմբատը վաղուց ի վեր ճանաչվել էր Աշոտի գահի միակ գահաժառանգ:

Գուգարքում IX դարի երկրորդ կեսին Աշոտ Ողորմածը և նրա տիկին Խոսրովանուշը ձեռնարկել էին կարևոր մի գործ՝ Սանահնի և Հաղպատի հանրահռչակ մենաստանների կառուցումը: Այդ վանքերի կառուցման ամբողջ հոգսը փաստորեն ծանրացել էր Գուգարքի կառավարչի, մասնավորապես Սմբատի վրա:

977թ. վախճանվում է Աշոտ երրորդը, և ինչպես Ասողիկն է վկայում՝ «Ջայնու ժամանակաւ մեռաւ թագաւորն Հայոց

օրհնեայն Աշոտ ի ՆԻՁ (426+551=977) թուականին, և ի նոյն աւուր թագաւորեաց Սմբատ որդի նորա ամս ժԳ»:<sup>1</sup>

Սմբատը, գահ բարձրանալով, հավանաբար, իր փոխարեն Գուգարքի կառավարիչ է նշանակում Գուրգենին, որը Աշոտ Ողորմածի երրորդ որդին էր՝ Սմբատի երկրորդ եղբայրը:

Սմբատի գահակալության տարիներին (977-989թթ.) Գուգարքում Գուրգենը հռչակում է առանձին թագավորություն, որով և հիմք է դնում Գուգարքի Բագրատունյաց թագավորությունը: Այն պատմության մեջ հայտնի է Տաշիր-Չորագետի՝ իր ընդգրկած տարածքի առումով, կամ Կյուրիկյան թագավորություն, որովհետև նրա հիմնադիր Գուրգենը տեղական հորջորջմամբ վերածայնվել է նաև Կյուրիկե: Մխիթար Այրիվանեցի պատմիչը գրում է. «Դաւիթ թագաւորն (խոսքը Դավիթ Անհողինի մասին է – Ի.Ղ.)՝ որդին Կիւրիկէի շինեաց զԼօռի և այլ երկոտասան բերդս»:<sup>2</sup> Գուրգենը Կյուրիկե է կոչվել նաև Սանահնի վանքի բարձրաքանդակի վրայի արձանագրության մեջ:<sup>3</sup>

Մատթեոս Ուռհայեցի պատմիչը, հիշատակելով բյուզանդական հայազգի կայսր Հովհաննես Չմշկիկի դիմում-նամակը Աշոտ Ողորմածին՝ իրեն զինվորական օգնություն ցույց տալու մասին, գրում է, «Յայնժամ (972-ին – Ի.Ղ.)<sup>4</sup> ամենայն թագաւորագունքն Հայոց՝ ազատքն և իշխանքն և ամենայն մեծամեծքն աշխարհաց տանն արեւելից ժողով արարին առ թագաւորն հայոց Աշոտ Բագրատունի. թագաւորն Կապանից Փիլիպպէ եւ թագաւորն Աղուանից Գուրգէն, Աբաս Կարուց տէրն եւ Սենեքերիմ Վասպուրականի տէրն եւ Գուրգեն Անձեւացեաց տէրն եւ...» (ընդգծումը մերն է – Ի.Ղ.):<sup>5</sup>

<sup>1</sup> Ասողիկ, գլ. ԺԱ, էջ 187:

<sup>2</sup> Մխիթարայ Այրիւանեցոյ Պատմութիւն ժամանակագրական, Ս. Պետերբուրգ, 1867, էջ 75:

<sup>3</sup> Կ. Ղաֆաղարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրութիւնները, Երևան, 1957, էջ 98:

<sup>4</sup> Այս դեպքը տեղի է ունեցել 974 թվականին և ոչ թե 972-ին, ինչպես սխալմամբ վկայում է Մատթեոս Ուռհայեցին: Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմության, Լ-Բ, Բ մասի նյութերը, Երևան, 1960, էջ 46:

<sup>5</sup> Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 17: Նույնի աշխարհաբար թարգմանութիւնը Լ. Բարթիկյանի, Երևան, 1973 թ., էջ 11:

<sup>1</sup> Մատենադարան, ձեռ. № 3031, էջ 19-20ա: Նույնը տե՛ս Ս. Զալայեանց, Ծանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփղիս, 1842, էջ 42-43:



Ուռհայեցու հիշատակած «Թագաւորն Աղուանից Գուրգէն»-ը ուսումնասիրողների կարծիքով՝ ոչ այլ ոք է, եթե ոչ Աշոտ Ողորմածի կրտսեր որդի Գուրգենը: Հետեւաբար 974 թվականից առաջ Գուրգարքը (բնագրում՝ Աղվանքը – Ի.Ղ.) անկախութիւն էր ձեռք բերել: Բայց այդ տեսակետը քննութիւն էր կարող բռնել, քանի որ պատմական ավելի հավաստի տվյալներն այլ իրողութեան մասին են վկայում:

Առաջին. ամենակարևոր վկայագրերից մեկը «Սանահնի քոթուկ» կոչվող ձեռագիր ժողովածուն է, որտեղ պահպանվել է Սանահնի վանքի քարտուղար գրչի՝ 972թ. ավանդած հիշատակարանը: Վերջինս, պարզ է, շատ ավելի լավատեղյակ պետք է լիներ քաղաքական անցուղարձին, քան Մատթեոս Ուռհայեցին, որը բավականին հեռու է գտնվել մայր հայրենիքից:

Սիմեոն գրիչը վկայում է. «... ի թուականութեան հայոց ՆիԱ-ին (=972)... ի թագաւորութեան Աշոտոյ եւ նորին որդւոյ Սմբատայ քաջք եւ յաղթողք թագաւորք Հայոց... յիշեսձիք ի մաքրամատոյց յաղաւթս ձեր գԱշոտ Շահնշահն... եւ զիւրեանց որդիակն զարի եւ քաջ շինաւղն Հայոց Սմբատ, եւ զեղբարս նորան զԳագիկն եւ զԳուրգէն,....»:<sup>2</sup> Այս վկայութիւնից պարզ է դառնում, որ 972 թվականին Գուրգենը թագավոր չէր կարող լինել: Ավելին, նրա ավագ եղբայր Սմբատն էր հռչակվել բարձակից թագավոր, քան Գուրգենը: Այս տեսակետին հակառակ՝ «Դիտողութիւններ Կյուրիկյանների պատմութեան վերաբերյալ» հոդվածի հեղինակ Ռ. Մաթևոսյանը գրում է. «... Գուրգենը կարող էր թագավոր դառնալ հիշատակարանը գրելուց որոշ ժամանակ անց, բայց նույն թվականին»:<sup>3</sup> Հոդվածագիրը սահմանափակվում է այս հայտարարութեամբ և պատմական որևէ փաստ չի բերում ապացուցելու համար, թե ինչու 972 թվականին Աշոտ Ողոր-

մած թագավորը իր երրորդ որդուն անկախ թագավոր հռչակեց Գուրգարքում, իր կենդանութեան ժամանակ:<sup>1</sup>

Երկրորդ. 970-ական թվականներին Աշոտի որդի Գուրգենը չէր կարող «Թագաւոր Աղուանից» կոչվել, քանի որ նա իր գահակալութեան ընթացքում ոչ մի թիզ հող չի նվաճել Աղվանքի տարածքից: Այդ մասին պատմիչները լուռ են: Տաշիր-Չորագետի թագավորներից միայն Դավիթ Անհողինն ու Կյուրիկե Երկրորդն էին, որ մի քանի ամրոցներ գրավեցին Հայկական Աղվանքից, և իզուր չէ, որ նրանք կոչվում էին «Թագաւոր Աղուանից»:

Հասկանալի է, որ այս խնդրում Մատթեոս Ուռհայեցին որոշակի շփոթութեան մեջ է:<sup>2</sup>

Երրորդ. պատմիչի հիշատակած անունների մեջ կան նաև «Աբաս Կարուց տէրն եւ Սենեքերիմ Վասպուրականի տէրն»: Սրանցից առաջինի մասին մենք տեղյակ ենք այլ մատենագիրների վկայութիւններից, իրոք, նա պատմական դեմք է և Կարսի թագավոր է դարձել հոր՝ Մուշեղի մահից հետո՝ 984 թվականին, երիտասարդ հասակում:<sup>3</sup> Իսկ Սենեքերիմը Վասպուրականի թագավոր հռչակվեց 1003 թվականին, մինչ այդ, 990-ից սկսած, իր եղբոր հետ բարձակից թագավոր էր:<sup>4</sup> Այսպիսով, հիշատակված երկու արքայազուներն էլ 974 թվականին դեռևս մանկահասակ էին:

Չորրորդ. Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրերից մեկում պահպանվել է մի անանուն պատմիչի ժամանակագրութիւն, որը հրատարակել է Վազգեն Հակոբյանն իր «Մանր

<sup>1</sup> Ռ. Մաթևոսյան, Դիտողութիւններ Կյուրիկյանների պատմութեան վերաբերյալ, տե՛ս ՊԲՀ, 1968, № 3, էջ 199-202: Հոդվածագիրը Գուրգարքի թագավորութեան հռչակման տարեթիվը բնորոշում է 972 թվականը:

<sup>2</sup> Մատենադարան, ձեռ. № 3031, էջ 19 բ-20, ա բ, 21ա, 37-39:

<sup>3</sup> Ռ. Մաթևոսյան, նշվ. հոդվածը, էջ 200:

<sup>1</sup> Հարկ ենք տեսնում նկատել, որ նույն հեղինակը, Հանդիսանալով նաև «Հայ ժողովրդի պատմութեան» բազմահատորյակի երրորդ հատորի Կյուրիկյան թագավորութեան բաժնի հեղինակը, հարազատ է մնացել իր առաջադրած տեսակետին: Անտեսել է Կյուրիկյան թագավորութեան հռչակման տարեթիվի առթիվ մեր առարկութեանը: Տե՛ս Ի. Չարիբջան, Լոռե քաղաք-ամրոցը և նրա պեղումները, թեկնածուական ատենախոսութիւն, Երևան, 1969, էջ 23-42: Տե՛ս նույնի, Կյուրիկյան թագավորութեան հռչակման տարեթիվի շուրջ, Բանբեր Երևանի Համալսարանի, 1977, № 1, էջ 78-88:

<sup>2</sup> Ռ. Մաթևոսյանը թեև համաձայն է այն կարծիքին, որ Գուրգենը նվաճում էր կատարել Հայկական Աղվանքում, սակայն հենվելով Դավիթի և նրա հաջորդի նվաճումների մասին եղած վկայութիւնների վրա՝ արգարացնում է Ուռհայեցու «Թագաւոր Աղուանից» հետուութիւնը: Դա չի համապատասխանում իրականութեանը: Տե՛ս նշվ. հոդվածը, էջ 202-203:

<sup>3</sup> Ասողիկ, էջ 196:

<sup>4</sup> Ասողիկ, էջ 281 և № 146 ծանոթութիւնը:

ժամանակագրություններ» ժողովածուում:<sup>1</sup> Այդ նույն ժամանակագրությունից մի հատվածի մենք հանդիպեցինք Սանահնի «Քոթուկի» մեջ,<sup>2</sup> որտեղ «Թագաւորք վերջինք Բագրատունիք» խորագրի տակ ասվում է, որ Աշոտ Երրորդի մահից հետո. «... սոքա (Սմբատը, Գագիկը, Գուրգենը – Ի.Ղ.) համակամ սիրով երիս բաժանեն զթագաւորութիւնն՝ հայրագլուխ առնելով զՍմբատ և Գուրգեն տիրէ Գուգարացոց կողմանս սկսեալ ի Գագայ, Խոռայ մինչև ի դուռն Տփիսաց, եւ վարեաց սա զամենայն ժամանակս թագաւորութեան իւրոյ յոթնապատիկ բարեպաշտութեամբ և անուանի եղեալ, յուրվակի եղեալ արիութեամբ թագաւորեաց ամս Մ (50) և կամայօժար կրօնաւորի ի վանս Սանահնին ամս Ը (8), որով և փոխի մահուամբ»:<sup>3</sup>

Մեր կարծիքով, միանգամայն ճիշտ է ժամանակագրությունը հրատարակող անվանի ձեռագրագետ Վ. Հակոբյանը, երբ առաջարկում է բնագրում կարդալ ոչ թե «Մ», այսինքն, 50, այլ «Ժ» (10),<sup>4</sup> որովհետև գրիչները հեշտությամբ կարող էին Մ-ն շփոթել Ժ-ի հետ: Եթե ընդունում ենք, որ առաջարկված ճշգրտումը ճիշտ է, ապա պարզվում է, որ 972 ≠ 10 = 982, կան փաստեր, որ Գուրգենը թագավորել է մինչև 989 թվականը ներառյալ:<sup>5</sup> Այսպիսով, պարզ է դառնում, որ այս դեպքում էլ Գուրգենը Աշոտ Ողորմածի ժամանակ թագավոր չէր կարող լինել:

Եվ այսպես, ըստ այս վկայության նախ. Գուրգենը թագավոր է դարձել հոր մահից հետո և երկրորդ՝ նա թագավորել է հիսուն տարի, որը քիչ հավանական է, որովհետև գիտենք, որ դեռևս 990 թվից թագավորում էր նրա որդին՝ Դավիթ Անհողինը:

Հինգերորդ. «Սանահնի քոթուկ» կոչվող ձեռագրում գետեղված է մի հրովարտակ, որի գրության ժամանակը ստույգ

979 թվականն է: Ըստ այդ հրովարտակի՝ Սմբատ Երկրորդը գրել է. «... անդառնալի հրամանաւ մերով և գրով ետու վիճակ և երկիրս զայս Սանահնիս զամնայն երկիրն Տաշրաց զՎերին մինչ ի լեառն Բագում յայսկոյս և յայնկոյս մինչև ի սահմանս Գուգարաց աշխարհին և մինչ ի սահմանս Տփիսաց և Վրաց և ի սահմանս Նիգ գաւառի. և մինչ ի սահմանս Կայենոյ և զսահմանս Ծաղկոցաց մինչ ի սահմանս Տուրն Շիրակայ...»:<sup>1</sup>

Եթե Սմբատ Երկրորդն այսպես համարձակ տնօրինում էր տվյալ տարածքները ըստ իր կամքի, հետևաբար դրանք կազմում էին նրա թագավորության սեփականությունը: Իսկ եթե հանգենք այն հետևությունը, որ դրանք Գուրգենի թագավորության մեջ էին մտնում տակավին 972 թվականից, ապա տվյալ ակտով կատարվում էր ավատական սեփականատիրական իրավունքի ոտնահարում: Ընդհատ է, ըստ այդ օրենքի, Սմբատը համարվում էր Շահնշահ, բայց նա ոչ մի իրավական ոտնձգություն չէր կարող կատարել տեղական ֆեոդալական մանր թագավորությունների մեջ մտնող հողատարածքների նկատմամբ:<sup>2</sup>

Ֆեոդալական թագավորության մեջ մտնող հողերը տեղի թագավորի և նրա վասալ ֆեոդալների սեփականությունն էին կազմում: Հետևաբար տվյալ պարագայում Սմբատն այդ հրովարտակով անօրինականություն էր դիմում:

Վեցերորդ. Աշոտ Ողորմածի կենդանության օրոք (մինչև 977թ.) Գուրգենի թագավոր հռչակվելու կողմնակից Ռ. Մաթևոսյանի հիմնական փաստարկն այն է,<sup>3</sup> որ Սանահնի Ամենափրկիչ եկեղեցու ճակատին առկա է մի բարձրաքանդակ՝ երկու պատկերով և «Կիրիկէ թագաւոր, Սմբատ թագաւոր» արձանագրությամբ:<sup>4</sup> Վերոհիշյալ եկեղեցու կառուցումը, վանքի քարտուղարի վկայությամբ, ավարտվել է 972 թվակա-

<sup>1</sup> Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., 2-2, Երևան, 1956, էջ 499-503:

<sup>2</sup> Մատենադարան, ձեռ. № 3031, էջ 67ա-70ա, 135-136:

<sup>3</sup> Վ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 501: Ձեռ. 3031, էջ 135-136, 68բ-69ա:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 503, ծան. 3:

<sup>5</sup> Ղ. Մովսեսյան, Լուսի Կյուրիկյան թագավորներու պատմությունը, Վիեննա, 1923:

<sup>1</sup> Մատենադարան, ձեռ. № 3031, էջ 24ա-26ա, ձեռ. 8150, էջ 17ա-18ա: Սույն հրովարտակը հրատարակվել է դեռևս Ս. Զայաչյանի և հետագայում այլոց կողմից:

<sup>2</sup> Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 58:

<sup>3</sup> Ռ. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 200-201:

<sup>4</sup> Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 98, արձ. № 31:

նին,<sup>1</sup> իսկ արձանագրությունում փաստորեն երկու եղբայրն էլ անվանված են «թագաւոր»:

Սիմեոն գրիչը Գուրգենի թագավոր լինելու մասին լռում է, երբ հիշատակարանը գրում էր, ապա հետևում է, որ Ամենափրկիչ եկեղեցու կառուցման ավարտի ժամանակ նույնպես Գուրգենը թագավոր չէր, քանի որ առանց եկեղեցու կառուցումն ավարտելու անհրաժեշտություն չկար ընտրելու քարտուղար և առաջնորդ: Հետևաբար բարձրաքանդակը կամ նրա վրա եղած արձանագրությունը ավելացվել են հետագայում, երբ հայտնի էր երկու եղբայրների թագավոր լինելը, մեկին՝ Սմբատին, որպես եկեղեցու կառուցման անմիջական ղեկավարի, մյուսին՝ Գուրգենին (բնագրում՝ Կյուրիկէ – Ի.Ղ.), տեղի թագավորի: Այս կարծիքին է նաև Սանահնի վանքի քաջահամուռ ուսումնասիրող պրոֆ. Կ. Ղաֆադարյանը, որն ապացուցում է, որ վանքի կառուցումն ավարտվել է 972 թվականին, սակայն բարձրաքանդակի արձանագրությունը թվագրում է 980-ական թվականներով:<sup>2</sup>

Յոթերորդ. եթե վերանանք նաև վերը բերված բոլոր փաստարկներից և որոշ վերապահումով ընդունենք, որ Աշոտ Երրորդը դեռևս կենդանության ժամանակ իր երրորդ որդուն՝ Գուրգենին, Գուգարքի թագավոր էր ճանաչել, ապա դրանով իսկ նա խախտել էր հնուց ի վեր Հայաստանում գոյություն ունեցող ժառանգական կարգը: Մեզ հասած պատմական ոչ մի վկայություն այդ մասին չի խոսում:

Վերը բերվածից ելնելով՝ գալիս ենք այն համոզման, որ դժվար թե Գուրգենը թագավոր ճանաչվեր Տաշիր-Ձորագետում իր հոր՝ Աշոտ Ողորմածի կենդանության ժամանակ: Դա հակասում է թե՛ պատմական վկայագրերին և թե՛ տրամաբանական հետևություններին:

Այսպիսով, ևս մեկ անգամ համոզվում ենք, որ Մատթեոս Ուռհայեցին, իր կամքից անկախ, խեղաթյուրել է պատմական ճշմարտությունը: Մեր կարծիքով, դա արդյունք է այն բանի, որ նա ապրել է մայր հայրենիքից շատ հեռու և իրենից շատ առաջ կատարված ղեպքերին և ղեմքերի գործունեությունը քաջատեղյակ չէ: Միաժամանակ հարկ է նաև

նշել, որ նրա ժամանակագրության առաջին մասի 14-18 էջերը լի են անճշտություններով և շփոթով<sup>1</sup>:

Մատթեոս Ուռհայեցուց բացի, Գուգարքի, այսինքն՝ Կյուրիկյան թագավորության հուշակման մասին մեզ տեղեկություն է հաղորդում XIII դարի պատմիչ Մխիթար Այրիվանեցին: Նա գրում է. «Աստ եղև (981 թվակ. – Ի.Ղ.) սկիզբն թագաւորելոյ Բագրատունեաց ի վերայ Վրաց, զի Գուրգէն ի Վիրս և Սմբատ եղբայր նորա ի Հայս թագաւորեցին»<sup>2</sup>:

Հետագա ուսումնասիրողները քիչ ուշադրություն են դարձրել Մխիթար Այրիվանեցու հաղորդած այս թվականի հավաստիության վրա: Նրա ժամանակագրության այն հատվածները, որոնք վերաբերում են IX-X դարերին, լի են անճշտություններով:

Դեպքերին ժամանակակից մյուս պատմիչներից ոչ ոք այլևս չի անդրադառնում Կյուրիկյան թագավորության հիմնարկվելու թվականին: Այդ է պատճառը, որ ուսումնասիրողները, հենվելով այս կամ այն տեղեկատվության վրա, ընդունում են Կյուրիկյան թագավորության առաջացման տարբեր թվականներ:

Կյուրիկյան թագավորության պատմության առաջին ուսումնասիրողը (թեև ոչ ամբողջությամբ) բազմավաստակ գիտնական Միքայել Չամչյանն է: Նա թագավորության առաջացումը բացատրում է՝ նկատի ունենալով 982 թվականի ղեպքերը: Մեր կարծիքով, Չամչյանը առանձին աղբյուր չի ունեցել այդօրինակ եզրակացության հանգելու համար, այլ հիմնվել է եղած տվյալների վրա՝ հաշվի առնելով նաև Սմբատ Տիեզերակալի դեմ դեմիկներին արշավանքը: Ասողիկի վկայությամբ,<sup>3</sup> այն կատարվել է 982 թվին, իսկ Գագիկի ու Սմբատի միջև տեղի ունեցած ընդհարումը՝ 980-982 թվականներին: Ելնելով այս վկայությունից՝ նա եզրակացնում է, որ Գուրգենն օգտագործել է իր ավագ եղբոր ծանր վիճակը և

<sup>1</sup> Մատենագարան, ձեռ. 3031, էջ 19բ-21ա, 37-39 և հետագա հրատարակություններ:

<sup>2</sup> Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 98:

<sup>1</sup> Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 14-18: Օրինակ՝ Գագիկ երկրորդ թագավորի մահը գնում է 971-972 թվերին և Հովհաննես Սմբատի գահակալությունը հաշվում է 972 թվից, մի բան, որ անհնարին է: Այս և այլ անսխալագիմ մասին տես Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրություն, աշխարհարար թարգմանություն ակադեմիկոս Հրաչ Բարթիկյանի համապատասխան ծանոթագրություններ (Ուռհայեցի, Երևան, 1973):

<sup>2</sup> Մխիթար Այրիվանեցույ Պատմութիւն ժամանակագրական, Ս. Պետերբուրգ, 1867, էջ 71:

<sup>3</sup> Ասողիկ, գլ. ԺԲ, էջ 188-189:

որպես հավատարմության հատուցում, Սմբատի գիտությամբ, իրեն հռչակել է Տաշիր-Ձորագետի թագավոր: Այդ առիթով ահա թե ինչ է գրում Մ. Չամչյանը. «Իսկ կրտսեր եղբայր Գուրգեն հալատարիմ երևալ՝ ժառանգեաց հրամանաւ նորա (Սմբատի – Ի.Ղ.) զՏաշիր և զՏաոււշ, Սևորդուվք Ձորոյգետոյն, և զԿայեան և զԿայծոն և զՆոռակերտ և զԲազկերտ, և զայլ ևս բերդս անուանիս ըստ Վարդանայ»:<sup>1</sup>

Չամչյանից հետո այս խնդրին անդրադարձել է նաև Ղ. Ալիշանն իր «Հայապատում» երկում: Նա որոշակի թվական չի ընդունել, սակայն երբ ներկայացրել է Կյուրիկյան տոհմածառը, Գուրգենի թագավորության սկիզբը համարել է 980 թվականը:<sup>2</sup>

Ավելի հիմնավոր այս հարցը ուսումնասիրել է Վիեննայի Մխիթարյան միաբան Ղևոնդ Մովսեսյանը իր «Լոռիի Կյուրիկյան թագավորներու պատմությունը» աշխատության մեջ: Հեղինակը, քննության առնելով նախորդների տեսակետները և նկատի առնելով պատմիչների վկայությունները, տատանվել է 979 և 981 թվականների միջև և ընդունել դրանց միջինը՝ 980 թվականը:<sup>3</sup>

Այնուհետև ամենատարբեր առիթներով Գուրգարքի Կյուրիկյան թագավորության հռչակման են անդրադարձել Ստ. Պալասանյանը<sup>4</sup> (ընդունելով 988 թվականը), Լեոն,<sup>5</sup> Լ. Աճեմյանը,<sup>6</sup> Հ. Մանանդյանը,<sup>7</sup> Կ. Ղաֆաղարյանը,<sup>8</sup> Բ. Առաքելյանը,<sup>9</sup> Հ. Հարությունյանը,<sup>10</sup> Թ. Հակոբյանը,<sup>11</sup> Վ. Հակոբյանը,

նր,<sup>1</sup> Ա. Քալանթարը,<sup>2</sup> շատ ուրիշներ և առաջարկել տարբեր տարեթվեր:

Մեր կարծիքով Գուրգարքի Կյուրիկյան թագավորության առաջացման թվականը պետք է ընդունել 979-ը: Ահա թե ինչու:

Առաջին. Սանահնի «Քոթուկ»-ում և մանր ժամանակագրություններում պահպանվող «թագավորք վերջինք Բագրատունիք»<sup>3</sup> խորագրի տակ շարադրված հատվածում, ինչպես և նախորդ էջերում, Գուրգենի թագավորության տևողությունը հաշվվում է տաս տարի (ուղղումից հետո),<sup>4</sup> որից հետո նա կամովին հեռանում է վանք և այնտեղ ապրում ևս ութ տարի:

Պարզվում է, որ Գուրգեն Բագրատունին իր կյանքի վերջին ութ տարիներն անցկացրել է Սանահնի վանքում, ապրել մենակյացների, հոգևորականների շրջանում ու միշտ զբաղվել աղոթքներով առ Աստված: Նա մահանում և թաղվում է նույն վանքի Աստվածածին եկեղեցու արևելյան պատի տակ: Այսօր էլ այդ եկեղեցու արևելյան պատի հյուսիսային կողմում արտաքուստ պահպանվում է երկթեք մշակումով համեմատաբար պարզ կառուցվածքով գերեզմանաքար, որի վրա պրոֆ. Կարո Ղաֆաղարյանը ընթերցել է հետևյալ տապանագիրը. «ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԳՈՐԳԷՆԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆՈ ՇԱՀԱՆՇԱՀԻ, ՈՐԳԻ ԱՇՈՏՈՅ ՈՂՈՐՄԱԾԻՆ»:<sup>5</sup> Ժամանակի պատմիչների վկայությամբ Գուրգենի մոտ է թաղվել նաև նրա որդի Դավիթ Անհողին թագավորը: Սակայն նրա տապանաքարը, որ պետք է լիներ Գուրգեն Բագրատունու հուշաքարի կողքին, տեղում չի պահպանվել:

Սանահնի վանքի «Քոթուկի»<sup>6</sup> համապատասխան վկայությամբ Կյուրիկյան այդ երկու արքաների դամբարանների

<sup>1</sup> Միքայել Չամչեանց, Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն, 1784, Վենետիկ, 1785, հ. Բ, էջ 852:

<sup>2</sup> Ղևոնդ Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 392:

<sup>3</sup> Ղևոնդ Մովսեսյան, նշվ. աշխ., էջ 28:

<sup>4</sup> Ստեփանոս Պալասանեան, Պատմություն Հայոց սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիս, 1895, էջ 383:

<sup>5</sup> Լեո, Հայոց պատմություն, Երևան, 1967, հ. 2, էջ 591:

<sup>6</sup> Լ. Աճեմյան, Հայոց Պատմություն, Բ շարք, Բ գիրք, էջ 56:

<sup>7</sup> Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 47:

<sup>8</sup> Կ. Ղաֆաղարյան, նշվ. աշխ., էջ 98:

<sup>9</sup> Բ. Առաքելյան, Փաղաքները և արհեստները Հայաստանում 9-13-րդ դարերում, հ. 1, էջ 82:

<sup>10</sup> Հ. Հարությունյան, Հայաստանը 9-11-րդ դարերում, Երևան, 1959, էջ 106:

<sup>11</sup> Թ. Հակոբյան, Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Երևան, 1960, էջ 254:

<sup>1</sup> Վ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 503:

<sup>2</sup> А. Калантар, Лори при Кориксах (культурно-политический расцвет Северной Армении в X-XI вв.). Кандидатская диссертация (не издана), 1912г.

<sup>3</sup> Ձեռ. № 3031, էջ 68բ-69ա: Վ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 501:

<sup>4</sup> Վ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 503:

<sup>5</sup> Կ. Ղաֆաղարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, էջ 171-172, արձ. № 141, լուս. № 89:

<sup>6</sup> Սանահնի «Քոթուկ», Մատենադարան, ձեռ. № 3031, էջ 99ա-96բ, 8150, էջ 46բ-48ա:

վրա վանահայրերը կառուցել են կամարածե ծածկով երկու խորաններ: 1836 թվին Սանահնի վանահայր Հովհաննես եպիսկոպոս Տեր-Բարսեղյանը<sup>1</sup> քանդել է տվել այդ հնամենի կառույցը և նրա քարերն օգտագործել է տվել վանքի եկեղեցու քանդված մասերի վերանորոգման մեջ:

Այսպիսով, պարզվում է, որ Գուրգենը մահացել է ոչ թե 989 թվականին, ինչպես մինչև վերջերս էին ենթադրում, այլ 997 թվականին (979+10+8=997):

Երկրորդ. Կյուրիկյան թագավորության առաջացման հարցի ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն անել Գուրգեն թագավորի վանք մտնելու հանգամանքը, մի բան, որի մասին տեղյակ չեն եղել Միքայել Չամչյանն ու Ղևոնդ Մովսեսյանը:

Մեր կարծիքով, Գուրգենը վանքում հաստատվեց՝ հրաժարվելով թագավորական տիտղոսից հօգուտ իր որդիների՝ Դավթի ու Սմբատի, հետևյալ պատճառով:

Ժամանակակից պատմիչներից Ասողիկը, որի հաղորդած պատմական տեղեկությունների ստույգություն վրա չի կարելի կասկածել, հայտնում է, որ երբ Սմբատ Տիեզերակալը կարգավորեց իր երկրի արտաքին և ներքին գործերը, մեծամտացավ և «գործեաց նա (Սմբատը – Ի.Ղ.) երիս չարս դժուարինս առ ի ասել և արժանի արտասուլաց»:<sup>2</sup> Հետագա շարադրանքից իմանում ենք, որ իրոք աստվածավախ և սնտիապաշտ մարդու համար Սմբատը գործել էր բավականին ծանր մեղքեր:

Առաջին. Այրել էր տվել բոլորովին անմեղ մի մարդու:

Երկրորդ. Երդմնագանց էր եղել:

Երրորդ. Կնուխյան էր առել իր քրոջ աղջկան:<sup>3</sup>

Այս մեղքերը նկարագրելուց հետո Ասողիկը գրում է, որ գործած մեղքերի հետևանքով մահացան թագուհին և ինքը՝ Սմբատը: Հուղարկավորումից որոշ ժամանակ անց քանդում են նրա գերեզմանը և դին հանում ի տես նրանց, որոնք չէին

հավատում, որ թագավորը մահացել է իր բնական մահով իբրև թե՝ «թագաւորն թմրական դեղովք դին ի գերեզմանի»:<sup>1</sup>

Սմբատ Տիեզերակալի մահը, ինչպես պարզել է Միքայել Չամչյանը,<sup>2</sup> տեղի է ունեցել 989 թվականի նոյեմբերին, տասներկու տարի յոթ ամիս գահակալելուց հետո:<sup>3</sup>

Ասողիկը, նկարագրելով Գագիկի թագավոր դառնալը, նրա կատարած հիշարժան գործերը, այդուհանդերձ բացականչում է. «– Աւաղ միում չարին, որ արգել զբան գովեստի պատմութեան իմոյ»:<sup>4</sup> Սակայն հարց է առաջանում՝ ինչ մեղք էր գործել Գագիկ թագավորը, որ այդպես խանգարում էր պատմիչին՝ նրա մասին գովեստներ շռայլելու:

Ուսումնասիրողները ճշմարտացի հանգել են այդ «չար գործի» բացատրությանը, այսինքն, որ Գագիկը թունավորել էր հարազատ եղբորը: Ասողիկը դա հիշատակում է հարևանցի, քանի որ Սմբատի կողմից գործած հանցանքները վերջիվերջո շատ ավելի ծանր էին, և նրանից ազատվելը (Սմբատից – Ի.Ղ.) Ասողիկը համարել է չարիքներից փոքրագույնը:

Գուրգենի ավագ եղբայրները՝ Սմբատը և Գագիկը, գործել էին ծանր հանցանքներ, շուտով մոտենում էր անհեղ դատաստանի օրը (ըստ կրոնական նախապաշարմունքի՝ դա պետք է լիներ հազար թվականին – Ի.Ղ.): Պետք է ենթադրել, որ Գուրգենը հաստատվեց վանքում, որպեսզի քավի իր եղբայրների գործած մեղքերն ու փրկի իր և նրանց հոգիները: Իսկ այդ հեռացումը, մեր կարծիքով, կատարվեց 989 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, այն համընկնում է ժամանակագրության տված տեղեկությանը, այսինքն՝ Գուրգենը թագավորած պետք է լինի տաս տարի, և թագավորության առաջին տարին պիտի համարել 979 թվականը:

Երրորդ. Ուշադրության պետք է առնել նաև Ասողիկի մեկ այլ վկայությունը: Այն գլխում, որտեղ նկարագրում է 989

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 255:

<sup>2</sup> Մ. Չամչյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 871:

<sup>3</sup> Հավանաբար այս է պատճառը, որ Ասողիկի վկայությանը Սմբատի տասներեք տարի թագավորելը չի տեղավորվում տված թվականի հետ, որովհետև 977+13=990, իսկ մահացել է 989 թվին: Պետք է ենթադրել, որ այդ թյուրիմացության արդյունքը տասներկու տարի յոթ ամիսն է, որ Ասողիկը տասներեք տարի է հաշվել:

<sup>4</sup> Ասողիկ, նշվ. աշխ., էջ 256:

<sup>1</sup> Ըստ Կարո Ղաֆադարյանի՝ Հարություն եպիսկոպոս, տե՛ս նշվ. աշխ., էջ 172:

<sup>2</sup> Ասողիկ, էջ 253:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 253-254:

թվականին Գագիկի գահ բարձրանալը և թվարկում նրա կատարած յավագույն գործերը, անմիջապես գրում է. «Իսկ եղբորորդիք նոցա-Սմբատայ և Գագկայ-Դաւիթ որդի Գուրգենայ, հանդերձ եղբարբն իւրով զկողմանս Տաշրաց և զՎրաց դաշտի...»:<sup>1</sup>

Ուսումնասիրողներից Մ. Չամչյանը, քննելով այս խնդիրը և իրավացի կերպով հանգելով համապատասխան հետևություն, Գուրգենի մահվան տարեթիվը համարում է 989 թ.:<sup>2</sup>

Գուրգենի մահվան թվականը, ավելի ճիշտ կլինի ասել՝ գահից հրաժարվելը 989 թվականին են ընդունում Ղևոնդ Մովսեսյանը,<sup>3</sup> Լեոն,<sup>4</sup> Կ. Ղաֆաղարյանը,<sup>5</sup> Բ. Առաքելյանը,<sup>6</sup> Ս. Պողոսյանը<sup>7</sup> և շատ ուրիշներ:

Չորրորդ. Գուրգենի թագավորության կյանքի կոչվելու 979 թվականի ճշտության մասին է խոսում նաև «Քոթուկում» պահպանված և արդեն մեր կողմից վերը հիշատակված Սմբատ Տիեզերակալի հրովարտակը, որտեղ ասվում է. «Կամաւք ամենազաւրին աստծոյ... Ես Սմբատ Բագրատունի թագաւոր Հայոց... Եկի ի տեսութիւն սուրբ ուխտիս Սանահնիս... և սիրոյ նշան արարեալ հաստատեցի զսա աթոռ եպիսկոպոսութեան... և անդառնալի հրամանաւ մերով և գրով ետու վիճակ և զերկիրս զայս...»:<sup>8</sup> Այնուհետև թվարկվում են այն բոլոր բերդերն ու գավառները, որոնք, ըստ Վարդան Արեւելցու, մտնում էին Գուրգենի թագավորության ոլորտի մեջ: Հրովարտակի վերջընթեր տողն ազդարարում է. «Գրեցաւ ի թուականին Հայոց չորս հարիւր քսան և ութ»,<sup>9</sup> այսինքն՝ 979 թվականին:

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Մ. Չամչյան, նշվ. աշխ., էջ 673:

<sup>3</sup> Ղևոնդ Մովսեսյան, Լոռիի Կյուրիկյան թագավորներու պատմությունը, էջ 34 և այլն:

<sup>4</sup> Լեոն, նշվ. աշխ., էջ 611:

<sup>5</sup> Կ. Ղաֆաղարյան, նշվ. աշխ., էջ 43:

<sup>6</sup> Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 82:

<sup>7</sup> Ս. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, Երևան, 1965 թ., էջ 54-55:

<sup>8</sup> Մատենադարան. Ձեռ. № 3031, էջ 24ա-26բ: Ինչպես նաև, Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի Քէօթուկը), աշխատասիրությունը Գ. Մուրադյանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 67-68:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 50:

Կյուրիկյան թագավորության պատմությունն ուսումնասիրող Ղ. Մովսեսյանը նշված հրովարտակի հիման վրա հանգում է շատ կարևոր հետևություն. «Սմբատը Տաշիրքի հոգևոր իշխանության սահմանները ընդարձակած միջոցին, առանց տարակուսի կգծեր միևնույն ժամանակ յուր եղբոր՝ Գուրգենի, իշխանության սահմանները, և այս առթիվ տեղի կունենար Տաշիրքի անկախ հռչակվելու հանդեսը Սանահնի մեջ, ուր գացած էր Հայոց թագավորը այս նպատակով»:<sup>1</sup>

Այս դեպքում միանգամայն համամիտ ենք այդօրինակ հետևությունները: Աղբյուրների տվյալներից դատելով՝ հանգում ենք այն համոզման, որ Գուրգարքում անկախ թագավորության ստեղծումը Գուրգենի կողմից բոլորովին չպետք է թշնամական դիրքորոշում դիտել կենտրոնական թագավորության նկատմամբ: Այն կատարվեց Սմբատ Տիեզերակալի համաձայնությամբ, որպեսզի Հյուսիսային Հայաստանի այդ ծայրագավառը մշտապես ապահովված լինի հայ Բագրատունիների համար: Գուրգարք նահանգը և նրա հարակից շրջանները ենթակա էին կովկասյան ցեղերի մշտական հարձակումներին, և պատեհ առիթով Գուրգարքում ապրող իշխանները կարող էին երես դարձնել Բագրատունյաց կենտրոնական թագավորությունից: Դա ստիպում էր Սմբատին դիմելու նմանօրինակ քայլի, միայն այն պայմանով, որ Գուրգենը և նրա հաջորդները ընդմիշտ ընդունելու էին Անիի գահակալների գերագահությունը: Եվ իրոք, երբ Գուրգարքի հետագա գահակալներից Դավիթ Անհողինը (989-1048) հզորանալով փորձեց այլևս չճանաչել Շիրակի Բագրատունիների ավագությունը, խստագույնս պատժեց Գագիկի կողմից: Այս մասին ժամանակակից պատմիչը՝ Ստեփանոս Տարոնացին, գրում է. «Իսկ Դաւիթ... սակաւ ինչ ամբարձեալ անհնազանդութեան մասամբ առ հօրեղբայր իւր Գագիկ»:<sup>2</sup>

Անիի գահակալը, որպեսզի ստիպի Դավիթին ընդունել իր ավագությունը, մի պատժիչ արշավանք է կազմակերպում նրա թագավորության սահմանները, ավերում նրա քաղաքներն ու գյուղերը: Ասողիկը վկայում է. «... (Գագիկը – Ի. Ղ.)

<sup>1</sup> Ղ. Մովսեսյան, նշվ. աշխ., էջ 26:

<sup>2</sup> Ասողիկ, նշվ. աշխ., էջ 279:

գորօք ի Տաշիր և շրջան առալ ընդ Շամշուլտէ և ընդ Վրաց դաշտ՝ քանդեալ աւերեաց գամենայն. զի յամաց ի նմա եռամսեայ աւուրբք ի ձմեռնային ժամանակին, ի ՆԾ (550+551=1001) թուականին, և ընդ Գագ բերդ անցնելով ել նա ի գաւառն Աղստե»:<sup>1</sup> Այս վկայութիւնից պարզ է դառնում, որ Դավիթ թագավորը գրկվում է իր բոլոր բերդերից ու քաղաքներից, ինչպես նաև՝ մայրաքաղաքից: Մի քանի անգամ Դավիթ Անհողինը փորձեր է անում դիմադրելու Գագիկին, սակայն անհաջողութեան մատնվելով՝ դիմում է ժամանակի կաթողիկոս Տեր Սարգսին, որը և հաշտեցնում է երկու թշնամացած հարազատներին: Պատմիչը գրում է. «Եւ ուխտ խաղաղութեան հաստատեալ Տեառն Սարգիս՝ կալ ի հնազանդութեան Դաւթի, իբրև որդի առ հայր, և Գագկայ՝ հայրենի խնամով սիրել զնա»:<sup>2</sup>

Ելնելով վերը բերված շարադրանքից՝ կարելի է հանգել հետևյալին.

1. Այն ուսումնասիրողները, որոնք ընդունում են, որ Մատթեոս Ուռհայեցու կողմից հիշատակված «թագաւորն Աղուանից Գուրգէն» անձնավորութիւնը Աշոտ Ողորմած արքայի երրորդ որդին է և հոր կենդանութեան ժամանակ նա արդեն ճանաչվել էր Գուգարքի (բնագրում Աղվանքի – Ի.Ղ.) թագավոր, սխալվում են: Աշոտ Ողորմած թագավորի կենդանութեան օրոք ժառանգութեան իրավունքի այդօրինակ անօրինականութիւն չէր կարող տեղի ունենալ:

2. Գուգարքում անկախ թագավորութիւնը կյանքի կոչվեց 979 թվականին, որն ընդգրկած տարածքի առումով երբեմն կոչվում էր Տաշիր–Ձորագետի թագավորութիւն, ավելի հաճախ՝ Կյուրիկյան՝ նրա հիմնադիր Գուրգեն-Կյուրիկեի անունով: Տեղական հորջորջմամբ Գուրգենը կոչվել է նաև Գաւրիկեն, Կորիկե, Կիւրիկէ:

3. Կյուրիկյան թագավորութեան հիմնադիր Կյուրիկե Առաջինը կամ Գուրգենը թագավորել է տաս տարի, այնուհետև մտել վանք: Մահացել է ութ տարի անց՝ 979+10+8=997 թվականին:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 279–280:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 280:

4. Կյուրիկյան թագավորութեան առաջացումը չի կատարվել Բագրատունյաց կենտրոնական թագավորութեան կամքին հակառակ, այլ նրա թագավորի (Սմբատ Տիեզերակալի – Ի.Ղ.) գիտութեամբ և հովանավորութեամբ, պայմանով, որ Գուգարքի գահակալները մշտապես ճանաչեն Անիի Բագրատունյաց կենտրոնական թագավորութեան գերագահութիւնը: Ավելին. արդեն նմանօրինակ նախադեպ արդեն տեղի էր ունեցել Աշոտ Ողորմածի և նրա եղբայր Մուշեղի հետ, Կարսում անկախ թագավորութիւն հռչակելու առիթով:

### ԼՈՌԵՆ ԿՅՈՒՐԻԿՅԱՆՆԵՐԻ ԵՎ ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ՕՐՈՔ

Հայաստանի Գուգարաց նահանգում 979-ին առաջացած Կյուրիկյան թագավորութիւնը մյուս մանր ֆեոդալական միավորումների նման վասալական կախման մեջ էր գտնվում Շիրակի Բագրատունյաց կենտրոնական թագավորութիւնից: Կյուրիկյան նորաստեղծ իշխանութեան վարչական կենտրոնը սկզբում Սամշուլտե (Սամշվիլդե) ամրոցն էր, որի ավերակները գտնվում են Վրաստանի Հանրապետութեան տարածքում: XI դարի կեսերին Կյուրիկյան թագավորներից Կյուրիկե Բ-ն իր մայրաքաղաք է հռչակում Լոռե (Լօռէ, Լաւռէ) ամրոցը: Լոռե ամրոցը հիմնադրելու մասին առաջինը հավաստում է XIII դարի մատենագիր Վարդան Արևելցին:<sup>1</sup> Պատմիչը, խոսելով Կյուրիկե Բ-ի մասին, գրում է. «Սմա հայրն Դաւիթ շինեաց զԼօռե և այլ ևս երկոտասան բերդս, որ կա թաղեալ ի Սանահին...»:<sup>2</sup> Հիմք չունենք չհավատալու պատմիչի վկայութեանը, որն ակնբերաբար ձեռքի տակ ունեցել է հավաստի աղբյուրներ, որոնք մեզ չեն հասել: Իրօք, Կյուրիկյան Դավիթ թագավորը թաղված է Սանահնի վանքում,<sup>3</sup> և Լոռե ամրոցի հիմնադրումը մեր պատմիչներից և ոչ մեկի կողմից մեկ ուրիշին չի վերագրվում: Բացի դրանից, երբ այս

<sup>1</sup> Ուսումնասիրողների կողմից պարզված է, որ Վարդան Բարձրբերդցու անվամբ հրատարակված աշխատության հեղինակը Վարդան Արևելցին է:

<sup>2</sup> Մեծին Վարդանայ Բարձրբերդցոյ, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 141–142: Նաև, Վարդան Արևելցի, Տիեզերական պատմութիւն, Երևան, 2001, էջ 150:

<sup>3</sup> Ս. Զալալյանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, էջ 110: Ի. Հարութիւնեան, Ազգագրական հանդես, գիրք Գ, Թիֆլիս, 1898թ., № 1–2, էջ 294:



խնդրին դառնում ենք պատմական իրադարձությունների հաջորդականության մեկնակետից, պարզվում է, որ Գուգարքի գահակալ Դավիթ Անհողինն ավելի քան զգում էր Լոռեի նման անառիկ ամրոցի անհրաժեշտությունը: Ինչպես արդեն հիշատակել ենք, X դարի վերջում Դավիթ թագավորը հզորանալով այլևս չէր ցանկանում ճանաչել Շիրակի Բագրատունիների թագավորության, մասնավորապես իր հորեղբոր՝ Գուրգենի գերիշխանությունը:<sup>1</sup> Հետագա դեպքերի գարգացումը հանգեցնում է այն բանին, որ Դավիթ Անհողինը զրկվում է իր բոլոր բերդերից ու քաղաքներից:<sup>2</sup> Թշնամացած հարազատներին հաշտեցնելու գործն իր վրա է առնում ժամանակի հայոց կաթողիկոս Տեր Սարգիսը: Հաշտեցումը հնարավոր է դառնում միայն Դավիթ Անհողինի հնազանդության երդումով:<sup>3</sup> Այս պարտությունից Դավիթը դառը դաս ստացավ՝ զգալով, որ ինքը գուրկ է լավ պաշտպանված քաղաք-ամրոցից, որի անառիկությանը կարողանա ապավինել օրհասական պահերին:

Պատմիչները Դավիթ Անհողինի շուրջ երեսնամյա գործունեության մասին լռում են: Պետք է ենթադրել, որ Գուգարքի այդ խիզախ և խոհեմ թագավորը եռանդով ձեռնամուխ էր եղել իր երկրի ամրությունների վերաշինության կամ նոր, առավել անառիկ բերդերի կառուցման գործին: Սխալված չենք լինի, եթե պնդենք, որ Լոռե ամրոցը Դավիթ Անհողինը կառուցեց կամ, որ ավելի հավանական է, վերակառուցեց հենց այս տարիներին, այսինքն՝ 1005–1030-ական թվականների ընթացքում: Գուգարքի գահակալը Լոռե ամրոցի տեղի ընտրության խնդրում բավականին հեռատես է եղել և հոգ է տարել, որ այն իր բնական անառիկությամբ, տարանցիկ առևտրի համար նպաստավոր դիրքով նման լինի կենտրոնական թագավորության մայրաքաղաք Անիին: Եվ նա մասամբ հասել է իր նպատակին: Ուսումնասիրողները Լոռե քաղաքը համարում են Անիի «փոքր երկվորյակ»:

<sup>1</sup> Ասողիկ, էջ 279:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 279–280:

<sup>3</sup> Ասողիկ, էջ 280:

Շուտով բերդաքաղաքի դերն ու նշանակությունն այնքան են մեծանում, որ Դավթին փոխարինած Կյուրիկե Բ-ն (1048–1089) Լոռե ամրոցը դարձնում է իր թագավորության մայրաքաղաք: Դա թելադրված էր այն հանգամանքով, որ 1064 թվականին սելջուկյան սուլթան Ալփ-Ասլանի (1063–1072) ավերիչ արշավանքի ընթացքում տուժեց Հայաստանի և Վրաստանի տարածքի մեծ մասը: Սելջուկների սուլթանը, օգտվելով իր դիրքից, Կյուրիկե Բ-ից կնուլթյան պահանջեց նրա դստերը, սակայն մերժում ստացավ: Ալփ-Ասլանը նույն պահանջով դիմեց նաև վրաց թագավոր Բագրատ Դ-ին, քանզի Կյուրիկե Բ-ի կինը վերջինիս քույրն էր: Բագրատ Դ-ն, իր երկիրը նորանոր ավերածություններից զերծ պահելու համար հաճոյանալով սելջուկների սուլթանին, հանձնարարում է իր զորավար Վարազբակուր Գամրեկելիին դարանակալել և գերի բռնել Կյուրիկեին: Քվիչի անտառում գերեվարվելուց հետո Կյուրիկեն ստիպված էր ոչ միայն բավարարել սելջուկների սուլթանի պահանջը՝ դստերը կնուլթյան տալով նրան, այլև վրաց Բագրատ Դ-ին զիջեց իր մայրաքաղաք Սամշվիլ-դեն:<sup>1</sup> Ահա ակներևաբար այս դեպքերից հետո 1064/65 թվերին է, որ Կյուրիկեն իր թագավորության մայրաքաղաք հռչակեց Լոռե ամրոցը: Կյուրիկյան թագավորության կենտրոն հռչակվելու համար Լոռեն ուներ բոլոր անհրաժեշտ նախադրյալները. նախ՝ տեղադրված էր թագավորության գրեթե կենտրոնական շրջանում: Երկրորդ՝ այն գտնվում էր Հայաստանի հարավային շրջաններից եկող և դեպի հարևան Վրաստան ու Ատրպատական տանող ճանապարհի վրա. և երրորդ՝ Լոռեն իր ռազմական անառիկությամբ չէր զիջում Շիրակի Բագրատունիների անառիկ մայրաքաղաք Անիին:

Թագավորը և նրա աչքի ընկնող գործակալները ոչինչ չեն խնայել շքեղ ու անմատչելի դարձնելու իրենց մայրաքաղաքը: Ճիշտ է, մենք թեև չունենք վկայություններ այն մա-

<sup>1</sup> Սամուելի քահանայի Անեցույ հաւաքմունքի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 112, Վարդան Բարձրբերդցի, էջ 136: Համառոտ պատմութիւն Վրաց Զուանչլիի պատմիչի, Վենետիկ, 1884, էջ 113, Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 146, Ինչպես նաև տես Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ժի դարի պատմության մի քանի հարցեր, Երևան, 1980, էջ 48:



սին, թե ինչպիսի շինություններ են կառուցվել Լոռեում, և կամ ովքեր են դրանք կառուցողները, սակայն նկատի ունենալով միջնադարյան ֆեոդալական կենտրոնների կառուցապատմանը վերաբերող հիշատակությունները՝ կարող ենք հանգել այն հետևություններ, որ Լոռե քաղաքը աճեց ու զարգացավ ոչ միայն Կյուրիկյան թագավորների ու նրանց ենթակա ֆեոդալների, այլև քաղաքի արհեստավորական և առևտրական խավերի ջանքերով:

Մայրաքաղաք դառնալուց հետո Լոռեն արագ թափով սկսում է զարգանալ: Ուսումնասիրողները գտնում են, որ XI-XII դարերում Լոռեն ունեցել է շուրջ տաս հազար բնակիչ:<sup>1</sup> Քաղաքի բնակչությունը հիմնականում աճել է ի հաշիվ գյուղերից փախած ճորտ գյուղացիների, արհեստավորների ու առևտրականների: Վերջիններիս արհեստանոցները, կողպակները տեղադրված են եղել միջնաբերդից դուրս՝ նորաստեղծ քաղաքային թաղամասերում: Այդ շրջանում Լոռեում կառուցվել են աշխարհիկ և եկեղեցական ճարտարապետական կարևոր շինություններ, շուկաներ, հրապարակներ, կոմունալ-կենցաղային կառույցներ, բաղնիքներ, արտադրական շենքեր, քաղաքային պարիսպը, ջրամատակարարման համակարգը և այլն:

Լոռեն ունեցել է իր միջնաբերդը, որը հյուսիսարևմտյան կողմում անջատված է բուն քաղաքից: Զորագետ և Միսխանա գետերի խորընկա կիրճերում կառուցված կամուրջներով քաղաքը կապված է եղել իր արևելյան և հարավային կողմերում գտնվող բնակելի թաղամասերի հետ: Լոռե քաղաքի առաջացման և զարգացման ընթացքը չի տարբերվել Հայաստանի միջնադարյան այն քաղաքներից, որոնք գոյացել են բերդերի շուրջը:

Խնամիական գործառույթը, որ կնքվել էր Ալփ-Ասլանի և Կյուրիկե Բ-ի միջև, նպաստեց վերջինիս՝ մինչև իր մահը խաղաղություն գոյակցելու սելջուկների հետ: Դրանով նա իր երկիրը հեռու պահեց սելջուկյան ելուզակների ավերիչ արշավանքներից և նույնիսկ բազում ընծաներ ստացավ Ալփ-

Ասլանից,<sup>1</sup> հետագայում, ինչպես մեր պատմիչներն են վկայում, Կյուրիկե Բ-ն, այցելուության գնաց Ալփ-Ասլանին հաջորդած Մելիք-շահ սուլթանն և առավել պատիվների արժանացավ: Մխիթար Այրիվանեցին գրում է. «Թագաւորն Հայոց Կիւրիկէ, Վրաց թագաւորն Դեմետրէ և կաթողիկոսն Հայոց տէր Բարսեղ գնացին առ Մելիք Շահ սուլտանին և դարձան պատուով»:<sup>2</sup>

Կյուրիկե Բ-ն միշտ չէ, որ խաղաղ կյանք է վարել: Պատմիչ Կիրակոս Գանձակեցին վկայում է. «Իսկ Կիւրիկէ Բագրատունի, որ ի Լօռէ քաղաքի, զամենայն ժամանակս իւր կացեալ ընդդեմ Վրաց, ի հաստատութեան պահէր զհայրենիս իւր»:<sup>3</sup>

Կյուրիկե Բ-ի մահից հետո, որը պետք է տեղի ունեցած լիներ 1089թ., Կյուրիկյան թագավորության գահը ժառանգում են նրա որդիները՝ Աբասը և Դավիթը: Սրանց օրոք Լոռե քաղաքն առաջին անգամ պաշարվում և զրավվում է սելջուկների կողմից 1105 թվականին: Այս մասին վկայում է Սամվել Անեցին. «ՇԾԴ (554+551=1105) Խզըլն էառ զԼօռէ՝ և զուխտսն սուրբ զՀաղբատ և զՍանահինն այրեաց»:<sup>4</sup> Սակայն սելջուկները երկար չեն հանգրվանում Լոռեում, արշավում են Դվին, որտեղ և Խզըլն սպանվում է իր ախոյանների ձեռքով:<sup>5</sup> Կյուրիկյանները կրկին տեր են դառնում իրենց մայրաքաղաքին՝ մինչև 1118 թվականը, երբ այն նվաճում են վրացական զորքերը: Նվաճված քաղաքն իր շրջակայքով, որպես կալվածք, տրվում է Օրբելիներին,<sup>6</sup> որոնք վրացական արքունիքում զբաղեցնում էին ամիրսպասալարություն պատոնը:

<sup>1</sup> Մատթէոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 146:

<sup>2</sup> Սամուել Անեցի, էջ 118, Վարդան Բարձրբերդցի, էջ 141, Մխիթարայ Այրիվանեցույ Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 60: Նույնի, Պատմութիւն ժամանակագրական, էջ 75:

<sup>3</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 151:

<sup>4</sup> Սամվել Անեցի, նշվ. աշխ., էջ 121: Վարդան Բարձրբերդցի, էջ 150:

<sup>5</sup> Սամվել Անեցի, էջ 121-122:

<sup>6</sup> Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփանոսի Սիւնեաց, Օրբելեան արքեպիսկոպոսի, Թիֆլիս, 1910, էջ 379: Սխալմամբ Ռ. Մաթևոսյանը Կյուրիկյան թագավորության անկումը գնում է 1110-1113 թվականներին, որը չի համապատասխանում իրականությանը, տես Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ., հ. 3, էջ 473:

<sup>1</sup> Բ. Առաքելյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 126:

Ս. Պողոսյանը, Ռ. Մաթևոսյանը<sup>1</sup>, հենվելով վրացական ժամանակագիրների հաղորդած տեղեկությունների վրա, գտնում են, որ վրացիները Լոռեն գրավել են ոչ թե հայերից, այլ սելջուկներից: Սակայն մեր պատմիչները այլ իրողություն մասին են հավաստում: Այդ առթիվ Վարդան Արևելցին գրում է, թե Դավիթ Անհողինի «թոռունք Աբաս և Դաւիթ, նեղեալ ի վրաց չոգան ի տեառսն Առանայ և առին մէն մի բերդ և կային տառապանաւք»: Վարդանը մի փոքր հետո գրում է. «Եւ ընդարձակեալ Դաւիթ (Շինարարը – Ի.Ղ.) զսահմանս Վրաց՝ զՈւխտիս և զսահմանս իւր՝ – զԳագ, զՏէրունականն, զՏաւուշ, զԿայծոն, զԼօռէ, զՏաշիր, զՄահկանաբերդ և զբոլոր իշխանութիւն Հայոց՝ Կիւրիկէի և Աբասայ հնազանդէր, ...»: <sup>2</sup> Գրեթե նույնն են վկայում Կիրակոս Գանձակեցին և Ստեփանոս Օրբելյանը: <sup>3</sup> Դավիթ թագավորը 1223թ. կրկին վերահաստատում է իր որոշումը և «Լոռէ իւր գաւառովն» տալիս է Իվանե Օրբելուն՝ որպես կալվածք: Իվանեն մահանում է 1128թ., և Լոռեի տեր է դառնում նրա որդին՝ Սմբատ Օրբելեանը:

Վրաց ամիրսպասալարների ձեռքում Լոռե քաղաքը մնում է մինչև 1176-1177 թվականները: <sup>4</sup> Ըստ հայ ժամանակագիրների, պատմիչների ու վրացական աղբյուրների՝ Գեորգի Գ (1156-1184) թագավորի դեմ Իվանե Օրբելու և Դեմետրեի (Դեմնա – Ի.Ղ.) գլխավորած ապստամբության կենտրոնը Լոռե բերդաքաղաքն էր: <sup>5</sup> Այդ մասին ժամանակագիրը գրում է. «Իսկ սպարապետն Իւանե որդւովքն և կնաւն և ամենայն աղխիւն գայ մտանէ յանառիկն Լաւռէ... Հասանեն և նոքա (համախոհները – Ի.Ղ.) ի դղեակն Լաւռէ, և ամենայն ազգ

ապստամբացն ի մի վայր գումարին»: <sup>1</sup> Այս «անառիկ Լաւռէն» անմատչելի դարձնելու համար ապստամբներն ամրացնում են քաղաքի պարիսպները և դյուրամատչելի տեղերում կառուցում անանցանելի պատնեշներ:

Գեորգի Երրորդ թագավորի զորքերը պաշարում են քաղաքը, սակայն գրավել չեն կարողանում: Շուտով ապստամբներից հեռանում է հայազգի նշանավոր զորավար և պետական գործիչ Սարգիս Չաքարյանը «իւր որդոց և եղբորորդիների հետ»: Վրաց թագավորը սրանց սիրով է ընդունում. «և վստահելիութիւն շնորհեց համաձայն նրա վսեմութեան»: <sup>2</sup>

Երբ պաշարվածների վիճակը դառնում է օրհասական, և ուշանում է դրսից սպասվող օգնությունը, պարսպից կախ արած պարանների օգնությամբ բերդից հեռանում է նաև թագաժառանգ Դեմետրեն՝ լքելով աներոջը՝ սպարապետ Իվանեին և ապստամբներին: Դեմետրեն հանձնվելով հույսը դնում է ամրոցը պաշարած հորեղբոր՝ Գեորգի Գ-ի գլխատուության վրա: <sup>3</sup> Իվանեն տեսնելով, որ իր կողմնակիցների շարքերը գնալով նոսրանում են, և այլևս օգնության որևէ հույս չկա, ի վերջո հանձնվում է՝ խոսք առնելով թագավորից, որ հալածանքի չի ենթարկվի: Սակայն Գեորգի թագավորը դրժում է իր խոստումը և բնաջինջ անում Օրբելիների իշխանական տոհմը՝ <sup>4</sup> վերջինիս հետնորդներին զրկելով հայրենի ժառանգությունից:

«Սակայն այս ամենը Իվանե Օրբելյանի պարտությունից անմիջապես հետո չկատարվեցավ», – գրում է Գարեգին կաթողիկոսը: <sup>5</sup> Բաղմավաստակ գիտնականին շփոթության մեջ է գցել Սանահնի մի արձանագրության սխալ ընթերցումը, թվականը կարգալով ՈԼԲ (632+351=1183), որտեղ Իվանեն հիշատակվում է որպես ամիրսպասալար: <sup>6</sup> Այս փաստից ելնելով էլ Գարեգին Հովսեփյանը գտնում է, որ մինչև 1183թ.

<sup>1</sup> Ս. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, Երևան, 1965, էջ 97: Ռ. Մաթևոսյան, նույն տեղում, էջ 473, 201-202:

<sup>2</sup> Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, էջ 150, նույնը նաև Կիրակոս Գանձակեցի, էջ 151-152:

<sup>3</sup> Վարդան Բարձրբերդցի, էջ 157, նույնի, Տիեզերական պատմություն, էջ 164:

<sup>4</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 151-152, Ստ. Օրբելյան, էջ 379:

<sup>5</sup> Հ. Մարգարյանի վերջերս հրատարակված և մեր կողմից արդեն հիշատակված աշխատության մեջ նոր տեսակետ է առաջարկվում, որ ապստամբությունը տեղի է ունեցել ոչ թե 1177-1178թթ., այլ 1176-1177թթ.: Մենք հարկ համարեցինք հետևել նրա օրինակին: Տե՛ս Հ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 175-184:

<sup>6</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 383-389, Լևոն Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, հ. Բ, Երևան, 1934, էջ 10-11:

<sup>1</sup> Գարեգին կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 472:

<sup>2</sup> Լ. Մելիքսեթ-բեկ, նշվ. աշխ., հ. 2, էջ 26:

<sup>3</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 388:

<sup>4</sup> նույն տեղում:

<sup>5</sup> Գարեգին Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պոռչյանք Հայոց պատմության մեջ, մասն 1-ին, Վաղարշապատ, 1928, էջ 6:

<sup>6</sup> նույն տեղում:

Իվանե Օրբելին դեռևս պաշտոնավարում էր վրացական արքունիքում: Այս հետաքրքրական արձանագրությունների թվականի ճշտման խնդրով զբաղվել է Պարույր Մուրադյանը: Նա ապացուցում է, որ ՈԼԲ-ն պետք է կարդալ ՈԻԲ (622+351=1173),<sup>1</sup> որը և թելադրում է հանգելու այն հետևությունները, որ Գեորգի Գ-ն Օրբելիների տոհմը բնաջնջում է նույն՝ 1177 թվականին:

Լոռեն՝ որպես ռազմական անառիկ դիրք ունեցող քաղաք, դիմանում է 207 օր տևող պաշարմանը և չի նվաճվում գեներալի ուժով:<sup>2</sup> Նրա պարիսպներն անառիկ են մնում՝ չնայած թշնամու բազմիցս կրկնվող գրոհների: Լոռե քաղաքը իր հողերով տրվում է նախ ամիրսպասալար Ղուբասարին, ապա՝ հավանաբար 1186-ին՝ հայազգի Սարգիս Զաքարյան մեծ իշխանին «... ի իշխանութիւն և ի տիրապետութիւն Սոմխեթի...»:<sup>3</sup> Իսկ նրա մահից հետո բոլոր կալվածքներն անցնում են նրա որդիներին՝ Զաքարե և Իվանե Զաքարյաններին: Զաքարեն և նրա որդի Շահնշահը, բացի Լոռեից, տիրում էին նաև Անիի և Անբերդի երկրներին, մինչև ներքին Բասեն:<sup>4</sup> Հետաքրքիր է, որ Շահնշահը հիմնականում բնակվում էր Լոռեում, չնայած այն բանին, որ նրան էր ենթարկվում նաև երբեմնի հռչակավոր Անի մայրաքաղաքը:<sup>5</sup>

Ցավոք չունենք այնպիսի փաստ, որն ապացուցեր, թե Լոռե քաղաք-ամրոցը ընկած էր տարանցիկ առևտրի հանգուցակետերից մեկում: Սակայն սխալված չենք լինի, եթե ասենք, որ այդ քաղաքը իր ավանդն ուներ առևտրի բարգավաճման մեջ: Քանի որ Կարսից և Անիից ձգվող կարավանները, որոնք առևտրական կապեր ունեին Տիֆլիսի և Մերձսևծովյան ավազանի հյուսիսային քաղաքների հետ, անպայման անցնում էին Լոռեով, ապա մտնում Դմանիս և Սամշուղե

<sup>1</sup> Պարույր Մուրադյան, Վրացիներն արձանագրությունները Հայաստանում, տե՛ս Լրագրեր հասարակական գիտությունների, 1966, № 3: Ինչպես նաև նույն հեղինակի՝ Հայաստանի վրացիներն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 150-158:

<sup>2</sup> Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ պաշարումը տևել է «13 հրոտից մինչև 5 մեհեկի, այսինքն՝ դեկտեմբերի 13-ից հուլիսի 5-ը, տե՛ս Ստեփանոս Օրբելյան, էջ 385-386:

<sup>3</sup> Լ. Մելիքսեթ-բեկ, նշվ. աշխ., էջ 11:

<sup>4</sup> Գարեգին Հովսեփյան, նշվ. աշխ., մասն Ա, էջ 8:

<sup>5</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 253:

քաղաքները և այնուհետև շարունակում իրենց ճանապարհը դեպի Տիֆլիս: Լոռե քաղաքը ժառանգաբար Զաքարյան իշխանական տոհմի ձեռքին է մնում մինչև 1261 թվականը, երբ մոնղոլները սպանում են Շահնշահի որդի Զաքարեին:

Միանգամայն տրամաբանական է, որ Զաքարյանների տոհմը, որը բազմաթիվ տեղերում շինարարություններ է կատարել, պետք է հատուկ ուշադրություն դարձներ սեփական մայրաքաղաքի բարգավաճմանը: Քաղաքի ներսում Զաքարեն, Շահնշահը և սրանց հաջորդները կառուցել են պալատներ, եկեղեցիներ, բաղնիքներ, կանգնեցրել խաչքարեր, արվարձանները քաղաքից բաժանող անդնդախոր կիրճերն իրար կապել կամուրջներով և այլն:

Լոռե քաղաքը Զաքարյանների շրջանում այնքան է ծաղկում, որ դառնում է համահայկական խնդիրների քննություն և լուծում տալու կենտրոն: Այդ մասին է վկայում 1208 թվականին Զաքարե Զաքարյանի կողմից Լոռեում հրավիրված համահայկական ժողովը,<sup>1</sup> որի օրակարգում կրոնադավանաբանական հարցեր էին դրված: Այդ ժողովին մասնակցում էին այնպիսի խոշոր դեմքեր ու մշակութային գործիչներ, ինչպիսիք էին՝ Մխիթար Գոշը, Հովհաննես Սանահնեցին, Խաչատուր Տարոնացին, Դավիթ Քոբայրեցին, Գրիգոր Դվնեցին, Սարգիս Անեցին, Սարգիս Սևանցին, Գրիգոր Մոնիկը «և այլք յոլովք աստի և անտի՝ հանդերձ երևելի քահանայիւք վանաց և քաղաքաց և գիւղից»:<sup>2</sup>

Զաքարյանների տիրապետության ընթացքում առաջին անգամ 1226 թվականին Լոռե քաղաքը պաշարում են Խորեզմի շահ Զալալեդդինի հրամանատարներից մեկի՝ խան էլեկի զորքերը:<sup>3</sup> Սակայն թշնամիները կարողանում են թափանցել միայն քաղաքի արվարձանները և հետ մղվում: Շատ չանցած՝ 1236թ. վրա են հասնում մոնղոլական ավերիչ արշավանքները: Ընդհատվում է քաղաքի խաղաղ շինարարական կյանքը: Հ. Մանանդյանը գրում է. «Ավելի ծանր

<sup>1</sup> Մաղաքիս արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, Պէյրութ, 1959, էջ 1576, նույն թվականն է համարում նաև պրոֆ. Կ. Լաֆաղարյանը իր «Սանահնի վանքը և նրա արձանագրությունները» մենագրության էջերում, Երևան, 1957, էջ 52:

<sup>2</sup> Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 171-172:

<sup>3</sup> M. Brosset, Histoire de la Géorgie... 1<sup>re</sup> partie L. Pétersbourg, 1849, p. 513.

եղավ Լոռի բերդաքաղաքի և հարևան տեղերի ղրությունը, որ գտնվում էին ամիրսպասալար Զաքարեի որդի Շահնշահի իշխանության տակ»:<sup>1</sup>

Այս տարածքները բաժին են ընկնում նվաճելու մոնղոլական զորավարներից Չաղաթայ Նոյինին: Դեպքերին ժամանակակից պատմիչ Կիրակոս Գանձակեցին մանրամասն նկարագրում է քաղաքի պաշարումն ու առումը՝ միաժամանակ դառնալով պաշտպանական որոշ կառույցների և կենցաղային շենքերի նկարագրությունը:

Դիմենք պատմիչին. «ՎԱՍՆ ԱԻԵՐՄԱՆ ՔԱՂԱՔԻՆ ԼՕՌՈՅ:

Զօրավարն ամենայն գնդին հեթանոսաց, որում անունն էր Չաղաթայ, լուաւ վասն ամրութեան քաղաքին Լօռոյ և յուրվութան գանձուցն՝ որ ի նմա. զի ի նմա էր տուն իշխանին Շահնշահի և գանձք նորա: Առեալ ընդ իւր զընտիր սպառազէսս յուրով մեքենայիւք և ամենայն պատրաստութեամբ չոգաւ անդ և նստեալ շուրջ զնովաւ՝ պաշարեաց զնա:

Իսկ իշխանն Շահնշահ առեալ զկին իւր և զմանկունս, ել գաղտագողի ի ձոր անդր, և ամրացաւ յայրս ուրեք. և վերակացութիւն քաղաքին տայ ի ձեռս աներաց իւրոց: Իսկ նոքա՝ քանզի արք կանացիք էին, ուտելոյ և ըմպելոյ և արբեցութեան պարապեալ, յուսալով յամրութիւն պարսպացն, և ոչ յաստուած:

Եկեալ թշնամեացն՝ փորեցին ներքոյ պարիսպն և փլուցին զնա, և ինքեանք շուրջ նստեալ պահէին, զի մի ոք փախիցէ: Իսկ բնակիչք քաղաքին իբրև տեսին, թէ առաւ քաղաքն, սկսան մղիլ և վախից և ի ձոր անդր լնուին: Եւ զայն տեսեալ թշնամեացն՝ սկսան մտանել ի քաղաքն և կոտորել յանխնայ զայրս և զկանայս, զմանկունս՝ աւար առեալ զինչս և զստացուածս նոցա. գտին և զգանձս իշխանին Շահնշահի, որ զրկեալ և կողոպտեալ էր զիւր հնազանդեալսն և անդ կազմեալ տուն գանձուց ամրագոյն, զոր ոչ էր հնար ումեք տեսանել, զի նեղ արարեալ էր զբերան գբին, որ միայն արկանելոյն էր բաւական, իսկ հանլոյ ոչ ևս: Սպանին և զաներսն Շահնշահին, և ինքեանք խոյզ արկեալ ամենայն ամրոցաց զգաւա-

<sup>1</sup> Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, 2-Գ, Երևան, 1952, էջ 203:

ռին՝ զոր պատրանօք և զոր բռնութեամբ առին զբազումս, զի տէր մատնէր ի ձեռն նոցա»:<sup>1</sup>

Քաղաքի գրավման թվականի խնդրում սխալական է պրոֆ. Վ. Հարությունյանը՝ այն համարելով 1238 թվականը:<sup>2</sup> Հ. Մանանդյանը, Ս. Պողոսյանը և ուրիշներ<sup>3</sup> սկզբնաղբյուրների հիման վրա պարզել են, որ Լոռեի գրավումը տեղի է ունեցել 1236 թվականին: Այդ մասին Մատենադարանում պահվող № 4160 ձեռագրի հիշատակարանում Սիմոն գրիչն ավանդել է «Գոյժ աղաղակի յոյժ լուաք յայսմ ամի, որ ՈԶԵ (685+551=1236) յամսեանս յարաց Ժ/10 յաւուր կիւրակէի թէ զքաղաքաբերդն զԼաւռէ և զսբ. Մարի առին անաւրեն այլասեռք զաւրք տաթարին...»:<sup>4</sup> Այսպիսով, պարզվում է, որ Լոռե քաղաքը մոնղոլների կողմից գրավվել է 1236 թվականի հունիսի 30-ին:

Լոռե քաղաքի անկումից հետո նրա տերը՝ Շահնշահ Զաքարյանը, փախչում է Աջարիա, բայց երբ տեղեկանում է, որ մոնղոլներին հպատակություն հայտնած Ավագը (Շահնշահ Զաքարյանի հորեղբոր որդին – Ի.Ղ.) ետ է ստացել իր բոլոր տիրույթները, վերադառնում է հայրենիք և հայտնում իր հպատակությունը մոնղոլներին, ետ ստանում իր բոլոր կալվածքները:<sup>5</sup>

Կիրակոս Գանձակեցին նշում է, որ Շահնշահը 1242-ին մոնղոլների հետ մասնակցում էր Կարինի գրավմանը: Իսկ 1257 թվականին Բաղդադի վրա արշավելիս արդեն Շահնշահի կողքին է նրա որդին՝ Զաքարե Զաքարյանը, որը հորն էր փոխարինել ամիրսպասալարություն պաշտոնում: Սակայն 1259-1261թթ. հայ իշխանների կողմից նվաճողների դեմ կազմակերպված ապստամբությունը մասնակցելու համար մոնղոլների կողմից շատերի թվում գլխատվում է նաև Զաքարեն: Ըստ վկայության՝ հայրը չի կարողանում տանել որդու կո-

<sup>1</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 253 254:

<sup>2</sup> Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 58:

<sup>3</sup> Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 198, Ս. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, պրակ 5, Երևան, էջ 12-13:

<sup>4</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 4160, էջ 74բ, նույնը տե՛ս Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, Երևան, 1951, հ. 1, էջ 26:

<sup>5</sup> Լ. Մելիքսեթ-բեկ, նշվ. աշխ., հ. Բ, էջ 54 55: Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 206:

րուստր և մահանում է 1261 թվին Օձունում ու թաղվում Քորայրի վանքում:<sup>1</sup>

Ջաքարեի դուստրը հետագայում ամուսնանում է Սյունիքում հաստատված Օրբելյան տոհմի Տարսայիճի որդի Զալալի հետ, դրանով իսկ հնարավորություն ստեղծում, որ Զաքարյան այդ ճյուղին պատկանող բոլոր հողերն անցնեն Օրբելյանների ձեռքը: Տարսայիճը երկար չի ապրում, մահանում է 1290 թ.:<sup>2</sup>

## ԼՈՌԵՆ XIV–XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

Հայ պատմիչները և օտար հեղինակները XIII դարի վերջերից մինչև 1430 թվականը լուում են Լոռե քաղաք-ամրոցի գոյությունը մասին, երբ Լանկ-Թամուրի որդի Շահուլիսը (1404-1447) գրավում է այն: Վերջինս քաղաքն իր ձեռքում չկարողացավ երկար պահել: 1432թ. վրաց Ալեքսանդր թագավորը (1412-1443) Լոռեն ետ է գրավում:<sup>3</sup> Լոռե քաղաքը իր գավառով, որպես կալվածք, 1435 թվին կրկին տրվում է Օրբելյան Սմբատի որդի Բեչքենին (վրաց աղբյուրներում վերջինս հորջորջվում է Պելգինե – Ի.Ղ.), որը Ալեքսանդր թագավորի աներն էր:<sup>4</sup> Բեչքեն-Պելգինեն շուրջ 6000 հայ բնակչություն հետ Սյունիքից տեղափոխվում է Լոռե: Հայաստանի տարբեր գավառներից այստեղ են հաստատվում նոր փախստականներ և ընդունվում Բեչքենի կողմից:<sup>5</sup> Սակայն հետագայում վրաց թագավորը սկսում է վախենալ Բեչքենի օրավոր աճող հեղինակությունից և շուտով դեղամահ է անում նրան: Այդ մասին 1438 թվականին գրված մի հիշատակարանում ասված է. «... ի թագաւորութեան վրաց Ալեքսանդրէի, և պարոնութեան տեղոյս և նահանգիս Լօռոյ՝ մեծափառ և աստուածասէր իշխանաց իշխանիս՝ պարոն՝ Բէչքենին յազգէն Օրբէլեանց, թոռն մեծ պարոնին Բուրթէլին, ի թուականիս հայկազեան տոմարիս ՊՁԷ (887+551=1438) ամի»:<sup>1</sup> Լոռե քաղաքը իր շրջակայքով անցնում է նույն Օրբելյան տոհմի մեկ այլ ներկայացուցչի ձեռքը:

XV դարի առաջին կեսերին Լոռու տերերը նորից Օրբելյաններն էին: Դա սակայն երկար չի տևում. 1460-ական թվականներին վրացական աղբյուրներում Լոռեն հիշատակվում է որպես վրացական քաղաք:<sup>2</sup> Կարծում ենք, որ վրացական գերիշխանությունը այս վայրերում երկար չի տևել: Եվրոպական ճանապարհորդները այլ բան են վկայում: Դրանցից Զոգեֆա Բարբարոն 1471–1478 թվականների ընթացքում Տփլիսից աղկոյունյուրների շահ Ուզուն Հասանի մոտ գնալիս, իր ճանապարհորդական նոթերի մեջ Լոռե ամրոցի մասին հիշատակում է հետևյալը. «... հետո, անցնելով մի ուրիշ լեռ, դուք իջնում էք Հասանբեյի (Ուզուն Հասանի – Հ.Հ.) երկիրը, Մեծ Հայաստանում: Որտեղից երեք օրվան ճանապարհից, դուք գալիս էք Լոռու (Loreo) ամրոցը, և չորս օրվա ճանապարհ այնտեղից դուք պիտի գտնեք այն լեռը, ուր Նոյը ջրհեղեղից հետո, իջավ իր տապանով...»:<sup>3</sup>

Վենետիկի դեսպան Ամբրոսիո Կոնտարինին շատ ավելի համոզիչ տվյալներ է հաղորդում Լոռե ամրոցի մասին: Նա գրում է. «Երեկոյան հասանք Ուզուն Հասանին պատկանող մի ամրոց, որի պահակները թուրք էին, և որ կոչվում էր Լոռե (Lores)՝ գետեղված մի տեսակ դաշտում, որի ստորոտից, սակայն անցնում է մի խոր գետ: Մյուս կողմը կա մի լեռ և գետի դիմացը մի հայ գյուղ, ուր հիրավի մենք լավ ընդունելություն գտանք...»:<sup>4</sup> Ճանապարհորդը Հայաստանում եղել է 1473-1477 թվականների ընթացքում, մասնավորապես Լոռե ամրոցում, 1474 թվի հուլիսի 22-23-ին:

Լ. Խաչիկյան, Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն 1-ին, (1401-1450թթ.), Երևան, 1955, էջ 485-486: Բ. Թումանյանը վերջերս հրատարակված «Առձեռն տոմարացույց» աշխատության մեջ խորհուրդ է տալիս 1320թ. հետո հայկական մեծ թվականի վրա ավելացնել ոչ թե 551, այլ 550, բայց մենք առաջնորդվեցինք արդեն վաղուց քաղաքացիություն ստացած ձեռով, ճիշտ համարելով այն: Տես Բ. Թումանյան, «Առձեռն տոմարացույց», Եր., 1966, էջ 21-22:

<sup>1</sup> Լ. Խաչիկյան, Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն 1-ին, (1401-1450թթ.), Երևան, 1955, էջ 485-486: Բ. Թումանյանը վերջերս հրատարակված «Առձեռն տոմարացույց» աշխատության մեջ խորհուրդ է տալիս 1320թ. հետո հայկական մեծ թվականի վրա ավելացնել ոչ թե 551, այլ 550, բայց մենք առաջնորդվեցինք արդեն վաղուց քաղաքացիություն ստացած ձեռով, ճիշտ համարելով այն: Տես Բ. Թումանյան, «Առձեռն տոմարացույց», Եր., 1966, էջ 21-22:

<sup>2</sup> Լ. Մելիքսեթ-բեկ, նշվ. աշխ., հ. Գ, էջ 61:

<sup>3</sup> Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, ԺԴ-ԺԶ դդ. (1253-1582թթ.), Եր., 1932, էջ 206:

<sup>4</sup> Հովհ. Հակոբյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 226:

<sup>1</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 280, 380, 393:

<sup>2</sup> Մ. Ջամչեանց, Պատմություն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784, հ. Գ, 1786, Վենետիկ, էջ 282-284:

<sup>3</sup> Լ. Մելիքսեթ-բեկ, նշվ. աշխ., հ. Գ, էջ 75:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 75: Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ., շ-4, Երևան, 1972, էջ 61:

<sup>5</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, էջ 77:

Վերը բերված վկայություններից պարզվում է երկու իրողություն, նախ, Լոռեն այդ թվականներին պատկանում էր Ուզուն Հասանին: Վերջինս Աղ-կոյունյուց ցեղերի շահն էր և դեռևս 1467 թվականից պայքարի մեջ էր մտել Կարա-կոյունյուների դեմ ու կարճ ժամանակում տեր էր դարձել ամբողջ Հայաստանին, իհարկե, նաև Լոռե ամրոցին:<sup>1</sup> Ուզուն Հասանը, ամրոցը ռազմական առումով շատ կարևոր համադրելով, այնտեղ զորաբանակ էր պահում: Երկրորդ՝ Հյուսիսային Հայաստանում գտնվող բնակավայրերի մեջ Լոռե ամրոցի անունն այնքան հայտնի էր, որ վենետիկցի ճանապարհորդներն այն օգտագործում էին որպես նշանակետ իրենց անցած ճանապարհի երկարությունը որոշելիս:

XVI դարի սկզբներին, օգտվելով Աղ-կոյունյուների տիրապետության թուլացումից, Վրաստանը տեր դարձավ Հյուսիսային Հայաստանի մեծ մասին: Այս է վկայում վրաց տարեգիր էգնատաշվիլին՝ «Կոստանտինների որդի Դավիթ թագավորը (1505-1525 – Ի.Ղ.) տիրում էր Կարսի (Կարիի) երկրի (հայսկոյս) գտնվողի մասին մինչ Երևանի (Երբբունիի) սահմանը ներառյալ Փամբակը (Բամբակը) և Լոռին (Լորեն), մինչ Ղազախի սահմանը: Սրանք, Քարթլիի թագավորը ուներ գրաված»:<sup>2</sup> Հավանաբար, Լոռեն վրացիների տնօրինության տակ է մնում մինչև 1547թ., որովհետև ըստ ժամանակագիրների՝ վրաց Լուարսաբ թագավորի (1534-1558թթ.) կողմից այդ թվականին Լոռի-Փամբակի տեր էր կարգված Շերմազանը: Սակայն այս կառավարիչը շուտով սպանվում է պարսից Շահ-թահմազի կողմից, որն արշավել էր Անդրկովկաս: Շերմազանի փոխարեն Լոռի-Փամբակի տեր է կարգվում աթաբեկ Քեյ-խոսրովը:

Կարճ ժամանակ անց տևական պատերազմ է սկսվում Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի միջև: Լոռե բերդը ձեռքից ձեռք է անցնում: Վերջապես այն նվաճում են թուրքերը: Այդ մասին վրաց ժամանակագիր Փարսաղան Գորգիջանիձեն քրոնիկոնի 250 թվականի տակ գրում է. «Մեծ զորքով

եկավ Լալա-փաշան և գրավեց... Գորին, Լոռին և Աղջաղալեն և Ախալցխին... և բոլոր բերդերում պահապան(ներ) նշանակեց...»:<sup>1</sup> Եվ այսպես 1562թ. (250+1312) Լոռե բերդը գրավել են թուրքերը և այնտեղ պահակային զորք դրել որպես ռազմական տեսակետից առավել կարևոր կետ: Լոռեն մինչև 1580 թվականն անընդմեջ մնում է թուրքերի ձեռքում:<sup>2</sup>

1580-ական թվականներին վրաց Սիմեոն թագավորը (1558-1600) մի քանի անգամ փորձում է գրավել Լոռեն, բայց չի հաջողվում: XVII դարի սկզբից Լոռե բերդը վերստին կռվախնձոր է դառնում թուրքերի և պարսիկների միջև:

Ըստ ժամանակագիրների՝ Շահ Աբասի զորքերը 1599-ին գրավում են Լոռե ամրոցը, մեկ տարի անց ստիպված նորից վերադարձնում են օսմանցիներին: 1601թ. վրաց նոր թագավոր Գեորգի IX (1600-1605) գրավում է ամրոցը, և Շահ Աբասի պահանջով Լոռու տարածքը միացվում է պարսկական թագավորությանը:<sup>3</sup> Այնուհետև, ամբողջ մեկ հարյուրամյակ, Լոռե բերդը չի հիշատակվում որևէ կարևոր իրադարձության առնչությամբ: Հիշատակվում են միայն Լոռու խաները, որոնք շահերի հրամանով օգնության են հասնում իրենց հարևաններին:

Օգտվելով այն խառնակ իրավիճակից, որ ստեղծվել էր Անդրկովկասում XVIII դարի առաջին քառորդում, թուրքերը հարձակվում են Արևելյան Հայաստանի վրա և 1724թ. պաշարում Երևանը: Թուրքական բանակներից մեկը պաշարում է Լոռեն, բայց հանդիպում է բնակիչների ուժեղ դիմադրությանը: Այս դեպքերի մասին Կախեթի թագավորի ներկայացուցչի՝ ռուսական ցարին ուղղված զեկուլյցում կարդում ենք. «Թուրքերը շատ օրեր է, ինչ կանգ են առել, բայց չեն կարողանում (Լոռեն) վերցնել: Եվ երեք անգամ թուրքերը այս (քաղաքի) բնակիչներից պարտություն են կրել»:<sup>4</sup> Թուրքերին հաջողվում է Լոռեն գրավել միայն հաջորդ՝ 1725 թվականին:<sup>5</sup>

<sup>1</sup> Նույն տեղում, հ. Գ, էջ 110-111:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 80:

<sup>3</sup> Նույն տեղում, հ. Բ, էջ 141 և Հ-Գ, էջ 19, 20, 63:

<sup>4</sup> Ա. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1953, էջ 58:

<sup>5</sup> Լ. Մելիքսեթ-բեկ, նշվ. աշխ., հ. Գ, էջ 26:

<sup>1</sup> Ս. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, Եր., հ. 2, էջ 58-59: Հայ ժողովրդի պատմություն, Եր., 1972, հ. 4, էջ 47-56:

<sup>2</sup> Լ. Մելիքսեթ-բեկ, նշվ. աշխ., հ. Գ, էջ 10:

Քարերախտարար, թուրքական տիրապետութիւնը երկար չի տևում: Հայտնի է, որ թուրք-պարսկական պատերազմներն ավարտվեցին 1735թ. պարսկական զենքի հաղթանակով, և Արևելյան Հայաստանը անցավ նրանց տիրապետութիւն տակ:

Նադիր Շահը Լոռեում կազմակերպում է մելիքութիւն, և 1737 թվականից Լոռու մելիք է հիշվում Փեղանգ անունով տիրակալը: Դժվար է ասել, թե այս Փեղանգը ինչ ազգի էր պատկանում: Այս հարցի լուսաբանման համար թերևս կարևոր են վրաց ժամանակագիր Պապուկա Օրբելեանի տեղեկութիւնները: 1742 թվականի ժամանակագրութիւն տակ գրում է. «(Պարսից շահն) երեք հազար թուման պակասեցրեց երկրին, վրացու հարկը գիջեց, իսկ հային... կրկին ծանրարեռնեց»: Այս վկայութիւնից քիչ անց նույն ժամանակագիրը 1747 թվականի տակ գրում է. «Քանի որ Ղանը Լոռվա խանից շատ գանձումներ էր պահանջել արծաթով և խանը Լոռուց հեռացել էր, երկիրը մնացել էր անտեր. (ուստի և) Լոռվա քեղխուղաներն եկան Դմանիս ու աղերսեցին սրանց. «Մենք միշտ Օրբելու որդու և ընտանիքի աջակցութեամբ ենք դիմացել և այժմ այսպես անտեր ենք մնացել, հոգացեք մեր մասին»:<sup>1</sup> Այս վկայութիւնը թելադրում է եզրակացնելու, որ Լոռվա տերն ազգութեամբ հայ էր, որը, նեղվելով պարսկական արքունիքի կողմից վարած ծանր հարկային քաղաքականութիւնից, հեռացել էր երկրից:

Ղափլան Օրբելյանը գալիս և տեր է դառնում Լոռվա բերդին ու երկրին: Շուտով վրաց թեյմուրազ Երկրորդ թագավորը (1744-1762 թթ.) Լոռեն ետ է խլում նրանից և հանձնում ոմն Քալբի-Հուսեյն խանի որդի Մուսային: Արքայազնը Լոռվա բերդից դուրս է հանում թնդանոթներն ու զինանոցը և տեղափոխում Սամշուղե ամրոց:<sup>2</sup> Այս վկայութիւնը հավաստում է, որ մինչև XVIII դարի կեսը Լոռե անառիկ ամրոցը չէր կորցրել իր ռազմական կարևոր դերն ու նշանակութիւնը: Սա հաստատվում է վերը հիշատակված վկայութեամբ, որ մինչ այդ բերդում պահվում էին բավական շատ ռազմամթերք և թնդանոթ: Պարզ է դառնում նաև, որ Լոռե

բերդում դեռևս կանգուն էին խոշոր շինութիւններ, կրոնական և քաղաքացիական շէնքեր, զորանոցներ, կոմունալ-կենցաղային կառույցներ, կացարաններ և պահեստներ:

1756-ին Լոռվա քեղխուղաները երզվում են, որ հավատարիմ կմնան Վրաստանին:<sup>1</sup> 1785-ին Լոռե բերդը կրկին պաշարվում է այս անգամ արդեն ավարների Ումմա խանի զորքերի կողմից, որոնք սեպտեմբերի 29-ին պաշարեցին, սակայն միանգամից ամրոցը զրավել չկարողացան: Ութ օր պաշարվածները դիմադրում են խանի զորքերին: Վերջինս գայրացած հրամայում է իր զինվորներին անտառից փայտ բերել և լցնել ամրոցի պարիսպների տակ այնքան, որ զինվորները կարողանան բարձրանալ նրանց վրա և մտնեն ամրոցի ներսը:<sup>2</sup> Հրամանը կատարվում է: Ումմա խանը տեր է դառնում ամրոցին, որի բնակչութեան մեծ մասին գերեվարում են. ամրոցը ավերում ու հեռանում են՝ գերեվարվածներին տանելով Ախալցխա:

Այս ամենից հետո արդեն Լոռե ամրոցը առանձնապես կարևոր ռազմական կետ չէր, և հավանաբար այդ նկատի ուներ վրաց Հերակլ թագավորը, երբ փորձեց «մեծ գյուղ Լոռին» վաճառել Շահամիր Շահամիրյանին:

Հերակլի նամակատարը, ցավոք, Մադրասում չհանդիպեց Շահամիրյանին, վերջինս վախճանվել էր մեկ տարի առաջ:

Այսպիսով, երբեմնի հուշակավոր Լոռե քաղաքը XVIII դարի երկրորդ կեսին կորցնում է իր ռազմական անառիկ ամրոցի նշանակութիւնը և դառնում սովորական լքված ամրոց, որտեղ գալիս բնակութիւն են հաստատում Հայաստանի տարբեր շրջաններից տեղահանված գաղթականները:<sup>3</sup> Այստեղ առաջանում է համանուն գյուղը, որը մինչև 1926-1931թթ. տեղավորված էր բերդի ներսում: Հետագայում ջրի

<sup>1</sup> Լ. Մելիքսեթ-բեկ, նշվ. աշխ., էջ 145:

<sup>2</sup> Վ. Գրիգորյան, Երևանի խանութիւնը XVIII դարի վերջում (1780-1800), Եր., 1958, էջ 118:

<sup>3</sup> Տե՛ս Դիւան Հայոց պատմութեան, գիրք Դ, Թիֆլիս, 1899, էջ 393-396: Լոռե բերդի բնակիչների մասին հարկ է մեջբերել նաև 1782թ. մայիսին Հայոց Հայրապետ Ղուկասի կողմից վրաց արքայորդուն գրած նամակից հետևյալ նախադասութիւնը. «... Լոռու բերդաբնակքն՝ բնական սրբոյ Աթոռոյս վիճակք են, վասն զի նոքա ամենքեան են ապարանցիք, բյուրականցիք և ջափսեթցիք, որք ուր և լինիցին սրբոյ Աթոռոյս են և ոչ այլոց»: Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 145բ:

<sup>1</sup> Լ. Մելիքսեթ-բեկ, նշվ. աշխ., հ. Գ, էջ 27, 117, 122:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 123:

պակասություն և այլ անհարմարությունների պատճառով նրանք լքում են բերդը և բնակություն հաստատում նրանից երկու կիլոմետր հյուսիս-արևմուտք ընկած տարածության վրա, պահպանելով «Լոռի բերդ» անունը:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### ԼՈՌԻ ԲԵՐԴԱՔԱՂԱՔԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Լոռու մարզի Լոռե բերդաքաղաքի հնագիտական պեղումները ձեռնարկվել են 1966-ին, անընդմեջ շարունակվել մինչև 1974-ը: Հնավայրի պեղումները իրականացվել են Երևանի պետական համալսարանի հնագիտության ամբիոնի ջանքերով: Բերդաքաղաքում տարվող դաշտային հնագիտական աշխատանքները ղեկավարել է տողերիս հեղինակը:<sup>1</sup>

1966 թվականին իրականացվել են հետախուզական պեղումներ: Այդ նպատակի համար հնավայրի ամբողջ տարածությունից, ընտրական կարգով, պեղվեցին սասը փոքր բլիթ-քառակուսիներ (2x2մ):

Հետազոտական աշխատանքներով պարզվեց, որ միջնաբերդում մշակութային շերտի ստվարությունը տարբեր տեղերում հասնում է 80 սմ-ից 3 մետրի, քաղաքում 30 սմ-ից մինչև 2 մետրի:

Հետախուզական պեղումների ժամանակ միջնաբերդի պարսպատի հարավային պատի տակ 2,30-ից մինչև 3 մետր խորություն ունեցող շերտում՝ մայր հողի վրա ի հայտ եկան ուշ բրոնզեդարյան սև փայլեցված խեցանոթների բեկորներ: Նմանատիպ խեցեղենի գուգահեռները հայտնի են Հառիճի,

<sup>1</sup> Արչավախմբի աշխատանքներին մասնակցել են ճարտարապետության թեկնածու Ս. Հ. Մաթևոսյանը՝ արչավախմբի պետի տեղակալ (1966-1974թթ.), Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի ջրամատակարարման և ջրահեռացման ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Ռ. Վ. Եփրեմյանը (1968թ.): Որպես պրակտիկանտներ բոլոր տարիներին մասնակցել են Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի հնագիտության բաժնի 40-ից ավելի ուսանողներ, որոնց մեծ մասը ճանաչված հնագետներ են, գիտության ու մշակույթի գործիչներ՝ Ս. Հմայակյանը, Հ. Սիմոնյանը, Ա. Պողոսյանը, Է. Այվազյանը, Գ. Սարգսյանը, Հ. Օհանյանը, Լ. Աբովյանը, Վ. Հարությունյանը, վաղամեռիկ Հ. Հովակիմյանը, Ծ. Ասոյանը և շատ ուրիշներ: Մասնակցել են նաև վերականգնող հնագետներ Վ. Ասազյանը և Ռ. Հովհաննիսյանը, յուսանկարիչ Ռ. Հակոբյանը:

Մեր աշխատանքների ընթացքում, իբրև խորհրդատու Լոռե է այցելել ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի միջնադարի հնագիտության բաժնի վարիչ, դոկտոր, պրոֆեսոր Կարո Ղաֆազյանը:



Արթիկի, Լճաշենի և այլ ժամանակամերձ հուշարձաններում և դամբարաններում: Նախնական պեղումները Հնարավոր դարձրին ենթադրելու, որ ուշ բրոնզեդարյան շրջանից Հետո (մ.թ.ա. XIII դար) մինչև մեր առաջագրած թվագրության X դարը, ամրոցի տարածքը ակներևաբար բնակեցված չի եղել:<sup>1</sup>

**1967 թ.ՎԱԿԱՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ:** Հիշյալ տարվանից արշավախումբը սկսեց պարբերական պեղումները: Հնավայրի ամբողջ տարածությունը պայմանականորեն բաժանվել է տեղամասերի: Առաջին տեղամաս անունը ստացավ միջնաբերդը, երկրորդ՝ շահաստանը, երրորդ տեղամաս՝ Կենտագեղ արվարձանը, չորրորդ՝ Կիրով գյուղը տարածվող արվարձանը՝ Ամրակիցը: Միջոցների սղուծյան պատճառով պեղումները կենտրոնացվեցին միայն միջնաբերդում:

<sup>1</sup> Չարկ է նկատել, որ Ստեփանավան քաղաքից ժամանակակից Լոռի-բերդ բնակավայրը տանող ճանապարհի աջ և ձախ կողմերում, ինչպես նաև անմիջապես գյուղին հարող տարածքում, նրանից դեպի ամրոցը ձգվող հանդերում հաճախակի էին հանդիպում ջարդված խեցեղենի բեկորներ, միջնադարյան ջնարակապատ և հասարակ խեցանոթների մնացորդներ:

1968թ. Լոռի-բերդ գյուղի բնակիչների կողմից մեխիորատիվ աշխատանքներ կատարելիս, աշխատող բուլղոցերը մեծ դժվարությամբ տեղահան էր արել հսկա մի սալաբար: Պարզվել էր, որ նրա տակ դատարկ տարածություն կա: Այդ մասին տողերիս հեղինակին տեղեկացրեց տեղաբնիկ Տեյեմակ Նազարյանը, որն իր պատմելով նախկինում հաճախ էր ականատես եղել այդ դաշտում պատահականորեն բացված հնագույն թաղումների:

Մեր արշավախումբը այցելեց նորահայտ սալաքարի գտնված վայրը և առաջին իսկ դիտարկումով համոզվեց, որ սալաքարը պատկանում է բրոնզեդարյան կրոմլեխի, նրա ծածկասպերից մեկն է. մյուս երեքը տեղում պահպանվել էին անշարժ: Մենք թեև շատ զբաղված էինք միջնադարյան ամրոցի պեղումներով, սակայն որոշեցինք պեղել նորաբաց դամբարանը: Դամբարանախուցը բացելուց Հետո պարզվեց, որ այն քարակղզային է, ուղղանկյուն հատակագծով, արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Չափերն են երկարությունը՝ 5,3մ, լայնությունը՝ 2,8մ, իսկ բարձրությունը՝ 2,4մ: Պատերը շարված են ուղղահայաց զրված սալաքարերով: Նրա վերին շարքերում քարերը շարված են հորիզոնական դիրքով, և III-IV շարքերից աստիճանաբար առաջ բերվելով որոշ անկյան տակ, ծածկի թռիչքը հասցվել է 130-150 սմ-ի:

Դամբարանի մուտքը (զրոմուր) արևելյան կողմից է, որը փակել են թաղումից հետո կանոնավոր շարվածքով: Դամբարանը ակնհայտ բրոնզեդարյան ժամանակների է: Սակայն այդ ժամանակաշրջանի նյութերի գրեթե չհանդիպեցինք:

Դամբարանի պեղումները մեզ համոզեցին այն բանում, որ գանձորաները, որոնք խնամքով մի անկյունում կուտակել էին հանգուցյալի կմախքի մնացորդները, իսկ պիտանի ամբողջ գույքը՝ տարել: Հետագայում պարզվեց, որ այդ դամբարանը միակը չէ, այլ հսկայական դամբարանադաշտ կա այդ տարածքում:

Պետք է ենթադրել, որ նման տիպի հսկա տարածությունը գրադեցնող դամբարանը չէր կարող պատկանել հասարակ մահկանացուի: Հետագայում այս մասին մենք իրազեկ դարձրինք ԳԱ Հնագիտության ինստիտուտի աշխատակից Սեդա Դեկջյանին: Վերջինս հաջող տարիներին ուսումնասիրեց դամբարանադաշտը: Գտածոներից դատելով՝ դամբարանադաշտը թվագրվում է միջին ու ուշ բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջանով: Պարզվում է, որ ամրոցի տարածքում բնակվող բրոնզեդարյան բնակիչներին է պատկանել այս դամբարանադաշտը: Այս մասին տես Ս. Դեկջյան, Լոռի-բերդ. II (Միջին բրոնզ), Երևան, 2006, էջ 11:



Գծապիւր 1. Լոռի բերդի պեղումների տեղադրությունը

Միջնաբերդում արչավախմբի ուշադրութունը գրավեցին պաշտպանական պարսպից 60-70 մետր դեպի հարավ, «քաղաքացիական շենք» կոչվածից 25-30 մետր դեպի արևելք գտնվող, իրար վրա անկանոն ձևով թափված շաղախի հսկայական գանգվածները: Առաջին հայացքից պարզ դարձավ, որ այստեղ հնում եղել է մի շինութուն, որի պատերի քարերը հետագայում հեռացնելու պատճառով փուլ է եկել: Ծածկի շաղախի մեջ ժամանակին դրված են եղել մեծ քանակությամբ խեցեղեն անոթներ, որոնց բեկորները թափված էին հուշարձանի շուրջը, պահպանվել շաղախի մեջ:

Ծածկի գանգվածի մեջ նկատելի հարուստ խեցեղենի առկայությունը և այդ շենքի մնացորդները հարուցեցին արչավախմբի անդամների հետաքրքրությունը: Պեղումներ ձեռնարկեցինք այս տեղամասում: Աշխատանքները կենտրոնացվեցին միաժամանակ կառույցի ներսի և դրսի հատվածներում: Շինությունը բացելով՝ հայտնի դարձավ նրա հատակագծի պատկերը: Վերջինս 4,10x3,80 մետր չափերի ուղղանկյուն շենք է: Հիմնապատերը շարված են բազալտե կոպտատաշ քարերով, իսկ նրա վրա շարվածը իրականացված է սրբատաշ բազալտով, ներքուստ պահպանվել է երկու շարքերի մի քանի քար: Պեղման միջոցին շենքի ներսում բացվեցին խաչվող կամարների թափված փականաքարեր, թաղակապ ծածկի ու կամարների առանձին մանրամասներ: Ինչպես ամբողջ շենքը ներսի և դրսի կողմերից, այնպես և նրա գմբեթը կառուցվել են սրբատաշ բազալտե քարերով, որոնց մի մասը հայտնաբերվեց պեղումների միջոցին:

Պարզվեց, որ քանդված կառույցը մատուռ-դամբարան է, որը հաստատվում է նաև տեղում հայտնաբերված շինարարական արձանագրության (ընդ որում թերի) առկայությամբ: Մատուռի մեջ բացվեցին մի շարք թաղումներ, որոնց գերեզմանաքարերը XX դարի 20-30-ական թվականներին հեռացվել են Լոռի-բերդ գյուղի բնակիչների կողմից:

Կառույցի ծածկի շաղախի մեջ հայտնաբերվեցին բազմաթիվ կավանոթների բեկորներ: Միջին դարերում Հայաստանում լայն տարածում է ունեցել ծածկի լիցքը (շաղախը) թեթևացնելու և այդ եղանակով կառույցը ներքուստ ավելի


հնչեղ ձայնածավալ ստեղծելու եղանակը: Այն մեծ տարածում է ստանում հատկապես XI-XIII դարերում: Այստեղ հայտնաբերված խեցանոթները գերազանցապես կենցաղային են (կարասներ, սափորներ և այլն):

ԲՆԱԿԵԼԻ ԹԱՂԱՄԱՍԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ: 1967 թվականին արչավախումբը ձեռնարկեց միջնաբերդի հարավարմտյան կողմում տարածվող ընդարձակ հարթության պեղումները:<sup>1</sup> 30-40սմ խորություն վրա հանդիպեցին իրար հատող պատեր, անկանոն թափված քարեր և այլն: Պեղումների ավարտից հետո պարզվեց, որ այդ տարածքում Կյուրիկյան-Ջաքարյան շրջանի կառույցներից գրեթե ոչինչ չի պահպանվել: Բացվեցին միայն մեկ-երկու թոնիրներ, ուշ շրջանում կառուցված բնակելի տների և սրբատաշ կառույցների առանձին ճարտարապետական մանրամասների շարքի քարեր, սյուների բեկորներ, ճակտոնի առանձին մասեր, որոնք օգտագործվել են ավելի ուշ շրջանում կառուցված պատերի մեջ:

Պեղումների միջոցին ի հայտ եկած տների արտաքին պատերի լայնությունը մեկ մետր է, ներքին պատերինը 70-80սմ: Շարվածքը կավահողով է՝ առանց կրաշաղախի: Բնակելի տների համար որպես շինանյութ օգտագործել են կոպտատաշ տեղական բազալտը, կավահողը, հազվադեպ տուֆ քարը: Պահպանված պատերի բարձրությունը 60-80 սմ-ից չի անցնում: Վերջիններիս հիմքը որպես կանոն դրված է բնական ժայռի վրա: Կառույցների մեջ հանդիպում են մեկ-երկու, երբեմն ավելի, տարբեր չափերի թոնիրներ, իսկ նրանց մեջ՝ 30-40սմ մոխրաչերտ: Պեղվող քառակուսիներից մեկի մեջ վերին շերտում հանդիպեց նաև թրծած աղյուսներից պատրաստված օջախի մնացորդներ: Այս քառակուսու հյուսիսարևելյան անկյունում բացվեց տնտեսական նշանակություն ունեցող հոր. գտնվեցին հասարակ և ջնարակապատ խեցանոթների բեկորներ, ապակե ջրամաններ, ապարանջաններ, մետաղե առարկաներ, դրամ և այլն: Դատելով նրա մեջ գտնված նյութական մշակույթի մնացորդներից և վրաց Բագրատունի Ռուսուղան թագուհու պղնձե դրամի (1220-1230թթ.) առկայությունից, վերջինս վերաբերում է XII-XIII դարերին:

<sup>1</sup> Տեղաբնիկների վկայությամբ այդ հարթ տարածությունները XIX-XX դարերում ծառայել են կալատեղի:

Հորի հյուսիսային կողմում, 50սմ խորության վրա, հանդիպեցին հարավից հյուսիս դիրքով շարված, կրաշաղախով պատված կավե փողրակներ: Խողովակաչարի ընդհանուր երկարությունը 1,90սմ է. բաղկացած է չորս փողրակից: Խողովակաչարի երկու ծայրերն ավարտվել են ուղղահայաց դեպի վեր ձգվող փողրակներով: Շինարարները խողովակաչարի սկսվելու և ավարտվելու տեղերում կողքերը կտրված փողրակներն ուղղահայաց դիրքով գետեղել են խողովակաչարի երկու ծայրերում (տե՛ս գծագիրը): Մեկ այլ փողրակի ջարդված բեկոր տեղավորել են ուղղահայաց դրված խողովակի հատակում և այն լցրել կրաշաղախի ստվար շերտով:



Գծագիր 2. Բնակելի թաղամաս (հատակագիծ, 1967թ. պեղումներ)

Դատելով խողովակաչարի շարվածքի ուղղությունից, պարզ է դառնում, որ ջուրը հարավային կողմից լցվելով ուղղահայաց խողովակի, մեջ իջնելով ցած 24սմ, թեքվել է հորիզոնական խողովակաչարի մեջ ու դուրս եկել 1,90սմ հեռու տեղադրված ուղղահայաց խողովակի մեջ, որի բարձրությունը 23սմ է: Խողովակաչարի նման կառուցվածքի բուն նպատակը մեզ համար պարզ չդարձավ, միայն դատելով տեղանքի և խողովակների դասավորությունից, կարելի է ենթադրել, որ նախկինում այստեղով անցել է ճանապարհ. վերջինիս ապա-

հովության համար խողովակաչարին ծունկ են տվել: Նմանօրինակ դեպքեր նկատվել են Հայաստանի միջնադարյան հուշարձանների պեղումների միջոցին:<sup>1</sup>

Լոռե ամրոցի բնակելի թաղամասի պեղումների ժամանակ ի հայտ են եկել նյութական մշակույթի բազմաթիվ մնացորդներ (հասարակ և ջնարակած կավե տարբեր ամաններ ու նրանց բեկորներ), ապակե անոթների ամբողջացող և թերի կտորներ, մետաղ (պղինձ, բրոնզ, երկաթ), ոսկրե գործիքներ, ապարանջաններ և նրանց բեկորներ (ապակի, պղինձ, բրոնզ), աղորիքներ, երկանքների ջարդված կտորներ, սանդեր և այլն): Լոռեում գտնված նյութական մշակույթի գտածոների մեջ կան նաև ներմուծված առարկաներ և նրանց մնացորդներ:

Պեղումների ընթացքում գտնված նյութական մնացորդների միայն մի մասն է վերաբերվում մշակութային առաջին շրջանին (XI-XIII դարեր), ընդ որում այն առարկաները, որոնք գտնվում էին շինարարական երկրորդ շրջանի կառույցների հատակի տակ: Գտնված առարկաների մեծ մասը հիմնականում XIV-XVIII դարերի արգասիք են:

Պեղումների միջոցին հայտնաբերված բնակելի տների պատերի մնացորդներով դատելով միայն մասնակի չափով է հնարավոր գաղափար կազմել միջնադարյան նմանատիպ քաղաքի միջնախավի ապրելակերպի, բնակարանի համակառուցի մեջ մտնող հարկաբաժինների, այլևայլնի մասին: Հատկանշական է այն հանգամանքը, որ բնակելի տները կառուցված են խիստ ճյուղավորված, խիտ ցանցով, որը վկայում է միջին դարերում Լոռեի միջնաբերդի բնակչության խտության մասին:

Հնավայրում 1967 թվականին պեղվել է նաև Զորագետի կիրճի եզրին գտնվող շինության ավերակները, որի մասին Իսահակ Հարությունյանը, 1897թ. «Լուծա» ամսագրում գրում է. «Նույն կողմն են գտնվում (նկատի ունի հնավայրի հարավային կողմը — Ի.Ղ.) այն կամարածև շինության հետքերը, որի որմերի մեջ գտնվում են ավազանանման խորաններ: Որմի մեջ շինված են կավից շինված երկկարգ խողովակներ: Թե ըստ ձևի և թե ըստ ավանդության՝ այդ խորանները համար-

<sup>1</sup> Այդ մասին մեզ տեղեկացրեց պրոֆ. Կ. Ղաֆադարյանը:

վում են բաղնիքներ: Ձուրը բերդի տակից իբրև թե գալիս է եղել վերոհիշյալ խողովակներով»:<sup>1</sup>

Պեղումներով բացվեցին կառույցի մեծ մասը իր բոլոր հարկաբաժիններով. պատերը ամբողջութամբ, պարզվեց, հավաստի դարձավ, որ այն իրոք բաղնիք է: Վերջինս բաղկացած է չորս բաժանմունքից՝ հանդերձարանից և երեք լողարաններից: Հանդերձարանի, լողասրահների հատակները կրկնակի են, ինչպես Հայաստանի միջնադարյան այլ բաղնիքներինը՝ (Անի, Դվին, Ամբերդ, Տաթև, Զվարթնոց):

Բաղնիքի հանդերձարանի հյուսիսային պատի տակ կառուցված է եղել ջրամբար, որտեղ պահպանվել է բաղնիքի համար անհրաժեշտ սառը ջրի մշտական պաշար: Հանդերձարանի և լողարանների ներսի պատերը տեղ-տեղ պատած են եղել ջնարակած շքաղյուսների սալիկներով: Դրանցից յուրաքանչյուրը պատված է միագույն ջնարակով (սև, կաթնավուն, կանաչ, կապույտ, մուգ կապույտ, դեղին): Հայաստանում նմանօրինակ շքաղյուս-սալիկներ հայտնի են Անիից, Դվինից, Գառնիից և այլ միջնադարյան հնավայրերից:

Չորագետի կիրճի եզրին բաղնիքի ջեռուցարանի առկայությունն առեղծվածային է: Չի պարզված, թե որտեղ է տեղադրված եղել բաղնիքի հնոցը: Նախորդ ուսումնասիրողները (Հ. Խալփախյան, Վ. Հարությունյան և ուրիշներ) վերջինս տեղադրում էին հանդերձարանի արևելյան պատի տակ: Պեղումների շնորհիվ պարզվեց, որ նրանք սխալվում են: Այն ոչ այլ ինչ է, եթե ոչ լողարանի առանձին բաժանմունքներից մեկը: Բաղնիքի բոլոր բաժանմունքների պեղումների միջոցին գտնվեցին կավե փողրակների բազմաթիվ բեկորներ, որոնցով տաք և սառը ջուր է մատակարարվել լողարաններին: Փողրակներով են հեռացվել նաև կեղտաջրերը, իսկ մի մասը դրվել է լողարանների և հանդերձարանի պատերի, ինչպես նաև նրանց հատակների մեջ, տաք ջրի և հնոցի տաք օդը մղելով որոշակի ուղղութամբ դրանք տաքացնելու նպատակով:

Բաղնիքի գլխավոր մուտքը հանդերձարանի հյուսիսարևելյան պատի կենտրոնից է: Նույն հանդերձարանի արևելյան

պատի մեջ բացված մուտքից ելք կա մի նեղ միջանցք, որտեղից մուտքեր են բացվում դեպի լողարանները: Ամբողջ կառույցի պեղումների միջոցին գտնված նյութական մշակույթի մնացորդները աննշան էին (ոսկրե սանր, տարբեր երանգի ջնարակապատ սալիկներ, կավե փողրակներ ու դրանց բեկորներ, լատինատառ գրերով ապակե անոթի բեկոր և այլն):

Նույն տարում արշավախումբը պեղել, մաքրել է նաև միջնաբերդի տարածքի հյուսիսարևելյան կողմում նշմարվող ավերակի մնացորդները: Այստեղ վերգետնյա նշմարվում էր խաչքարի կեսը: Պեղելով պարզվեց, որ խաչքարը հետագայում է տեղադրվել նախկինում գոյություն ունեցող եկեղեցու բեմի վրա՝ վեմքարի փոխարեն: Ակներևաբար այս եկեղեցու կառույցի մասին է Ի. Հարությունյանը գրում. «Բերդի արևելյան կողմը, ձորի գլխին, եղել է մի ընդարձակ եկեղեցի, որից մնացել են պարիսպների (գուցե՞ պատերի – Ի.Ղ.) մնացորդներ և մի քանի խաչքարեր»:<sup>1</sup> Բացվեց ամբողջ եկեղեցին, որի ավագ խորանը՝ բեմը, արևելյան կողմում էր, առջևի պատն ուներ ուղիղ շարվածք: Նրա դիմաց կանգնեցված էր միջին չափի խաչքար: Խաչքարը սև տուֆից է քանդակված, բայց ամբողջ մակերեսով ներկված է կարմիր երանգի ներկով, որը հիանալի է պահպանվել: Ներսում գտնվեցին մի շարք գերեզմանաքարեր, որոնցից ոչ մեկի վրա տապանագիր չկար: Հատակը տապանաքարերին հավասար սալահատակված էր հարթ մշակում ունեցող սալաքարերով: Եկեղեցու բացարձակ չափերը հնարավոր չեղավ պարզել, քանի որ նրա հարավային պատն ամբողջ երկարութամբ մինչև հիմքերը քանդել են հետագայում այստեղ հաստատված բնակիչները: Եկեղեցին ժամանակին կառուցված է եղել բավականին խոշոր և լավ մշակված քարերով: Նրանից պահպանվել է հյուսիսային պատն ամբողջ երկարութամբ (8մ 40սմ), արևելյանը և արևմտյանը՝ մասնակիորեն: Պահպանված պատերի բարձրությունը 80-90 սմ-ից չի անցնում, իսկ նրանց հաստությունը մեկ մետր է: Շաղախը բարձրորակ է, նրա մեջ օգտագործել են գետի ավագ, տեղական բազալտի ջարդված կտորները հանգած կրի հետ միասին, որով ստացել են ամուր շաղախ:

<sup>1</sup> «Լուսա», 1897, գիրք 1, էջ 251:

<sup>1</sup> Ի. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 250:

Պեղումների ժամանակ, եկեղեցու կենտրոնում, ավագ սեղանի առաջ, բացվեց հետագայում հորած թոնիր, որն ուներ 80սմ բարձրություն, 40սմ տրամագիծ: Նրա մեջ գտնվեցին ուշ շրջանի՝ XVII-XVIII դարերի հասարակ խեցանոթի ջարդված, բայց ամբողջացող բեկորներ: Իրողությունն ապացույց է այն բանի, որ XVII դարից հետո արդեն կառույցը չէր ծառայում իր հիմնական նպատակի համար: Եկվոր բնակչությունն այն օգտագործել է բոլորովին այլ նպատակի համար՝ հարմարեցնելով իր պահանջներին: Այս կառույցը ակներևաբար հանդիսացել է տեղական խոշոր ֆեոդալներից որևէ մեկի տոհմական տապանատունը, որի վրա և կառուցվել է այդ եկեղեցին: Կառույցն իր շինարարական առանձնահատկություններով, գերեզմանաքարերի մշակման տեխնիկայով, հիմքի պեղումների ընթացքում գտնված նյութական մշակույթի մնացորդներով՝ հասարակ և ջնարակապատ խեցանոթներով, վրաց Ռուսագան թագուհու պղնձե դրամով, դաջազարդ կարասի բեկորներով և այլ նմուշներով հավաստում են, որ այն XII-XIII դդ. գործ է:

1968 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ: Հիշյալ տարվա պեղումների հիմնական նպատակն էր բացահայտել Ձորագետի կիրճի եզրի նորահայտ բաղնիքի հետ կապված որոշ մանրամասնություններ և ապա իրականացնել նույն բաղնիքից դեպի հարավ ընկած տարածության պեղումները:

Բաղնիքի նախորդ տարվա պեղումների ընթացքում մեզ չէր հաջողվել պարզել նրա հնոցի տեղը, ուստի սկսեցինք նրա որոնման հետ կապված աշխատանքները: Դժբախտաբար այն գտնել մեզ այդպես էլ չհաջողվեց: Դրա փոխարեն մեզ համար առավել պարզ դարձավ լողասրահների դասավորությունը, նրանց ջրամատակարարման, կեղտաջրերի հեռացման և բազմաթիվ այլ հարցեր: Այնպես, որ բոլորովին իզուր չանցան մեր պրպտումները բաղնիքի շրջապատում:

Հիշյալ տարվա պեղման աշխատանքները կենտրոնացվեցին Ձորագետի կիրճի եզրին, գեղատեսիլ դարավանդի վրա, ուր կառուցված էր Լոռե ամրոցում գտնվող, մեր կողմից արդեն պեղված XI-XII դարերով թվագրվող բաղնիքներից ամենախոշորը (երկրորդ բաղնիքը – Ի.Ղ.): Բաղնիքից դեպի հա-

րավ ընդարձակ տարածության վրա, պեղումներ ձեռնարկելով նպատակ ունենիք պարզել վերոհիշյալ բաղնիքին առընթեր կառուցվել են այլ շինություններ: Պարզվեց հետևյալը. բաղնիքի մեծ լողասրահից 2մ 40սմ հեռու, նրա հարավարևելյան կողմի հարթության վրա, 70-80սմ խորություն ունեցող շերտում բացվեց քառանկյուն շինություն: Կառույցի չափերն են 5,7x2,9մ=16,6 քառակուսի մետր:

Նորահայտ կառույցը շարված էր տեղական թերի մշակված բազալտ քարով, որի արտաքին երեսապատման քարերը չեն պահպանվել: Ջի բացառվում, որ դրանք սրբատաշ լինեին և գրավեին հետագա դարերի բնակիչների ուշադրությունը, որոնք խարխլելով այդ մշակված քարերը օգտագործել են իրենց նորակառույցներում: Շինության պահպանված պատերի հաստությունը տարբեր էր: Եթե արևմտյան պատը, որը հաստատված է Ձորագետի կիրճի անմիջապես պռունկին՝ 60սմ է, ապա արևելյանը՝ 48-50, հյուսիսային և հարավային՝ 40-42սմ: Կառույցի պեղման ընթացքում, վերին շերտերում հանդիպում էին հասարակ և ջնարակած կավանոթների բեկորներ, ապակե գավաթներ և ջրամանների (γραφου – Ի.Ղ.) պսակներ ու հատակներ, ինչպես նաև ջնարակապատ սալիկներ, այնպիսիք, որոնք մեզ հայտնի էին բաղնիքի պեղումներից: Նրանց չափերն են՝ 6,5x3սմ: Նորահայտ շինության մեջ հարավարևելյան անկյունում հանդիպեցինք բազմանկյուն (իմա՝ վեցանիստ – Ի.Ղ.) մշակումով տուֆ քարի, որի երկարությունը 50-52սմ էր, տրամագիծը՝ 25սմ: Նրա կենտրոնում երկարությամբ, ուղղահայաց կերպով 1,5սմ տրամագծով, շատ խնամքով անցք է փորված: Այդ սյունանման քարի մի ծայրի բազմանկյան մշակումը վերածված է կլորավունի՝ 18սմ տրամագծով, որով այն, ակներևաբար ազդեցվել է տափակ դիրքով դրված ինչ-որ հարմարանքի մեջ:

Կառույցի պատերի պահպանված մասերի բարձրությունը 75-80 սմ-ից չէր անցնում: Պատերը ներքուստ ծեփված էին բարձրորակ անջրաթափանց կրաշաղախի սվաղով, հատակը՝ նույնպես: Հատակի մակերեսի հարթության վրա, շինության հյուսիսարևմտյան անկյունում, Ձորագետի կիրճին նայող պատի տակ հայտնաբերվեց 8,5սմ տրամագծով կավե փողրակ: Փողրակը մյուս ծայրով պատի տակից դուրս է գալիս ուղիղ դեպի Ձորագետի կիրճը:

Շինության մեջ, արևելքից արևմուտք, ամենայն հավանա-  
կանությամբ, հետագա դարերում ավելացվել է միջնորմ պատ,  
չուրջ 70սմ լայնությամբ: Միջնորմային այդ պատը շինությունը  
բաժանում է երկու անհավասար մասերի ( $3,7 \times 2,9 \text{մ} = 9,73 \text{մ}^2$  և  
 $2 \times 2,9 \text{մ} = 5,8 \text{մ}^2$ ): Միջնորմ պատը սկսվելով արևելյան պատից  
ավարտվում է կառույցի մեջ, չհասնելով արևմտյան պատին,  
հեռու մնալով նրանից 75սմ, որն ասես արհեստականորեն եր-  
կու մասի բաժանված «սենյակները» իրար հետ հաղորդակցող  
մուտք է: Հիշյալ միջնորմ պատի երկարությունը՝ 215սմ է:

Նորահայտ կառույցի, համեմատաբար մեծ բաժանմունքի  
գրեթե միջնամասում, միջնորմ պատին առավել մոտ բացվեց  
սալաքարերով շարված ուշ շրջանում ավելացված օջախ, որի  
սալաքարերը ունենին  $26 \times 26$ սմ չափերը: Օջախի մեջ 15սմ  
հաստությամբ մոխրաչերտ էր: Ըստ էության օջախի առանց-  
քը հարավային պատից հեռու էր 210, արևմտյանից՝ 160,  
արևելյանից՝ 130սմ, միջնորմ պատից՝ 90սմ: Կառույցը չու-  
նեք մուտքերի և պատուհանների որևէ հետք:

Պեղումներով հայտնաբերված հնագիտական նյութերն ու  
ճարտարապետական տվյալները չէին բավարարում որոշելու  
կառույցի նշանակությունը, թե ինչի է ծառայել այն իր  
սկզբնական վիճակով: Ուստի անհրաժեշտ համարեցինք խո-  
րացնել շինության շաղախով ծածկված հատակը:<sup>1</sup>

Պեղումների արդյունքում շինության հյուսիսարևելյան  
անկյունում 10-15սմ խորության վրա, հանդիպեցինք քա-  
ռանկյուն մշակումով տեղական բազալտե սալաքարի, որի  
կենտրոնում 20սմ տրամագծով անցք է փորված: Սալաքարի  
չափերն են՝  $57 \times 48$ սմ, հաստությունը 10-13սմ: Կենտրոնում  
փորված անցքը ունեք իրար հաջորդող  $20 \times 12 \times 8$ սմ տրամա-  
գիծ ունեցող համակենտրոն շրջաններ: Հետագայում պարզ-  
վեց, որ մինչ այդ մեր կողմից հայտնաբերած վեցանիստ  
մշակումով տուֆ քարի սյունը կլորավուն մշակված ծայրով

լիովին համընկնում է նորահայտ սալաքարի փորվածքին  
(տե՛ս աղ. VII): Ինչպես սալաքարի փորվածքը, այնպես էլ  
տուֆի մշակված մասը կրում են սպիտակ շաղախի հետքեր:  
Նման սալաքար, գրեթե նույն մշակումով գտնվեց շինու-  
թյան հարավային մասում: վերջինիս չափերն են  $57 \times 63$ սմ:  
Կառույցի հյուսիսարևելյան և հարավարևմտյան պատերից  
սալաքարերը հեռու էին 35-ից 50սմ: Նորահայտ սալաքարե-  
րից 20-30սմ խորության վրա հանդիպեցինք կավե փողրակ-  
ների խնամքով դասավորված երեք շարքի (աղ. VIII):

Ուսումնասիրվող տարածքի պեղումների վերջնական ավար-  
տից հետո պարզվեց, որ նորահայտ շինության հյուսիսարև-  
մտյան անկյունից երեք շարք կավե փողրակները՝ տրամա-  
գիծը՝ 8սմ, հատակից 30-35սմ խորության վրա, թեքությամբ  
մտնում են կառույցի ներսը: Փողրակների մի շարքն անմի-  
ջապես դուրս է գալիս շինության հյուսիսարևմտյան ան-  
կյունում գտնվող սալաքարի տակ (այն այժմ փոքր-ինչ տե-  
ղաշարժված է իր նախնական տեղից): Երկրորդն ուղղվում է  
դեպի կառույցի կենտրոնը և դուրս գալիս հետագայում ավե-  
լացված միջնորմ պատի տակ: Այստեղի սալաքարը, որը  
սկզբնապես գոյություն է ունեցել, այժմ տեղում չի պահ-  
պանվել: Պարզվում է, որ հետագայում, ուշ շրջանի բնակիչ-  
ները, միջնորմ պատը շարելիս, այն վերացրել են: Երրորդ  
շարքն ավարտվում է հարավարևելյան պատի անկյունում  
գտնվող սալաքարի տակ, որի մասին արդեն հիշատակել ենք:  
Այդ երեք շարք փողրակներով ժամանակին ջուր է մատա-  
կարարվել ավազանին:

Պեղումների ավարտից հետո միայն պարզվեց, որ ուսում-  
նասիրվող շինությունը ամառային ջրավազան է եղել:

Ջրավազանը ժամանակակից է կողքին կառուցված և մեր  
կողմից արդեն պեղված բաղնիքին: Ջրավազանի պեղումների  
ընթացքում վերին շերտերից գտնվում էին կավե բազմապի-  
սի անոթների բեկորներ, ջնարակած խեցանոթներ, չքաղյուս-  
ներ, մի քանի կավե ծխամորճներ և նրանց առանձին բեկոր-  
ներ, երկաթե գամեր, պղնձե ապարանջան, իսկ ամենավերին  
շերտում XVI-XVIII դարերին թվագրվող հախճապակե զար-  
դարուն փոքր թասերի բեկորներ, որոնք լայն տարածում

<sup>1</sup> Նման հետևություն համար հիմք ծառայեց նաև մի դիպված: Երբ ավարտեցինք ամ-  
բողջ շինության պեղման-մաքրման աշխատանքները, հաջորդ երկու օրերին տեղաց  
հորդառատ անձրև: Անձրևից հետո նկատեցինք, որ կառույցի հատակը գրեթե ամ-  
բողջովին չորացել է, միայն երեք տեղում (կառույցի հյուսիսային, կենտրոնական և  
հարավային մասերում՝ Ի.Ղ.) հողը բավականին խոնավ է: Այդ հանգամանքը շար-  
ժեց արչավախների հետաքրքրությունը, և ձեռնարկեցինք հատակի պեղումները:

ունեին իրանում և հարևան այլ երկրներում: Դրան հակառակ ստորին շերտի, այսինքն անմիջապես ջրավազանի և նրա հիմնապատերի պեղումների միջոցին հայտնաբերված նյութական մշակույթի մնացորդները սակավաթիվ էին: Գտածոներից ուշագրավ է վրացական պղնձե մետաղադրամը, որը XII դարի վերջի և XIII դարի սկզբներով է թվագրվում:

Պարզելու համար, թե դեպի ուր է ուղղվում ջրավազանին ջուր մատակարարող փողրակների շարքը, ուսումնասիրեցինք ավազանից դեպի հյուսիս-արևելք ընկած հողաշերտը: Պարզվեց, որ այստեղից անցնում է բավականին լավ շարվածք ունեցող պատ: Այդ պատը կառուցելու համար ջարդել և տեղ-տեղ հեռացրել են նախկինում այստեղից անցնող և ջրավազանին ջուր մատակարարող կավե փողրակները: Մնում է ենթադրել, որ այդ պատը կառուցվել է ավելի ուշ, այն ժամանակ, երբ արդեն չէր գործում բաց ջրավազանը: Պեղման ընթացքում գտնված, թե՛ նյութական մշակույթի մնացորդները (հասարակ և ջնարակապատ անոթների բեկորներ, ծխամորճներ, գամեր, պայտեր և այլ իրեր) և թե՛ պատի շարվածքը հնարավորություն է տալիս հանգելու այն հետևություններ, որ նորակառույց շարվածքով պատը XIV-XVII դարերի է, հետևաբար ևս մի անգամ հիմնավորվում է, որ ջրավազանը գործել է XI-XIII դարերում:

1969 թվ.Ա.ԿԱՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ: 1969-ին շարունակվեցին բաց ջրավազանից հյուսիս-արևելք ձգվող 4 մետր լայնությամբ և շուրջ 12 մետր երկարությամբ հատվածի պեղումները: Նպատակ ունեինք բացելու ջրավազանի և բաղնիքի հետ առնչվող որևէ կառույց, սակայն մեր սպասելիքներին հակառակ ամբողջ այդ լայնությամբ հանդիպեցինք լիցք հողի, որի ամբողջ երկարությամբ անցնում է հետագայում կառուցված հսկայական պատ: Այն հավանաբար հենապատի նշանակություն է ունեցել:

Հողի լիցքի բարձրությունը հասնում էր շուրջ 3 մետրի: Նրա հեռացման ժամանակ հաճախ էին գտնվում XIV-XVII դարերին բնորոշ հասարակ կավանոթների բեկորներ, ունկեր, պսակներ, ձիթածրագներ, ծխամորճներ և նրանց առանձին մասեր, ապակե ջրամաններ՝ հատակներ, խոշոր և մանր եղջե-

րավոր անասունների ոսկորներ, գամեր, պայտեր, պղնձե մանր առարկաներ և դրամ: Այս հատվածը բաց ջրավազանը օգտագործումից դուրս գալուց հետո ծառայել է Լոռե քաղաքի միջնաբերդում բնակվողների համար որպես ոչ պիտանի իրերի և աղբի կուտակման վայր:

Նույն տարում արչավախումբը պեղումներն ընդարձակեց նաև բնակելի թաղամասի նախկինում պեղված քառակուսիների շրջանում: Պեղեցինք -a11, -a11-12, b11-12-13 քառակուսիները: Բացվեցին բնակելի երկու համակառույցներ, որոնք ամբողջացան դեռևս 1967 թվականի պեղումներով բացված բնակելի շինությունների հետ: Ամբողջ բնակելի տարածությունը բաժանված է առանձին հարկաբաժինների, որոնցից մեծն ունի շուրջ 30 քառ. մետր մակերես (4,50x6,50), փոքրը՝ 20 քառ. մետր (3,80x5,20): Մեկ ամբողջական համակառույցի մեջ մտնում է մեկ մեծ և 2-3 փոքր հարկաբաժիններ: Յուրաքանչյուր սենյակի ներսում հանդիպում էր մեկից երեք տարբեր մեծություն թոնիրներ: Թոնիրների գոյությունը փաստը միջնադարյան բնակելի տների ներսում նորություն է: Դվինի միջնաբերդի պեղումների ժամանակ բացվել են առանձին սենյակներ, որոնք ունեցել են 3-4 տարբեր մեծություն թոնիրներ,<sup>1</sup> որոնցից յուրաքանչյուրը ծառայել է որոշակի նպատակի: Պրոֆ. Բ. Առաքելյանը թոնիրների առատությունը բնակելի սենյակներում բացատրում է XIII-XIV դարերի հետ կապված, երբ նրանցից մի մասը օգտագործում էին որոշ նյութեր պահելու համար:<sup>2</sup> Թոնիրների առատություն է նկատվել նաև Ամբերդի դղյակին հարող բնակելի տարածքի պեղումների ժամանակ:<sup>3</sup>

Հետաքրքրական է այն, որ պեղման ժամանակ հանդիպում էին լավ մշակված սրբատաշ քարեր, ճարտարապետական մանրամասներ, որոնք պատկանել են նախկինում մեկ այլ, առավել ֆունդամենտալ կառույցի, իսկ այստեղ օգտագործել են հետագայում՝ ունեցել երկրորդ կիրառություն:


<sup>1</sup> Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 52-53:

<sup>2</sup> Տե՛ս Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 220:

<sup>3</sup> Տե՛ս Ս. Հարությունյան, Անբերդ, Երևան, 1978, էջ 72:



Պեղումների ընթացքում հաճախ հայտնաբերվում էին խոհանոցային մրապատ խեցանոթների բեկորներ, ջնարակած ամանների պսակներ, նստուկներ, ձիթածրագներ, կարասների շուրթեր և գոտիներ, սղոցած ոսկորներ, որոնք օգտագործվել են գործիքներ պատրաստելու համար: Գտնվեցին նաև գորգագործի ոսկրե կտուտիչ, ապակե ապարանջաններ և նրանց բեկորներ, ուլունքներ, երկաթե պայտեր, գամեր, դանակների շեղբեր, այլևայլ առարկաներ, որոնք թվագրվում են XIV-XVII դարերով: Գտածոներով ճշտվում է մեր այն հետևությունը, որ այս բնակելի թաղամասը պատկանում է Լոռե քաղաքի երկրորդ շրջանին, այն է XIV-XVII դարերին, որտեղ օգտագործել են շինարարական առաջին շրջանում կառուցված և ապա ավերված առանձին կառույցների ճարտարապետական մանրամասները:



ԼՍՄԳ ԲԻՄԻՍ ԳՆԱԿԵՆ ԹԵՍԵՍ 1967 68 69

Գծագիր 3. Բնակելի թաղամասի 1967-1969թթ. պեղումների հատակագիծ

Նույն, 1969 թվականի պեղումների ընթացքում, արչավախումբը խնդիր դրեց մանրամասն հետազոտել նաև Զորագետ և Մխիթանա գետերով կազմավորվող կիրճում գոյություն ունեցող բնական և արհեստական քարայրները, որոնց թիվը

ոչ լրիվ տվյալներով հասնում է շուրջ 370-ի:<sup>1</sup> Այդ քարայրների մեծ մասը հարմարեցված է եղել բնակություն համար: Դրանք դասավորված են 2-3 դարավանդ կազմող շարքերով, որոնց մեծ մասի ներքին տարածությունը արհեստական ձևով ընդարձակել են, մուտքերի առջև պատ շարելով: Քարայրների ներսում, ժայռերի մեջ փորված են սանդեր, հորել են թոնիրներ, որոշ մասն էլ ունի քարե դռներ: Հանդիպում են քարայրներ, որոնց մուտքի ճակատին, կամ պատերին կան հնում փորագրված արձանագրություններ: Դրանցից մեկը ՇԺ (510+551=1061), երկրորդը՝ ՈՒԳ (633+551=1184), երրորդը՝ ՈՂԸ (678+551=1229), թվականներն ունեն, ուր երբեմն հանդիպում են առանձին անուններ՝ Գրիգոր, Դավիթ, Սարգիս և այլն: Փորձեցինք քարայրներից մի քանիսում կատարել հետախուզական պեղումներ: Արդյունքները գոհացուցիչ էին: Հանդիպում էին կենցաղային սովորական անոթներ, ճրագներ, մետաղի և այլ առարկաների մնացորդներ, որոնք հնարավորություն տվեցին քարայրները վերագրելու Լոռե քաղաքի ծաղկման ժամանակներին՝ XI-XIII դարերին: Այդ իրողությունը հաստատվում է այն քարայրներով, որոնք իրենց վրա ունեն թվական: Հարկ է նշել, որ մի շարք քարայրներ գտնվում են բավականին անմատչելի տեղերում, մենք հնարավորություն չունեցանք մոտիկից տեսնելու, ուսումնասիրելու այդ քարայրները: Քարայրներից ամենաընդարձակը գտնվում է ամրոցի հարավային կողմում՝ Զորագետի կիրճում, ուր ըստ ավանդության և պատմիչների վկայության թաքնվել էր նաև Շահնշահ Զաքարյանը 1236թ. մոնղոլների հայտնի արշավանքի և Լոռեն պաշարելու միջոցին: Գանձակեցին մասնավորապես այդ առիթով գրում է. «Իսկ իշխանն Շահնշահ առեալ գկին իւր և գմանկունս, ել գաղտագողի ի ձոր անդր, և ամրացաւ յայրս ուրեք»:<sup>2</sup>

1970 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ: 1970-ին արչավախումբը որոշեց շարունակել արդեն պեղված նորահայտ ջրավազանից (1968թ.) արևելք ու հարավ տարածվող հարթության պեղման-մաքրման աշխատանքները, տարածք, ուր մեծ քանա-

<sup>1</sup> Տե՛ս Բ. Առաքելյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 89:

<sup>2</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 253:




կուլթյամբ հող և քար էր կուտակված: Տեղանքը առանձնանում է ամրոցի ընդհանուր հարթությունից. գտնվելով դարավանդի տակ ու արդեն հայտնի երկրորդ բաղնիքի նորահայտ ջրավազանի հետ ակներևաբար կազմելու էր մի ամբողջական համակառույց:

Շարունակելով պեղումները դեպի հարավ և արևելք նորաբաց ջրավազանից շուրջ 5 մետր հեռավորության վրա պեղվեց մեկ այլ կառույց, որը նույնպես գուրկ էր մուտքերի ու պատուհանների բացվածքներից: Արևմտյան պատից բացի մյուսների լայնքը 95-100սմ էր, վերջինը՝ 180սմ: Նորաբաց կառույցի ներքին չափերն են՝ լայնքը՝ 3,3 մետր, երկարությունը՝ 6,6 մետր, երկարությունը լայնությունը կրկնակին է, կազմելով շուրջ 21,8 քառակուսի մետր: Պատերի պահպանված մասերի բարձրությունը 0,8-0,9 մետր է: Հատակը և պատերը ներքուստ անջրաթափանց շաղախով են սվաղված: Արտաքին պատերի երեսապատման քարերը պահպանվել են միայն հիմնապատերի վրա: Վերին մասում այն չի պահպանվել: Հնարավոր է, որ շարված է եղել սրբատաշ քարերով: Սրբատաշ քարեր տեղում չեն պահպանվել:

Նկատենք, որ կառույցի հատակի շաղախը, որը նույնպես բարձրորակ է եղել, այժմ տեղ-տեղ արդեն քայքայվել է: Նախորդ կառույցի պեղումների փորձից ելնելով, որոշեցինք խորացնել այս նոր շինության հատակը ևս: Ընդամենը 15-20սմ խորության շերտում հանդիպեցինք չորս խողովակներով կազմավորվող ջրատարի, որն արևելյան կողմի պատի տակից մտնելով շինության ներսը, այն ուղղված էր վերջինիս կենտրոն ու ավարտվում էր կլոր՝ շուրջ 30սմ տրամագիծ ունեցող անցքավոր սալաքարով: Վերջինս նեղանալով հասնում է 13սմ տրամագիծ ունեցող անցքի (տե՛ս աղ. VIII (2)): Պարզվում է, որ այս նորահայտ կառույցը նույնպես ջրավազան-ջրամբարի դեր է կատարել: Ավազանին ջուր մատակարարող ջրատարի երկարությունը մինչև նրա կենտրոնում տեղադրված կլոր մշակումով սալաքարի շրջանաձև անցքը 170սմ է: Սալաքարը հարմարեցված է այնպես, որ ջրատարի վերջին փողրակը, նախորդ ավազանի ջրատարի նման թեքված և հարմարեցված էր 90 աստիճանով դեպի վեր ու ուղ-

ղահայաց դիրքով միացված էր մեկ այլ փողրակի հետ, ջրի ուղղությունը դեպի վեր փոխելու համար:

Դրանից ընդամենը 10-15սմ հեռավորության վրա սալաքարի արևմտյան կողմում, կառույցի հատակի տակ բացվեց կավից պատրաստված կոնք՝ ջրի ուղղությունը փոխելու ուրույն հարմարանք: Կոնքը ջարդոտված էր ու մանրացված 12-13 բեկորի: Մեզ հաջողվեց բոլոր բեկորները տեղում հավաքել և վերականգնել կոնքի նախնական տեսքը (տե՛ս լուսանկարը և գրչանկարը, գծ. 4): Ջրատարի ներքին տրամագիծը 11սմ է, դեպի վեր թեքված փողրակինը՝ 9սմ: Սալաքարի վրա բացակայում է սյունաձև տեսքի բազմանկյուն մշակումով քարը, որն առկա էր նախորդ ավազանում: Կասկածից վեր է, որ նախկինում նման հարմարանք եղել է նաև այստեղ:



Գծագիր 4. Շատրվանող ջրավազանի ջրամատակարարման կոնք


Ջրատարը ժամանակի ընթացքում մի քանի անգամ ենթարկվել է նորոգման: Այս հետևությունը հիմնավորվում է ինչպես խողովակաչարի փողրակների անհամաչափությունները (նրանց երկարությունը տարբեր է), խեցու գույնի տարբերությունները, այնպես էլ կատարված աշխատանքների ժամանակին հատկանշական որակի ու բաղադրության տարբերությունները: Փողրակներից մեկը, որն ավելի լայն տրամաչափի էր, քան մյուսները, դրված էր հակառակ ուղղությամբ և կրաշաղախով այնպես էր պատած, որ ջուր չէր կարող անցկացնել և կորուստ պատճառել:

Նորաբաց ջրամբար-ավազանի հատակի հարթության վրա, ներքուստ նրա հարավարևմտյան անկյունում բացվեց 9սմ տրամագծով ջրահեռացման փողրակը, որով կարգավորվել է ջրի կայուն մակարդակն ավազանի մեջ: Անհրաժեշտության թելադրանքով դատարկել ու մաքրել են այն:

Ի մի բերելով նորահայտ կառույցի հետ աղերսվող տվյալները, կասկածից վեր է, որ գործ ունենք երկրորդ, իր չափերով առավել խոշոր շատրվանող ջրամբար-ջրավազանի հետ, քան առաջինն էր, միայն այն տարբերությամբ, որ այստեղ ջրավազանի շատրվանը մեկն է ու առավել հզոր: Ավազանում կուտակվել է շուրջ 150-160 խոր. մետր ջուր: Դա հսկայական ճնշում էր առաջացնելու ջրավազանի արտաքին պատերի վրա: Հավանաբար այդ էր պատճառը, որ եթե առաջին ավազանի պատերի հաստությունը երեք կողմերում չէր անցնում 40-50սմ-ից, իսկ չորրորդ՝ Չորագետի կիրճին հաստատված պատը՝ 60սմ նորահայտ ավազանի բոլոր երեք պատերը ունեն շուրջ մեկ մետր հաստություն, իսկ արևմտյան կիրճին հարող պատը կրկնակի է շարված. վերջինիս հաստությունը 1,80-1,90 մետր է:<sup>1</sup>

Խնդրո առարկա ջրավազանին մատակարարող խողովակաչարը (փողրակների երկարությունը 45-50սմ, իսկ տրամագիծը՝ 12-13սմ, քանակը շուրջ 10 հատ) ջրավազանի արևելյան պատի տակից թեքվում է փոքր-ինչ հյուսիս, ապա շարունակվում ևս 4,8 մետր երկարությամբ և անհետանում երկայնակի անցնող պատի տակ: Հավանաբար ջրի աղբյուրը գտնվել է դարավանդի վերին մակարդակի վրա: Բաժանման որոշակի հարմարանքների օգնությամբ ջուր է մատակարարվել թե՛ բաղնիքներին և թե՛ առաջին ու երկրորդ ջրամբարավազաններին: Բաժանման այդ կետից ջուրը բնական ճնշման տակ մատակարարվել է սպառման աղբյուրներին: Դատելով ջրատարների ուղղությունից, ամենայն հավանականությամբ ամրոցի ջուր մատակարարող ջրատարը պարսպի կենտրոնական մասից ներս մտնելով լցվել է մեծ ջրամբարի մեջ և ապա այնտեղից տարբեր ելքերով բաշխվել միջնաբերդի ողջ տարածքով:

Երկրորդ ջրամբար-ավազանին ջուր մատակարարող ջրատարի խողովակաչարը մեխանիկական ազդեցություններից վնասվելուց պաշտպանելու համար, շինարար վարպետները փոքր չափերի սալաքարերով և կրաշաղախով հուսալի պատ-



Գծագիր 5. Երկրորդ բաղնիք և հարակից կառույցներ. Ընդհանուր հատակակազմ (1972թ. պեղումներից հետո)  
 1. Հանդիվարան, 2-4. Լողարաններ, 5. Ջրամբար երկու բաժանմունքով, 6. Ջրավազան երեք շատրվանով,  
 7. Ջրավազան մեկ շատրվանով, 8. Դարավանդ տանող աստիճաններ, 9. Բնական քարայր, 10. Որմնանակարներով  
 սենյակ, 11. Մեծ լողարանի փոքր ջրավազան, 12. Կետագծերով նշված են ջրատար փայտակները

<sup>1</sup> Պայմանականորեն 1969 թվին պեղված շատրվանող ջրավազանը անվանեցինք առաջին, իսկ 1970 թվին բացվածը՝ երկրորդ:

յան են ստեղծել: Չնայած այդ նախազգուշական միջոցներին, այնուամենայնիվ, ինչպես արդեն նշել ենք, խողովակաշարը և այդ նպատակի համար պատրաստված կավե կոնքը ինչ-ինչ պատճառներով վնասվել է և իր ժամանակին ենթարկվել նորոգման և ձևափոխման:

Այս նորահայտ երկրորդ շատրվանող ջրավազանը մեզ է հասել գրեթե իր նախնական տեսքով, եթե նկատի չունենանք հյուսիսային և հարավային պատերի մոտ հետագայում ավելացված պատ հիշեցնող առանց կրաշաղախի շարվածքը: Հնարավոր է, որ ավելի ուշ շրջանի (XVII-XVIII դարեր) արգասիք է:

Պեղումների միջոցին հաճախ էին գտնվում ջնարակապատ և հախճապակե անոթներ, թասեր, պնակների շուրթեր, հատակներ, պսակներ, ունկեր, ամբողջացող իրեր: Դրանցից արժե հիշատակել հախճապակե մեծ պնակը, որը գտնվեց ջրավազանի վերին շերտից: Ստորին շերտում հաճախ հանդիպում էին ապակե ջրամանների և ապարանջանների բեկորներ, ծխամորճներ, ինչպես նաև մետաղե մանր առարկաներ, պղնձե դրամներ:

Շարունակելով նորահայտ երկու ջրավազանների և նրանց արևելյան կողմում ժայռին հարող տարածքի պեղման-մաքրման աշխատանքները, պարզվեց, որ ժայռի երկարությամբ ջրավազաններից մի դեպքում (առաջին ավազան) չորս, մյուս դեպքում՝ 2,6 մետր հեռավորությամբ շարված էր 12,4 մետր երկարության հյուսիսից հարավ ուղղությամբ երկայնակի անցնող կոպտատաշ քարերով շարված պատ, առանց կրաշաղախի, որի բարձրութունը 2-2,40 մետր էր: Պատն իր թիկունքում ունենալով բնական ժայռը, կազմավորում էր հարթակ-հրապարակ, ուր կառուցված են ջրավազանները:

Արշավախումբը պեղեց, ուսումնասիրեց նաև բնական ժայռի և այդ նորահայտ պատի միջև ընկած տարածութունը: Թվում էր, թե գործ ունենք տնտեսական բնույթի հորի հետ: Սակայն այստեղից դուրս էին գալիս XV-XVII դարերին բնորոշ նյութեր: Պեղումներով պարզվեց, որ այստեղ գոյություն ունի մի մեծ քարանձավ, որի երկարութունը 4,25 մետր է, լայնութունը՝ 3,4մ, միջին բարձրութունը՝ 1,5մ: Պեղման ընթացքում գտնվեցին կանաչավուն ջնարակապատ մի մեծ

թասի քառորդ մասը, հախճապակու բեկորներ, ծխամորճներ, ապակե ջրամանների հատակներ և պսակներ, երկու դրամ, մանր ուլունքներ, մետաղե իրերի մնացորդներ, գամեր, պայտեր և, որ ամենահետաքրքիրն էր՝ եզան, կովի, ձիու, ավանակի, ոչխարի, տարբեր թռչունների և այլ կենդանիների մեծ քանակի ոսկորներ: Ակներևաբար այս քարայրն օգտագործել են հիմնականում որպես ոչ պիտանի իրեր և կենդանական մնացորդներ կուտակելու վայր:

Այս քարայրից դեպի հյուսիս ընկած տարածության պեղումները հնարավորութուն տվեցին պարզելու, որ այստեղ ժամանակին կառուցված են եղել աստիճաններ, որոնցով արևելյան բարձրադիր տարածութունը հաղորդակցվել է շատրվանող ջրավազանների և բաղնիքի ցածրադիր հատվածի հետ: Այժմ տեղում պահպանվել են չորսական աստիճան:

Պարզ է, որ դրանց քանակը ժամանակին շատ է եղել, որոնք բարձրանում են ջրավազանի մակարդակից դեպի հարավ, իսկ այնուհետև վեց աստիճանների միջոցով թեքվում դեպի արևելք՝ որով և լուծվում էր տարբեր մակարդակներում հաղորդակցության խնդիրը: Բոլոր աստիճանները շարված են մշակված բազալտից, երբեմն նաև օգտագործել են բնական հարթ սալաքարեր: Ներքև իջնող աստիճանների դիմաց առկա է մեկ այլ պատ, որը միանալով արևելյան կողմի պատի հետ կազմում է մի փոքր քառանկյունի տարածութուն: Այս մասի պեղումների ընթացքում գտնված աննշան նյութերը հնարավորութուն չընձեռեցին պարզելու նրա նախնական որևէ նպատակի ծառայելու խնդիրը:

Նույն տարվա պեղումների միջոցին որոշվեց պեղել և պարզել նաև առաջին շատրվանող ջրավազանից դեպի հյուսիս-արևելք, իսկ նորահայտ աստիճաններից դեպի հյուսիս-արևմուտք ձգվող հատվածը՝ արդեն մի երեսը բացված պատերի ինչ լինելը պարզելու համար: Այստեղ պատերի մեջ երևում էին նախկինում օգտագործված գերանների մնացորդներ: Այդ հատվածի պեղումները իրականացրինք ժայռին հավասարվող մակարդակից, որտեղ բնակիչները օգտագործել էին որպես ոչ պիտանի քարակույտ: Դրան ակներևաբար նպաստել էր այստեղ նախկինում առաջացած գոգավոր փոսը: Հեռացնելով քարակույտը. խորացվեց պեղման հրապարակը: Բաց-

վեց մի փոքր սենյակ, որի չափերն են՝ 5,0մx2,5 մետր: Մուտքը տեղադրված է եղել շատրվանող ջրավազանի կողմից: Այն ունի մեկ պատուհան դեպի Ձորագետը նայող պատի մեջ և հյուսիսարևմտյան անկյունը տանող մեկ այլ մուտք: Առաջ անցնելով ասենք, որ հետագա տարիներին՝ մասնավորապես 1972 թվականին, երբ փորձեցինք շարունակել բացել այդ մուտքը՝ մեզ թվացող երկրորդ սենյակ տանող դուռը, պարզվեց, որ այն ոչ թե մուտք է, այլ բավական ընդարձակ որմնախորշ: Հետաքրքիրն այն էր, որ այս կառույցի պեղումների ընթացքում, սովորական դարձած հաճախակի հանդիպող նյութերը գրեթե բացակայում էին, դրանց փոխարեն 1,8-2մ խորությամբ շերտում հանդիպում էին պատերի տակ թափված կրաշաղախի մեծ ու փոքր բեկորներ, որոնց վրա նշմարվում էին կարմիր ներկի մնացորդներ: Առավել մեծ բեկորների վրա հանդիպում էին բուսական, կենդանական և այլ տիպի զարգապատկերներով արված որմնանկարներ: Սենյակը ժամանակին ծածկել են գերանների օգնությամբ, որոնք դասավորել են մեկ մետր հեռավորությամբ: Պեղումների ժամանակ գտնվեցին այդ հեծանների մնացորդները:

Արշավախումբը 1970թ. իրականացրած պեղումներով ավարտեց իր առջև դրված խնդիրը, այն է՝ պարզել Ձորագետի կիրճի եզրին կառուցված երկրորդ բաղնիքի և նրան հարող ողջ տարածություն իրական պատկերը, այնտեղ կառուցված տարբեր նպատակների ծառայող կոմունալ և կենցաղային շինությունների նախնական և ապա հետագա դարերում կրած փոփոխությունները:

1971 թվականի Պեղումները: Այս տարվա պեղման աշխատանքները կենտրոնացվեցին Ձորագետի կիրճի եզրին տարածված մի ընդարձակ տափարակի վրա, որտեղ նկատելի էին կրաշաղախով շարված հսկայական կառույցի տպավորություն գործող պատեր: Հաշվի առնելով նրա իշխող դիրքը շրջապատի նկատմամբ, որտեղից նաև բացվում է հիանալի տեսարան դեպի Ձորագետի կիրճը, խնդիր դրվեց պարզել նախկինում նրա ինչ լինելը: Նկատի ունենալով նրա արտաքին մեծ չափերը (19,5x14,5մ), աշխատանքները կենտրոնացվեցին երկու հատվածներում՝ կառույցի հյուսիսային և հարավային կողմում: Պեղումներն ընթանում էին շատ դժվար: Պատերի վերին շարքերից թափված քարերի և հողի հեռաց-

նելը խլեց բավականին ժամանակ: Կառույցի հյուսիսային կողմում բացվեց մուտքը և նրա պարակալի հսկա սալաքարը, որն ընկած էր կառույցի ներսում: Վերջապես գտնվեց նաև այդ հսկայական դահլիճը երկու մասի բաժանող միջնորմ պատը, իսկ նրանից հարավ-արևելք՝ նաև կառույցի ծածկն իր վրա կրող փայտե հեծանների բավական լավ մշակված քարե երկու խարխիս: Բացվեց կառույցի կրաշաղախով պատած հատակը, որի վրա սփռված էին հսկայական քանակի սրբատաշ քարերի ջարդոն, առանձին բեկորներ, խեցեղեն և այլն:

Պարզվեց, որ պեղվող կառույցն իրենից ներկայացնում է ինչ-որ անհայտ, բայց շատ կարևոր շինություն, ակներևաբար պալատի ներքնահարկ, որը կանգուն է եղել մինչև XVIII-XIX դարերը և խարխիվել է Լոռե-բերդ գյուղի հետագա բնակիչների կողմից: Այս ենթադրությունն օգտին են խոսում տեղում պահպանված բազմաթիվ մանրամասներ, որոնց քննությանը կանդրադառնանք ճարտարապետական կառույցներ ներկայացնող բաժնում:


1972 թվականի Պեղումները: Սկզբում աշխատանքները կենտրոնացրեցինք պարզելու համար նախորդ՝ 1971 թվականին պեղված, բայց չավարտված հսկա շինության նկուղային հարկի մաքրման, ամբողջական պատկերը: Այս ընթացքում պարզ դարձավ, որ նկուղի ներսի պատերի մեծ մասը կառուցվել-շարվել է հետագայում, հավանաբար երկյուղ ունենալով, որ կարող են փլվել նախկին պատերը, կամ հեշտացնելու համար վերին ծածկի աշխատանքները: Դա պարզվեց այն բանից հետո, երբ մեր պեղումների ընթացքում նկատեցինք շարվածքների տարբերություն և արևելյան պատից հեռացնելով մի քանի քար բացեցինք նախկին պատը, որի վրա պահպանվել էր կրաշաղախը: Այս երկրորդական պատերի շարվածքը խիստ թանձրացրել էր կառույցի պատերը, այն հասցնելով շուրջ 3 մետրի:

Քանի որ ՀԽՍՀ Պետշինի հուշարձանների պահպանության կոմիտեն Լոռե բերդում նպատակադրվել էր բարեկարգել և վերականգնել որոշ ճարտարապետական հուշարձաններ, որոշեցինք մեր պեղումներով նպաստել այդ աշխատանքներին: Առավել ևս երբ պարզվեց, որ պետք է վերանորոգվի միջնաբերդի կենտրոնական մասում գտնվող, դեռևս կիսականգուն վիճակում պահպանված առաջին բաղնիքը: Ուստի որոշեցինք

պեղել-մաքրել այդ կառույցի շրջապատը, որպեսզի հնարավոր լինի տալ կառույցի վերականգնման ճշգրիտ պատկերը:

Պեղումներից հետո պարզվեց, որ ուսումնասիրողների այն պարզ պատկերացումը առաջին կամ, ինչպես ընդունված էր անվանել, մեծ բաղնիքի մասին այնքան էլ չի համապատասխանում իրականությանը: Այն ունի բավականին բարդ կառուցվածք, բազմաթիվ բաժանմունքներով ու տարբեր նպատակների համար ծառայող հարկաբաժիններով: Բաղնիքի հանդերձարանի մուտքը այնտեղ է, որտեղ ենթադրվում էր, այլ այն տեղադրված է հյուսիսարևելյան պատի մեջ: Մինչ այդ մուտքը բացվեցին նաև երկու հարկաբաժնից բաղկացած առանձին փոքր սենյակներ, որոնցից մեկի մեջ հանդիպեցինք աղբյուր-ավազանի: Այդ ավազանին ջուր էր մատակարարվել նրանից հյուսիս-արևելք ձգվող կավե խողովակաչարի օգնությամբ:

Ավազանի հարավային պատի մեջ բացվեց նաև ջրահեռացման փողրակը: Հանդերձարանի պեղումների ժամանակ բացվեցին մի քանի թոնիրներ՝ մասնավորապես կենտրոնականը բավականին մեծ չափերի և մի կարաս՝ հորած հատակին: Հանդերձարանի նախկին հատակը եղել է աղյուսաչար, տեղում պահպանվել են առանձին մասեր միայն. հետագայում այն պատվել է լավ մշակված բազալտե սալաքարերով: Հանդերձարանի պեղումների ժամանակ գտնվեցին դրամներ, ջնարակած աղյուսի բեկորներ, հասարակ և ջնարակած խեցեղեն, մետաղե առարկաներ: Այս վերջիններից կարևոր էր մի քանի աշխատանքային գործիքների և դաշույնների գյուտերը: Ակներևաբար բաղնիքի անգործության մատնվելուց հետո նորաբնակները, հանդերձարանը օգտագործել են որպես հացատուն: Այդ են վկայում թոնիրների և կարասի գոյությունը: Այնուհետև հանդերձարանից դեպի մեծ լողարանը տանող հատվածում բացվեցին երկու փոքր սենյակ-բաժանմունքներ ևս, որոնք կանոնավոր կերպով սալահատակված էին: Դրանք տեղում պահպանվել են: Մեզ համար անհայտ մնաց բաղնիքի նախամուտքի իրական պատկերը, որտեղից մուտքեր են բացվում դեպի աղբյուր-ավազանով սենյակը և հանդերձարանի նախասենյակը:



Գծապլան 6. Աշխարհիկ (պալատական?) կառույց. հատակապլան և կարվածքներ (1971-1972թթ. պեղումներ)

1973 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ: 1973 թվականին մեր արչավախուժքը նպատակ ուներ նախ մաքրելու և պարզելու ամրոցի միջնաբերդի միակ մուտքի դրսի և ներսի ընդարձակ տարածությունների իրական պատկերը: Այստեղ փաստորեն մենք շատ ավելի կատարում էինք մաքրման աշխատանքներ. պետք է վերականգնվեր մուտքի հատվածի նախնական տեսքը: Այդ նպատակով մաքրեցինք մուտքի աջ և ձախ կողմի աշտարակների դիմաց կուտակված հսկայական հողաշերտը: Դրանով պատկերը գրեթե չփոխվեց: Մինչ մաքրելն էլ նկատվում էր աշտարակների դասավորության իրական պատկերը: Պեղման ընթացքում մուտքից քիչ արևմուտք քառակուսի աշտարակի մոտ բացվեց ձիթհանի քար:

Մուտքի ներսի կողմի պեղումները հնարավորություն տվեցին բացելու մի հսկայական հրապարակ, որը տարածվում է մուտքից դեպի հարավ և ստեղծում միջանցք: Այն ավարտվում է դեպի միջնաբերդի ներսը տանող երկրորդ մուտքով: Նմանօրինակ ռազմավարական նշանակություն ունեցող մուտքերի գոյությունը միջնադարյան Հայաստանի համար եզակի երևույթ է: Հողի և քանդված պատերի հեռացման ու նախկին պատերի վերականգնման ժամանակ հայտնաբերվում էին հասարակ և ջնարակած խեցեղենի բեկորներ, գամեր, պայտեր, քրեղաններ և այլ նյութեր, որոնք իրենց թե՛ որակով և թե՛ քանակով աչքի չեն ընկնում:

Հիմնականում ավարտելով այս հատվածի պեղումները, որոշեցինք տեղափոխվել քաղաքի շահաստան, այսինքն երկրորդ տեղամաս և այնտեղ ուսումնասիրել եղած ճարտարապետական և կոմունալ-կենցաղային կառույցներն ու կառուցողական տեխնիկան: Այդ նպատակի համար երկրորդ տեղամասում ընտրեցինք պեղելու մի հատված: Պարզվեց, որ այստեղ մենք գործ ունենք բնակելի թաղամասի հետ. բացվեց մի մեծ սենյակ, պատերից մեկի մեջ կրակարան-բուխարիով, և նրան կից նաև տնտեսական նշանակություն ունեցող այլ հարկաբաժիններ: Սենյակի կենտրոնական մասում բացվեցին ոչ այնքան լավ մշակված քարե խարիսխներ, որոնք ծառայել են փայտե սյուների համար որպես հենարան: Պարզվեց, որ այն ծածկվել է միջնադարյան Հայաստանի համար շատ բնորոշ հազարաչեն եղանակով, երգիկավոր ծածկով: Հետաքրքրականն այն էր, որ կենտրոնական սենյակը կառուցված էր տե-

ղական կոպտատաշ բազալտ քարով, սակայն շատ ուղիղ ու համաչափ պատերով: Պեղման ընթացքում գտնվում էին ծեփի մնացորդներ, հասարակ և ջնարակած խեցանոթներ ու նրանց բեկորներ, մետաղե իրեր, կենցաղային այլևայլ առարկաներ՝ կախիչի համար հարմարեցված եղջերուի եղջյուրներ և այլն: Գտածո թե՛ նյութական մշակույթի մնացորդներ և թե՛ բնակելի համակառույցի ճարտարապետական առանձնահատկություններն ու պատերի շարվածքը մեզ հիմք են տալիս ենթադրելու, որ այն պետք է վերագրել Չաքարյան տիրապետության վերջին շրջանին, մասնավորապես XIII դարի սկզբներին:

Այսպիսով, ի մի բերելով մեր իմացությունները Լոռե քաղաք-ամրոցի մասին, հաշվի առնելով բոլոր տարիների հնագիտական պեղումների արդյունքները, շերտագրական տվյալները, ճարտարապետական հուշարձանները, նրանց ավերման և վերականգնման հերթագայությունը, նյութական մշակույթի մնացորդները, որոնք ձայնակցում են ինչպես Հայաստանի, նույնպես հարևան Վրաստանի ու Ադրբեջանի ժամանակամերձ հուշարձանների հետ, կարելի է հանգել այն հետևությունը, որ Լոռեում կյանքը ծայր է առել տակավին մ.թ.ա. երկրորդ հազարամյակում, սակայն չի հարատևել: Հետագայում այն վերսկսվել է ու հարատևել XI-XVIII դարերում: Հնավայրի շերտագրությունը, գտնված հնագիտական նյութերը, պատմական աղբյուրների հետ միասին, մեզ հնարավորություն են տալիս քաղաքի մշակութային և տնտեսական զարգացումը բաժանել երկու կարևոր շրջափուլերի՝ XI-XIII և XIV-XVIII դարերի:

Առաջին շրջանը համընկնում է Կյուրիկյան-Չաքարյան տիրապետության ժամանակահատվածին, որն ավարտվում է թուրք-թաթարական արչավանքների հետևանքով: XI-XIII դարերի շերտը բավականին հարուստ է նյութական մշակույթի մնացորդներով, ճարտարապետական հուշարձանների ավերակներով, ինչպես նաև վիմական արձանագրությունների բեկորներով:

Առաջին շրջանի հնագիտական շերտի պեղումներից հայտնաբերվել են գերազանցապես խեցեղեն առարկաներ, ապակե անոթներ, ապարանջանների բեկորներ (ապակի, մետաղ), պղնձե և բրոնզե առարկաներ, քարե սարքեր, կավից պատրաստված

ծխամորճներ, օտար երկրներից ներմուծված իրեր և առարկաներ:

Գտնված առարկաները, հատկապես խեցեղենը (հասարակ և ջնարակած) իրենց զուգահեռներն ունեն Անիի, Դվինի, Գառնիի, Ամբերդի, Բջնիի, Դմանխիի, Բայլականի, Հին Գանձակի և միջնադարյան այլ ժամանակամերձ հուշարձանների XI–XIII դարերի նույնատիպ նյութերի մեջ: Դրանց մեջ առավել բնորոշները դաջագարդ կարասներն են, մեծ ու փոքր քրեղանները և այլն, որոնք լայն կիրառություն ունեին միջնադարյան Հայաստանում:

Բերդաքաղաքի շինարարական հաջորդ շրջանը համապատասխանում է հայ Օրբելյանների տիրապետության տարիներին և թուրք-պարսկական անընդհատ փոփոխվող գերիշխանության ժամանակներին՝ XIV–XVIII դարերին: Այս դարաշրջանի նյութերը, թե՛ քանակով և թե՛ որակով գիջում են նախորդ շրջանի նյութերին: Քաղաքական անկայուն վիճակը բնականաբար ազդել է տնտեսական կյանքի բոլոր կողմերի վրա: Մշակութային շերտը, որը տատանվում է 20-ից մինչև 80սմ-ի միջև, հարուստ է հատկապես ջնարակապատ խեցեղենով, որը հար և նման է Գառնիի, Ամբերդի, Բջնիի ժամանակամերձ (XIV–XVII դդ.) շերտում հայտնաբերված խեցեղենին: Բազմաթիվ են հախճապակե թասերի, գավաթների, քրեղանների բեկորները, որոնց նմուշներն իրենց համապատասխան զուգահեռներն ունեն Սեֆեվյան Պարսկաստանի հնավայրերի պեղումների նյութերի մեջ:

Առանձին խումբ են կազմում պեղումների ընթացքում գտնված կավե ծխամորճները, որոնք բնորոշ են թե՛ նախորդ և թե՛ այս դարաշրջանի համար: Հասարակ խեցեղենը, նախորդ շրջանի նյութերի հետ համեմատած, ավելի զանգվածային է: Բոլոր դեպքերում, Լոռե քաղաքի նյութական արտադրանքում XIV–XVIII դարերի ընթացքում նկատելի են անկման որոշակի դրսևորումներ: Այս հանգամանքը կապված էր Հայաստանի տարածքում և ընդհանրապես ողջ Առաջավոր Ասիայում տիրող քաղաքական անկայուն վիճակի հետ, որը բնականաբար ազդում էր տվյալ տարածքում ապրող ժողովուրդների տնտեսական ու մշակութային կյանքի վրա:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

### ԼՈՌԵ ԲԵՐԴԱՔԱՂԱՔԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Կյուրիկյան թագավորության երբեմնի հուշակավոր մայրաքաղաք Լոռեի ավերակները գտնվում են ՀՀ Ստեփանավանի շրջանում: Այն շրջկենտրոնից հեռու է շուրջ 5կմ և աշխարհագրական դիրքով տեղավորված է նրա հարավարևելյան կողմում: Քաղաքատեղիի տարածքն ընդարձակ ու սրածայր հրվանդան հիշեցնող գեղատեսիլ սարահարթ է, որը ծովի մակերևույթից բարձր է 1490 մետր:

Հրվանդանը հարավային, արևելյան և արևմտյան կողմերից հատված է անդնդախոր կիրճերով, որոնց միջով հոսում են Ձորագետ (հին անունը՝ Տաշրաջուր) և Միսխանա լեռնային արագընթաց գետերը: Նկարագրված հրվանդանի վրա միջին դարերում կառուցվել է Լոռե ամրոցը, որը ժամանակին հայտնի էր իր անառիկությամբ: Այդ հանգամանքը ապահովվում էր նախ՝ տեղանքի պաշտպանական առումով նպաստավոր դիրքով և ապա՝ քաղաքից դեպի հյուսիս ձգվող մատչելի մասում կառուցված բացառիկ ամուր պաշտպանական պարսպապատով ու ջրի բավականին խորը խանդակով:

Լոռե ամրոցի կառուցումից հետո, XI դարի կեսերին այն Կյուրիկե Բ թագավորը (1048–1089) դարձրեց իր թագավորության նստոցը, նրա հյուսիսարևմտյան կողմի հարթության վրա կազմավորվեց քաղաքի շահաստանը: Այդ տարածությունը, որ մեզ ավանդվել է «Աղ-Շահար» (Սպիտակ քաղաք) անունով, պաշտպանված էր երկրորդ պարսպով, որը շուրջ յոթ հարյուր մետր հեռու է գտնվում առաջինից:

Պարսպապատերի մեջ ամփոփված ամբողջ քաղաքատեղին և միջնաբերդը զբաղեցնում են 34 հեկտար տարածություն:

Քաղաքն իր ծաղկման շրջանում չէր պարփակվում միայն վերը նշված 34 հեկտար տարածքի սահմաններում: Ուսումնա-



սիրողների կարծիքով, հատկապես XII-XIII դարերում, երբ քաղաքի ծաղկումը հասել էր իր գագաթնակետին, Ձորագետ և Մխիթանա գետերի հակառակ ափերում տարածվող ընդարձակ հարթության վրա առաջանում են քաղաքի արվարձանները:<sup>1</sup>

Մխիթանա գետի ձախակողմյան սարահարթում գոյացած արվարձանը տեղացիների շրջանում հայտնի է «Կենտագեղ» անունով: Այս անունը, ինչպես արդեն նշել ենք, առաջին անգամ հիշատակում է Ս. Զալալյանը՝ դեռևս XIX դարի 30-ական թվականներին: Այդ և նման թաղամասերի անունները թերևս գալիս են հին ժամանակներից:

Համանման արվարձան է գոյացել Ձորագետի կիրճի աջ-ափնյա հարթության վրա, որտեղ այժմ գտնվում է մոլոկանների Կիրովո (Նիկոլաևկա) գյուղը: Այն կոչվել է «Ամրակից», հավանաբար՝ ամրոցին կից լինելու պատճառով: Այժմ մոլոկանների հեռանալուց հետո նորաբնակ հայերը վերականգնել են գյուղի Ամրակից անունը: Արվարձանները քաղաքի հետ կապելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել Մխիթանա և Ձորագետ գետերի կիրճերում կառուցել կամուրջներ ու ոլորապտույտ ճանապարհներ, որոնք երթևեկելի են մինչև օրս:

Հիշատակված արվարձանների միջին դարերում բնակեցված լինելու մասին են խոսում եկեղեցական և աշխարհիկ հուշարձանների պահպանված մնացորդները: Արվարձաններից բացի, քաղաքի բնակչության, հատկապես օրավարձով ապրողների մի զգալի մասն ապաստան է գտել քաղաքը շրջափակող ձորերի մեջ՝ քարայրներում: Բ.Ն. Առաքելյանի կարծիքով,<sup>2</sup> այստեղ հաշվվում է շուրջ 370 քարայր, որոնց զգալի մասը դասավորված են երկու-երեք հարկերով: Քարայրների մուտքերի դիմաց շարված են արհեստական պատեր. մեկ-երկուսը նույնիսկ ունեն քարե դռներ: Նրանցից շատերի մեջ փորված են արհեստական սանդեր, ճրագներ դնելու տեղեր, անկողինը գետեղելու խորշեր, թոնիրներ, օջախներ: Վերջիններիս պատերը մրապատ են, ներսում

օջախ-թոնիր վառելու հետևանքով: Մի մասի պատերին կան հայատառ արձանագրություններ՝ բաղկացած մի քանի բառից, կամ միայն թվականն ազդարարող տառերից:

Այսպիսով, Լոռե քաղաքի բնակելի տարածքը ներառյալ վերը հիշատակված արվարձաններն ու քարայրները, կազմել են շուրջ 50-60 հեկտար, որի վրա, եթե հաշվի առնենք միջին դարերի խիտ բնակեցման հանգամանքը, կարող էր ապրել 10-15 հազար բնակիչ: Իր բնակչության քանակով և ընդգրկած տարածությամբ Լոռե քաղաքը XII-XIII դարերում պատկանել է Հայաստանի միջին մեծության քաղաքների թվին:<sup>1</sup>

Լոռե քաղաքն իր տեղադրությունը, տեղանքի անառիկությունը, միջնաբերդով, շահաստանով և արվարձաններով, քարայրներով, ինչպես նաև պաշտպանական կառույցներով հիշեցնում է Հայ Բագրատունիների հռչակավոր մայրաքաղաք Անին: Պատահական չէ, որ թե՛ հայ և թե՛ օտար այցելուները, ուսումնասիրողները, երբեմն Լոռեն անվանել են «փոքր Անի»:

Լոռե քաղաքի շրջապատը հարուստ է շինարարության համար անհրաժեշտ բազալտ քարհանքներով: Այդ է պատճառը, որ նրա հուշարձանների մի մասի ավերակները պահպանվել են ընդհուպ XX դարի սկզբները: Դժբախտաբար, 1926-1930-ական թվականների ընթացքում միջնաբերդի տարածքից հեռացող գյուղացիներն իրենց պատկանող տների և գոմերի հետ միասին խարխիլել են հին հուշարձանների մի զգալի մասը և նրանց մշակված քարերն օգտագործել են իրենց նորակառույցների համար: Այժմ Լոռի բերդ գյուղի շրջակայքում կարելի է հանդիպել հին քաղաքից, կամ նրա գերեզմանատնից բերված խաչքարերի, վերջիններիս պատվանդանների, տապանաքարերի, սյուների, խոյակների կամ խարխիլների, ճարտարապետական այլ մանրամասների, որոնց մի մասի վրա առկա են հայատառ արձանագրություններ: Արձանագրությունների մեծ մասը թերի է: Նույնիսկ մի շարք բնակելի տներ ամբողջովին կառուցապատված են հին հուշարձանների սրբատաշ քարերով:

<sup>1</sup> Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում XI-XIII դարերում, հ. 1, 1958, էջ 126:

<sup>2</sup> Բ. Առաքելյան, նշվ. աշխ., հ. 2, Երևան, 1964, էջ 89-90:

<sup>1</sup> Բ. Առաքելյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 125-126:



Ականատեսների վկայությամբ 1940-1950-ական թվականներին Ստեփանավան քաղաքի տարածքում տեղակայված գինվորական միավորման շինարարության համար, որպես պատրաստի քարհանք ծառայել է Լոռե ամրոցի ավերակները: Հարյուրավոր մեքենա մշակված քար են տեղափոխել: Այդ բարբարոսական գործողության ժամանակ հիմնականում տուժել է Լոռեի քաղաքային պարիսպը, գերեզմանատունը և որոշ հոգևոր կառույցներ: Քաղաքային պարսպից մնացել է միայն պարսպապատի շաղախը, պատերի լիցքի մեջ օգտագործված խճաքարը: Այդ ավերածության պատճառով քաղաքային պարսպի տեղում այժմ մնացել է հողի, շաղախի ու խճաքարի շուրջ մեկ մետր բարձրությամբ հողաթումբ:

Գերեզմանատան տարածքում հսկա տապանաքարերի մեծ մասը նույնպես տեղում չի պահպանվել: Խաչքարերը տեղափոխելուց հետո, նրանց խորանարդաձև պատվանդաններից պահպանվել են միայն մի քանիսը: Վերջիններս իրենց վրա կրում են տեղափոխման նպատակով մանրատելու անհաջող փորձերի դրոշմը: Քաղաքատեղիի երկու, պայտաձև շարվածքով եկեղեցիներից պահպանվել են միայն հիմնապատերի մեկական շարքերը: Գրեթե ոչինչ չի մնացել բոլորաձև աշտարակից, որի գոյության մասին հիշատակում են ճանապարհորդներն ու այցելուները:

Հնավայրի անխնա ավերումները շարունակվել են նաև մոտակա անցյալում, մինչև Լոռե հնավայրը հուշարձանների պահպանության հսկողության տակ առնվելը:<sup>1</sup>

- Լոռե քաղաք-ամրոցի հնավայրը բաժանել ենք երեք խմբի.  
ա) բերդ կամ միջնաբերդ,  
բ) քաղաք կամ շահաստան (Աղ-շահար),  
գ) քաղաքի արվարձաններն ու մնացած մասերը:

<sup>1</sup> Լոռե բերդ-քաղաքի սույն ուսումնասիրությունը և տեղում հնագիտական պեղումները կատարել ենք մինչև 1988 թվականի դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժը: Այն ժամանակ ինչ-ինչ հանգամանքներ հնարավորություն էր ստեղծում շահաստանի հետազոտության: Սույն ուսումնասիրության լույս ընծայում որոշ չափով կարևորվում է նաև նրանով, որ Լոռե ամրոցի և նրա ճարտարապետական հուշարձանների նկարագրությունը, լուսանկարները և չափագրությունները կատարված են մինչ երկրաշարժը, որոնց մի մասը խաբխվել է կործանարար երկրաշարժի հետևանքով, հետևաբար անմատչելի է դարձել մերօրյա ուսումնասիրողներին:

XI դարի առաջին տասնամյակում Դավիթ Անհողին թագավորի կողմից Լոռե ամրոցը հիմնելիս պարսպապատվել է միայն Ձորագետ և Մխիթանա գետերի միջև կազմավորված հրվարդանի մատչելի մասը, մնացյալ երեք կողմերից այն չըջափակված, պաշտպանված էր բնականից անդնդախոր կիրճերով: Այն սկզբում հանդիսացել է բերդ, որը զբաղեցրել է շուրջ 9 հեկտար տարածություն: Հետագայում Լոռեն Կյուրիկյանների թագավորության մայրաքաղաք հռչակելուց հետո (XI դ. 50-60-ական թվականներ), վերածվեց միջնաբերդի, երբ կառուցվեց քաղաքային պարիսպը: Այս իրողությունը եզակի չէր միջնադարյան Հայաստանի համար, այլ այնքան բնորոշ, որ ժամանակակից պատմիչ Ստեփանոս Տարոնացին, անրադառնալով Բագրատունի առաջին թագավորների շինարարական գործունեությանը գրում է. «Յաւուրս սորա (Սմբատի) և յիշխանութեան հօր իւրոյ էր շինութիւն և խաղաղութիւն յաշխարհիս Հայոց...: Եւ այսպէս ազարակաց աւանացեալ և աւանաց քաղաքացեալ բազմամարդութեամբ և ընչեղութեամբ...»:<sup>1</sup>

Բ.Ն. Առաքելյանը, դառնալով Հայաստանում քաղաքների առաջացման խնդրին, եզրակացնում է. «Քննարկելով միջնադարյան քաղաքի առաջացման հարցը, պետք է ընդգծել, որ Հայաստանի համար ամենատիպականը հանդիսանում է քաղաքի առաջացումը բերդավանից, ըստ որում, ինչպես կտեսնենք, վերածելով գյուղաքաղաքի, ապա քաղաք է դառնում բերդի առջև փոփոխված ավանը, որը պարսպապատվում է, իսկ բերդը վերածվում է ներքին բերդի կամ միջնաբերդի»:<sup>2</sup> Ասես այս հետևությունն արված է հատկապես Լոռեի համար:

Բերդը հիմնադրվելուց հետո Կյուրիկե Երկրորդից սկսած այստեղ բնակություն են հաստատել Կյուրիկյան թագավորները, այնուհետև Ջաքարյանները, հայ և օտար տիրակալները: Նրանք միջնաբերդում հաջորդաբար կառուցել են պալատներ և հարակից շինություններ, եկեղեցիներ, կոմունալ-


<sup>1</sup> Ասողիկ, Պատմութիւն, էջ 161:

<sup>2</sup> Բ.Ն. Առաքելյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 121:

կենցաղային կառույցներ, բնակելի տներ, պահեստներ, զինանոցներ, զորակայաններ, արտադրական կառույցներ:

Լոռե ամրոցի հուշարձանները, ի տարբերություն միջնադարյան այլ հնավայրերի, հիմնականում կառուցապատված են տեղական բազալտ քարերով: Այդ կառույցները մի քանի անգամ վերաշինվել են. հաճախ օգտագործվել են նախորդ շրջանի քարերը: Չնայած դրան, այնուամենայնիվ, նորանոր կառուցապատման հետևանքով հնավայրի տարբեր մասերում հնագիտական միևնույն ժամանակաշրջանին պատկանող շերտի հաստությունը մայր հողից տարբեր է. այնպես որ դժվար է հիմնականից գատել, որոշել նույն մշակութային շերտի մեջ կառուցված տարբեր ժամանակների հավելումներն ու փոփոխությունները: Ինչ վերաբերում է շերտագրությունը, այն երբեմն ուսումնասիրողներին գցում է ակնհայտ թյուրիմացություն մեջ. քանզի հետագա բնակիչները XIX-XX դդ. հատկապես միջնաբերդում կատարել են տարբեր նշանակության և բնույթի շինարարական աշխատանքներ, որով խաթարել են հնագույն կառույցների իրական պատկերը:

Լոռեի միջնաբերդը տեղավորված է, ինչպես վերը նկարագրեցինք, երկու գետերի միջև ընկած հրվանդանի ծայրին և իր դիրքով շրջապատի նկատմամբ, ի տարբերություն Հայաստանի միջնադարյան այլ քաղաքների (Դվին, Անի, Կարս, Վան, Բջնի և այլն), բարձրադիր է: Սակայն այն երեք կողմերից շրջափակված է այնպիսի խորը կիրճերով, որոնք առաջացել են Չորագետ և Միսխանա լեռնային արագընթաց գետերի միախառնվելու շնորհիվ՝ դարձել են անմատչելի թշնամու, նույնիսկ յուրայինի համար: Թերևս այդ է պատճառը, որ դեռևս վաղնջական անցյալում հրվանդանն իր վրա է բեռել մարդու ուշադրությունը: Տակավին 1966թ. մեր կողմից կատարված հետազոտական պեղումների միջոցին միջնաբերդի ստորին շերտում հանդիպեցինք սև փայլեցված խեցանոթների բեկորների, որոնք հնագետ Թելման Խաչատրյանի կարծիքով, պատկանում են մ.թ.ա. XIV-XII դարերին: Հետագայում այս տեսակետը լրիվ հաստատվեց, երբ հայտնի դարձավ Լոռե բերդի բրոնզեդարյան և վաղ երկաթի ժամանակաշրջանի ընդարձակ դամբարանադաշտը:



Պատկեր 7. Լոռե բերդ. Միջնաբերդի տեղահամույթը

Լոռեի միջնաբերդն ունի համեմատաբար հարթ մակերես, գբաղեցնում է շուրջ 9 հեկտար տարածություն, ընդ որում՝ երկարությունը հյուսիսից հարավ՝ ամենաերկար տեղում 400 մետր է, լայնությունը՝ արևելքից արևմուտք 280 մետր:

Ինչպես արդեն ասվել է, միջնաբերդը երեք կողմերից շրջափակված է խորը կիրճերով և մատչելի է միայն հյուսիսարևմտյան կողմից: Դրա համար այս հատվածում կառուցվել է մի անանցանելի պարիսպ, որը ձգվում է Չորագետի կիրճից մինչև Միսխանայի եզրը: Միջնաբերդի պարսպի երկարությունը կազմում է 214 մետր: Հաստությունը տարբեր հատվածներում տարբեր չափեր ունի: Չորագետի կողմում այն ավելի ստվար է, հասնում է 18-20 մետրի, իսկ Միսխանայի կողմում չի անցնում 7-8 մետրը:

Միջնաբերդի պարիսպը Չորագետի հատվածում չունի ո՛չ աշտարակներ, ո՛չ էլ մուտք:<sup>1</sup> Շինարարներն այդ մասում պարսպի ամրության հիմնական միջոցը դարձրել են նրա հաստահեղույս լինելը, որը հնարավորություն կտար համեմատաբար փոքր թվով ռազմիկներով անառիկ դարձնել միջնաբերդի այս հատվածը: Պարսպի հարավարևմտյան անկյունում, ուր սկսվում է Չորագետի կիրճը, պատի մեջ սկզբնապես կառուցված է եղել մի փոքր դիտակետ: Այն թողնված է 6 մետր բարձրության վրա, ունի երկթեք ծածկ: Ծածկի վրա շարունակվել է պարսպապատը: Դիտակետը բացվեց, երբ 1972թ. տեական անձրևներից հետո փլվեց նրա առջևի, հետագայում շարված պատը: Այս դիտակետից նկատելի կլինեն, ինչպես քաղաքի շահաստանի տարածքում, այնպես և Չորագետի կիրճում տեղի ունեցող որևէ գորաշարժ, հարձակման նախապատրաստություն և այլն:

Հարկ է նշել, որ Լոռե բերդաքաղաքի միջնաբերդի պարիսպն իր գոյություն չունի 800 տարիների ընթացքում թեև բազմիցս ենթարկվել է վերակառուցումների. մինչև մեր օրերը կրել է բավականին փոփոխություններ, սակայն պահպանել է իր նախնական տեսքը: Դա նկատելի է պարսպապա-

տերի և աշտարակների տարբեր շարվածքից. նրանց մեջ օգտագործված նախկինում ոչ այդ նպատակի համար մշակված քարերից, ինչպիսիք են XIV-XV դարերի տապանաքարերը, խաչքարերի և արձանագրության բեկորները, ուղիղ շարվածքի պայմաններում անկյունավոր մշակում ունեցող քարերը, օգտագործված շաղախների բաղադրության տարբերությունները և այլն:

Բերդապարսպի հյուսիսարևմտյան կողմում է գտնվում ամրոցի միակ մուտքը իր կամարածև շարվածքով, որն այժմ կիսավեր վիճակում է: Մուտքի քարերից մեկի վրա պահպանվել է արաբատառ արձանագրություն. մասնագետներն ընթեռնել են «ղալա» (բերդ) բառակապակցությունը: Արձանագրությունն ակներևաբար վերաբերում է XV-XVII դարերին, երբ բերդի տիրակալներն էին Ուզուն Հասանը կամ պարսկական խաները: Մուտքի աջ կողմում, բավականին առաջ բերած դիրքով կառուցվել է կիսակլոր աշտարակ, որի վերին ատամնավոր մասն ավերված է: Մեր կարծիքով, նախնական վիճակում այս աշտարակը, հավանաբար, քառանկյունի է եղել: Հետագա դարերում է այն վերաշինվել ու ձևափոխվել կիսակլոր աշտարակի: Շարվածքի վրա որոշակի նշմարվում են հետագա փոփոխությունները: Այն տարբերվում է թե՛ շարվածքով և թե՛ օգտագործված քարերի մշակման տեխնիկայով: Այդ ձևափոխումները հավանաբար կատարվել են թաթար-մոնղոլական արշավանքից հետո, քանի որ Լոռե ամրոց-քաղաքը առաջին անգամ ամենամեծ ավերածությունների է ենթարկվել միայն 1236 թվականին, ինչի մասին պերճախոս վկայում են ժամանակակից պատմիչ Կիրակոս Գանձակեցին և ուրիշները:

Կիսաբլոր աշտարակին հաջորդում է 15 մետր երկարության ուղիղ շարվածքով պատը, որն ավարտվում է Միսխանա գետի կիրճի եզրին կառուցված քառանկյունի մեկ այլ աշտարակով: Պարիսպը այդ աշտարակից շուրջ 90 աստիճանի անկյան տակ թեքությամբ շարունակվում է Միսխանա գետի կիրճին զուգահեռ և ավարտվում կիրճի այն հատվածում, ուր կառուցված է մուտքի երկրորդ դարբասը:

<sup>1</sup> ձյամարիտ չեն բոլոր այն հեղինակները, որոնք ենթադրել են, թե միջնաբերդը մուտք է ունեցել նաև Չորագետի կողմից (տե՛ս Ի. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 248 և ուրիշներ):

Պահլավունի ու Վաչուտյան տոհմի անառիկ Ամբերդ ամրոցը ուսումնասիրող Ս. Հարությունյանը իրավացիորեն նշում է, որ ընդհանրապես միջնադարյան ամրոցների ամենախոցելի տեղերը համարվել են դարբասները, ուստի ամրոց կառուցող մասնագետներն աշխատել են դարբաս-մուտքերի քանակը հասցնել նվազագույնի:<sup>1</sup> Լոռե ամրոցի շինարարները նույնպես հետևել են ռազմական ամրաշինական նույն սկզբունքին: Նրանք, միաժամանակ, քառանկյունի և կլոր աշտարակների նպատակամղված դասավորութայամբ հասել են այն բանին, որ անմիջապես դարբաս-մուտքին հարող ճանապարհի լայնությունը հասցրել են 5-6 մետրի: Դարբասի դռան բացվածքը 3մ 80սմ է: Ամրոցի մուտքը կամարակապ է և կողային աշտարակների հետ միանում է ուղիղ շարված պատերով:

Հարկ է հատուկ ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ դարբաս-մուտքի հաղթահարումից հետո թշնամին անմիջապես չէր կարող հայտնվել միջնաբերդի ներսում: Ամրոցը կառուցողները պարսպապատերի և նոր աշտարակների օգնությամբ ստեղծել են քառանկյունի երկար ձգվող մի հրապարակ, որն ավարտվում էր անմիջապես արդեն միջնաբերդ մտնող երկրորդ՝ ներքին մուտքով: Այդ մուտքի երկու կողմերին պահպանվել են երկու համեմատաբար փոքր աշտարակների հիմնապատերը: Դատելով աշտարակների այս դասավորությունից, պարզ է դառնում այն, որ թշնամին հաղթահարելով ամրոցի առաջին դարբասի պաշտպանությունը, մտնում է առաջին և երկրորդ դարբասների միջև ստեղծված քառանկյունի, համեմատաբար նեղ միջանցքը և կրկին հանդիպում լուրջ դիմադրության: Տեղին է նշել, որ երկրորդ մուտքը առաջինի նկատմամբ տեղադրված է ոչ թե ուղիղ գծով, այլ դեպի հարավային հատվածը շարունակվող 80-90 աստիճան թեքությամբ:

Երկու դարբասների միջև ընկած հրապարակի չորս կողմերից թշնամին կհանդիպեր լուրջ դիմադրության: Ամրոցի շինարարներն աշխատել են ամրոցի այդ հատվածի պաշտպանությունը առավել հուսալի դարձնելու նպատակով արև-

մտյան կողային պարսպի մեջ կառուցել ևս մեկ այլ կիսաբլուր աշտարակ: Հիշյալ լրացուցիչ աշտարակների գոյությունը բավականին թեթևացնում էր պաշտպանների և առավելապես դժվարացնում հարձակվող թշնամու գինվորների խնդիրը: Պատահական չէ, որ գրավոր աղբյուրներից գիտենք մի շարք դեպքեր, երբ Լոռեն դիմացել է երկարատև պաշարման, սակայն թշնամուն չի հաջողվել գրավել այն: Լավագույն օրինակը 1177թ. վրաց թագավոր Գեորգի Երրորդի կողմից՝ Լոռե քաղաք-ամրոցի երկարատև պաշարումն էր, որը տևել է 207 օր, դրանով իսկ մնացել է անառիկ: Պաշարվածները հանձնվել են հոժարակամ:

Հարկ է նշել, որ Լոռե ամրոցի կրկնակի դարբասների և մուտքերի միևնույն առանցքի վրա չգտնվելու իրողությունը միջնադարյան հայկական, և ոչ միայն հայկական, այլև անդրկովկասյան ռազմական շինարարության արվեստի մեջ եզակի իրողություն չէր: Նույն սկզբունքը նկատելի է Անիի, Բջնիի, Ամբերդի, Շամշուղեի, Դմանխի և այլ քաղաքների և ամրոցների շինարարության մեջ:<sup>1</sup>

Ամրոցաշինական այս սկզբունքը նկատի ունենալով հայ միջնադարյան քաղաքաշինության ու ճարտարապետության գիտակ Վ. Հարությունյանը, նկատի ունենալով Անի քաղաքի կրկնակի դարբասների առկայությունը, գրում է. «Երկու դարբասների (մեկը արտաքին, իսկ մյուսը՝ ներքին պարսպում) առանցքները խիստ շեղված էին, իսկ նրանց արանքում թողնված էր ոչ մեծ տարածություն — ծուղակ: Դրա իմաստն այն էր, որ արտաքին դարբասի գրավումից հետո, ծուղակը մտած և պարիսպների ու բուրգերի վրայից տեղացող հարվածների տակ ընկած թշնամու համար խիստ դժվարանա ներքին դարբասի գրոհը, մանավանդ, երբ քաղաքադռներն էլ, ինչպես վկայում է մատենագիրը (Ստ. Տարոնեցի կամ Ասողիկ), շատ ամուր էին և հուսալի...»:<sup>2</sup>

Լոռե քաղաք-ամրոցի միջնաբերդի մուտքից դեպի ձախ իրար են հաջորդում քառանկյունի և բլուրակ չորս աշտա-

<sup>1</sup> Ս. Հարությունյան, Անբերդ, Երևան, 1978, էջ 39:

<sup>1</sup> И.А. Орбели, Краткий путеводитель по городищу Ани, СПб., 1910, с. 19-22: Ս. Հարությունյան, նշված աշխ., էջ 38-43:

<sup>2</sup> Վ.Մ. Հարությունյան, Անի քաղաքը, Երևան, 1964, էջ 43-44:

րակներ, որոնք տեղում լավ են պահպանվել: Աշտարակների միայն վերին մասերն են խարխուլվել: Իրական պատկերը և բարձրությունը վերականգնելն ու ճշտելը դժվար է: Կարելի է միայն ենթադրել, ինչպես այլ նմանատիպ ամրոցների աշտարակները, սրանք նույնպես ավարտվել են ատամնաշարով: Բուրգերի ատամնաշար շարվածքի նպատակը պարզ էր: Այն թույլ էր տալիս ամրոցը պաշտպանող ռազմիկին, թաքնվելով ատամնաշարի թիկունքում, միաժամանակ հետևել թշնամու զինվորների շարժմանը և անհրաժեշտության դեպքում, աննկատ մնալով նետահարել թշնամուն:

Լոռեի ամրոցաշինության մեջ քառանկյունի և կիսաբոլոր աշտարակների հաջորդաբար կառուցումը հետաքրքիր երևույթ է: Ամբերդն ուսումնասիրող Ս. Հարությունյանը այդ առթիվ գրում է. «Ամբողջ միջնադարում բոլորածե աշտարակները տիրապետող են և միայն XIII դարի սկզբներին է, որ նորից հանդես են գալիս քառանկյունի աշտարակները»:<sup>1</sup> Հարկ է նշել, որ քառանկյունի աշտարակները հանդես են գալիս ոչ թե XIII դարի սկզբին, այլ XI դարի սկզբից, որի լավագույն ապացույցը Լոռե ամրոցի քառանկյունի աշտարակների գոյության իրողությունն է: Այն կառուցվել է XI դարի 10-20-ական թվականներին: Գրավոր աղբյուրները և տեղում կատարված հնագիտական ուսումնասիրությունը հավաստում են, որ Լոռեի միջնաբերդի պարսպի այս հատվածը երբևէ լուրջ փոփոխության չի ենթարկվել:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քառանկյունի աշտարակները բոլորածեների նկատմամբ ունեն իրենց որոշակի առավելությունները, բայց և խոցելի տեղերը: Լոռե ամրոցի շինարարները համադրել են քառանկյունի և բոլորածե կամ կիսաբոլոր աշտարակների դասավորությունը մեջընդմեջ նպատակ ունենալով, որ դրանք կկրկնապակտեն առավելությունները և կբացառեն թերությունները:

Միջնաբերդի պարսպի գրեթե կենտրոնական մասում նախկինում եղել է քառանկյուն հատակագծով բարձր մի աշտարակ, որից այժմ տեղում պահպանվել է միայն մի պատը:

Ուսումնասիրողները հակված են կարծելու, որ այդ աշտարակը ամբողջ պարսպապատի նկատմամբ ունենալով բարձր, տիրապետող դիրք, ակներևաբար եղել է դիտակետ, քանի որ այստեղից ամենահարմար դիրքն է տեսադաշտում պահել շրջակա հարթությունները բոլոր կողմերից: Բարձրադիտակ այդ աշտարակից մինչև Ձորագետի կիրճի եզրը ձգվում է, աշտարակներից զուրկ պարսպը: Պարսպի այս հատվածում անգն աչքով անգամ նկատելի են մի շարք նորոգումների, լրացուցիչ ամրացման աշխատանքների հետքեր:

Ճանապարհորդ-ուսումնասիրողներից ոմանք նշում են, որ միջնաբերդի պարսպի աշտարակների մեջ եղել է մի եկեղեցի, որն իրենց այցելության ժամանակ կիսավեր է եղել:<sup>1</sup> Մեր բազմաթիվ փորձերը՝ գտնելու այդ եկեղեցու հետքերը պարսպի մեջ կամ վրան, հաջողությամբ չպսակվեցին. հանգեցինք այն համոզման, որ եկեղեցի գոյություն չի ունեցել: Հետևաբար նման պնդումը որոշ հեղինակների կողմից թյուրիմացություն արդյունք է:

Բերդապարսպը և աշտարակները կառուցված են տեղական բազալտի գրեթե անմշակ, հաճախ կոպտատաշ, միայն մեկ երեսը հարթեցված քարերով, որոնք իրար են հյուսվել կրաշաղախով: Սեյսմիկ ուժերի նկատմամբ դիմացկունությունն ապահովելու համար պարսպապատերի մեջ, որոշակի բարձրության վրա դրվել են փայտե գերաններ, որոնց տեղերը երևում են ինչպես աշտարակների, այնպես և պատերի շարվածքում:

Պարսպապատի վրա բավականին դժվար մատչելի տեղում պահպանվել է հետաքրքիր, սակայն թերի մի վիմագիր: Դատելով նրա բովանդակությունից կարելի է պնդել, որ այդ արձանագրությունը նախկինում այլ տեղ է դրված եղել. պարսպի վերակառուցման ժամանակ (հավանաբար XIII դարում) այն տեղափոխել են այժմ զբաղեցնող տեղը:

Վիմագիրն ազդարարում է.

... ԹՈՂԻ ԶԿՈՐԿՈՏԱՐՈՑԻՆ ԵՒ

<sup>1</sup> Ս.Վ. Հարությունյան, նշված աշխ., էջ 42:

<sup>1</sup> Ի. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 250: Ս. Էփրեկյան, նշվ. աշխ., էջ 119:

... ԱՐՐՈՅԻՆ ԿԱՔԱԼԸ:<sup>1</sup> Ճ: ԱԻԱԳ ՍԱՐԳՍԻՆ

... ԽՅԱԶԱՀԱՆԱՅՆ ՆՈՅՆՊԷՍ ՈՐ Զ:Ճ:...

Ինչպես նկատելի է, չնայած պահպանվել է վիմագրի մի-այն մի մասը, այդուհանդերձ, այն որոշ գաղափար է տալիս XII-XIII դարերի Լոռե քաղաքի տիրակալների և արհեստավորների միջև գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին:

Այս վիմագրից բացի Սարգիս վարդապետ Զալալյանցը, որը Սանահնի վանքի առաջնորդն էր, 1841 թվին այցելել է Լոռե ամրոց և իր «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» աշխատության էջերում վկայակոչել է մեկ այլ վիմագիր, որն ասում է.

«Ի թուին ոճ-ին (680+551=1231) ես Սմբատ Բէշքէնայ որդի Սիլառի Խազինատար վարկիր ի հնոց, ի վերջին տաճիկ բռն Գիրգինոյ էրաձուկն այ է Սանախարփ զակն ի մովսաւալին երեսն վասն Շահրնշահի Զաքարէի երկար կենաց: Որք խափանեն նգովին Աստուծոյ»:<sup>2</sup>

Արձանագրության վերծանությունը որքանով է համահունչ բնագրին դժվար է որոշել: Բայց թվականը և Շահնշահ Զաքարյանի անվան հիշատակությունը համընկնում են: Տեղում մեզ չհաջողվեց գտնել արձանագրությունը:

Լոռե քաղաքի միջնաբերդը, բնական պատվարից և հաստահեղույս պարսպից բացի թշնամիներից պաշտպանվել է պարսպի արտաքին կողմում կառուցված ջրային պատնեշով: Այն պատմա-հնագիտական գրականության մեջ հայտնի է «խանդակ» անունով,<sup>3</sup> որի մնացորդները մասնակի չափով պահպանվել են տեղում: Խանդակը համեմատաբար լավ է պահպանվել մուտքից դեպի աջ ընկած հատվածում: Խրամատի

տարբեր հատվածներում ջրի մակարդակը բարձր պահելու համար պատրաստվել են արհեստական պատնեշներ, որոնք ժամանակի ընթացքում քանդվել են: Այժմ տեղում մնացել են դրանց աննշան մնացորդները:

Մշտական պաշար ապահովելու համար ջուրը խանդակ են բերել բաց ջրանցքով Լոռե ամրոցի հյուսիս-արևմտյան կողմից շուրջ 5-6կմ հեռավորությունից, ուր կա բավականին հորդառատ լեռնային աղբյուր: Այստեղից է բերվել նաև խմելու ջուրը, սակայն փակ խողովակաշարով: Բաց ջրանցքը օգտագործվել է մինչև XX դարի 20-ական թվականները, և ամեն տարի հունը ենթարկել են մաքրման:

Դժվար է միջնաբերդը պաշտպանող ջրի խանդակի լայնքը և խորությունը ճշգրիտ որոշելը: Խանդակի ընդհանուր երկարությունը կազմել է շուրջ 180-190 մետր, լայնությունը՝ 8-10 մետր, խորությունը՝ 5-6 մետր: Ներկայումս խանդակը կիսով չափ լցված է պարսպից թափված քարերով և հողաչերտով: Ենթադրվում է, որ խանդակի ջուրը իր ելքի տեղերում օգտագործվել էր ջրաղացներ գործի դնելու համար:

Միջնաբերդի տարածքում այժմ պահպանվել են մի քանի կանգուն, կամ կիսավեր ճարտարապետական շինություններ: Մի քանիսն էլ ի հայտ եկան հնագիտական պեղումների միջոցին: Դրանցից է քաղաքացիական շենքը:

«ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՇԵՆՔ»: Կառույցը գտնվում է պարսպապատից 80 մետր հեռու՝ հարավարևելյան կողմում: Այն միակ կանգուն կառույցն է ամբողջ միջնաբերդի տարածքում, որը շրջապատի նկատմամբ ունի իշխող դիրք:

Կառույցը հատակագծում քառանկյունի է: Ծածկը կամարների օգնությամբ նստած է երկու, բավականին զանգվածեղ սյուների վրա: Կամարների միջոցով շենքի ծածկը ներսի կողմից բաժանված է վեց ոչ մեծ, սակայն հավասարաչափ գմբեթների: Երկուսը մի փոքր փլված են և լուսաթափանց: Տանիքը արտաքուստ երկթեք է, տեղ-տեղ քանդված:

Նախկինում շենքն ունեցել է հինգ մուտք: Երեքը՝ հյուսիսային, երկուսը՝ հարավային պատերի մեջ: Դրանք այժմ շարված են, բացառությամբ մեկի, որը գտնվում է հյուսիսային կողմում: Մուտքի դիմաց գտնվող հարավային պատի մեջ

<sup>1</sup> Կարայ (կապալ) կոչվող հարկի հարյուր միավորը գեղջվել է Ավագ Սարգսի հիշատակին կորկոտ աղալու և դարձյալ ինչ-որ արհեստանոցի (արրոցի) եկամուտներից: Վիմագրում հիշատակված Ավագ Սարգիսը ակներևաբար Զաքարեի և Իվանեի հայր Սարգիս Զաքարյանն է, որին որպես սեփականություն տրվել է Լոռեն իր շրջակայքով 1184 թվին: Տառաձևերը միանգամայն համապատասխանում են այդ ժամանակահատվածին:

<sup>2</sup> Ս. Զալալյանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, էջ 121:

<sup>3</sup> Վ.Մ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի քաղաքացիական կուլտուրան, տե՛ս ՊԲՀ, 1963, № 2, էջ 93-94: Նմանօրինակ խանդակ-խրամատ ունեցել է նաև Դվին մայրաքաղաքը, տե՛ս Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, շ-1, Երևան, 1952, էջ 28-29:

դրված է ոճավոր զարդերով պարփակված մի քար (չափերն են՝ լայնությունը՝ 0,92, երկարությունը՝ 1,83 մետր):


Ներքուստ հարավարևելյան անկյունում կառուցված է մի փոքր սեղան: Հյուսիսային պատի մեջ տեղավորված է խաչքարի բեկորներից պատրաստված անշուք մի ավագան՝ մանուկներին կնքելու համար: Ներսի կողմից շենքը շարված է բազալտե ոչ այնքան խոշոր, սակայն կոպտատաշ քարերով, որոնք ժամանակին շատ խնամքով ծեփվել են (ծեփի մի մասը դեռևս պահպանվում է):

Կամարների քարերը սև գույնի տուֆից են և բավականին լավ մշակված: Այդ կամարների հենակետերը կենտրոնում կանգնեցված երկու բազալտե սյուներն են: Յուրաքանչյուր սյան վրա հենվում են չորս կամար, որոնք որմերի մոտ նստում են պատերից դուրս եկող պահուստակների վրա: Վեց պահուստակներից չորսը անկյունային են, ընդ որում՝ միայն մեկ անկյունով, երկուսը շարաքար են: Այդ հանգամանքը հնար է տալիս ենթադրելու, որ պահուստակների համար օգտագործվել են մեկ այլ կառույցի քիվի քարերը,<sup>1</sup> որոնցից չորսը այդ կառույցի անկյունային քիվերն են: Քիվերից երկուսի վրա առկա են հայատառ արձանագրության հետքեր: Մեկը արձանագրության սկիզբն է. տառերին նախորդում է փորագրված մի փոքր խաչ, որը ենթադրել է տալիս, որ հենց դա է արձանագրության սկիզբը: Գմբեթները շարված են Փելզիտային քարից և այնպես են մշակված, որոնք ասես աղյուսներ են: Գմբեթների կենտրոնները, ի հակադրություն Լոռե քաղաքում կառուցված և այժմ պահպանված կանգուն կառույցների գմբեթների, չունեն լուսաթափանց երդիկներ (օր. բաղնիքինը), այլ ամբողջովին փակ են: Կառույցը լուսավորվել է ջահերով, կանգուն գմբեթների կենտրոններում այսօր էլ նշմարվում են նրանց ամրակապերի հետքերը:

Արտաքուստ շենքը շարված է սրբատաշ քարերով: Առաջին չորս շարքը բազալտից է: Պատերի մեջ անմիջապես աչքի են զարնում XI-XIV դարերին պատկանող քրիստոնեական տապանաքարերի մասերը: Մնացած վեց շարքը կառուցված է

ԼՈՐԵ ԲԵՐԴ

ՔՐԻՍՏՈՆԵԱՆ ԱՆԿԵ  
ՀԱՏԱԿԱԳԻԾ



Գծապլան 8. Լոռե բերդ. Քաղաքացիական շենք. Հատակագիծ

<sup>1</sup> Վ.Մ. Հարությունյան, նշվ. հոդվածը, էջ 73:  
94



սպիտակ ֆելզիտից: Վերջինիս հանքավայրը գտնվում է Լո-  
ոն բերդից 10-12կմ հեռու գտնվող լեռնայանջին:

Ակներևաբար ուշ շրջանում շենքի հյուսիսային մասին  
կցակառուցել են թաղածածկ մի սրահ՝ իր երեք բաժան-  
մունքներով, որոնցից կենտրոնականի մեջ բացվում է կա-  
ռույցի մուտքը: Մնացած երկուսը, եկեղեցու վերածվելով,  
ծառայել են իբրև խորաններ:

XIX-XX դարի տեղագրական բնույթի և նորագույն ժամա-  
նակների ուսումնասիրությունների հեղինակները չեն սահ-  
մանում, թե այս կառույցը իր սկզբնական վիճակում ինչ  
նպատակի է ծառայել: Տակավին XIX դարի վերջին Ի. Հարու-  
թյունյանը գտնում էր, որ այն հավանաբար կառուցվել է որ-  
պես մզկիթ:<sup>1</sup>


Ճարտարապետ Վ. Հարությունյանը իր հոդվածում<sup>2</sup> կրկնե-  
լով այդ, վկայակոչում է որոշ հիմնավորումներ՝ հաստա-  
տելու համար այդօրինակ ենթադրության իսկությունը:  
Կարծում ենք, որ խնդրո առարկա կառույցի տեղում, XI-XIII  
դարերում կանգնած է եղել մեկ այլ շինություն, որը խա-  
րխլել են մոնղոլական արշավանքի ժամանակ: Նման հե-  
տևության օգտին է խոսում այն իրողությունը, որ ժամանա-  
կակից կառույցը հարազատ չէ հայկական միջնադարյան ճար-  
տարապետությանը, այն կառուցված է հնի հիմքերի վրա:  
Դա պարզ դարձավ տեղում կատարված հետախուզական պե-  
ղումների շնորհիվ: Բացի այդ, կառույցի արևելյան պատի  
հյուսիսային անկյունում դրսի կողմից գլխիվայր դրված է  
հինգ տողերից բաղկացած հայատառ արձանագրությամբ վեմ:  
Վիմագիրը գիտակցաբար եղծված է. նրանից կարդացվում,  
ընթեռնելի է միայն «Յիսուս Քրիստոս» հապավումը: Թե  
ինչպիսի՞ կառույց է եղել նախկին շինությունը և ի՞նչ նպա-  
տակի է ծառայել, այսօր անհնարին է որոշել: Այն ավերվել է  
թաթար-մոնղոլների արշավանքների միջոցին: Ժամանակի  
պատմիչները, մանավանդ Կիրակոս Գանձակեցին հիշատա-  
կում են բազմաթիվ շենքերի՝ եկեղեցիների ու մատուռ-դամ-  
բարանների ավերման մասին:

<sup>1</sup> Ի. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 246-251:

<sup>2</sup> Վ.Մ. Հարությունյան, ՊԲՀ, 1962, № 3, էջ 57-75:

ԼՈՌԵ ԲԵՐԴ


ԲՈՒՆԱՅԻՆԱԿԱՆ ՇՆՔ  
4574400 Ա-Ա



Գծագիր 9. Քաղաքացիական շենք. Կտրվածք Ա-Ա

ԼՈՌԵ ԲԵՐԴ

ԲՈՒՆԱՅԻՆԱԿԱՆ ՇՆՔ  
4574400 Բ-Բ



Գծագիր 10. Քաղաքացիական շենք. Կտրվածք Բ-Բ



XIV-XV դարերում, երբ Լոռեի տերերն էին մահմեդական իշխանավորները, նախկին շինության տեղում կառուցել են ժամանակակից շենքը որպես մահմեդական մզկիթ: Նման հետևությունն օգտին է խոսում այն հանգամանքը, որ շինության հարավային պատի կենտրոնում ներքուստ պահպանվել է մահմեդական մզկիթներին բնորոշ միհրաբը: Նման միհրաբներ և ընդհանրապես ճարտարապետական կառույցներ մեզ հայտնի են Աղբբեջանի տարածքից:<sup>1</sup>

Քննարկվող շինության մահմեդական մզկիթ լինելու օգտին են խոսում նաև զրավոր աղբյուրների տեղեկությունները:

Պատահական չէ, որ Վենետիկի վաճառականների ու ճանապարհորդների վկայությամբ Ակ-կոյունլու թուրքմենների տիրապետության շրջանում (1468-1502թթ.) Լոռեն պատկանում էր նրանց, և ամրոցի պահպանները թուրքմեններ, մահմեդականներ էին:<sup>2</sup> Լոռեին տիրելով աղոթատեղի՝ մզկիթ են կառուցել:

Եվ, վերջապես, ևս մեկ այլ հանգամանք. 1956թ. Լոռի բերդ գյուղի հարևան Լեջանի բնակիչ Արմենակ Մկրտչյանը վերոհիշյալ կառույցի պատի տակ գտել էր բրոնզե մի փոքր կնիք, որի վրա կա արաբատառ արձանագրություն:<sup>3</sup> Արաբերեն, պարսկերեն արձանագրությունների լավագույն գիտակ Պետրբուրգի պետական էրմիտաժի աշխատակից Լևոն Գյուլզալյանի ընթերցմամբ այն լավագույն ցանկությունների մաղթանք է բովանդակում: Նմանատիպ բովանդակությամբ կնիքները բնորոշ էին միջնադարյան մահմեդական գրեթե բոլոր մզկիթներին: Հետևաբար, կասկածից վեր է, որ XV դարում ուսումնասիրության առարկա կառույցը մահմեդական մզկիթ է եղել:

Լոռե ամրոցը աստիճանաբար լքվեց XVI-XVII դարերի թուրքպարսկական անընդմեջ կրկնվող պատերազմների հետևան-

քով: XVIII դարի երկրորդ կեսին ավարների Ումմա խանի գործերը վերջին անգամ զավթեցին, քանդեցին, այրեցին ու բնակչությունից լրիվ զրկեցին այդ հնագույն քաղաքը՝ երբեմնի հզոր թագավորության ծաղկուն մայրաքաղաքը: XVIII դարի վերջին տասնամյակներին Հայաստանի տարբեր շրջաններից գաղթած հայերը բնակություն հաստատեցին ամրոցում՝ կիսավեր շինությունների մեծ մասը հարմարեցնելով իրենց կարիքներին: Պահպանվել է 1783թ. հայ գաղթականների կողմից Հայոց Ղուկաս կաթողիկոսին հղած նամակը Լոռե բերդի ներսում եկեղեցի կառուցելու թույլտվություն ստանալու մասին: Պահպանվել է նաև կաթողիկոսի պատասխան նամակը, ուր մասնավորապես կարդում ենք. «... Նաև պատմեաց մեզ սիրելի որդին մեր տէր Աբրահամ խոհեմառատ քահանայն, որ ունիք զբաղձանս շինել գեկեղեցի ի մէջ բերդիդ՝ (Լոռե – Ի.Ղ.), որովհետև ոչ գոյ»: Ղուկաս կաթողիկոսը տալով իր համաձայնությունը եկեղեցու կառուցման մասին, միաժամանակ տեր Աբրահամին կարգում է այդ կառուցվելիք եկեղեցու ավագ քահանա: Նամակի վերջում առկա է գրության թվականը՝ «ի ՌՄԼԱ ի յունիսի Ի», այսինքն 1783թ. հունիսի 20-ը:<sup>1</sup>

Հավանաբար հենց այդ ժամանակ (1783-1784թթ.) գաղթական հայ գյուղացիները, որոնք ապարանցիներ, բյուրականցիներ և ջավախքիներ էին, հնարավորություն չունենալով նոր եկեղեցի կառուցելու, նախկին մահմեդական մզկիթը, որը լրիվ կանգուն շինություն էր, հարմարեցրեցին որպես հայկական եկեղեցի: Այդ նպատակով կրաշաղախով սվաղի տակ ծածկել են մահմեդական միհրաբը և նրա հարավարևելյան անկյունում կառուցել անշուք սեղան, հյուսիսային պատի մեջ՝ մկրտարան, փակելով նախկին մուտքերը: Գաղթականներն են նաև շինության հյուսիսային պատին արտաքուստ կցակառուցել երեք կամարակապ խորաններ, որոնց նոր լինելը երևում է հիմնապատերի ուսումնասիրությունից և կառուցողական տեխնիկայից:

<sup>1</sup> С. Ваидов, Н. Горчаков, А. Осипов-Степанов, Ф. Фарадизаде, И. Шедликин, Ха-нега на реке Аллинджи-чай. таб. 63, տե՛ս Архитектура Азербайджана, эпоха Низами, Москва-Баку, 1947, էջ 241-244, աղյուսակ 69-74:

<sup>2</sup> Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. 1, էջ 206 և 226:

<sup>3</sup> Վերոհիշյալ բրոնզե կնիքը մեզ հանձնեց Արմենակ Մկրտչյանի որդին, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը:


<sup>1</sup> Դիվան Հայոց պատմութեան, գիրք Դ, Թիֆլիս, 1899, էջ 393-396:

1901 թվին այդ նոր «եկեղեցին» սալահատակել են նորաբնակները: Նախկին հատակը, որը արված էր աղյուսով ու կրաշաղախով, մնացել է սալահատակի տակ: Սալերից մեկի վրա պահպանվել է հատակի նորոգման թվականը՝ 1901: Այժմ շինության մուտքի մոտ առկա են երկու բազալտե քանդակազարդ մեծարվեստ խաչքարեր, սակայն ցավոք դրանց վրա չկա վիմագրի հետք: Ամենայն հավանականությամբ, խաչքարերը XII-XIII դարերի գործ են և կանգնեցված են եղել այժմ բացակայող պատվանդանների վրա: Խաչքարերը կանգնեցնողների արձանագրությունները փորագրված են եղել պատվանդանի քարերի վրա, այլապես նման խաչքարերը դժվար է պատկերացնել առանց համապատասխան արձանագրության:

**ԲԱՂՆԻՔՆԵՐ:** Արևելքի երկրներում ընդհանրապես, իսկ Հայաստանում մասնավորապես, միջին դարերում քաղաքային բնակչության կենցաղում կարևոր նշանակություն ունեին բաղնիքները: Որպես կանոն, արևելյան խոշոր քաղաքներում գոյություն են ունեցել մի քանի տասնյակ բաղնիքներ: Առավել ճշգրիտ տվյալներ մեզ հայտնի են սիրիական քաղաքներում եղած բաղնիքների մասին: Հալեպում XIII դարի կեսերին գործել է 138 հասարակական բաղնիք:<sup>1</sup>

Միջին Ասիայի քաղաքներում գործող բաղնիքների քանակը նույնպես մեծ է եղել: Ուսումնասիրողները վկայում են, որ Սամարղանդ քաղաքը XII-XIII դարերում ունեցել է 60-80 բաղնիք, իսկ նրա միջնաբերդ Աֆրասիաբը՝ 3-4:<sup>2</sup>

Անդրկովկասի քաղաքներում նույն պատկերն է: Հայաստանում դրանց քանակը նույնպես շատ է եղել: Բագրատունիների մայրաքաղաք Անիում, բացի պալատական կոչվող բաղնիքից, որն ունեցել է յոթ բաժանմունք, պեղումներով հայտնաբերվել է ևս հինգ բաղնիք:<sup>3</sup> Բաղնիքներ են ունեցել նաև միջնադարյան Դվինը և մյուս քաղաքները:<sup>4</sup>



Փծապիր 11. Առաջին բաղնիք. հատակագիծ (1972թ. պեղումներ)  
 1. Նախամուտք, 2. Հանդերձարան, 3. Լողարան տանող նախամուտք, 4. Բաղնիքի աշխատակիցի պահեստասենյակ, 5-7. Լողարանի բաժանմունքներ, 8. Հնոց-ջեռուցարան, 9. Սառը ջրի փոքր պլավան, 10. Փարե տաշտեր, 11. Սառը ջրի մուտքի խողովակ, 12. Տաք ջրի խողովակ

<sup>1</sup> Տե՛ս J. Sauvaget. *Alep. Essai sur le developpement d'une grande ville syrenne des origines au milieu du XIX-e siecle.* v. 1, Paris, 1941, էջ 143:  
<sup>2</sup> Տե՛ս А.М. Белевицкий, И.Б. Бентович, О.Г. Большаков, *Средневековый город Средней Азии.* Лен., 1973, էջ 309:  
<sup>3</sup> Տե՛ս О.Х. Халпахчьян, *Гражданское зодчество Армении.* М., 1971, էջ 212:  
<sup>4</sup> Տե՛ս Կ.Գ. Ղաֆաղարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1, Երևան, 1952, էջ 136-138: И. Орбели. *Баня и скоморох XII века.* տե՛ս Избранные труды. Ереван, 1963, էջ 316-322. О.Х. Халпахчьян, *Средневековые бани Армении.* տե՛ս Сов. Археология 1960, № 1, էջ 208-226.

Լոռե քաղաքի միայն միջնաբերդում խնդրո առարկա բաղնիքները երկուսն են, այն էլ՝ կառուցվածքով բարդ ու բազմանշանակ:

ԱՌԱՋԻՆ ԲԱՂՆԻՔ:<sup>1</sup> Խնդրո առարկա բաղնիքի ավերակները գտնվում են «Քաղաքացիական շենք»-ի և միջնաբերդի պարսպի միջև, հարթ տարածություն վրա: Ուսումնասիրողները, գրեթե առանց բացառության, կարծել են, թե Լոռե քաղաքի միջնաբերդի այս բաղնիքն ունեցել է պարզ կառուցվածք և բաղկացած է եղել ընդամենը երեք բաժանմունքից (հանդերձարան, լողասրահ և ջեռուցարան-հնոց):


Մեր կատարած պեղումները ի հայտ բերեցին ինժեներական բավականին բարդ կառուցվածք: Այն կարելի է համեմատել միջնադարյան Հայաստանի ամենանշանավոր կոմունալ-կենցաղային կառույցների հետ, մասնավորապես, Անիի բաղնիքների հետ (պալատական, Տիգրան Հոնենցի և այլ բաղնիքներ):<sup>2</sup>

Մինչև պեղումների արդյունքների հայտնի դառնալը, միջնադարյան Հայաստանի ճարտարապետության լավագույն գիտականներից մեկը՝ Ն. Խալիֆախյանը, նկատի ունենալով Լոռե քաղաքի՝ այս բաղնիքի հանդերձարանի զբաղեցրած շատ մեծ տարածքը, այն կարծիքն է հայտնել, որ դրա մի մասը կարող էր նախամուտք ծառայել:<sup>3</sup> Մեր կատարած պեղումները հաստատեցին այդ ենթադրությունը: Իրոք, շինարարները նախկինում կառուցել են մի փոքր նախամուտք՝ շուրջ 6մ<sup>2</sup> մակերեսով (3,25x1,8մ): Այն հավանաբար նախատեսված էր հանդերձարանի և դրսի հետ որպես միջանկյալ կառույց, որը հանդերձարանի ներսում կապահովեր համեմատաբար կայուն ջերմություն: Դրանից բացի, նախամուտքի և լողասրահին հարող պատի միջև կա մի փոքր սենյակ, որն ունի 1,8

<sup>1</sup> Լոռե քաղաքի միջնաբերդի տարածքում գոյություն ունի երկու բաղնիք: Ուսումնասիրողները, մինչ պեղումների արդյունքների հայտնի դառնալը, դրանք անվանել են մեծ և փոքր բաղնիքներ՝ ելնելով ավերակների պահպանված մասի դիտարկումներից: Մեր կատարած պեղումներից հետո պարզ դարձավ, որ նաև զբաղեցրած տարածքները գրեթե հավասար են եղել իրար, ուստի հրաժարվեցինք նման բաժանումից և հարմար գտանք պայմանականորեն նրանցից մեկն անվանել առաջին, մյուսը, որ գտնվում է Զորագետի կիրճի եզրին, երկրորդ:

<sup>2</sup> Տե՛ս Ն. Խալիֆախյան, նշվ. աշխ., էջ 210-216:

<sup>3</sup> Տե՛ս Օ.Մ. Խալիֆախյան, Средневековые бани Армении, էջ 225:



Գծապիր 12. Առաջին բաղնիք. Առաստաղների հատակագիծ



Դա Գառնիի տարածքում 1953թ. պեղված խճանկար հատակով արքայական բաղնիքն է, որի հանդերձարանի անկյունում կառուցված է սառը ջրի փոքր ջրավազան: Ուսումնասիրողներն այն թվագրում են մ.թ. երրորդ դարով:<sup>1</sup> Հնարավոր է, որ միջին դարերում չէին մոռացվել ուշ անտիկ ժամանակաշրջանի կոմունալ-կենցաղային շինությունների կառուցողական որոշ ձեռքբերումներ, և այս ձևով կիրառվում էին նոր պայմաններում:


Ուսումնասիրվող բաղնիքի նախամուտքը մի փոքր դռնով հաղորդակցվում է հանդերձարանի հետ: Պետք է նկատել, որ բաղնիքի բոլոր մուտքերը տեղադրված չեն միևնույն առանցքի վրա, թեև դա առավել հարմար կլիներ: Շինարար վարպետները բաղնիքի ներսի տաք օդի կորուստը նվազագույնի հասցնելու նպատակով աշխատել են բոլոր մուտքերը տեղադրել տարբեր առանցքների վրա: Մասնավորապես, հանդերձարանի մուտքը տեղադրել են քիչ դեպի ձախ:

Բաղնիքի հանդերձարանը զբաղեցրել է բավական ընդարձակ տարածություն՝ 41մ<sup>2</sup> (6,3x6,5մ): Հանդերձարանի մեծություները պայմանավորված էր նրանով, որ միջնադարյան բաղնիքները նախատեսված էին ոչ միայն լողանալու համար, այլև, ինչպես նշում է ակադեմիկոս Հ. Օրբելին,<sup>2</sup> բաղնիքների հանդերձարաններում հավաքվում էին տվյալ քաղաքի գործարար մարդիկ, կնքվում էին առևտրական պայմանագրեր, տեղի էին ունենում զրույցներ, ցուցադրվում էին ներկայացումներ, զբաղվում ազգային տարբեր խաղերով (ճատրակ, տամա և այլն): Այդ նպատակների համար, բնականաբար, պետք է որ բաղնիքների հանդերձարաններն իրենց մակերեսով գերազանցեին լողարաններին: Նման սկզբունքով է կառուցված նաև Լոռե քաղաք-ամրոցի մյուս բաղնիքը, որի մասին խոսք կլինի ստորև:<sup>3</sup>


<sup>1</sup> Տե՛ս *Б. Аракелян*, Гарни II, Ереван, 1957, էջ 23-27:

<sup>2</sup> Տե՛ս *И. Орбели*, Бани и скоморох XII века. см. Памятники эпохи Руставели, Ленинград, 1938, էջ 159: Հետաքրքիր է, որ նույն սկզբունքը տարածված էր նաև Միջին Ասիայի խոշոր, զարգացած քաղաքների բաղնիքներում: Իրանք ուսումնասիրող մասնագետները գտնում են, որ բաղնիքները մզկիթներից հետո ամենաշատ այցելուներ ունեցող հասարակական վայրերն էին (տե՛ս *А.М. Беленицкий, И.Б. Бентович, О. Г. Большаков*, Средневековый город Средней Азии, էջ 309): Նույն կարծիքին է Հ. Խալիփախյանը (տե՛ս նշվ. աշխատությունը):

<sup>3</sup> Լոռե բերդաքաղաքի ջրամատակարարման մասին, տե՛ս *Р. Енремян*, Водоснабжение древней и средневековой Армении, Ереван, 1992, էջ 100-103:



Գծապիր 15. Առաջին բաղնիք. Կտրվածք Ա-Ա (1967թ.)




Գծապիր 16. Առաջին բաղնիք. Կտրվածք Բ-Բ (1967թ.)

Բաղնիքի հանդերձարանի բավականին մեծ տարածու-  
թյուն ունեցող ծածկի իրականացումը, բնականաբար, պետք  
է որ կապված լիներ լուրջ դժվարությունների հետ: Շինա-  
րարներն այստեղ կիրառել են միջին դարերում ընդունված  
քաղաքացիական շինությունների ծածկի ամենաբնորոշ ձևը՝  
հազարաչենը: Դա հաստատվում է հանդերձարանի ներսում  
իրարից հավասարապես հեռու տեղադրված չորս խոշոր  
քարե խարիսխների առկայությամբ, որոնք պեղումների ժա-  
մանակ հայտնաբերվեցին փոքր-ինչ տեղաշարժված վիճա-  
կով: Դրանք ծառայել են փայտե սյուների համար: Ճիշտ է,  
վերոհիշյալ քարե խարիսխներն աչքի չեն ընկնում իրենց  
բարձրարվեստ մշակումով, բայց հարկ է նկատել, որ բաղնի-  
քի ողջ շինությունն իրականացված է կոպտատաշ քարերով:  
Հետևաբար խարիսխների կիսամշակ լինելը միանգամայն  
բնորոշ է ամբողջ կառույցին:


Հանդերձարանի հատակը շարված է մեծ չափերի թրծած  
աղյուսների (20x20x5սմ) և կրաշաղախի համադրությամբ:  
Տեղ-տեղ քանդված աղյուսաշար հատակը հետագայում  
լրացվել է քարե սալերով:

Հանդերձարանի ջեռուցման խնդիրը մեզ համար մնաց  
չպարզաբանված, որովհետև հատակը, ինչպես ընդունված էր  
անտիկ և միջնադարյան ժամանակաշրջաններում, կառուց-  
ված չէր կրկնակի սկզբունքով, որպեսզի տաքացվեր հնոց-  
ջեռուցարանից՝ տաք օդի և ծխի օգնությամբ: Այդ սկզբունք-  
ները կիրառել են լողարանների հատակների կառուցման ժա-  
մանակ, ինչպես կտեսնենք ստորև:

Բացի այդ, հանդերձարանի պատերի անկյունային մասե-  
րում չհանդիպեցին ծխնելույզի նպատակով օգտագործվող  
համապատասխան անցքեր, որոնց գոյությունը կհավաստեր  
հանդերձարանի տաքացման եղանակը: Թերևս շինարարները  
նկատի են ունեցել այն հանգամանքը, որ հանդերձարանի  
երկու պատերի շուրջ 2/3 մասը դրսից ծածկված է եղել հո-  
ղով, մյուս պատերը կից էին լողասրահներին և նախամուտ-  
քին: Հավանաբար այդքանը միանգամայն բավարար էր  
հանդերձարանում կայուն ջերմաստիճան ունենալու համար:  
Հատակը, միանգամայն բնական է, ծածկվում էր կարպետնե-



Գծագիր 17. Առաջին բաղնիք. Կտրվածք Գ-Գ (1967թ.)



Գծագիր 18. Առաջին բաղնիք. Կտրվածք Դ-Դ (1967թ.)

րով, որպեսզի աղյուսների ու սալաքարերի սառնությունը տհաճությունն չպատճառեր: Հարկ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ բաղնիք այցելողները հանդերձարանում անցկացնում էին իրենց հանգիստը բավական երկար ժամանակ, ուստի տրամաբանական է, որ մարդիկ թեթև հագնված լինեին, այդ դեպքում արհեստական ջերմության կարիքը շատ չէր զգացվի:

Բաղնիքի հանդերձարանի լուսավորության խնդիրը լուծվել է հազարաչեն կառույցներին բնորոշ եղանակով՝ երդիկներով: Իրավամբ, հարց է ծագում. քանի՞սն են եղել երդիկները: Դժվար է պատասխանել, քանի որ ծածկը չի պահպանվել: Հաշվի առնելով կից լողասրահի առաստաղի մեջ թողնված երդիկների դասավորությունը՝ կարելի է թերևս ենթադրել, որ դրանց թիվը պետք է լիներ հինգից յոթը, առավելագույնը՝ ինը, որոնցից կենտրոնականը՝ մեծ, իսկ չորս պատիները համեմատաբար փոքր:

Հանդերձարանի հյուսիսարևմտյան անկյունից դեպի լողարան բացվում է մեկ այլ մուտք, որը, սակայն, անմիջապես չի հաղորդակցվում նրա հետ: Այստեղ կառուցված են երկու բաժանմունքից բաղկացած փոքր սենյակ-հարկաբաժիններ, որոնց չափերն են՝ 6մ<sup>2</sup> և 5,4մ<sup>2</sup> (համապատասխանաբար՝ 3,3x1,8 և 3x1,8 մետր): Առաջինը լավ սալահատակված է, երկրորդի հատակը չի պահպանվել: Շատ դժվար է որոշել, թե այս երկու փոքր սենյակներն ինչ նպատակի են ծառայել: Եթե ընդունենք, որ դրանցից առաջինը ծառայել է ուղղակի լողարանի և հանդերձարանի միջև իբրև միջանցք-նախամուտք, որտեղ լողացողները կարող էին չորացնել իրենց մարմինը կամ նախապատրաստվել լողարան մտնելու, ապա երկրորդ սենյակի գոյությունը անհասկանալի է մնում: Այս պարագայում հավանական ենթադրությունն այն է, որ վերջինս ծառայել է լողացողներին անմիջապես սպասարկող անձանց համար: Պատահական չպետք է համարել այն հանգամանքը, որ այստեղ գտնվեցին հասարակ խեցեղենի առանձին նմուշներ, որոնք օգտագործվում էին քարե տաշտերից ջուր վերցնելու համար: Ամբերդի բաղնիքն ուսումնասիրող Հ. Օրբելին վկայում է, որ Արևելքի բաղնիքներում նյութական հնարա-

վորությունն ունեցողները լողանալիս իրենց մարմինն օժուժ էին բազմապիսի անուշահոտ յուղերով կամ մերսում տարբեր օժանելիքներով: Հնարավոր է, որ այդ փոքր սենյակը ծառայեր վերոհիշյալ օժանելիքների և լողանքի անհրաժեշտ այլ պարագաները պահելու համար:

Հիշյալ երկու փոքր սենյակների ծածկերն իրականացվել են կամարների օգնությամբ՝ թաղերի միջոցով: Դրանց լուսավորության խնդիրը մնում է չպարզված:

Նկարագրված միջանցիկ սենյակից մուտք է բացվում լողարանի մեջ (այն այժմ շարված է): Լողարանը քառանկյուն կառույց է, որի երկարությունը 7,4 մետր է, լայնությունը՝ 5,6 մետր: Քանի որ լողասրահի ամբողջ մակերեսը (այն հավասար է ≈41,5 քառ. մետրի) ծածկելը կապված է եղել որոշակի դժվարությունների հետ, ուստի այն հյուսիսից հարավ անցնող միջնորմ պատով բաժանել են անհավասար մասերի: Հ. Խալիփախյանի կարծիքով լողասրահի<sup>1</sup> միջով անցնող պատը կառուցել են ոչ միայն կառույցի տանիքի ծածկը իրականացնելը դյուրին դարձնելու, այլև լողասրահի տարբեր մասերում տարբեր ջերմաստիճան ստեղծելու համար: Պետք է ենթադրել, որ բարձր ջերմաստիճան կունենար լողասրահի փոքր բաժանմունքը, որը կից էր ջեռուցարան-հնոցին:<sup>2</sup>

Լողասրահի բաժանմունքները նախկինում իրար հետ հաղորդակցվել են փոքր դռներով: Այժմ միջնորմ պատի մեծ մասը քանդված է՝ նրանից պահպանվել են աննշան մնացորդներ:

Բաժանմունքներից յուրաքանչյուրը ծածկել են գմբեթների ու թաղերի ինքնուրույն համակարգով: Այն մասը, որը հարակից է հանդերձարանին, ծածկել են գմբեթով, իսկ կողքերից՝ թաղերով: Հաջորդ հարկաբաժինը, որը կից է ջեռուցարանին, ծածկել են երկու փոքր գմբեթով ու նրանց միջև ընկած թաղով: Գմբեթները կառուցված են առանց թմբուկների, սֆերիկ առագաստների վրա: Ծածկի համար որպես շի-

<sup>1</sup> Տե՛ս Հ. Խալիփախյան, նշվ. աշխ., էջ 226:

<sup>2</sup> Զրամատակարարման խնդիրների մասին տե՛ս А. Джагацян, Бани средневековой Армении и их теплотехнические особенности, "Историко-филологический журнал", 1968, № 3, 241-248.


նանյութ օգտագործել են մանր, աղյուսածե կտրված տեղական քարը: Լուսավորության և օգափոխության համար գմբեթների մեջ թողնված են անցքեր-երզիկներ: Մեծ գմբեթի վրա՝ ինը, միջինի՝ յոթ, փոքրի վրա՝ երեք երզիկ:

Լողասրահը գմբեթների ու թաղերի օգնությամբ ծածկելը երկու իմաստ ուներ: Նախ՝ այդ ձևով հնարավոր է ծածկել համեմատաբար մեծ մակերես ունեցող կառույց, և ապա լողանալու ժամանակ առաջացած գոլորշին, հավաքվելով թմբուկի տակ, սառչում էր, վերածվում ջրի, կաթիլ առ կաթիլ պատերի վրայով հոսում ցած: Հակառակ դեպքում, եթե լողարանը ծածկեին հարթ ծածկով, ապա սառը ջրի կաթիլները կընկնեին լողացողների վրա:<sup>1</sup>

Լողարանի հատակը չի պահպանվել, բայց ականատեսների պատմելով, այն շարված է եղել թրծած աղյուսներով (20x20x5սմ), որոնք պատվել են անջրաթափանց կրաշաղախի բարդ բաղադրությամբ: Վ. Հարությունյանը ենթադրում է,<sup>2</sup> որ ջեռուցարանի ծովսր և տապը անցնում էին լողասրահի հատակի տակ ու տաքացնում այն: Տեղանքի մանրակրկիտ ուսումնասիրությունը նման ենթադրության օգտին բավարար հիմքեր է տալիս: Լողասրահի հարավարևմտյան պատի մեջ մեզ հաջողվեց բացել մանր քարերով շարված, դեպի եթեր դուրս եկող խողովակաձև անցք: Այդ փաստն, անշուշտ, խոսում է լողասրահի հատակի տաքացման օգտին: Բայց դա հավանաբար լրիվ բավարար չէր կարող լինել ողջ լողարանում համապատասխան տաքություն ապահովելու համար: Լոռե քաղաքի շինարար վարպետներն առավելագույն օգտագործել են նաև մյուս հնարավոր միջոցները: Նրանք տաք և սառը ջրի կավե փողրակները տեղավորել են ամբողջ արևելյան, հյուսիսային և հարավային պատերի մեջ, շուրջ մեկ մետր բարձրության վրա (այս խնդրին կանգրադառնանք ստորև): Լողասրահի նման եղանակով տաքացումը հավանաբար ապահովում էր անհրաժեշտ 25-30 աստիճան ջերմություն:


<sup>1</sup> Այս և նման խնդիրների մանրամասն քննությունը տե՛ս Ա. Զաղաջպանյան, նշվ. աշխ.:

<sup>2</sup> Տե՛ս Վ. Հարությունյան, Լոռի բերդ-քաղաքը, ՊԲՀ, 1962, թիվ 3, էջ 70:



Գծադիր 19. Առաջին բաղնիք. Արևելյան ճակատ

Բաղնիքի ջեռուցարանը կամ հնոցը գտնվում է լողասրահի արևելյան կողմում: Այն թաղածածկ մի շինություն է, որն զբաղեցնում է ոչ այնքան մեծ մակերես (4,1x1,6մ): Այժմ կիսավեր վիճակում է: Հնոցի հատակն ունի երկու հարթություն: Մեկը՝ հյուսիսային կողմում գտնվողը, լողարանի հատակից բարձր է 70-80սմ, մյուսը՝ ցածր է 30սմ: Հետախուզական պեղումների ժամանակ ցածր հարթության վրա գտնվող բաժանմունքում հանդիպեցինք մոխրի ստվար շերտի:<sup>1</sup>



Գծադիր 20. Առաջին բաղնիք. Հարավային ճակատ

Լողասրահի և ջեռուցարանի միջև առկա է հաղորդակցվող մի պատուհան, որը հավանաբար ծառայել է կաթսայից ջու-

<sup>1</sup> Հնոցի մեջ պեղված մոխրաշերտից պարզվում է, որ Լոռիում որպես վառելիք օգտագործել են հիմնականում փայտ:



րը վերցնելու համար: Ճիշտ է Հ. Խալփախչյանը,<sup>1</sup> երբ պընդում է, որ այդ պատուհանը բացվել է հետագայում, այն ժամանակ, երբ ինչ-ինչ պատճառներով սկզբնական համակարգը, որը նախատեսված էր տաք ջրի մատակարարման համար, դեպի լողարան այլևս չէր գործում:

Բարձր հարթութուն ունեցող բաժանմունքի հատակը և պատերը պատված են անջրաթափանց կրաշաղախի հաստ շերտով: Այստեղից կավե մի փողրակ թեթուլթյամբ ուղղված է դեպի լողարանը: Հ. Խալփախչյանը և ուրիշներ<sup>2</sup> ենթադրում են, թե հնոցի մեջ բարձր հարթության վրա տեղադրված բաժանմունքը ծառայել է որպես սառը ջրի ավազան:


Մեր կարծիքով, այս ենթադրությունն այնքան էլ համոզիչ չէ, քանի որ բաղնիքի լողարանին սառը ջուր մատակարարվել է նույն լողարանի հյուսիսարևելյան անկյունում տեղադրված փողրակով: Դա պարզ դարձավ պեղումների շնորհիվ: Վերոհիշյալ փողրակի գոյությունը մասին տեղյակ չեն եղել նախորդ ուսումնասիրողները, ուստի նրանք հանգել են ոչ համոզիչ հետևություն:

Ջեռուցարանի ցածր հատակով բաժանմունքը ծառայել է կաթսա կամ այլ հարմարանք դնելու համար, ուր տաքացրել են ջուրը: Իսկ այնտեղից տաք ջուրը ինչ-ինչ եղանակով մղվել է բարձր հարթության բաժանմունք, որտեղից կավե փողրակով հասել է լողարան: Պետք է ենթադրել, որ սառը ջուրը կաթսայի մեջ տաքացնելու համար լցնում էին ձեռքով:

Ջեռուցարանից դեպի լողարան անցնող կավե փողրակը միացել է հատակից 0,9 մետր բարձրության վրա անցնող երկշարք կավե փողրակների վերին շարքին: Դա պարզ երևում է փողրակների մեջ տաք ջրի առաջացրած կրային բարակ շերտի նստվածքից:

Փողրակներն իրենց նախնական տեղում վատ են պահպանված, բայց նրանց ուղղությունը և երկարությունը կարելի է լրիվ վերականգնել ճշգրտությունը: Այն, սկսվելով լողարանի հյուսիսարևելյան անկյունից, բաժանվում է երկու ուղղություն: Մեկն անցնելով հյուսիսային պատի մակերե-

սով, միջնորմ պատին հասնելով բաժանվել է երկու ճյուղի, որոնցից մեկն ավարտվում է լողարանի կենտրոնում՝ միջնորմ պատի վրա, մյուսը՝ չհասած հյուսիսարևմտյան անկյունին: Երկրորդ ճյուղը, նորից սկսվելով լողարանի հյուսիսարևելյան անկյունից, հասնում է հարավային պատին, ապա անկյուն կազմելով, անցնում է նրա վրայով ու ավարտվում հարավարևմտյան անկյունից 1,5մ հեռու մնալով: Երկարագ խողովակաչարի երկրորդ շարքը տեղում չի պահպանվել, սակայն պարզ է, որ այն միացել է հյուսիսարևելյան անկյունում տեղավորված փողրակին: Վերջինս էլ հենց լողասրահին սառը ջուր է մատակարարել:




Գծագիր 21. Առաջին բաղնիք. Ջրամատակարարման համակարգ

Մինչև վերջերս բոլոր ուսումնասիրողներին, այդ թվում նաև մեզ, անհայտ էր սառը ջրի հիմնական աղբյուրը, այսինքն՝ թե ո՞ր կողմից էր այն միանում լողարանում տեղադրված փողրակներին: Այդ խնդիրը պարզաբանելու նպատակով պեղեցինք լողասրահի հյուսիսարևելյան արտաքին պատի դրսի կողմը: Պարզվեց, որ սառը ջուրը ծամ տրամագիծ ունեցող կավե փողրակով մատակարարվել է լողարանի հյուսիսարևելյան անկյունային պատի միջով՝ մայր հողից 0.3մ խորությունը: Քանի որ բաղնիքն ընդհանրապես իր դիրքով

<sup>1</sup> Տե՛ս Հ. Խալփախչյան, նշվ. աշխ., էջ 226:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 69-70:


չրջապատի նկատմամբ կիսագետնափոր է, ուստի լողարանի ներսում սառը ջուրը մատակարարող խողովակը համընկնում է ներսի պատերի երեսին տեղադրված սառը ջրի փողրակների շարքի բարձրությունը:



Գծագիր 22. Առաջին բաղնիք. Կտրվածք (1972թ. պեղումներից հետո)

Խողովակաշարի ջրածորակների տակ դրվել են քարե մեծ տաշտեր, որոնց մեջ տաք և սառը ջրերը խառնվելով ապահովել են լողանքի անհրաժեշտ ջերմաստիճան: Զուրն այդ տաշտերի միջից վերցրել են կավե կամ պղնձե ամաններով:<sup>1</sup>

ԱՌՈՒՆԵ ԲԵՐՐՈՒԹՅՈՒՆ  
ԿՍՐՎԱԾՔ



Գծագիր 23. Առաջին բաղնիք. Կտրվածք Ա-Ա (1972թ. պեղումներից հետո)

Նկարագրվող քարե տաշտերից երկուսն այժմ գտնվում են բաղնիքի բակում: Ականատեսների վկայությամբ, նրանցից չափերով փոքրը պատկանել է խնդրո առարկա բաղնիքին:


<sup>1</sup> Դմանիսի քաղաքի միջնադարյան բաղնիքն ուսումնասիրող Լ. Մուսխելիշվիլին սխալմամբ կարծելով, թե լողացողները մտնում էին տաշտի մեջ, գարմանում է, թե ինչպես էր մարդը տեղավորվում դրա մեջ (տե՛ս Լ. Մուսխելիշվիլի, Раскопки в Дманиси, СА, 1940, № 64 с. 273):

Նրա արտաքին չափերն են՝ 1,24x0,9x0,35 մետր, իսկ ներքինը՝ 0,9x0,6x0,25 մետր, որը կազմում է 0,13մ<sup>3</sup> տարողություն (շուրջ 130 լիտր ջուր): Այդ քանակով ջուրը միանգամայն բավական էր մեկ մարդու լողանալու համար: Քարե տաշտի անկյուններից մեկում՝ հատակի հարթության վրա, թողնված է մի նեղ անցք՝ ջուրը հեռացնելու համար:

Լոռե բերդաքաղաքի բաղնիքների համար որպես շինաքար հիմնականում օգտագործել են տեղական թերի մշակված բազալտ: Կառույցի անկյունաքարերն ունեն համապատասխանաբար՝ 40x60սմ բարձրություն և երկարություն: Պատերը շարված են կրաշաղախով, իսկ ներսից ձեփված են անջրանցիկ կրաշաղախի հաստ շերտով: Բաղնիքի արտաքին պատերի հաստությունը հասնում է մեկ մետրի, միջնորմինը՝ 65-70սմ-ի: Նման հաստության պատերը լիովին կարող էին ապահովել կառույցի ամրությունը և պահպանել համեմատաբար երկար ժամանակ լողարաններին ու հանդերձարաններին անհրաժեշտ ջերմությունը:

Բաղնիքը, հավանաբար, նախատեսված է եղել երկսեռ բնակչության համար, տարբեր օրերի հերթագայությամբ: Ինչպես Հ. Խալփախչյանն է նշում, այդ կարգը տարածված է եղել միջնադարյան Հայաստանում և ընդհանրապես Անդրկովկասում:<sup>1</sup>

ԱՌՈՒՆԵ ԲԵՐՐՈՒԹՅՈՒՆ  
ԿՍՐՎԱԾՔ



Գծագիր 24. Առաջին բաղնիք. Կտրվածք Բ-Բ (1972թ. պեղումներից հետո)

<sup>1</sup> Տե՛ս Հ. Խալփախչյան, նշվ. աշխ., էջ 216:


ԵՐԿՐՈՐԴ ԲԱՂՆԻՔ: Լոռե քաղաք-ամրոցի բուռն ծաղկման ժամանակաշրջանում (XII–XIII դարեր) միջնաբերդի ներսում գործող միակ բաղնիքը հավանաբար չի բավարարել բնակչության վերնախավի պահանջները, ուստի իշխանավորները ստիպված են եղել Ձորագետի կիրճի եզրին կառուցել ևս մեկ այլ բաղնիք, որտեղ ստեղծել են օգտագործման ավելի նպաստավոր պայմաններ:

Ուսումնասիրողներն<sup>1</sup> այն կարծիքին են, որ Լոռե ամրոցի այս բաղնիքը կարելի է դասել միջնադարյան Հայաստանի հասարակ հատակագծային կառուցվածք ունեցող բաղնիքների շարքը: Նման սխալ ենթադրություն համար հիմք է ծառայել այն հանգամանքը, որ ուսումնասիրողները բաղնիքի մասին դատել են հիմք ընդունելով հողից դուրս պահպանված ավերակները: Այդ է պատճառը, որ նրանց կազմած գծագրերը չեն համապատասխանում իրականությանը:<sup>2</sup>

Լոռե ամրոցն ուսումնասիրող արշավախումբը որոշեց պեղումներ սկսել այս բաղնիքի տարածքում, ուր պահպանվել էին թաղածածկ մի փոքր սենյակ (2,0x3,7մ) և եզրագծով անցնող պատերի մնացորդներ: Այդ ամենը ծածկված էր քարակույտով և հողի ստվար շերտով:

Հնագիտական պեղումներով պարզվեց, որ Ձորագետի կիրճի եզրին կառուցված բաղնիքն ընդգրկել է բավական մեծ տարածք և ճարտարապետական-հատակագծային առումով եղել է բարդ կառույց:

Այն ունեցել է տեղանքի բնական պայմաններին հարմարեցված հանդերձարան, տարբեր չափերի երեք լողարան, հնոց-ջեռուցարան և երկբաժանմունք ջրամբար՝ սառը ջրի մշտական պաշար պահելու համար: Հյուսիսից հարավ բաղնիքի բաժանմունքներն ամբողջ արևելյան պատով քարածայրին միանում են այնպես, որ համապատասխան մասերում նրանք չունեն պատերի արտաքին երես: Իսկ հանդերձարանն ու մեծ լողարանն արևմտյան պատով կառուցված են գետահայաց՝ ճիշտ անդունդի եզրին: Այդ հանգամանքը



Փծագիր 25. Երկրորդ բաղնիք. Հատակագիծ (1967թ. պեղումներից հետո)

<sup>1</sup> Տե՛ս Հ. Խալիփաջյան, նշվ. աշխ., էջ 224-225: Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 70-71:

<sup>2</sup> Տե՛ս Հ. Խալիփաջյան, նշվ. աշխ., նկ. 6, գծագիր 6: Վ. Հարությունյան, նշվ. աշխ., նկ. 10 (Հատակագիծ և կտրվածք):

որոշ չափով հեշտացրել է բաղնիքի կեղտաջրերի հեռացման խնդիրը, որը լուրջ դժվարություններ էր հարուցում միջնաբերդի կենտրոնում կառուցված առաջին բաղնիքի համար:

Բաղնիքը կառուցված է տեղական կիսամշակ բազալտ և ֆելզիտային քարերից: Աղյուսի տեսքով կտրված ֆելզիտային քարով է շարված բաղնիքի ամբողջ ծածկը, ներառյալ ջրամբարը: Շինությունն անկյունային հանգույցները, բնականաբար, շարված են խոշոր քարերով (բազալտ): Իսկ պատերը ներքուստ ամբողջությամբ պատվել են անջրաթափանց կրաշաղախի հաստ շերտով: Կրաշաղախը պահպանվել է մասնակիորեն:

Խնդրո առարկա բաղնիքի բոլոր բաժանմունքների ծածկերն իրականացվել են թաղերի և սֆերիկ ծածկերի օգնությամբ: Այդ է հաստատում կանգուն պատերի վերին մասերի շարվածքը: Հավանաբար, ինչպես առաջին բաղնիքում, այնպես էլ այստեղ, գոյություն են ունեցել օդափոխության և լուսավորության համար ծածկերի մեջ թողնված անցքեր՝ երդիկներ:


Ճանապարհը հյուսիսարևմտյան անկյունից մոտենում է հանդերձարանին,<sup>1</sup> որտեղ եղել է մուտքը (այն այժմ քանդված է): Հանդերձարանը մի ընդարձակ քառանկյունի սրահ է, որի երկարությունը 6,8 մետր է, իսկ լայնությունը՝ 6,7 մետր (ընդամենը 45,5մ<sup>2</sup>): Ծածկը հեշտությամբ իրականացնելու համար հյուսիսային և հարավային կողմերի պատերի կենտրոնում առաջ եկող ելուստներ են արված, որոնց վրա հենվել է երկթուխք կամարը: Կամարի համար հենակետ է հանդիսացել բազմանիստ մշակումով բազալտե մեծ սյունը, որը պեղումների ժամանակ ի հայտ եկավ հանդերձարանի մեջ:

Հանդերձարանի արևմտյան պատից պահպանվել է հյուսիսարևմտյան անկյունը, մնացյալը փլվել է և թափվել Ձորագետի կիրճը: Հարավային և արևելյան պատերը մասամբ են պահպանվել, որոնց մեջ գոյություն ունեն մեկական որմնախորշ:

Հանդերձարանի կենտրոնում՝ հատակից 80-90սմ բարձրության վրա, գտնվեց բազալտ քարերով ու կրաշաղախով շարված նստարան, որի երեսը նույնպես պատված է բարձրորակ

ԼՈՒՆԵ ԲԵՐԴ


ԵՐԿՐՈՐԴ ԲԱՂՆԻՔ  
ԿՏՐՎԱԾՔ Ա-Ա



Գծագիր 26. Երկրորդ բաղնիք. Կտրվածք Ա-Ա

ԼՈՒՆԵ ԲԵՐԴ

ԵՐԿՐՈՐԴ ԲԱՂՆԻՔ  
ԿՏՐՎԱԾՔ Բ-Բ



Գծագիր 27. Երկրորդ բաղնիք. Կտրվածք Բ-Բ

<sup>1</sup> Հ. Խալիփախյանը և Վ. Հարությունյանը սխալվել են, կարծելով, որ սա լողարան է եղել: Տե՛ս նշված աշխատությունները և նրանց կից գծագրերը:

կրաշաղախով: Նմանօրինակ նստարաններ ունեցել են Անդրկովկասի և նույնիսկ հեռավոր Ղրիմի XI-XIII դարերի բաղնիքները:<sup>1</sup> Բացի քարե նստարանից, հանդերձարանի ներսում որևէ այլ հարմարություն չգտնվեց:


Պեղումների ընթացքում գտնվեցին սակավաթիվ առարկաներ, այն է՝ ապակե անոթի մի բեկոր՝ պատրաստված կաղապարման եղանակով, որի վրա նշմարվում է լատինատառ արձանագրություն (այն թերի է և որևէ իմաստ չի արտահայտում), ջնարակված և հասարակ խեցեղենի աննշան բեկորներ, կավե ջնարակապատ բազմագույն սալիկներ, առավել շատ՝ կավե փողրակների մնացորդներ:

Հանդերձարանի հատակը չի պահպանվել, միայն անկյունային մասերում պահպանված մնացորդներով կարելի է դատել նրա զբաղեցրած դիրքի մասին: Հավանաբար, այն պատված է եղել թրծված խոշոր աղյուսներով և բարձրորակ կրաշաղախով, ինչպես մյուս բաժանմունքները:<sup>2</sup>

Բաղնիքի հանդերձարանի հյուսիսարևմտյան անկյուններում պատերի մեջ, նկատելի են ծխնելույզներ՝ շարված ոչ թե կավե փողրակներով, այլ մանր սալաքարերով: Ծխնելույզների գոյությունը և հանդերձարանի պեղման ժամանակ նրա հյուսիսարևմտյան անկյան հատակի տակ բացված ազատ տարածության գոյությունը փաստը մեզ հիմք են տալիս ենթադրելու, որ Լոռե քաղաքի միջնաբերդի այս բաղնիքի հանդերձարանը, ինչպես Հայաստանի և Անդրկովկասի համաժամանակյա բաղնիքները, ունեցել է կրկնակի հատակ: Ծուխը և տապը հնոցից անցել են երկու հատակների միջև գոյացած ազատ տարածություն, ջեռուցել վերին հատակը, ապա պատերի անկյուններում թողնված ծխնելույզներով դուրս եկել եթեր: Լողարաններից մեկին կից հարավային պատի մեջ հետագայում բացել են դռնակ: Այն պարզ նկատելի է շարվածքի սվյալ հատվածում պահպանված մնացորդներից:

<sup>1</sup> Տե՛ս Չ. Խալիֆախյան, նշվ. աշխ., էջ 226, Լ. Մուսխելիշվիլի, նշվ. աշխ., էջ 273, А. Яковсон, Средневековый Херсонес (XII-XIV вв.), см. МНД, № 17, М.-Л., 1950, с. 78-86.

<sup>2</sup> Այս հանգամանքը հաստատում են տեղարնիկներ Տելեմակ Նազարյանը, Երեմ Պապիկյանը և ուրիշներ, որոնք ականատես են եղել հատակի քանդմանը:



Գծապլան 28. Լոռե բերդ. Ջրամատակարարման համակարգի մանրամասներ

Նկարագրվող հանդերձարանի հարավարևելյան անկյունից մի կամարակապ մուտք բացվում է դեպի փոքր միջանցք: Մուտքի չափերն են՝ 80սմ լայնություն և 180սմ բարձրություն: Միջանցքի հյուսիսարևելյան կողմից մի այլ մուտք հաղորդակցվում է այժմ կանգուն փոքր մակերեսով (2,0x3,7մ) կառույցի հետ:<sup>1</sup>

Այս բաժանմունքը կառուցված է ոչ բարձր մի ժայռի տակ, հարմարեցված է տեղանքի պայմաններին, ինչի համար կառուցող վարպետները ստիպված են եղել թեքել նրա արևելյան պատը հիմնական ուղղությունից: Կառույցի ծածկն իրականացված է թաղի օգնություն, որի մեջ լուսավորության համար առկա է երկու երդիկ:

Մինչև պեղումները կառույցն ամբողջովին լցված էր քար ու հողով: Դրանք հեռացնելուց հետո պարզվեց հետևյալը. հյուսիսային պատի մեջ նախկինում գոյություն է ունեցել մի որմնախորշ, որը հետագայում, ավելի հավանական է XVIII դարում, շարել են: Որմնախորշի հյուսիսային պատի մեջ պահպանվել է կավե երեք փողրակ, վերինը՝ 15սմ տրամագծով, ներքևիները, որոնք կողք-կողքի են՝ 8սմ: Նույն խորշի արևմտյան պատի մեջ կա 8,5սմ տրամագծով մեկ այլ խողովակ, որը հաղորդակից է հանդերձարանի հյուսիսարևելյան անկյունում գտնվող ծխնելույզին:

Նկարագրվող բաժանմունքի հատակը շարված է թրծած աղյուսներով (20x20x5սմ), որոնք բարձրացված են հենասյուների վրա: Աղյուսաշար հատակը և պատերը ծածկված են բարձրորակ անջրաթափանց շաղախով:

Կառույցի այս հատվածի պեղումների միջոցին երբեմն ի հայտ էին գալիս կավե փողրակների մանրատված կտորներ, հասարակ և ջնարակած կավանոթների բեկորներ և այլ առարկաներ: Կարևորն այն է, որ մոխրի հետքերը բոլորովին բացակայում էին: Դա նշանակում է, որ այն իսկապես չի եղել ջեռուցարան-հնոց: Պարզապես այդ բաժանմունքը նույնպես բաղնիքի լողարանի դեր է ունեցել: Պահպանված հա-

տակը քիչ թեքություն ուղղվում է դեպի կենտրոն, ուր, հավանաբար, գոյություն է ունեցել կեղտաջրերի հեռացման հարմարանք:

Նկարագրվող բաժանմունքի հարավարևելյան անկյունից դուռ է բացվել մեկ այլ, ավելի փոքր բաժանմունքի մեջ: Այդ բաժանմունքի երեք պատերը հարմարեցված են տեղանքին և ունեն միայն ներքին շարվածք, արտաքինը հաված է ժայռին: Այն ունի 190x190սմ (3,6 քառ. մետր) չափեր: Պահպանված պատերի բարձրությունն անցնում է երկու մետրից: Սրա հատակը նույնպես, իրականացված է թրծված աղյուսներով և կրաշաղախով: Մաքրման ընթացքում հատակից ոչ շատ բարձր գտնվեցին ոսկրից սանր, ապակե անոթների բեկորներ և կավե փողրակների մնացորդներ:

Այս բաժանմունքի պատերի տաքացումն իրականացվել է այն խողովակաշարի օգնությամբ, որը 150սմ բարձրությամբ շրջանցում է սրահի հյուսիսային, արևելյան և հարավային պատերն ու փոքր միջանցքի հարավային պատի միջով թեքությամբ դուրս է գալիս երրորդ՝ ամենամեծ լողարան (գծագրում այդ խողովակաշարը ցույց է տրված կետագծիկներով): Մեր կարծիքով, այս բաժանմունքը նույնպես ծառայել է որպես լողարան ու հավանաբար ամենատաք բաժանմունքն է եղել: Դա պարզ է դառնում բաղնիքի հատակագծային ողջ կառուցվածքին ծանոթանալիս:

Վերը նկարագրված փոքր միջանցքի հարավարևմտյան անկյունից կամարակապ մեկ այլ մուտք բացվում է դեպի լողարանի երրորդ և ամենամեծ բաժանմունքը (4.1x5.2 մետր=21,5 քառ. մետր): Բաղնիքի այս բաժանմունքը ծածկված էր հողի ստվար շերտով: Պեղումներով բացվեց նրա ամբողջական պատկերը: Այն քառանկյունի շինություն է, որն իր չափերով կրկնակի անգամ զիջում է հանդերձարանին: Պեղման ընթացքում վերին շերտում հանդիպում էին ջնարակված և հասարակ կավանոթների բեկորներ, երկաթյա գամեր:

Ի տարբերություն բաղնիքի մյուս լողարանների և հանդերձարանի, այս բաժանմունքն իր նախնական վիճակի համեմատությամբ խոշոր փոփոխություն է կրել: Նրա մեջ նկատվում են հատակից բարձր, հարավից հյուսիս և արևել-

<sup>1</sup> Հ. Խալիֆաչյանը և Վ. Հարությունյանը սխալմամբ կարծել են, թե այս շինությունը ծառայել է իբրև ջեռուցարան-հնոց (տե՛ս Վ. Խալիֆաչյան, նշվ. աշխ., էջ 226, Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 71: Պեղումները հերքեցին նման ենթադրությունը:

քից արևմուտք ձգվող աղյուսաշար, կրաշաղախով պատված՝ 0,85մ հաստությամբ պատեր: Դրանք թերևս ժամանակին ծառայել են որպես նստարաններ լողասրահի մեջ, որպիսիք գոյություն ունեն Անդրկովկասի բոլոր բաղնիքներում:

Հատակից քիչ բարձր, սկսած արևելյան պատի կենտրոնից, արևմտյան պատին է հասնում կավե փողրակների մի խողովակաշար (տրամ. 8սմ): Վնասվածքից զերծ պահելու համար փողրակների վրա և կողքերին խնամքով շարված են թրծած աղյուսներ (20x20x5սմ), իսկ խողովակների հանգույցները պատված են կրաշաղախով: Խողովակաշարի տեղն ու դիրքը մեզ հիմք է տալիս կարծելու, որ այն ավելի ուշ շրջանի է պատկանում: Ընդ որում արևելյան պատի մեջ խողովակաշարի վրա աղյուսե բուխարի էր շարված: Բուխարու ձևը և շարվածքը կասկած չեն հարուցում, որ այն հետագայում է ավելացվել:

Լողարանի մուտքի դիմաց՝ հատակի վրա, 1,60սմ երկարությամբ, 35սմ խորությամբ և 90սմ լայնությամբ ջրավազան հիշեցնող կառույց բացվեց: Այն շարված էր սալաքարերով ու աղյուսներով, որոնք անջրաթափանց կրաշաղախով էին սվաղված: Ն. Մառը Անիի պալատական բաղնիքում համանման ավազանի գոյությունը բացատրում է լողացողների՝ իրենց ոտքերը երկար ժամանակ գոլ ջրով ավազանների մեջ ընկղմելու հանգամանքով<sup>1</sup>: Նման ավազան կա նաև Խերսոնի բաղնիքներում<sup>2</sup> (աղ. V (1)):

Նկարագրվող լողասրահի հատակը չի պահպանվել, և դժվար է դատել նրա նախնական տեսքի մասին: Հնարավոր է, որ լողասրահի հատակը իր կառուցման տեսնիկայով չէր տարբերվելու հարակից լողարանների հատակներից:

Սույն կառույցի ընդհանուր հատակից 60-70սմ ներքև դեպի Չորագետի կիրճն է ուղղվում 15սմ տրամագծով կավե մեկ այլ խողովակաշար: Հավանաբար բաղնիքի լողասրահներում կուտակված կեղտաջրերը սրանով էին հոսում Չորագետի կիրճը:<sup>3</sup>

Երկրորդ բաղնիքի լողարանների մեջ՝ ջրածորակների տակ, ինչպես առաջինում, դրված են եղել քարե տաշտեր: Այս տաշտերից մեկը, որը տեղահան է արել 1931 թվականին Սամվել Նազարյանը՝ գյուղի դարբնոցում օգտագործելու նպատակով, այժմ գտնվում է առաջին բաղնիքի բակում: Այն իր չափերով գերազանցում է առաջին բաղնիքի համանման քարե տաշտին և միանգամայն բավարարում էր մեկ անձի լողանալու համար անհրաժեշտ ջրաքանակին:

Արշավախումբը երկրորդ բաղնիքը ջեռուցող հնոցի տեղը պարզելու նպատակով սկսեց մաքրել հանդերձարանի հյուսիսային կողմում ընկած տարածությունը: Պեղումներով հանդերձարանի հյուսիսային պատին անմիջապես կից հայտնաբերվեց մի կառույց, որը միջնորմ խուլ պատերով բաժանված էր երկու հավասար մասերի: Կառույցը լրիվ մաքրելուց հետո պարզվեց, որ այն ժամանակին ծառայել է որպես սառը ջրի ջրամբար:<sup>1</sup> Ջրամբարի ընդհանուր չափերն են 3,1x3,2 մետր (չուրջ 10 քառ. մետր): Նրա արտաքին պատերի հաստությունն անցնում էր 130սմ-ից, որպեսզի դրանք դիմանային կուտակված ջրի ուժեղ ճնշմանը, իսկ պահպանված պատերի բարձրությունը 1,00 մինչև 1,60սմ է: Առավել հնարավոր բարձրությունը ջրամբարից դեպի ժայռն ընկած հատվածն է՝ մինչև 1,80մ:

Այսպիսով, եթե նկատի ենք առնում այն հանգամանքը, որ ջրամբարի հատակից 1,35մ բարձրության վրա հայտնաբերվեց 15սմ տրամագիծ ունեցող կավե փողրակ, որտեղից ավելացած ջուրը հեռացվում էր դեպի կիրճը, ապա պարզվում է, որ երկու բաժնում հնարավոր էր ամբարել 10 խորանարդ մետրից ավելի ջրի պաշար: Ջրամբարի հատակին հավասար բարձրության վրա առկա է նաև մեկ այլ փողրակ, որով անհրաժեշտության դեպքում բաց էին թողնում ամբարված ջուրը՝ այն մաքրելու կամ ախտահանելու նպատակով: Հնարավոր պետք է համարել նաև այն, որ ջրամբարը, հավանաբար ծածկի միջից մուտքի հնարավորություն ունենա՝ անհրաժեշտության դեպքում ներս մտնելու և մաքրելու համար:

<sup>1</sup> Տե՛ս Н. Марр, Ани, Ленинград, էջ 71:

<sup>2</sup> Ա. Յակոբսոն, նշվ. աշխ., էջ 83-84:

<sup>3</sup> Քանի որ բաղնիքում ջրահեռացման և տաք ու սառը ջրերի մատակարարման հարմարանքների միայն մի մասն է պահպանվել, ուստի դժվարանում ենք վերականգնել նախնական ճիշտ պատկերը:

<sup>1</sup> Վ. Հարությունյանը սխալմամբ ջրավազան է համարում սույն բաղնիքից 25-30 մետր դեպի հյուսիս գտնվող փլատակները (տե՛ս նշվ. աշխ., էջ 70):

Պեղումների ժամանակ, բացի ջրամբարի ծածկի թափված ֆելզիտային աղյուսատիպ քարերից և կրաշագախից, ոչինչ չհայտնաբերվեց: Հատակը և պատերը շարված են տեղական բազալտով, որոնք սվաղված են անջրաթափանց կրաշագախով: Այդ շագախը պարունակում է գաջ, կիր, տուֆի մանր կտորներ և այլն: Միջնադարյան հայ վարպետները կրաշագախը փայլելու աստիճան հարթեցրել են: Դա նպաստել է շագախի ջրադիմացկուն լինելուն:

Ջրամբարը ծածկել են գմբեթի տեսքով, որը հաստատվում է հյուսիսարևելյան անկյունում պահպանված պատի վերին շարքի շարվածքից:

Ցավոք, մինչև օրս այս բաղնիքի ջեռուցարան-հնոցի գտնվելու նախնական տեղը մնում է անհայտ: Միայն հնարավոր պետք է համարել այն ենթադրությունը, որ բաղնիքի ջեռուցարան-հնոցը կարող էր տեղադրված լինել Չորագետի կիրճի եզրին՝ մեծ լողարանի և հանդերձարանի հարավահայաց պատին կից: Դա նախ կնպաստեր հնոցի մոխրից հեշտությամբ ազատվելուն և երկրորդ՝ այն հնարավորություն կտար հնոցը տեղադրել առավել ցածր հարթության վրա ու հեշտացնել լողարանների և հանդերձարանի հատակների տաքացման խնդիրը: Վերջին ժամանակների փլուզումների հետևանքով, բաղնիքի հարավային պատի հետ միասին հնոցն ամբողջությամբ նույնպես Չորագետի կիրճն է թափվել՝ անդառնալի կորչելով:

Ավարտելով Լոռե քաղաք-ամրոցի միջնաբերդի զույգ բաղնիքների նկարագրությունը՝ պեղումներով ի հայտ եկած տվյալներով հանդերձ, կարելի է կատարել հետևյալ ընդհանրացումները:

Լոռե ամրոցում բաղնիքները կառուցվել են քաղաքի բուռն զարգացման շրջանում, այն է՝ Կյուրիկյան-Ջաքարյան տիրապետության տարիներին (XI-XIII դարեր):

Ճարտարապետ-շինարարները, ինչպես միջնադարյան Հայաստանի մյուս բաղնիքներինը, նույնպես և Լոռեինը, հարմարեցրել են տեղանքին այնպես, որ քիչ վառելանյութ պահանջվի ջրի և հատակների տաքացման համար: Նույն իմաստն ունի այն հանգամանքը, որ բաղնիքների ներքին մուտքերը երբեք միևնույն առանցքի վրա չեն տեղադրել:

Լոռե քաղաքի բաղնիքների հանդերձարանները զբաղեցրել են ընդարձակ տարածություն: Դրանք ծառայել են նաև որպես առևտրական և այլ գործարքներ կնքելու կամ ազատ ժամանցի վայրեր:

Վերջիններս կառուցվել են հիմնականում որպես վերերկրյա կառույցներ. հարևան մահմեդական երկրներում տվյալ նպատակի համար կառուցվող շինությունները գետնափոր էին:

Ուսումնասիրվող բաղնիքների բոլոր բաժանմունքների ծածկերն իրականացվել են գմբեթների և թաղերի ինքնուրույն համակարգով: Մի կողմից այն դյուրին է դարձրել կառույցների ծածկերի խնդիրը, մյուս կողմից՝ հիգիենիկ է:

Պեղումները հնարավորություն են ընձեռել պնդելու, որ ինչպես Հայաստանի միջնադարյան մյուս բնակավայրերի բաղնիքները, նույնպես և Լոռե ամրոցինը, ունեցել են ներքին հարդարանք: Եթե Անիի և Ամբերդի բաղնիքների լողարանների պատերը ներսից ներկում էին տարատեսակ ներկերով, ապա Լոռեում այդ նպատակի համար երբեմն օգտագործել են ջնարակապատ փոքր սալիկներ: Դրանք պատված են տարբեր գույնի՝ սև, սպիտակ, կաթնագույն, բաց կապույտ, կանաչ, երբեմն էլ դեղին ջնարակով: Դա եզակի երևույթ է: Նման սալիկներ գտնվել են նաև Վրաստանի Դմանխսի քաղաքի բաղնիքի պեղումների ժամանակ: Անիից գտնված նման ջնարակապատ սալիկների նախնական պատկանելիության խնդրում հստակություն չկա:

ՄԱՏՈՒՌ ԴԱՄԲԱՐԱՆ: Լոռեի միջնաբերդում, բացի վերը հիշված կառույցներից, առկա է նաև մեկ այլ շինության հետք: Այն գտնվում է քաղաքացիական շենքից 25-30 մետր հեռու՝ արևելյան մասում: Այն իրենից ներկայացնում է լիովին խարխլված մի փոքր կառույց, որ տեղացիների կողմից ստացել է «մատուռ» անվանումը: Այն կանգուն է մնացել մինչև 1925-1930-ական թվականները: Գյուղի տեղափոխման ժամանակ, ցավոք, որոշ անբարեխիղճ բնակիչներ քանդել և օգտագործել են մատուռի քարերը իրենց կարիքների համար: Այժմ երևում են միայն արևելյան երկու անկյուններում մնացած պատերի միջնամասերը, որոնց երկու կողմերից պոկված են երեսապատման քարերը: Կառույցի ներսում և դրսում գոյա-



ցել է շաղախի գանգավածային մեծ կույտ, որը ծածկվել է բուսականությամբ:

Տեղում անկանոն սփռված շաղախի մեջ նկատելի են ջարդված կավանոթների անհամար բեկորներ, որոնք, հավանաբար, դրվել են ծածկի մեջ այն թեթևացնելու, որոշ առումով՝ ներքուստ նաև ձայնը հնչեղ դարձնելու համար: Այս հուշարձանի վերաբերյալ վկայություններ են պահպանվել տեղագրական երկերում, ճանապարհորդների նկարագրություններում:

1840-ական թվականներին Լոռե բերդ այցելած ռուս ճանապարհորդ Ն. Մուրավյովը գրում է. «Մյուս եկեղեցին, որը մոտենում է հունականին, ավելի հայկական է: Շարված է գրանիտյա քարերից, խաչաձևվող կամարներ ունի և բարձր գմբեթ»:<sup>1</sup> Նույն այդ հուշարձանի մասին 1890-ական թվականներին Իսահակ Հարությունյանը ավելի մանրամասն գրում է. «Արևելյան պարսպից ոչ հեռու գտնվում է մի փոքրիկ, անսյուն, կամարակապ և սրբատաշ քարերից շինված մի քառակուսի շենք հինգ արշին և տասներեք վերջով մեծությունամբ, այդ շենքը, թե դրսի և թե ներսի կողմից կառուցված է եղել սրբատաշ քարերից, բայց այժմ դրսի պատերի քարերը բոլորը քանդել ու տարել են՝ երևի նոր շինությունների համար: Արևելյան պատի վրա կան երեք կամարակապ խորաններ, որոնք երևի պատարագամատույց խորաններ են եղել. ավանդությունամբ, այս շենքը համարվել է Դավիթ Անհողին թագավորի կնոջ դամբարանը: Պատմում են, որ երբ թաթարները տիրում են քաղաքին՝ քանդում են այդ դամբարանը գանձ կամ թանկագին իրեր գտնելու հույսով և ոսկորները հանելով այրում են:

Այս շենքի մուտքի աջ կողմի մի քարի վրա պահպանվել է եղծված արձանագրություն, որից ընթեռնելի է թվականը. «Ի թուականին Չ» (1251)»:<sup>2</sup>

Պեղման ընթացքում հայտնաբերվեցին այս մատուռին պատկանող շինարարական արձանագրության հատվածը,

խաչաձևվող կամարների փականաքարերը, թաղակապ կամարների քարերի մի մասը, ներսի կողմից պատի սրբատաշ շարքի քարերից մի քանիսը և այլն:

Ճարտարապետական մանրամասների օգնությամբ արշավախմբի ճարտարապետ Սարգիս Մաթևոսյանը կարողացավ տալ մատուռի վերակազմությունը: Հետագա պրպտումները պարզեցին, որ այս նույն շենքին պատկանող հինգ որմնասյուներ գտնվում են Լոռի բերդ գյուղի այժմյան գերեզմանատանը, Ագարակ գյուղում, միջնաբերդի տարածքում: Լոռի բերդ գյուղում են գտնվում այդ նույն շենքին պատկանող որմնասյան խարխուլներից երկուսը: Մեկը Տելեմակ Նազարյանի, մյուսը՝ Ղուշո Ասլիկյանի տների բակում (մինչ երկրաշարժը):

Որմնասյուների և խարխուլների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք իրենց ձևով չեն կրկնվում: Մյուսներից մի քանիսը, պատից դուրս եկած երեսին, ունեն բազմանկյուն մշակում, մյուսները կլոր են: Նույնը նկատվում է նաև խարխուլների վրա: Այս երևույթը լայն տարածում է ունեցել հայկական միջնադարյան ճարտարապետության մեջ, որը ցուցադրում է մեր քարգործ վարպետների բարձր արվեստը, նուրբ ճաշակը:

Պեղումներով պարզվեց, որ մատուռ-դամբարանը ներսի կողմից ունեցել է պատերի տակ հաստատված ութ որմնասյուն: Այդ որմնասյուները գետեղվել են բավականին լավ մշակված խարխուլների վրա: Որմնասյուների վրա նստած են եղել խոյակներ, որոնց վրա հենվել են շենքի ներսում ձգվող և իրար խաչվող չորս կամարներ:


Կամարները իրենց հատման կետում ունեցել են փականաքարեր: Փականաքարերը դեպի ներս նայող երեսին, ճիշտ կենտրոնում, ունեն տարբեր մեծություններ կլոր կամ երկարավուն ձևավոր զարդեր, որոնք խարխուլների նման իրարից խիստ տարբերվում են:

Հավանաբար փականաքարերի վրա է հենվել գմբեթը, որի ձևը մեզ համար անհայտ է: Ռուս ճանապարհորդ Ն. Մուրավյովի՝ վերը հիշատակված վկայությունից կարելի է կռահել, որ մատուռ-դամբարանի գմբեթը չի տարբերվել միջնա-

<sup>1</sup> Н. Муравьев, Грузия и Армения, СПб., 1848, էջ 296:

<sup>2</sup> Ի. Հարությունյան, Աշակերտի հիշատակարան, տե՛ս «Լուսն» ամսագիր, 1897թ., գիրք 1, էջ 250: Այս թվականի մասին տե՛ս հետագայում:

դարյան նմանատիպ կառույցների գմբեթներից: Ականատեսների վկայությամբ, մատուռի գմբեթը կանգուն է մնացել մինչև XX դարի սկիզբը:<sup>1</sup>




Փծագիր 29. Մատուռ-ղամբարան. Հատակագիծ և կտրվածքներ

Մատուռ-ղամբարանը կառուցվել է բավականին լավ մշակված բազալտե քարերով: Պատերի հաստությունը, դատելով հիմնապատի հաստությունից, պետք է լիներ 100-105սմ: Երեսապատման սրբատաշ քարերից տեղում պահպանվել են երեքը, միայն ներսի կողմում: Քարերի մոտավոր չափսերն են 45-50x60սմ:

Մատուռի կառուցման տեխնիկան բավականին հետաքրքիր է այն առումով, որ կառուցող վարպետները, չարքի քա-

րերի հաստությունը հասցնելով 20-25սմ, հնարավորություն են ստեղծել զանգվածեղ դարձնել նրա միջի շաղախը: Այդ հանգամանքը, ինչպես նկատել է միջնադարյան ճարտարապետության քաջահմուտ գիտակ թ. Թորամանյանը, մեծապես բարձրացնում է շենքի դիմադրողականությունը սեյսմիկ ցնցումների նկատմամբ:<sup>1</sup>



Փծագիր 30. Մատուռ-ղամբարան. Սյուներ և խորխիսներ

Պատերի շաղախը պատրաստված է հանգած կրով, չեչոտ բազալտե և տուֆ քարերի կտորներով ու գետի խոշորահատիկ ավազով: Այս խառնուրդն օգնել է ամուր շաղախ ստանալուն, որը մինչև այժմ երկաթե լինգի օգնությամբ իրարից մեծ դժվարությամբ է պոկվում: Շաղախը զանգվածային է, հատկապես արևելյան ճակատի երկու անկյուններում, որտեղ մինչև այժմ դրանք, չուրջ երկու մետր բարձրությամբ, կանգուն են մնացել:

Մատուռի պեղումների ընթացքում գտնված արձանագրությունը շինարարական բնույթի է.

Ի ՓՐԿՈՒԹԻ.....

ՍԱՐԳՍԻ ԻՄՈՂ[Յ] ԵՒ ՎԱՍՆ ԱՐԵ..

<sup>1</sup> Պեղումների ժամանակ շաղախից բացի գմբեթից ոչ մի բեկոր չի հայտնաբերվել:

<sup>1</sup> Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942, էջ 137-138:

ՇԱՏՈՒԹՆ ԵՂՔԱԻՐ  
ԻՄՈՂՅ՝ ԳՐԻԳՈՐԻ ԵՒ ՈՐԴՈՑՆ  
.... ՍԱՐԳՍԻ ԵՒ ԱՌԱՔԵԼԻ

Պարզվում է, որ այս շենքը կառուցված է եղել արձանագրության մեջ հիշատակված անձանց հոգու փրկության համար: Դրանք հավանաբար, Կյուրիկյան կամ Զաքարյան իշխանական տան ներկայացուցիչներն են եղել, որոնց գերեզմանների վրա էլ կառուցվել է այս մատուռ-դամբարանը:

Դժբախտաբար, չի պահպանվել շենքի շինարարական արձանագրության այն հատվածը, որտեղ հիշատակված էր լինելու կառուցման թվականը:

Պեղման ժամանակ մատուռի հատակից երևան եկան մի քանի կմախքների մնացորդներ: Հիմնականում բոլոր գերեզմանները ոչնչացվել էին Լոռի բերդ գյուղի բնակիչների կողմից, երբ 1930-ական թվականներին քանդել և տարել էին մատուռի հատակին թաղվածների շիրմաքարերը:

Պեղման ընթացքում գտնված շինարարական արձանագրության թերի լինելու հետևանքով, մատուռ-դամբարանի կառուցման թվականը անհայտ է մնում: Միայն հնարավոր է ենթադրել, որ այն հավանաբար կառուցված պետք է լինի XII-XIII դարերում. նույնատիպ հուշարձաններ հայտնի են Հայաստանի Գուգարաց նահանգում, որոնք կառուցվել են Կյուրիկյանների վերջին շառավիղների կողմից XII դարի վերջին: Այսպես, Կյուրիկե Գ թագավորի դուստրը՝ Մարիամը, 1185 թվականին Հաղբատի գլխավոր եկեղեցու մուտքին կից կառուցել է տվել մի գավիթ: Շինարարական արձանագրության մեջ այն անվանել է «տուն աղոթից»: Գավթի ներսում են թաղված Կյուրիկյան տոհմի շատ ներկայացուցիչներ:



Մարիամի կողմից կառուցված գավիթը 1208 թվից հետո վերակառուցվել է Հովհաննես Խաչենցու կողմից, որն այդ թվականից ի վեր Հաղբատի վանքի առաջնորդն էր:<sup>1</sup> Հովհաննես Խաչենցու կողմից կատարված վերակառուցման մասին պատմիչ Գանձակեցին հիացմունքով գրում է. «... և բազում գործս արժանի յիշատակի գործեաց նա ի Հաղբատ, ընդ որս և զհուշակալոր գաւիթն եկեղեցւոյն շինեաց, որ հիացուցանէ զտեսողսն»:<sup>2</sup>

<sup>1</sup> Կ. Ղաֆաղարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 26:

<sup>2</sup> Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 174:

ԼՈՐԵ ԲԵՐԴ

ՄԱՏՈՒՐ-ԴԱՄԲԱՐԱՆ  
ՀԱՏԱՎԱԳԻԾ ԵՎ ՎՏՐՎԱԾՔ ՎԵՐԱԿԱՐԳՈՒՄԻՆ ԱՂ ՄԱՐԵԿՈՍՅԱՆԻ



Գծագիր 31. Մատուռ-դամբարան. վերակազմության նախագիծը  
Ս. Մաթևոսյանի



Թյան նպատակով շաղախի մեջ խեցանոթներ դնելու եղանակը լայն կիրառում է ստանում XI-XIII դարերում հատկապես Սյունիքի և Գուգարքի ճարտարապետական հուշարձաններում:

Մատուռ-դամբարանի ծածկի շաղախի մեջ գտնված խեցեղենը հիմնականում կենցաղային է (կարասներ, սափորներ, տաշտեր), որի քննութանը կանդրադառնանք համապատասխան բաժնում:

Վերը նկարագրված շենքերից բացի, միջնաբերդում չեն նշմարվում որևէ այլ հին շինութայան մնացորդներ: Չնայած դրան, ամենուրեք կարելի է հանդիպել սրբատաշ քարերով կառուցված շենքերին պատկանող ճարտարապետական առանձին բեկորների, խաչքարերի, աղորիքների և սանդերի, ձիթհանի քարերի, ջնարակած ու հասարակ խեցանոթների բեկորների և այլն:

Միջնաբերդը, սկսած մուտքից մինչև հրվանդանի հարավարևելյան ծայրը, առանձին մասերի է բաժանվում նրանց միջև անցնող ճանապարհներով: Այժմ այդ ճանապարհները Լոռի բերդ գյուղի բնակիչներն օգտագործում են հնավայրից խոտ տեղափոխելու համար: Պետք է ենթադրել, որ այժմ օգտագործելի ճանապարհների մի զգալի մասը գոյություն է ունեցել դեռևս հնում: Հետագայում, անկասկած, որոշ հատվածներ ենթարկվել են փոփոխությունների: Վերջիններիս մանրակրկիտ ուսումնասիրությունը բավականին հետաքրքրական նյութեր կընձեռի միջնադարյան քաղաքաշինությունից որոշ հարցեր պարզաբանելու համար:

### ՔԱՂԱՔԱՏԵՂԻ

Ինչպես արդեն նշել ենք, XI դարի կեսերին, արքայանիստ քաղաք դառնալուց հետո, Լոռե ամրոցը սկսում է բուռն զարգացում ապրել, որը հիմնականում պայմանավորված էր ամրոցից դեպի հյուսիս-արևմուտք ընկած շահաստանի հիմնումով: Լոռե քաղաքի շահաստանը ընդգրկում է շուրջ 25 հեկտարը տարածություն: Նրա երկու կողմերում առկա են խոր կիրճեր, իսկ հյուսիսարևմտյան մասում կառուցված է եղել պաշտպանական պարսպապատը: Այժմ հիշյալ պարսպ-

պը ամբողջովին քանդված է և նրա տեղում, երկու գետերի միջև, գոյացել է 6-8 մետր լայնությամբ և մեկ մետր բարձրությամբ հողաթումբ:

Շահաստանի հյուսիսարևմտյան անկյունն ամբողջությամբ զբաղեցնում է գերեզմանատունը: Չնայած այն հանգամանքին, որ 1925-1930-ական թվականներին հնավայրից հեռացող բնակիչներն իբրև շինանյութ տարել են գերեզմանատան քարերը, այնուամենայնիվ, տեղում դեռևս մնացել են հիսուսի հասնող մշակված խորանարդներ, որոնք ժամանակին ծառայել են որպես խաչքարերի պատվանդաններ: Խաչքարերի այդօրինակ պատվանդաններից երկուսի վրա պահպանվել են հայատառ բավականին ընդարձակ արձանագրություններ, որոնք այնքան են հողմնահարվել, որ ներկայումս դժվարընթեռնելի են: Լոռե ամրոց-քաղաքի հնավայրում պահպանված վիմագրերից իրենց բովանդակությամբ հետաքրքիր են հետևյալները.<sup>1</sup>

Դրանք են.

1. Գերեզմանատուն, խաչքարի խորանարդաձև պատվանդան, ճակատին 5 տող, խիստ հողմնահարված.

1. + Ի ԹՎ[ԻՆ] ՀԱՅՈՅ : ՈԾԸ=(658+551=1209) ՓՈՒԵՑԱՆ

ՅԱՇԽԱՐՀԷ ՊԱՏ-

2. ՈՒԱԿԱՆ ՊԱՏՐՈՆԱՅՔՆ ԶԵՆԲՈՒՏՆ ԵՒ ԶՈՒՆ Դ[ԻԿՆ]...

3. ԵՍ ԿՈՐՈՒՍԵԱԼ ՅԵՏ[ՄՆԱՅ]Ս ԽՈՅԱԴԵՂ ԿԱՆԳՆԵՑ[Ի]

4. Զ[ՍՈՒՐ]Բ ՆՇԱՆՍ Ի ԲԱՐԷԽՈՍՈՒԹԻ[ԻՆ] ՆՈՅԱ: ՈՐՔ ԵՐԿ-

5. ԲՊԱԳԱՆԷՔ ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՍՁԻՔ:

Ծանոթ. Թե՞ ովքեր են վիմագրում հիշատակված «Պատվական պարոնայք Զենբուտն ու Զուեդիկը» հայտնի չէ: Հավանաբար ժամանակի նշանավոր դեմքեր են, որ Խոցադեղը նրանց հոգու փրկություն համար խաչքար է կանգնեցրել: Խոցադեղ անունը հայ վիմագրության էջերում հաճախ հիշվող անուն է:

2. Նույն գերեզմանատուն, խաչքարի խորանարդաձև պատվանդանի ճակատին, չորս տող.

1. :: ԵՍ ՀԱԶԱՐԱԴԵՂՍ ՈՐԴԻ ՄԱԹԷՈՍԻ Ի Կ-

2. ԵՆԴԱՆՈՒԹԵԱՆ ՅՈՒՍՈՎՆ ՈՐ ԱՌ Ք[ՐԻՍՏՈ]Ս, ԿԱՆԳՆԵՑԻ Զ-

<sup>1</sup> Սույն արձանագրություններն ընթեռնելու գործում մեզ օգտնել է վիմագրագետ, հանգուցյալ Ս. Բարխուդարյանը:

3. Ս[ՈՒՐ]Բ ՆՇԱՆՍ Ի ԲԱՐԷԽԱԿՍՈՒԹԻ[ԻՆ] ՀՈԳԻՈՅ ԻՄՈ: ՈՐՔ ԵՐ-
4. ԿՐՊԱԳԱՆԷՔ ՅԻՇԵՍՋԻՔ Ի Ք[ՐԻՍՏՈ]Ս. ԱՄԷՆ:

**Ծանոթ.** 1. Մամէնոսի որդի Հագարդեղի ով լինելը դժբախտաբար դժվար է պարզել: Հագարդեղ անձնանունը հաճախ հանդիպող անուն է:  
 2. Վիմագիրը համեմատաբար լավ է պահպանվել, ընթեռնելը դժվարություն չի հարուցում:  
 3. Հնարավոր է, որ խաչքարը կանգնեցնելու ժամանակի մասին փորագրված լինեն խաչքարի վրա:

**3. Նույն գերեզմանատուն, դագաղ հիշեցնող գերեզմանա- քար, հարավային կողմին, երկու տող.**

1. Տ[Է]Ր Ա[ՍՏՈՒԱ]Ծ ՈՂՈՐՄԻ ԹԱԹԷՆՍԻ ՄԱԻՐՆ
2. ՀՈԳՈՒՆ: ԱՄԷՆ:

**4. Նույն գերեզմանատուն, բեկոր, մեկ տող**  
 ԶԿ/ԱԶՄՈՂՍ ՅԱԿ/ՈԲ ՅԻՇԵՑԷՔ]

**5. Նույն գերեզմանատուն, խաչքարի բեկորի ճակատին.**  
 ՏԵ/ՂՈՋՆ ՅՍՏԱՄ ՏԵՎ...

**Ծանոթ.** 1. Նույն բեկորի խաչի բուսական զարդի մեջ հնարավոր է տարբերակել երեք տառ՝ ՉԼԲ: Խաչքարը կանգնեցնելու թվականն է:

**6. Նույն գերեզմանատուն, վիմագրի բեկոր, որից ընթեռ- նելի է միայն երկու տող.**

1. ԵՍ ՄԵՂՈՒՅԵ[Ա]Լ ԵՒ ԱՆ[ԱՆՐԺԱՆ ԾԱՌԱՅ]
2. Ք[ՐԻՍՏՈՍ]Ի ԽԱՐԻՓՍ, ԹԻ...

**Ծանոթ.** 1. Խարփ անունը միջին դարերում հանդիպող անուն է, սակայն նրա ով լինելը հնարավոր չէ պարզել վիմագրի թերի լինելու պատճառով:

**7. Նույն գերեզմանատուն, երկթեք մշակում ունեցող տա- պանաքարի վրա, երեք տող.**

Հյուսիսային երեսին.,

1. ԱՆՄԱՀ ԹԱԳԱԿՈՐ ՅԱԻ[ՏԵՆԻ]Ց
2. Ք[ՐԻՍՏՈ]Ս Ա[ՍՏՈՒԱ]Ծ ՈՂՈՐՄԻ ՍԱՆՈՒԷԱ ՇԵՀԱԿՈՐ
3. ՏԻԿՆԱ, ԱՐԱԻ ԶԱՅՆԻՆ ԵՒ ԱՄԷՆ ԸՆԴԱԵ[Ա]Ց ԿԵՆԴԱ[ՆԻ ԵՒ [ՄԵՌԵԼՈՑ]:

**8. Նույն գերեզմանաքարի հարավային լանջին, 3 տող:**

1. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՍԱՆՎԵ-
2. ԼԱ ԱՐԵԻԶԱՅՆԻՆ: ՆՍԻՍ
3. ԹՎ[ԻՆ]: ՉԾ: (750+551=1301)

**Ծանոթ.** 1. Վիմագիրը բավականին հողմնահարված է, որոշ բառեր պահպանված: Այն տեղ է գտել վիմագրերի դիվանի համապատասխան հատորում, Ս. Սաղումյանի ընթերցմամբ:

2. Սանվել անունը կարդացվում է երկրորդ վիմագրի օգնու- թյամբ. այլապես դժվար ընթեռնելի է:

3. Բարեբախտաբար պահպանված թվականը մեզ հայտնում է, որ նման մշակում ունեցող տապանաքարերը XII-XIII դարերին են պատկանում:

4. Ըստ Ս. Սաղումյանի ՆՍԻՍ – տառաչարքը պիտի ընկալել որպես «Նապասարդիս» անվան հապավում:

**9. Լոռի բերդ գյուղ, խաչքարի խորանարդաձև պատվան- դան: Այժմ գտնվում է Ասուլյանի տան պատշգամբի տակ, ուր կան երեք լավ մշակված քարեր: Մեկի վրա չորս տող.**

1. + ԹՎ[ԻՍ] ՉԻԲ (722+551=1273) ԿԱՆԿՆԵՑԱԻ Ս[ՈՒՐ]Բ ԽԱԶՍ:  
 Ա[ՍՏՈՒԱ]Ծ ՈՂՈՐՄԻ .... ՈՒՔԱՆԱ
2. ԵՒ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ԻԻՐ ՆՆՋԵՑԵԼՈՑՆ, ՈՐ Է ԱԻՐՀՆԵ[ԱԼ]ՊՏՈՒՂՆ
3. ՊԱՏՈՒԱԿԱՆ: ԼՍԵԼ ԶԶԱՅՆՍԵՆ՝ ԲԱՆԱԼ ԶԴՐԱԽՏՆ
4. ԱՆՍԱՀՄԱՆ:

**Ծանոթ.** 1. Վիմագրի առաջին տողը վնասված է և կարդացվում է մեծ դժվարությամբ: Այդ խնդրում մեզ օգնեց վիմագրագետ Գ. Սարգսյանը, որի տրամադրություն տակ է «Դիվան հայ վիմագրության» Լոռիին նվիրված հատորը: Այս և հետագա մի քանի թերի վիմագրերի բովանդակությունը մեզ տրամադրել է Գ. Սարգսյանը, որի համար հայտնում ենք մեր երախտագիտությունը:

2. Ուքանը և Պետրոսը հավանաբար Զաքարյանների տոհմի նշանավոր պաշտոնյաներ են, որոնց ննջեցյալները հիշվում են վիմագրում, համարելով «աւրհնեալ պտուղ»

3. Վիմագրի 3-րդ և 4-րդ տողերի բովանդակությունը առնված է Ավետարանից:

**10. Լոռի բերդ գյուղ, վիմագրի բեկոր: Գտնվում է Ասուլ- յանների տան պատի մեջ, չորս տող.**

ԵՍ ՄԽԻԹԱՐԻՉ  
 ՔԱՐԳՈՐԾ ՅԱՂ-  
 ԱԻԹՍ ՅԻՇԵՑԵՔ  
 ԶՔԱՐԻ ՏԱԻՆԻՆ:

**Ծանոթ.** 1. Ըստ Ս. Սաղումյանի Մխիթարիչը Գուգարքի նշանավոր խաչքարի վարպետն է, որն ապրել է XIII դարում և թողել է մի շարք գեղաքանդակ խաչքարեր:

2. Վերջին տողի Չ(Ա)ՔԱՐԻ ՏԱԻՆԻՆ, ասել է թե Զաքարե մարգարեին նվիրված տոնին պետք է հիշել նաև քարգործ վարպետին:

**11. Նույն տեղում, երկու տող.**

1. ԿԱՄԱԻ ԲԱ[ՐԵԽԱԿՍԻՆ ԱՅ...
2. ....

**Ծանոթ.** 1. Երկրորդ տողից հնարավոր չէ ընթեռնել ոչ մի բառ:

**12. Լոռե ամրոցի պարսպի դարբասի պատին Ս. Սաղու- մյանն ընթերցել է 5 տողանոց թերի վիմագիր.**

1. ... ՏՎԻ ...
2. Ի ՅԻՇԷՑ –

3. էՔ ԵԻ
4. ԱԾ Զ ...
5. ԵԶ ՅԻՇԷ

Ցավալի իրողությունն այն է, որ տեղում՝ Լոռեում պահպանված այդքան պատվանդանների վրա ոչ մի խաչքար այժմ չի մնացել: Խաչքարերի կարելի է հանդիպել ժամանակակից բնակատեղիում, կոլտնտեսությունից գոմերի մոտ, հնավայրի և նրան մերձակա այլ հատվածներում:

Նույն գերեզմանատանը, բացի խաչքարերի պատվանդաններից, կան նաև երկթեք մշակումով գերեզմանաքարեր, որոնց երկարությունը հասնում է մինչև 220, իսկ բարձրությունը՝ 80-100սմ-ի:

Ուսումնասիրողների կարծիքով այդ ձևի գերեզմանաքարերը պատկանում են VII-XIII դարերին, մասնավորապես Լոռե ամրոցին XI-XIII դարերին: Համեմատաբար քիչ են պատահում հարթ մակերեսով տապանաքարեր, դարձյալ երկու մետրից ավելի երկարությամբ, 50-60սմ հաստությամբ, որոնք հավանաբար պատկանում են XII-XV դարերին: Նման տապանաքարերը տեղում քիչ են հանդիպում: Միջնաբերդում կառուցված և XIV-XV դարերով թվագրվող, այսպես կոչված «քաղաքացիական» շենքը մեծ մասամբ կառուցված է այդ գերեզմանաքարերով: Նման գերեզմանաքարերից մեկի վրա կարգում ենք.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ  
ԱՎԱՔ ՊԱՐՈՆ-  
ԻՍ

Լոռեի հին գերեզմանատանը եղել է նաև ձի և խոյ պատկերող կոթող-գերեզմանաքարեր, որոնցից մեկը գտնվում է Լոռի բերդ գյուղի բնակիչ Վարազդատ Մելքոնյանի տան բակում, մյուսը Ստեփանավանում՝ Շահումյան փողոցի վրա, երրորդը՝ Ագարակ գյուղում, չորրորդը՝ Թերին, գտնվեց քաղաքատեղիի հետախուզական պեղումների ժամանակ:

Ականատեսներ Տելեմակ Նազարյանի և Երեմ Պապիկյանի վկայությամբ այդ գերեզմանաքարերը տարվել են Լոռե ամրոցի գերեզմանատանից, որոնց քանակը դարասկզբին մի քանի տասնյակի էր հասնում: Պրոֆ. Խուրադովը այն հետևությունն է հանգել, որ նման ոճի գերեզմանաքարերը Անդր-

կովկասում երևան են եկել XV դարից ոչ շուտ,<sup>1</sup> կապված Ակ-կոյունլու և Կարա-կոյունլու քոչվորական ցեղերի հետ, որոնք XV դարում տիրում էին Անդրկովկասի մեծ մասին: «Հայաստանում և Վրաստանում նկարագրված ոճի գերեզմանաքարերը տարածում գտան թուրքմենական ազդեցությունից հետևանքով», - գրում է Խուրադովը:<sup>2</sup>

Վերը նկարագրված գերեզմանատանից հարավ գտնվում է Լոռի բերդ գյուղի այժմյան գերեզմանատունը: Այստեղ նույնպես կարելի է հանդիպել միջնադարյան շինություններին պատկանող քարերի և տապանաքարերի:

Գերեզմանատան և միջնաբերդի պարսպապատի միջև նկատելի են հին շենքի շաղախի մեծ զանգված և պատի քարերի մնացորդներ: Արտաքնապես այն կյոր է: Չափերն այնքան մեծ չեն: Դժվար է կռահել ինչ լինելը:

Դեռևս 1967թ. պեղումների ժամանակ արշավախումբը որոշեց պեղել այդ փլատակները, պարզել թե ժամանակին ինչ նպատակի համար է կառուցվել այն, որոշել կառուցման ժամանակը: 70-80սմ խորությունից վրա բացվեց շրջանաձև շարվածք ունեցող պատերի մնացորդներ, որի արտաքին երեսապատման բոլոր քարերը հետագայում քանդել են գյուղացիները կամ զինվորականները: Կառույցի պատերը շարված են XII-XIV դարերին պատկանող հարթ տապանաքարերի վրա: Վերահիշյալ տապանաքարերը իրենց վրա ունեն տվյալ դարաշրջանին բնորոշ մարդու պատկեր հիշեցնող հարթաքանդակներ. արձանագրությունները բացակայում են:

Կառույցի պատերի լայնքը 120-130սմ է, հատակը՝ սալապատ է: Մուտքը արևելյան կողմից է, բայց այնքան ավերված, որ հնարավոր չեղավ ճշտել նրա բացվածքի նախնական չափերը: Ակներևաբար այդ մուտքը շարված է եղել խոշոր, սրբատաշ քարերով, այդ պատճառով այն լրիվ ավերված է: Շինության ներսում, հատակի վրա հանդիպում էր սև, մրապատ քարեր և ստվար մոխրաշերտ: Պեղումների ընթացքում հանդիպում էր բավական քանակի խեցեղեն՝ հասարակ կամ ջնարակապատ ու հախճապակե անոթների

<sup>1</sup> В. Хуратов, Городинце Самшвилде, տե՛ս Наука и жизнь, Москва, 1939г. № 1, էջ 35-36:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 36:

բռնակներ, պնակների բեկորներ, նստուկներ, ունկեր, ապակե ջրամանների բեկորներ և այլն: Առաջին հայացքից դրանք XV-XVI դարերի արտադրանք են: Հետևաբար այս անհայտ կառուցյալ ակներևաբար XV դարի է: Արտաքին, նախնական տպավորությունն այն է, որ շինությունը աշտարակ կամ մահմեդական մզկիթի մինարեի մնացորդներ են:

Այդ շենքի մնացորդները գտնվում են Ձորագետի կիրճի կողմում, քաղաքատեղիից դեպի միջնաբերդ տանող ճանապարհի աջ մասում: Ծանապարհի ձախ կողմում, մինչև Միսխանա գետի կիրճը, կա մի ընդարձակ տարածություն, որտեղ նկատելի են բնակելի տների մնացորդներ, փողոցների հետքեր, ինչպես նաև հասարակական շինությունների մնացորդներ:

Կիրճի անմիջապես եզրին գտնվում է խաչքարի պատվանդան, շուրջը խաչքարերի բեկորներ, արձանագրություններով: Այդ արձանագրությունները թերի են և որևէ հետաքրքիր տեղեկատվություն չեն պարունակում: Այստեղ կա նաև կտրվածքով երկթեք քար՝ խաչի քանդակով:

Կոլտնտեսության վերջերս կառուցված գոմի հյուսիսային կողմում, մոտ 10-15 մետր հեռավորության վրա, կան կիսաքանդ եկեղեցու ավերակներ: Այս շինության ներսի և դրսի լավ հղկված քարերը պոկված են: Տեղում պահպանվել են հիմնապատերը և պատերի շաղախը:

Քաղաքատեղիի այս հատվածում կարելի է հանդիպել նաև բնական ժայռաբեկորների հսկայական զանգվածների, որոնց վրա, առանձին տեղերում, փորված են սանդեր, փոքր անցքեր, ակներևաբար, ձիեր, խոշոր եղջերավորներ կապելու համար:

Շահաստանի ամբողջ տարածքում կարելի է տեսնել սրբատաշ քարեր, խաչքարերի բեկորներ և պատվանդաններ, կրաշաղախի, հասարակ ու ջնարակած խեցանոթների բեկորներ, ապակե առարկաների ու հախճապակու բեկորներ, ծածկի կղմինդրներ, կավե փողրակներ և թրծած աղյուսներ:

## ՔԱՂԱՔԻ ԱՐՎԱՐՁԱՆՆԵՐԸ

Լոռե քաղաքի արվարձաններից մեկը, ինչպես արդեն նշել ենք, «Կենտագեղ»-ն է: Այս ընդարձակ տարածությունը գտնվում է Միսխանա գետի ձախ ափի հարթության վրա, որի մեծ մասը քարքարոտ լինելու պատճառով չըջակա գյուղերի բնակչությունը չի վերածել մշակովի հողատարածություն:

Այստեղ առկա են հին շենքերի մնացորդներ և մի եկեղեցու ավերակներ: Այն շարված է կիսամշակ բազալտե հսկա քարերով: Արևելյան մասում ունի ընդարձակ խորան. մուտքը հարավից է: Եկեղեցու վրա որևէ արձանագրություն չկա: Եթե նկատի առնենք հատակագծի առանձնահատկությունները, առաջին հայացքից կարելի է ասել, որ այն կառուցվել է XII-XIII դարերում, այսինքն՝ Լոռե քաղաքի զարգացման ժամանակահատվածում: Եկեղեցուց բացի առկա են մի քանի խաչքարեր, որոնք կանգնեցված են Ձորագետ և Միսխանա գետերի խառնարանից ներքև, կիրճի ձախ եզրին:

Վերը հիշատակվածներից բացի, հնավայրի ամբողջ տարածության վրա կարելի է հանդիպել առանձին շինությունների աննշան մնացորդների, խեցանոթների բեկորների, մշակված քարերի և այլն: Առավել աչքի ընկնող հուշարձանների մնացորդների բացակայությունը բացատրելի է նրանով, որ միջնադարյան Հայաստանի քաղաքների արվարձանները, չնչին բացառությամբ (Անի, Կարին), սովորաբար զուրկ էին նշանակալի շենքերից:

Քաղաքի մեկ այլ արվարձանի տեղում հետագայում առաջացել էր Կիրովո գյուղը, այժմ՝ Ամրակից: Այստեղ, ի տարբերություն մյուս մասերի գյուղացիները իսպառ վերացրել են այն բոլոր մնացորդները, որոնք կարող էին հիշեցնել պատկանելությունը հին քաղաքին: Այս տարածքի մասին առայժմ ոչինչ հնարավոր չէ ասել, բացի այն իրողությունից, որ միջին դարերում բնակեցված է եղել: XX դարի սկզբներին Լոռե բերդ այցելած հնագետ-ազգագրագետ Եր-



վանդ Լալայանն այս արվարձանում հիշատակում է երկու քանդված եկեղեցիների գոյություն մասին:<sup>1</sup>

Այստեղից սկսվող ոլորապատույտ արահետն իջնում է Ձորագետի կիրճը, որը դեռևս միջնադարից եղել է միակ գործող ճանապարհը: Նրա ոլորաններից մեկում երեսի վրա ընկած վիճակում պահպանվել է մի գեղեցիկ խաչքար, որը հնարավոր է վրան արձանագրություն ունենա: Համապատասխան միջոց չգտանք այն շրջելու համար: Արահետը վերջանում է մի մեծ կամրջով, որից այժմ մնացել է միայն հենարանը՝ խելը (չափերն են 4,6x3,35մ): Դատելով խելի չափսերից, մասնագետները գտնում են, որ կամուրջն ունեցել է 4,5-5 մետրի հասնող լայնություն:<sup>2</sup> Նրա խելի հարավային ճակատին բարձրաքանդակ՝ առյուծի պատկերն է:

Խնդրո առարկա կամուրջի, ըստ ճարտարապետ Վ. Հարությունյանի, պահպանված խելի վրա պատկերված առյուծը կամուրջը կառուցող Ձաքարյանների տոհմական զինանշանն է: Դրանով Վ. Հարությունյանը կամրջի կառուցման ժամանակաշրջանը սահմանում է XIII դարի առաջին կեսը, երբ Լոռեին տիրում էին Ձաքարեն և իր ժառանգները: Կարծում ենք, որ այս տեսակետը համոզիչ չէ: Առյուծը առաջին հերթին Բագրատունիների թագավորական արքայատոհմի զինանշանն էր: Վկա. Անի քաղաքի պարսպի վրա պատկերված առյուծի բարձրաքանդակը, որը մասնագետների համոզիչ կարծիքով X դարի 80-ական թվականների գործ է, երբ Սմբատ Երկրորդն ավարտեց քաղաքի երկրորդ շարք պարսպների շինարարությունը: Իսկ Լոռեի տեր Կյուրիկյան թագավորները նույնպես Բագրատունի էին, հետևաբար Լոռե քաղաքի մոտ կառուցված կամրջի խելի վրա առյուծը պատկերող շինարարների պատվիրատուները կարող էին լինել նաև Կյուրիկյան թագավորները (Դավիթ Անհողին, Կյուրիկե Երկրորդ և այլն): Գտնում ենք, որ կամուրջը կարելի է համարել ոչ թե XIII դարի գործ, այլ չի բացառվում, որ այն լինի XI-XII դարերի արգասիք: Լոռեն այդ դարերում բազմա-

մարդ էր և քաղաքը նոր ձևավորվող արվարձանների հետ կարող էր կապվել միայն համապատասխան երթևեկի՝ կամուրջների առկայություն դեպքում:

Կամրջի խելի երկու կողմերին, կամարի հենման կրունկներից քիչ ցած, կան գոտիներ, որոնք կազմում են գլանի քառորդ մասը: Դրանց վրա ըստ Վ. Հարությունյանի «հավանաբար կամուրջը կառուցելու ժամանակ հենվում էին երկու կողմերի թաղերի ողնակները»:<sup>1</sup>

Այդ կամրջից 30-40 մետր վերև՝ դեպի Միսխանա գետը, գտնվում է կիսավեր բավականին մեծ, կլորավուն մի աշտարակ: Այն կառուցված է գետի ափին, ունի մի քանի դիտակետեր՝ երկու գետերի խառնարանը հսկող զինվորների տեսադաշտում պահելու համար: Աշտարակն ունի մի քանի հրակնատներ, որոնք հավանաբար, բացվել են XVI դարից հետո, երբ հրագենը մուտք գործեց նաև Անդրկովկաս: Նկատելի են այդ բացվածքների արհեստական լինելը, քանի որ դրանց շուրջ շարվածքները ակնհայտ տարբերվում են հնից:

Աշտարակը 12-15 մետր բարձրություն ունեցող կլոր շինություն է: Կիսաշրջանաձև է. այն մեկ կողմով կցակառուցված է բնական ժայռին: Հավանաբար այս աշտարակի մասին է, որ Իսահակ Հարությունյանը XIX դարի վերջին գրել է. «Ձորագետի և Միսխանայի միանալու տեղն եղած շավիղն կոչվում է Ջրգողի ճանապարհ, որ մի գաղտնի անցք է բերդի միջից բերդը պաշարված ժամանակ երևի այստեղից են ջուր կրելիս եղել: Շավիղի մուտքը ամրացված է ամուր բուրգով»:<sup>2</sup>

Աշտարակի, կամ ինչպես Ի. Հարությունյանն է ասում, բուրգի մեջ կա սառը ջրի բավականին հորդառատ աղբյուր: Ներսում, հատակի վրա կան շարվածքի ինչ-որ հետքեր՝ հավանաբար աշտարակը հսկող մարտիկների հանգրվանելու հարմարություններ են եղել: Պատերի որոշ խոշոր հարթ քարերի վրա փորված են փոքր խաչեր:

Աշտարակի ժայռին հենված կողմից սկսվում է ամրոցի գաղտնուղին: Դրանից մի փոքր վեր, դարավանդի վրա առկա է հսկայական չափերի մի քանդակազարդ քար (չափերն

<sup>1</sup> Երվանդ Լալայան, Բորչալուի գավառը, էջ 71:

<sup>2</sup> Վ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Երևան, 1960, էջ 95:

<sup>1</sup> Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 96:

<sup>2</sup> Ի. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 248:

են. երկարութիւնը՝ 175սմ, լայնքը՝ 94սմ, հաստութիւնը՝ 31սմ, տե՛ս Աղ. XI (2)), երկու մասի բաժանված: Ճարտարապետ Վ. Հարութիւնյանը իր՝ Լոռեին նվիրված հոդվածում<sup>1</sup> այն կարծիքին է, որ դա գաղտնուղու մուտքի դուռն է: Վարկածը համոզիչ չէ. թերևս հետագայում այն օգտագործվել է իբրև այդպիսին: Դրանով կարելի է բացատրել տվյալ քանդակագործ քարի առկայութիւնը գաղտնուղու ելքի մոտ: Կասկած չի հարուցում այն, որ սկզբնապես այդ մշակված վեմը հանդիսացել է խոշոր կառուցցի ճակատակալ քար: Քանի որ քարի վրա արված քանդակները ոչ թե ուղղահայաց են՝ վերից վար, ինչպես ենթադրելի է դուռ լինելու պարագայում, այլ հորիզոնական՝ երկարութեան նկատմամբ՝ աջից ձախ:

Քարի վրա աջ և ձախ անկյուններում պատկերված են երկրաչափական կախիկներ սուր ծայրերով, որոնք կախված են ձեռքեր հիշեցնող քանդակագործներից: Իսկ նրանց միջև արված են բուսական և երկրաչափական ռելիեֆ գարդեր: Քանդակագործներից ներքև քարի երկարութեամբ երկու ռելիեֆ կամարների միջև ձգվում է գոգավոր հիանալի մշակումով բուսական և երկրաչափական գոտի, որն ավելի քան հավաստում է այն իրողութիւնը, որ նման մշակումը չի կարող լինել մուտքի դուռն գարդաքանդակ: Գոտուց ներքև փոս ընկած հարթութիւն է, ուր սովորաբար միջին դարերում փորագրվում էր կառուցվող շինութեան շինարարական արձանագրութիւնը: Այս ամենն առնված է երեք կողմերից ուղղանկյուն մշակում ունեցող շրջանակի մեջ:

Ինչ վերաբերում է գաղտնուղուն, ապա այն բարձրանում է դեպի վեր՝ ամրոց, ոլորապտույտ ճանապարհով, հարմարվելով տեղանքի ընձեռած հնարավորութեանը: Հաճախ ժայռը կտրել են և ճանապարհ հարթել, որոշ տեղերում աստիճաններ կառուցելով, մնացած մասերում թեքութիւն տալով: Այդ ճանապարհի զգալի մասը այժմ ավերված է, սակայն հնարավոր է վերականգնել նրա նախնական մոտավոր չափերը: Լայնութիւնը 120-130սմ է, պահպանված պատերի

բարձրութիւնը տարբեր տեղերում տարբեր է: Այն տատանվում է 80 սմ-ից մեկ մետրի միջև: Որոշ տեղերում ժայռի չգոյութեան հետ կապված շինարարները սալաքարերով արհեստական պատեր են շարել:

Գաղտնուղին իր ժամանակին ակներևաբար ծածկված է եղել սալաքարերով կամ արհեստական այլ ծածկով, որի բարձրութիւնը հնարավորութիւն էր տալու նրա մեջ կռացած վիճակով տեղաշարժելուն: Հետևաբար այն պիտի ունենար ոչ պակաս քան 120-130սմ բարձրութիւն: Այդ բարձրութիւնը անհրաժեշտ էր հատկապես ջուր կրողների համար, քանզի գաղտնուղու հիմնական նպատակը ջրով ապահովելու խնդիրն էր, այնուհետև արտաքին աշխարհի հետ կապ ունենալը: Բացառված չէր, որ ջուրը ամրոց էին բարձրացնում կժերով՝ ուսերին դրված: Գաղտնուղու թեքութիւնը միանգամայն բավարար էր գրաստի և մարդկանց շարժման համար: Հավանաբար այս գաղտնուղով է 1177 թվին վրաց թագաժառանգ Դեմետրեն հեռացել ապստամբ Իվանե Օրբելուց, անցնելով Գեորգի Երրորդի կողմը, ինչի մասին հաղորդում են ժամանակի պատմիչները:

Ամրոցի ներսում գաղտնուղին ավարտվել է արհեստական կերպով հարմարեցված դարավանդի տակ, չունենալով այդ նպատակի համար հատուկ որևէ կառուցց, ինչպիսին առկա է Բջնի ամրոցում: Հավանաբար ելքը այնքան հեռու էր դիմացի սարալանջերից, որ ապահով էր թշնամու հարվածներից:

Գաղտնուղիներ են ունեցել Անին, Կարսը, Էրզրումը, Մաղասբերդը, Բջնին, Ամբերդը և շատ այլ բերդեր ու ամրոցներ: Դեռևս Երվանդաշատ քաղաքի կառուցմանը դառնալով պատմահայր Մովսես Խորենացին գրում է. «Պարսպէ զբլուրն, և ի ներքսագոյն քան զպարիսպն ընդ բազում տեղիս կտրեալ զքարինսն մինչև ի յատակս բլրոյն հաւասար գետոյն, մինչև դիմել ջուրց գետոյն ի փորուածն, յըմպելեաց պատրաստութիւն»:<sup>1</sup>

Հայաստանում գաղտնուղիներից ամենից ավելի լավ պահպանվել է Բջնի ամրոցինը, որն սկիզբ է առնում ստորին

<sup>1</sup> Վ. Հարութիւնյան, նշվ. հոդվածը, էջ 68:

<sup>1</sup> Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, գիրք երրորդ, ԳԼ. ԼԹ, էջ 165:

բերդից կամարածե շարվածքով. ոլորապտույտ ճանապարհով իջնում է Հրազդան գետի ափը, դուրս չգալով արտաքին աշխարհ, ավարտվում է ստորգետնյա փոսի մեջ գոյացած երկու աղբյուրների մոտ, որոնցից մեկն ուներ քաղցրահամ, մյուսը՝ հանքային ջուր: Այսօր Բջնի հանքային ջրի գործարանը կառուցված է այդ տեղից ընդամենը 50 մետր հեռավորության վրա: Բջնի ամրոցի գաղնատուղին առաջինը փորձել է ուսումնասիրել մեծանուն գիտնական Հովսեփ Օրբելին դեռևս 1927թ., իսկ Երևանի պետական համալսարանի արշավախումբը՝ 1979-1980 թվականների պեղումների ժամանակ:

Ձորագետին Միսխանայի միախառնվելու տեղում վերը հիշատակված աշտարակի կամ բուրգի դիմաց, Միսխանա գետի մյուս ափին նկատելի են շինությունների հետքեր, որոնց ինչ լինելը այժմ դժվար է որոշելը: XX դարի սկզբում հավանաբար դրանք առավել լավ էին պահպանված, որ հնավայր այցելողները պնդում են, թե այնտեղ գործել են ջրաղացներ: Մասնավորապես Ի. Հարությունյանը գրում է. «Այդ մուտքի դիմաց (նկատի ունի աշտարակը – Ի.Ղ.) գետի մյուս ափին երևում են մոտ յոթ ջրաղացների հետքեր»:<sup>1</sup> Նույն հեղինակը քիչ հետո ավելացնում է. «Ձորագետի աջ կողմը, ժայռի մեջ երևում է մատուածե շինվածք: Ավանդաբար պատմում են, որ այստեղ ապրելիս է եղել մի ճգնավոր շարունակ արքայի համար աղոթելիս: Այդ ճգնավորը գիշեր-ցերեկ աշխատելով ժայռերի մեջ առուներ է փորել և գետից ջուր տանելով այդտեղ ագարակ (թերևս այգի – Ի.Ղ.) է տնկել»:<sup>2</sup> Իրոք ձորում նկատելի են որոշ հարթ տարածքներ, որոնք կարող էին մշակովի հողակտորներ համարվել:

Ձորագետի աշտարակի մոտից, Միսխանա գետի հոսանքին հակառակ ուղղությամբ, հետիոտն մի ճանապարհ տանում է 200-220 մետր հեռու ընկած կամուրջը: Սա միակ կանգուն կամուրջն է, որ մինչև օրս օգտագործվում է բնակչության կողմից: Կամուրջը միաթռիչք է, շարված բազալտե հղկված քարերից: Գյուղացիների պատմելով՝ 1918 թվականի ջրհե-

ղեղի ժամանակ ջուրը ծածկել է կամուրջը: Այդ արհավիրքին դիմացել է կառույցը, տուժել է միայն աջ կողմի հենասյան մի մասը, որը վերանորոգվել է հետագայում:

Կամուրջը կառուցված է գետի երկու ափերի ժայռերի մեծ գանգվածների վրա: Ժայռաբեկորներն իրարից շուրջ 9 մետր հեռավորության վրա են: Այդ ժայռերը ծառայել են իբրև անշարժ հիմքեր և գոյացրել միաթռիչք կամար: Թաղի կամարը և ճակտոնը շարված են խնամքով, ամրացված բարձրորակ շաղախով: Կամուրջը կանգուն է մնացել շուրջ 800 տարի: Միայն 1918 թվականի ջրհեղեղից վնասված հատվածները նորաբնակները շարել են անշաղախ շարվածքով, կոպտաշատ քարերով: Վերջին տարիներին կամարը ենթարկվել է մասնագիտական վերանորոգման և ստացել իր նախնական տեսքը:

Կամրջի թռիչքը կազմում է 8,5մ, կամարի սլաքը՝ 3,8մ, իսկ լայնությունը՝ 2,8 մետր: Կամարը շարված է երկու շարքով, 40-45սմ լայնությամբ, որի առաջին շարքը 10սմ ետ է երկրորդ շարքի նկատմամբ: Դեռևս 1960-ին այս կամուրջը ուսումնասիրվել է ճարտարապետ Վ. Հարությունյանի կողմից և տեղ է գտել նրա աշխատության էջերում:<sup>1</sup>

Կամրջի երկու կողմից սկսվում են ոլորապտույտ ճանապարհներ, որոնցից մեկը տանում է քաղաքատեղի և հասնում միջնաբերդի մուտքին, մյուսը՝ «կենտագեղ» կոչվող արվարձան: Այդ ճանապարհի աջ կողմում, կամրջից քիչ հեռու, ժայռի վրա փորագրված են խաչեր, մի տեղում՝ ինը, մյուսում՝ երեք: Հավանաբար դրանք ճանապարհացույց նշաններ են: Նկարագրված բոլոր ճանապարհները մինչև օրս օգտագործվում են բնակիչների կողմից:

«Կենտագեղ» արվարձանում նշմարվում են հին տների ու փողոցների հետքեր, իսկ նրա կենտրոնական մասում կիսով չափ կանգուն է մի կառույց, որը հավանաբար հոգևոր նշանակութուն է ունեցել: Պահպանվել են կառույցի բոլոր չորս պատերը մուտքերով հանդերձ: Արևելյան կողմի պատը կի-

<sup>1</sup> Ի. Հարությունյան, նշվ. հոդվածը, էջ 248:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>1</sup> Տե՛ս Վ. Հարությունյան, նշվ. հոդվածը, էջ 93-94:

սով չափ քանդված է, քարերը թափված են: Դա է պատճառը, որ հնարավոր չէ առանց պեղման-մաքրման աշխատանքների պնդել արդյոք արևելյան կողմում բեմ ունի այդ կառույցը, թե ոչ: Շրջապատում հանդիպում են մշակված քարեր, խաչ-քարերի ջարդոտված բեկորներ, քիվեր և ծածկասալեր: Վերջիններիս գոյությունը ապացույց է այն բանի, որ Լոռե ամբողջի արվարձանները իրենց ծաղկուն շրջանում նույնպես ունեցել են հիմնավոր կառույցներ, կոմունալ կենցաղային շինություններ և բազմամարդ բնակչություն:

Լոռե քաղաքի շրջակա գյուղերի բնակիչների պատմելով, քաղաքի արվարձաններում հաճախ հայտնաբերվում են ամբողջական կարասներ, պղնձե առարկաներ, ոսկե դրամներ, զարդեր, կնիքներ և տեղական նյութական հին մշակույթն արտացոլող բազմաթիվ այլ առարկաներ:

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

### ՊԵՂՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԳՏԱԾՈՆԵՐԸ

Պատմական որևէ ժամանակաշրջանի երկրի, գավառի, տնտեսական կյանքի, արհեստների, առևտրի, մշակութային կյանքի կարևոր տեղեկատվություն, զարգացման մակարդակի կարևոր չափանիշ են նյութական մշակույթի մնացորդները, որոնք առարկայորեն ոչ միայն լրացնում, այլև ամբողջացնում են տվյալ տարածքի ժողովրդի կյանքի, կենցաղի մասին մեր ունեցած պատկերացումները: Պեղումների շնորհիվ հայտնաբերված գտածոները ցուցադրում են այն ձեռքբերումները, որոնք առկա են տվյալ գավառի արհեստագործության ոլորտում: Պրոֆեսոր Կարո Ղաֆադարյանը<sup>1</sup>, դառնալով ընդհանրապես միջնադարյան արհեստագործությանը, իրավացի էր, երբ գտնում էր, որ արհեստային արտադրանքը կոչված էր բավարարելու ոչ միայն շուկայի օրավուր աճող, այլև հասարակ աշխատավոր ժողովրդի առտին պահանջները:

Համահայկական, համազգային տնտեսական կյանքի ոլորտում անմասն չի եղել Տաշիր-Ձորագետը, առավել ևս վերջինիս տնտեսական, մշակութային ու վարչական կենտրոն հանդիսացող Լոռե բերդաքաղաքը: Այստեղ պեղումներով հայտնաբերված գտածոները հավաստում են Գուգարքի արհեստավարժ արհեստավորների նշանակալից ներդրումը միջնադարյան Հայաստանի տնտեսական կյանքի ամենատարբեր բնագավառներում:

<sup>1</sup> Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Հ. Ա., Երևան, 1952, էջ 154:

## ՄԵՏԱՂԵ ԱՌԱՐԿԱՆԵՐ

Հայաստանը, լինելով Առաջավոր Ասիայի մետաղամշակույթյան հնագույն կենտրոններից մեկը, բնականաբար, այդ արհեստն այստեղ իր ճյուղերով միջին դարերում գտնվելու էր զարգացման բարձր մակարդակի վրա: Դրան նպաստող հանգամանք էին Հայաստանում հնուց ի վեր հայտնի մետաղական տարբեր հանքերը՝ առավել ևս Գուլգարք նահանգում, ինչի մասին հաղորդում են հայ և օտար պատմիչներն ու ճանապարհորդները: IX-XIII դարերում Հայաստանի տնտեսությունը չէր կարող չընդունել մետաղամշակույթյան արհեստի ոլորտը: Այլ խնդիր է, որ հայկական միջնադարյան հնավայրերի պեղումներից հայտնի նյութական մշակույթի մեջ մետաղական ծագում ունեցող արհեստային արտադրանքը համեմատաբար փոքր քանակ է կազմում: Նման իրավիճակը հիմք չի տալիս դատել այդ արհեստի՝ տնտեսության մեջ երկրորդական դեր ունենալու մասին:

Լոռե բերդաքաղաքի պեղումների միջոցին ի հայտ եկած բազմապիսի, զգալի թիվ կազմող գտածոների շարքում նշանակալից են այն մետաղե իրերն ու առարկաները, որոնց գերակշիռ մասը երկրորդական գործածության, վերամշակման արգասիք են: Գուլգարքը թեև հարուստ է մետաղի հանքատեսակներով, այնուհանդերձ, ինչպես ցույց է տալիս մետաղե իրերի, վերջինիս տեսականի քննությունը, այստեղ զգալի տեղ են զբաղեցրել նաև այն նմուշները, որոնցից արհեստավարժ արհեստավորներն ամենատարբեր տեխնիկական հնարքներ կիրառելով, վերստին կերտել են անհրաժեշտ կենցաղային իրեր, առարկաներ, զինատեսակներ: Ինչպես ցույց են տալիս պեղումներով հայտնաբերված նմուշները, մետաղե իրեր պատրաստելիս, հայ հմուտ վարպետները դիմել են մետաղը վերամշակելու վաղնջական ժամանակներից հայտնի կռելու, կոփելու, դրվագելու ու դրոշմելու եղանակներին:

Լոռե բերդաքաղաքի պեղումների ընթացքում հայտնաբերված մետաղե առարկաները պատրաստված են երկաթից, պղնձից ու բրոնզից: Այդ թվում՝ կան աշխատանքային գործիքներ, տարբեր զինատեսակներ, փայտե դռների ծխնիներ,

փականներ, երկաթե ձողեր, պայտեր, գամեր, անորոշ առարկաներ, ինչպես նաև զարդեր, պերճանքի առարկաներ, մասնավորապես՝ ապարանջաններ, գտածոներ, որոնք ցուցադրում են մետաղագործության դերը միջնադարյան Հայաստանի քաղաքների, բերդաքաղաքների արհեստային արտադրության տեղն ու դերը քաղաքային, ինչպես նաև վերջիններիս շրջակա գյուղական բնակչության կենցաղի ոլորտում:

Հնավայրում հայտնաբերված մետաղագործական արտադրանքի նմուշները սակավաթիվ են: Այդ իրողությունը բացատրելի է: Լոռե-բերդ հնավայրում լայն ընդգրկում չեն ունեցել, մասշտաբային չեն եղել դաշտային հնագիտական աշխատանքները: Համոզված ենք, որ խնդրո առարկա հնավայրի շարունակվող հնագիտական ուսումնասիրության միջոցով կհարստանա մետաղական նյութի հավաքածուն: Քանզի մատենագրական նյութերը բարձրաձայնում են այն իրողությունը, որ Գուլգարքի բնակչության կենցաղում, արհեստային արտադրության մեջ, խեցեղեն անոթներին զուգահեռ, կարևոր տեղ է զբաղեցրել նաև մետաղագործությունը:

Երկաթե առարկաներ: Վաղջնական ժամանակներից երկաթի կիրառությունը բնակչության կենցաղում վճռական նշանակություն է ունեցել, մանավանդ՝ երկրագործության մեջ: Հայաստանը գյուղատնտեսական երկիր է, Գուլգարքն՝ առավել ևս: Գուլգարքի արհեստային արտադրության կենտրոն հանդիսացող Լոռե ամրոց-քաղաքի արհեստավորները՝ հատկապես դարբինները, պատրաստել են մեծ քանակությամբ երկրագործական աշխատանքային գործիքներ՝ գուլթանի և արորի խոփեր, գերանդի, մանգաղ, եղան, բահ, սայլի երկաթե մասեր, դարբնի սալեր, կռաններ, տարբեր չափերի մուրճեր, ունելիներ, կացիններ, բրիչներ, տարբեր մասնագիտության տեր արհեստավորների կողմից օգտագործվող գրեթե բոլոր տեսակների երկաթե գործիքներ. շենքերին ու շինարարությանն անհրաժեշտ մետաղական հանգույցներ, վանդակներ, փայտե կահույքի ու դռների ծխնիներ, օղեր, տարբեր ձևերի և չափսերի գամեր, պայտեր, կենցաղային նշանակության ամենատարբեր իրեր: Բնականաբար, այս ամենին պետք է ավելացնել զինաբախումներին անհրաժեշտ զինատեսակներ,

պաշտպանական գրահներ, որոնք նույնպես պատրաստվում էին երկաթից:

Լոռե բերդաքաղաքում կատարված հնագիտական պեղումներից գտնված երկաթե առարկաներից առանձնանում է բահը (2576/15), որն ի հայտ է եկել առաջին բաղնիքի հանդերձարանի հյուսիսային պատի տակ՝ արտաքուստ, շուրջ 90–100սմ խորության վրա: Բահն ունի ուրույն տեսք, սակայն չի տարբերվում ժամանակամերձ այլ հնավայրերից հայտնի բահերից, մասնավորապես նկատի ունենք Դվինի միջնաբերդում 1949թ. գտնված նմուշը:<sup>1</sup>



Նկար 1


Լոռեում գտնված բահի աշխատող մասը նեղ է, սուր. ունի եռանկյուն տեսք (նկ. 1): Ինչպես Կ. Ղաֆաղարյանն է գտնում, նման տիպի բահերը հավանաբար պատկանել են թափչակավոր բահերի տեսակին: Բահի բանող մասի վրա նկատելի են կենտրոնից հավասարաչափ հեռավորության վրա գտնվող երկու կլոր, ոչ մեծ անցքեր: Անցքերի առկայությունը բացատրելը դյուրին չէ: Հնարավոր է, որ դրանք արվել են բահը երկրորդական նշանակությամբ օգտագործելու նպատակով կամ ժամանակին դարբնի կողմից կատարված նորոգության արդյունք են: Բահի կոթառի

մասը աչքի է ընկնում իր զանգվածեղությամբ և երկարությամբ՝ 16սմ է: Հնարավոր է, որ պատրաստող դարբինը նկատի է ունեցել թափչակավոր բահերին բնորոշ առանձնահատկությունը և փայտե թափչակի համար հարմարեցրել է անհրաժեշտ տարածություն, միաժամանակ ապահովել նրա օգտագործման ժամանակ շուտ կոտրվելու խնդիրը:

Բահի կոթառի առաջնային մասում պահպանվել է երկաթե գամի անցքը, որով կոթն ամրացվել է կոթառին: Կոթառը ստացել են կռածո մետաղին համապատասխան տեսք տա-

լով: Նրա երկու եզրերը մոտեցրել են իրար և զոդել: Այն ունի հինգ սմ տրամագիծ, որն ապացույց է բահի կոթի շոշափելի հաստության և երկարության մասին: X դարում Վասպուրականի Գագիկ թագավորի՝ Աղթամար կղզում կառուցած Սուրբ Խաչ տաճարի բարձրաքանդակներում, խաղողի մշակման տեսարանում պատկերված հար և նման բահի օրինակի կոթը նույնպես անհամեմատ երկար է և գերազանցում է այն բանեցնող շինականի հասակը:<sup>1</sup>

Հայաստանի միջնադարյան հնավայրերի պեղումներից բահերի օրինակներ չատ չեն գտնվել:<sup>2</sup> Նման տիպի բահի նմուշ գտնվել է նաև Փայտակարանի (Օրեն Կալա) պեղումների ժամանակ:<sup>3</sup> Վերոհիշյալ բահը ոչ միայն իր արտաքին տեսքով է նման մեր հայտնաբերած օրինակին, այլև դրանք համընկնում են չափերով:



Նկար 2

Երկաթից պատրաստված գյուղատնտեսական աշխատանքային մյուս գործիքը հող փորելու դաշտավարական քաղհան-ուրագն (թակուջակ) է (2576/132, նկ. 2), որոնք մինչև վերջերս էլ լայն կիրառություն ունեն միջինասիական երկրներում՝ որպես բահի փոխարեն հողը մշակելու և քաղհանի տարածված գործիք: Քննություն առարկա հողուրագը գտնվել է նույն տեղում, ինչ վերը նկարագրված բահը՝ առաջին բաղնիքի պեղումների ժամանակ: Թակուջակ-հողուրագը բավականին լավ է պահպանվել: Նրա բանող մասը տափակ է և թեքությամբ սրված, ունի 13սմ լայնություն: Կոթառի մասը ուրագի հետ կազմում է մի ամբողջություն. կոթառի տրամագիծը 3,5սմ է: Վերջինիս ամրացվել է փայտե կոթը: Հողուրագ-թակուջակ պատրաստող դարբինը կիրառել է կռելու

<sup>1</sup> И. Орбели, Избранные труды, том 1, Москва, 1968, ст. 138–139, табл. XXXI:

<sup>2</sup> Կ. Ղաֆաղարյան, նշվ. աշխ., էջ 156–157: Ի. Ղարիբյան, Գլաձոր, Երևան, 1983, էջ 69:

<sup>3</sup> Н. Минкевич-Мустафаева, Раскопки на городской стене Орен-Кала в 1953–1954 гг., տե՛ս МИА 67, ст. 163–164, նկ. 18 (8):

<sup>1</sup> Կ. Ղաֆաղարյան, նշվ. աշխ., էջ 156, նկ. 138:

և կոփելու տեխնիկական հնարը: Նման հողուրագներ հայտ-  
նի են նաև Գառնիից:<sup>1</sup>

Հողուրագների սակավությունը Հայաստանի միջնադար-  
յան հնավայրերում բացատրվում է նրանով, որ ավելի գոր-  
ծածական է եղել բահը: Այսօր էլ հայ շինականը հողուրագը  
հիմնականում կիրառում է քաղհան անելիս կամ մարգ-ածու  
ձևավորելիս:

Գյուղատնտեսության մեջ օգտագործվող աշխատանքային  
գործիքների թվագրումը բավականին դժվարություն է հա-  
րուցում: Դրանք Լոռե բերդաքաղաքում գտնվել են առաջին  
բաղնիքի հանդերձարանի արտաքին պատի տակ, չունեն  
հստակ շերտագրություն, ուղեկցող թվագրվող նյութեր: Սա-  
կայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ նման բահերը  
և հողուրագ-թակուղակները գործածության մեջ են եղել եր-  
կար ժամանակ, ուստի այդ հանգամանքը հիմք է տալիս  
ուսումնասիրության առարկա աշխատանքային գործիքները  
վերագրել XI-XIII դարերին:

Լոռե ամրոց-քաղաքի պեղումներից գտնված երկաթե աշ-  
խատանքային գործիքների մեջ ուշագրավ է վերոհիշյալ բաղ-  
նիքի պեղումներից հայտնի հյուսնի ոտնուրագի (2576/37)  
գործող մասը: Ինչպես հայտնի է, փայտամշակության մեջ  
Անդրկովկասում հյուսնի ամենաօգտագործելի գործիքներից  
մեկը ձեռնուրագն է, որի մի քանի նմուշներ գտնվել են  
Դվին և Գառնի հնավայրերի համապատասխան (IX-XIII դդ.)  
շերտերից:<sup>2</sup> Որքան մեզ հայտնի է, մինչև վերջերս դեռևս չի  
գտնվել ոտնուրագի որևէ նմուշ:

Հանրահայտ է, որ մինչև XX դարի սկիզբը հյուսն արհես-  
տավորները փայտե գերաններ մշակելու համար օգտագոր-  
ծում էին ոչ միայն սղոցն ու ձեռնուրագը, այլև ոտնուրագը:  
Հյուսնը մշակող գերանը (փայտը) դնում էր գետին, մի ոտ-  
քով կանգնում նրա վրա, երկու ձեռքով բռնում ոտնուրագի  
բավականին երկար և քիչ թեքությունով մշակված պոչ-բռնա-

կը ու մարմնին որոշ թեքություն տալով, թեթևակի կռանա-  
լով, տաշում-մշակում էր փայտը: Ոտնուրագի օգտագործու-  
մը պահանջում էր խիստ զգուշավորություն, մեծ հմտու-  
թյուն: Դրանով պիտի բացատրել նման ուրագների գործա-  
ծության համեմատաբար սակավադեպ կիրառությունը:

Լոռե ամրոց-քաղաքում ոտնուրագի առկայությունը պատ-  
ճառաբանվում է նրանով, որ քաղաքի շրջակայքը հարուստ  
էր դարավոր անտառներով, որոնք հումք էին մատակա-  
րարում հյուսնությանը զբաղվող արհեստավորներին:

Ոտնուրագի պահպանված մասը թերի է, մեզ է հասել մի-  
այն գործող տափակ թաթը: Ոտնուրագի թաթը գտնվել է մի  
շարք երկաթե աշխատանքային գործիքների ուղեկցությամբ՝  
առաջին բաղնիքի հանդերձարանի արտաքին պատի տակ  
խմբված վիճակով: Ոտնուրագի թվագրման խնդիրը դժվարա-  
նում է նրանով, որ շերտագրությունը հստակ չէ, ուղեկցվող  
նյութը՝ նույնպես: Կասկածից վեր է, որ ինչպես գյուղատն-  
տեսական գործիքները, ոտնուրագը նույնպես XI-XIII դարե-  
րի արտադրության արգասիք է:



Նկար 3

<sup>1</sup> Բ. Առաքելյան, Գր. Կարախանյան, Գառնի III, էջ 48: Հ. Պետրոսյան, Գառնին IX-XIV  
դարերում, Երևան, 1988, էջ 39, աղ. XV (3):

<sup>2</sup> Կ. Ղաֆաղարյան, նշվ. աշխ., էջ 157, նկ. 139: Բ. Առաքելյան, Գր. Կարախանյան,  
նշվ. աշխ., էջ 48, նկ. 6 (1):

Միջին դարերում գործածության մեջ եղած բազմատեսակ գեներրից Լոռե քաղաք-ամրոցի պեղումների ժամանակ գտնվել են դաշույններ և նետասլաքներ (նկ. 3 (3)): Գտնված նետասլաքները բազմազան են թե՛ իրենց ձևերի, և թե՛ չափերի առումով (2577/7 և այլն): Նմանօրինակ նետասլաքների նմուշներ հայտնի են Դվին,<sup>1</sup> Անի,<sup>2</sup> Գառնի,<sup>3</sup> Ամբերդ,<sup>4</sup> Բջնի,<sup>5</sup> ինչպես նաև հարևան Վրաստանի և Ադրբեջանի ժամանակամերձ հնավայրերից:<sup>6</sup>

Լոռե բերդաքաղաքի տարածքում կատարված պեղումների միջոցին գտնված գեներրի մյուս տեսակներից գտնվել են դաշույնի երկու նմուշ: Մեկը (2576/11), դատելով պահպանված մասի չափերից, բավականին մեծ է: Դաշույնը երկսայրի է, պահպանվել է միջնամասը, կտրտված են երկու ծայրերը: Դաստակից պահպանվել է աննշան մասը (նկ. 3 (1-2)):

Դաշույնի երկարությամբ անցնում է բավականին խոր ակոս, որը որոշակի ամրություն էր հաղորդելու դաշույնին, այն դարձնելու էր առավել ճկուն: Բ. Առաքելյանը Գառնիում գտնված դաշույններին դառնալով, գտնում է, որ երկսայրի դաշույնները Հայաստանի դեպքում ավելի վաղ ծագում ունեն, քան միասայրիները<sup>7</sup>: Լոռեում ի հայտ եկած երկսայրի դաշույնը կարող է թվագրվել XI-XII դարերով, քանի որ քաղաքը հիմնադրվել է XI դարում: Դաշույնի հետ միևնույն շերտում գտնված վրացական XII դարում հատված պղնձե դրամի առկայությունը հիմք է տալիս հանգելու նման թվագրման օգտին: Լոռեում հայտնաբերված դաշույնը հիշեցնում է սուր զինատեսակը:

Միջնադարյան ժամանակներով թվագրվող սրերից Հայաստանում մեզ հայտնի է միայն Անիում գտնված օրինակը,

<sup>1</sup> Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 160-163, նկ. 142-143:

<sup>2</sup> Ե. Մուշեղյան, Անի քաղաքի պեղումներից հայտնաբերված առարկաներ, Երևան, 1992, էջ 135-139, տախտակ XXXIV, 1-8, և տախտակ XXXVI, 1-2:


<sup>3</sup> Բ. Առաքելյան, Գր. Կարախանյան, նշվ. աշխ., էջ 50, նկ. 9:

<sup>4</sup> Ս. Հարությունյան, Անրեբդ, Երևան, 1978, էջ 84-85:

<sup>5</sup> Բջնի ամրոցի պեղումների նյութերը հրատարակված չեն:


<sup>6</sup> Н. Минкевич-Мустафаева, նշվ. աշխ., էջ 169, տե՛ս, МИА 67:

<sup>7</sup> Բ. Առաքելյան, Գր. Կարախանյան, նշվ. աշխ., էջ 50:



0 — 1

Նկար 4



0 — 1

Նկար 5




որն ունի 96սմ երկարություն<sup>1</sup> և հեռավոր Ուրալից<sup>2</sup> հայտնի մեկ այլ նմուշ՝ թերի վիճակով, որոնց արտաքին տեսքը խիստ տարբերվում է Լոռեում գտնված նմուշից: Կարծում ենք, որ Լոռեի նմուշը երկսայրի դաշույն է, քան՝ սուր:

Դաշույնի մյուս օրինակը միսայրի է: Այն գրեթե չի տարբերվում հայկական միջնադարյան հնավայրերում գտնված դաշույնների նմուշներից: Այն մշակութային շերտը, ուր գտնվել է վերոհիշյալ միսայրի դաշույնը, թվագրվում է XII-XIII դդ.:

Լոռե հնավայրի պեղումներից հայտնի երկաթե առարկաների, գեներքերի ու աշխատանքային գործիքների շարքում առանձնանում են շուրջ մեկ տասնյակի հասնող միջնադարյան դանակներն ու դրանց շեղքերի գտածոները, որոնք բաժանվում են երկու խմբի:

Ծալովի դանակների խումբը (2576/9, 2576/20, 2577/10 և այլն, նկ. 5 (1-4)), իրենց չափերով աչքի չեն ընկնում: Դաստակի հետ որպես կանոն միանում են լեզվակների հիմքերի վրա արված անցքի մեջ ագուցված գամերի օգնությամբ: Պահպանվածության աստիճանը վատ է, հողի մեջ երկար ժամանակ մնալով, խիստ էրոզիայի են ենթարկվել ու քայքայվել: Հաջորդ խումբը չձալվող դանակներն են, որոնք փոքր միսայրի դաշույններ են հիշեցնում (2576/22, 2576/27, 2577/10 և այլն, նկ. 4 (5-7)): Լոռե ամրոցի պեղումների միջոցին գտնված դաշույն հիշեցնող դանակները իրենց բազմաթիվ զուգահեռներն ունեն Հայաստանի գրեթե բոլոր միջնադարյան հնավայրերի պեղումներից հայտնի նյութերի մեջ:<sup>3</sup>

Միջնադարյան գեներքերի շարքին պիտի դասել նաև երկաթե գտածոների մեջ հանդիպող թնդանոթի փոքր տրամաչափի արկ-գնդակները, որոնք աչքի չեն ընկնում իրենց զանգվածեղությամբ (2576/25, 2576/31. նկ. 6): Նման կլոր ու փոքր երկաթե գնդեր մեր կողմից պեղվել են նաև Բջնի ամրոցի ստորին բերդի պարսպապատի տակ՝ ներսի կողմում:



Նկար 6

Դրանք հինգն են. բոլորն էլ նույն չափի: Հանրահայտ է, որ թնդանոթները որպես զինատեսակ, Անդրկովկաս են մուտք գործել պարսկական Շահ Աբասի գահակալության (1587–1629) տարիներին: Նա, համագործակցելով անգլիացիների հետ, վերակառուցեց, վերազինեց իր բանակը՝ պատրաստվելով օսմանյան թուրքերի դեմ տևական պատերազմի: Այդ ժամանակ էլ պարսկական բանակ ներմուծվեցին փոքր տրամաչափի «ձեռքի» թնդանոթներ, որոնք դրվելով ուղտերի կամ ձիերի գավակներին, կովող մարտիկների կողմից գործի էին դրվում հեծյալ վիճակով, անընդհատ տեղից-տեղ փոխադրվելով:

Մենք հակված ենք Լոռեում և Բջնիում հանդիպող այդ փոքր գնդիկ-ոսումբերը թվագրել այդ դարաշրջանով՝ XVI-XVII դարերով: Հայաստանը և Վրաստանը վերոհիշյալ դարերում գտնվում էին Իրանի տիրապետության տակ, հետևաբար, նման փոքր տրամաչափի թնդանոթների կիրառումը Հայաստանում պատճառաբանված էր: Ավելին. գրավոր աղբյուրներից տեղեկանում ենք, որ վրաց արքայազն Ալեքսանդրը XVII դարի սկզբին կարգադրում է Լոռե ամրոցից դուրս բերել այնտեղ պահվող թնդանոթները և տեղափոխել այլ վայր: Պարզ է դառնում, որ Լոռե ամրոցում վրաց արքունիքը պահում էր թնդանոթների որոշակի քանակություն, որոնց տեղափոխմանն այդքան կարևորություն էին տալիս վրացի տիրակալները:

Երկաթից պատրաստված ուշադրության արժանի իրերի ու առարկաների թվին պիտի դասել փայտե դուրան համեմատաբար լավ պահպանված երկաթե ծխնին (2576/7), որի մի ծայրը կոտրված է: Ծխնիներից մյուսը տափակ է. վրան ունի բավականին լայն անցք: Նրա վրա պահպանվել են երկաթե գամերի համար արված երկու այլ անցքեր, որոնցով ծխնին ամրացվել է տախտակներին: Նույն ծխնու մյուս կտորը

<sup>1</sup> Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX XIII դդ., հ-Ա, Երևան, 1958, էջ 149, նկ. 22:

<sup>2</sup> Р. Джанполадян, А. Курничников, Средневековая сабля с армянской надписью, найденная в Приполярном Урале, ЭВ, 1972, вып. 21, ст. 23-39.

<sup>3</sup> Կ. Ղաֆաղարյան, նշվ. աշխ., էջ 164: Հ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 40: Ս. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 87-88:

կենտրոնական մասում ունի քառանկյուն անցք, երկու վերջավորութիւնները ծալված են միեւնույն ուղղութեամբ:

Հաջորդ ծխնին, որ ի հայտ է եկել Լոռե ամրոցի պեղումների ժամանակ, պատկանում է փայտե կահույքի: Այն երկտակ ծալված տափակ առարկա է, որի կենտրոնով անցնում է մետաղե ձող: Մի քանի տեղ ունի գամերի համար արված անցքեր՝ կահույքին ամրացնելու համար: Դատելով պահպանված ծխնու չափերից, կարելի է եզրակացնել, որ փայտե կահույքն ունեցել է շոշափելի չափսեր:

Խնդրո առարկա երկաթե իրերի շարքում, որոնք գտնվել են Հնավայրի պեղումներից, իրենց բազմազանութեամբ ու քանակով աչքի են ընկնում տարբեր մեծութեան պայտերը, որոնք օգտագործվել են եզներ, ձիեր, ավանակներ, կովեր պայտելու համար (2576/10, 2576/17 և այլն): Լոռե քաղաքը տեղակայված էր համեմատաբար լեռնոտ ու քարքարոտ վայրում. անհրաժեշտութիւն էր հաճախ պայտելու բանող կենդանիներին, որով էլ պայմանավորված է պայտերի առատութիւնը Հնավայրի մետաղական գտածոների մեջ:

Լոռե ամրոց-քաղաքի պեղումների միջոցին երկաթե պայտեր էին գտնվում ոչ միայն վերին, այլև ստորին շերտերից: Հայաստանի միջնադարյան Հնավայրերի պեղումների ժամանակ նմանատիպ երկաթե պայտեր չատ են գտնվել:<sup>1</sup> Գտածոների մեջ հատկապես աչքի են զարնում XI–XIII դարերին պատկանող շերտերից կիսալուսնաձև, երկու երրորդ շրջանի տեսքով, երկու ծայրերին և կենտրոնում սուր ելուստով առարկաները (2493/161): Նման առարկաներ գտնվել են նաև Գառնիի միջնադարյան շերտերում: Բ. Առաքելյանի կարծիքով, դրանք ավանակի պայտ կարող են լինել, սակայն նա գտնում է նաև, որ դրանք կարող էին ամրացվել կահույքի ոտքերին: Մենք հակված ենք ընդունելու երկրորդ տեսակետը:


Հնավայրի պեղումներից հաճախակի գտնվում են երկաթե տարբեր չափերի գամեր, որոնցից անհամեմատ շատ էին երկրորդ բաղնիքի շրջակա հրապարակի պեղումների ժամանակ գտնվածները: Հատկապես աչքի են ընկնում մեծ գլխով գա-

մերը (2568/53 և այլն, նկ. 7), որոնք իրենց կիրառութիւնն են ունեցել հիմնականում շինարարութեան մեջ, որպես զարդագամեր: Կարճ, գանգավածեղ գլխիկով գամերը ծառայել են անասուններին պայտելու համար: Թվական առումով աչքի են ընկնում կլոր, բայց երկար գամերը, որոնք օգտագործվել են հիմնականում փայտամշակութեան մեջ:



Նկար 7

1967 թվականի պեղումների ժամանակ երկրորդ բաղնիքի մեծ լողարանի մեջ 110սմ խորութեան վրա հայտնաբերվեց երկաթե գունդ (2493/107), որի ինչ նպատակի ծառայելը դժվար է կռահել: Երկաթե գնդի հետ միաժամանակ, նույն խորութիւնից գտնվեցին քարե երեք այլ գնդեր, որոնցից երկուսը բազալտից, երրորդը՝ տուֆից է: Թերևս կարելի է ենթադրել, որ դրանք միջնադարի պայմաններում կարող էին ծառայել իբրև կշռաքարեր:



Նկար 8

<sup>1</sup> Կ. Ղաֆաղարյան, նշվ. աշխ., էջ 157: Ի. Ղարիբյան, Գլաձոր, Երևան, 1983, էջ 76: Եվ. Մուշեղյան, նշվ. աշխ., էջ 127–128 և այլն:

Լոռե հնավայրի պեղումների միջոցին հանդիպում էին նաև երկաթե տձև առարկաներ, ձողեր, կեռիկներ, օղեր, անորոշ իրեր, որոնք կարող էին գործիքների կամ զինատեսակների առանձին մասեր լինել (նկ. 8): Վերջիններս այնքան վատ են պահպանվել, որ դրանց նախնական ձևերի մասին որոշակի կոահուսմներ անելն անհնարին է:

Պղնձե և բրոնզե իրեր: Գուգարք նահանգը Հայաստանում հնուց ի վեր հայտնի էր պղնձի հարուստ հանքերով: Բնակա-նաբար, պղնձագործությունը Կյուրիկյան թագավորության մայրաքաղաք Լոռեում իր ուրույն տեղն էր ունենալու մյուս արհեստների շարքում: Պղնձագործ վարպետներն արտադրել են պղնձե կամ բրոնզե տարբեր տեսակի ու մեծություն կաթսաներ, ջրամաններ, թասեր, գավաթներ, ափսեներ, կանթեղ-ներ, աշտանակներ, եկեղեցական սպասք՝ բուրվառներ, սկիհներ, մոմակալներ, մասունքի տուփեր, խաչեր, ջահեր, մի խոսքով այն ամենը, ինչ օգտագործելի էր տնտեսություն մեջ, կենցաղում:

Հասկանալի պատճառներով, պղնձե կամ բրոնզե իրերի ու առարկաների գերակշռող մասը մեզ չի հասել: Այդ արտադրանքի լավագույն օրինակները թալանվել, կողոպտվել են երկիրն ասպատակող հրոսակների կողմից: Բացի այդ, ակա-նատեսների պատմելով, նույնիսկ XIX դարի կեսերին պղնձագործները չըջել են բնակավայրերում և օգտագործումից դուրս եկած առարկաները հավաքել են՝ ձուլելու նպատա-կով: Դա ավելի հեշտ միջոց էր, քան հանքանյութի վերա-մշակումը: Մեզ հասած պեղածո պղնձե և բրոնզե առարկա-ների ճնշող գերակշռությունը հիմնականում պատրաստված է կռելու և կոփելու միջոցով, որոշ դեպքերում՝ նաև ձուլելու ու զողելու եղանակներով:

Հետաքրքրական է բրոնզե ձևավոր մշակումով սմբակավոր կենդանու ոտքի նմանվող հենակը (2493/53, Ադ. XX (1-3)), որը գտնվել է XI-XIII դարերին պատկանող տան հատակի վրա 110-120սմ խորություն չերտում: Առարկան պատրաստ-ված է ձուլելու եղանակով: Վերին մասը ավելի լայն ու եր-կար է: Երկու ծայրերին կան գամերով ամրացնելու անցքեր: Հենակը հավանաբար ամրացվել է կահույքին, կամ վրան

դրվել մեկ այլ առարկա, թերևս մոմակալ կամ ջահ: Կենդա-նու ոտքի հեռավոր նմանություն ունի Հաղարծնի վանքում գտնված հանրահայտ պղնձե կաթսայի ոտքը: Բացառված չէ, որ մեր այս նմուշը նմանատիպ ինչ-որ առարկա է զարդարել:

Բրոնզե մեկ այլ առարկա, իր չափերով շատ ավելի փոքր՝ (2x3սմ) պատրաստված է կռելու և զողելու եղանակով (2494/5): Այն ամրացվել է կահույքի ոտքին երկաթե գամի միջոցով: Առարկան գտնվել է երկրորդ բաղնիքի լողարաններից մեկի պեղումների միջոցին՝ XI-XIII դդ. շերտից:

Կռելու եղանակով է պատրաստված բնակելի շենքի մեջ գտնված փոքր ճրագը, (2493/119), որը թեև թերի է, սակայն երևում է, որ մի կողմից ունեցել է կտուց՝ պատույզի հա-մար: Հատակին արտաքին կողմից ունի երեք փոքր ոտք-հե-նակ: Նման ճրագներ գտնվել են Դվինի<sup>1</sup> և Գառնիի պեղում-ների ժամանակ: Ուսումնասիրողներն առանց բացառություն նման ճրագները թվագրում են XI-XIII դարերով:

Կռածո իրերի թվին է պատկանում պղնձե վարդյակաձև թիթեղը, որը ակներևաբար նույնպես ամրացվել է կահույքի վրա: Երկու ծայրերում կան ամրացնելու գամերի անցքեր (2494/21): Գտնված իրերի թվում է պղնձե երկտակ ծալված թիթեղը (2493/127), որի եզրին արված են մանր անցքեր:

1972 թվի պեղումների միջոցին, XI-XIII դարերով թվա-գրվող շատրվանող ջրավազանի պեղման-մաքրման աշխա-տանքների ժամանակ, 110-120սմ խորություն վրա գտնվել է երկտակ ծալված բրոնզե թիթեղ: Վերջինիս արտաքին երեսին պարզորոշ նշմարվում են դրվագման և գծագարդման եղա-նակով արված երկրաչափական զարդապատկերներ, որոնց կենտրոնում և եզրերին կետազարդեր կան (2576/14): Առար-կայի նախնական տեսքը վերականգնել հնարավոր չէ:

Պղնձե գտածոների շարքին է պատկանում հավանաբար ձեռքի պայուսակի ձևավոր մշակումով մետաղական եզրա-մասը (2576/5), որի վրա ներսից առկա են ութ փոքր անցքեր, հավանաբար գործվածքին, կամ որ ավելի հավանական է՝ կաշվին գամերով ամրացնելու կամ կարելու համար: Մետա-

<sup>1</sup> Կ. Ղաֆաղարյան, Նշվ. աշխ., էջ 170 և 183, նկ. 156:

ղական այդ առարկան երկու վերջավորություններին ունի կյորացված գնդիկանման ավարտուն տեսք: Նման գտածո մեզ հայտնի է նաև հայկական և ոչ էլ անդրկովկասյան որևէ հնավայրի պեղումներից:

Լոռե ամրոց-քաղաքից հայտնի պղնձե գտածոների թվին է պատկանում մի փոքր բոժոժ-գանգակ (պնդուլակ, 2495/14), որի վերին մասում նկատելի է այն կախ տալու հարմարանք: Պնդուլակի ներքևի մասում կիսով չափ այն բաժանված է երկու մասի: Հավանաբար նրա ներսում վարպետը ժամանակին դրել է փոքր գնդիկ: Նման դեպքում, շարժման ժամանակ պնդուլակները արտաբերելու էին հաճելի ձայներ: Բոժոժ-պնդուլակներ գտնվել են Դվինի,<sup>1</sup> Անիի,<sup>2</sup> Գառնիի,<sup>3</sup> Բջնիի<sup>4</sup> և հարևան Բայլականի<sup>5</sup> պեղումների ժամանակ և բոլորն էլ թվագրվում են XI-XIII դարերով:

Լոռե ամրոցում հայտնաբերված պղնձից պատրաստված առարկաների մեջ առանձնանում է մի փոքր սարք, որի ինչ լինելը երկար ժամանակ մնում էր անորոշ: Վերջերս, երբ ծանոթացանք Անի մայրաքաղաքից հայտնի պղնձե իրերի նկարագրություններին, պարզ դարձավ, որ գործ ունենք միջին դարերում Անդրկովկասում լայն տարածում գտած փոքր չափերի փական-կողպեքներից մեկի հետ: Ինչպես հայտնի է, տնտեսական վերելք ապրող հայկական քաղաքներում պղնձագործ-փականագործ վարպետները մի քանի տեխնիկական հնարքների համադրությամբ պատրաստում էին փական-կողպեքներ մարդկային կամ տարբեր կենդանիների՝ ձիու, արջի, աղվեսի, առյուծի, կատվի պատկերներով:<sup>6</sup> Հավանաբար քննությունն առարկա հանդիսացող իրը նմանատիպ կողպեք-փականներից մեկի մաս է կազմել:

Բրոնզից պատրաստված մանր առարկաների մեջ իր առանձնահատուկ տեղն ունի Լոռե ամրոցի տարածքում պատա-

հականորեն գտնված կնիքը (նկ. 9): Այն մեզ է փոխանցել ամրոցից ոչ հեռու գտնվող Լեջան գյուղի բնակիչ Արմենակ Մկրտչյանի որդին: Վերջինիս հավաստմամբ, հայրը գտել է Լոռե բերդի տարածքում, կանգուն շինության (մզկիթ – Ի.Ղ.) արտաքին պատի տակ: Կնիքի վրա արաբատառ արձանագրություն կա, որի բովանդակությունը մահմեդական սուրբ գրքից՝ Դորանից, մի փոքրիկ բարեմաղթանքի բանաձև է: Նման մաղթանքի բանաձևերը շատ տարածված էին մահմեդական աշխարհում:



Նկար. 9

Դրանք հաճախ գրվել են մետաղական կամ ջնարակած կավե անոթների շուրթերին, որի փայլուն օրինակները ներկայացված են պարսկական թանգարաններում, Միջին Ասիայում, Պետերբուրգի էրմիտաժում և այլուր, որոնց վերծանությունները ժամանակին զբաղվում էր էրմիտաժի գիտական աշխատակից Լևոն Գյոզալյանը:

Լոռե քաղաքից հայտնի բրոնզե իրերի շարքը համալրվում է դեռևս 1968 թվականին գտնված կռելու եղանակով պատրաստված առարկայով (2494/40), որի ինչ լինելը դժվար է որոշել: Առաջին հայացքից այն մատանի է, մի կողմում առանցքի մեկ երրորդի չափով երեք սմ երկարությամբ ավելացված հատված ունի: Ավելացված մասի վրա արված է ելուստ: Եթե պատկերացնենք, որ այդ առարկան ագուցվել է տղամարդու (հակառակ դեպքում մատանու տրամագծի մեծությունը բացատրելի է) բուլթ մատին, ապա ինչ որ սուր ծակող գործիքի օգնությամբ աշխատանք է կատարելիս եղել, այն սեղմելու-հրելու նպատակի է ծառայել: Հնարավոր է, որ նմանօրինակ մատնոց-գործիքը կապված լիներ կաշեգործի արհեստի հետ, որի օգտագործման եղանակը և նպատակը մոռացություն է տրվել ժամանակի ընթացքում և այսօր անորոշություն խնդիր է հարուցում (աղ. XIX, նկ. 2):

Մեկ այլ, մատանի հիշեցնող ժապավենաձև պղնձե թիթեղից պատրաստված առարկա (2577/8) գտնվել է շատրվանող

<sup>1</sup> Կ. Ղաֆաղարյան, նշվ. աշխ., էջ 166, նկ. 147:

<sup>2</sup> Եվ. Մուշեղյան, նշվ. աշխ., էջ 133-134, տախտակ XXXIII (3):


<sup>3</sup> Հ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 46:

<sup>4</sup> Բջնի ամրոցի նյութերը հրատարակված չեն:

<sup>5</sup> Տե՛ս МНД, 67, էջ 163, նկ. 18 (9):

<sup>6</sup> Եվ. Մուշեղյան, նշվ. աշխ., էջ 139, տախտակ XXXV, նկ. 2-4, 7 և այլն: Բ. Առաքելյան, Քաղաքները ..., հ-Ա, էջ 140, նկ. 11:

Ջրավազանների շրջապատի մաքրման աշխատանքների միջոցին: Պղնձե կամ բրոնզե մատանիներ կրելու սովորույթն ավելի ուշ դարաշրջանում առավել մեծ գործածություն ունեն հայ գեղջկուհիների կենցաղում: Նույն հետևությունն օգտին են հավանաբար խոսում մետաղե երկու բավական զանգվածեղ ապարանջանների գտածոները (2494/28 և 2577/11), որոնք աչքի չեն զարնում իրենց գեղարվեստական մշակումով: Դրանք կլոր, արտաքին կողմում կորնթարդ, երկու ծայրերը իրար հետ պարզ միացումով առարկաներ են: Վերջիններիս ծայրերը իրար միացված չեն, հավանաբար, անհրաժեշտության դեպքում ապարանջանների տրամագիծը մեծացնելու կամ փոքրացնելու համար: Համանման ապարանջաններ գտնվել են ինչպես Հայաստանի, այնպես և հարևան երկրների ժամանակամերձ հուշարձաններում:<sup>1</sup> Նման մետաղական ապարանջանների կիրառությունը անսովոր չէր Անդրկովկասի բնակչության կենցաղում (նկ. 10):



Նկար. 10

Լոռե ամրոցում հայտնաբերված պղնձե և բրոնզե իրերի թվին են պատկանում նաև բազմաթիվ մետաղե այլ բեկորներ, որոնց նախնական տեսքը պատկերացնելը դժվար է:

Որպես կանոն, Լոռե ամրոցում պեղումների միջոցին գտնված պղնձե և բրոնզե կռածո ու ձուլածո իրերն ու առարկաներն իրենց բնույթով այնպիսին են, որ չեն կարող բերված լինել այլ քաղաքներից, հետևաբար պատրաստվել են տեղում և հավաստում

են պղնձագործական արհեստի տարբեր ճյուղերի առկայությունը միջնադարյան միջին մեծություն քաղաք-ամրոցում:

Լոռե հնավայրի պեղումներից դեռևս չեն գտնվել ոսկերչության և արծաթագործության նմուշներ: Կասկածից վեր է, որ հետագայում շարունակվող պեղումները լրացնելու են այդ բացը:

## ՔԱՐԵ ՍԱՐՔԵՐ ԵՎ ԻՐԵՐ

Հայաստանի բոլոր գավառներն առատ են թե՛ շինարարության, և թե՛ զանազան գործիքների ու արտադրական սարքերի համար որպես հումք ծառայող պիտանի քարատեսակներով: Այդ է պատճառը, որ հայ ժողովուրդն իր տնտեսության ու կենցաղի մեջ, հնուց ի վեր, շատ է օգտագործել քարե սարքեր և հարմարանքներ, ավանդաբար շարունակել քարակոփությունը:

Լոռե հնավայրում հայտնաբերված քարե սարքերից առաջին հերթին աչքի են ընկնում ձիթհանի քարերը: Դրանցից մեկը, շատ լավ մշակված ու ամբողջական վիճակով, գտնվում է միջնաբերդի հարավարևմտյան անկյունում: Վերջինիս տրամագիծը 155սմ է: Զիթհանների քարեր Լոռեում, հավանաբար, շատ են եղել, քանզի նման տիպի երկու քարի հանդիպեցինք միջնաբերդի տարբեր մասերում (ջարդված վիճակում), երրորդը՝ գյուղի ժամանակակից գերեզմանատան մոտ: Ականատեսների վկայությամբ 1934-1935 թվականներին հարևան գյուղերից Վարդաբլուրի բնակիչները Լոռե բերդից իրենց գյուղն են տարել երկու քար:

Զիթհանի քարերի առկայությունը Լոռե քաղաք-ամրոցի հնավայրում ապացույց են այն բանի, որ միջին դարերում այս տարածաշրջանում տարածված են եղել կտավատի և այլ ձիթատու բույսերի մշակումը և դրանցից ձիթ ստանալու տեխնիկական հնարքը:

Զիթհանի քարեր գտնվել են ինչպես Հայաստանի<sup>1</sup> և Վրաստանի,<sup>2</sup> նույնպես և հարակից երկրների բազմաթիվ

<sup>1</sup> Եվ. Մուշեղյան, նշվ. աշխ., էջ 134, տախտակ XXXVI (6) և տախտակ LV (1-6), LVI (1-7); МИА 67, նշվ. աշխ., էջ 143-144:

<sup>1</sup> Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում, էջ 192: Բ. Առաքելյան, Գր. Կարախանյան, Գառնի III, էջ 61:

<sup>2</sup> Л. Мусхелишвили, Раскопки в Дманиси, ст. 280, табл. СА, 1940, № 6.

բնակավայրերում, որն ապացույց է կտավատ մշակաբույսի լայն օգտագործումը Անդրկովկասում:

Լոռե բերդաքաղաքում եղել են նաև մի քանի ջրաղացներ, որոնց հետքերը նշմարելի են ինչպես միջնաբերդի պարսպի առջև, մուտքից ձախ ընկած տարածքում, այնպես էլ Միսխանա և Չորագետ գետերի ընդարձակ կիրճերում: Պատահական չէ, որ XIX դարի ճանապարհորդները միայն Միսխանա գետի կիրճում հաշվել են մինչև մեկ տասնյակի հասնող ջրաղացների մնացորդներ: Թեև Լոռե քաղաքի մերձակա տարածքում դեռևս հայտնի չէ ջրաղացի որևէ քար: Հավանաբար, XIX-XX դարերի ընթացքում հարևան բնակավայրերի բնակիչները, ջրաղացի քարերը ոչ մեծ բեկորների վերածելով, օգտագործել են շինարարութայն մեջ:

Լոռե հնավայրի պեղումների շնորհիվ կամ ուղղակի հնավայրի ընդարձակ տարածքում հանդիպում են տեղական բազալտից պատրաստված բազմաթիվ մեծ ու փոքր սանդեր, երկանքի քարեր, աղորիքներ, քարե վարսանդներ (ամբողջական կամ թերի): Մեծ ու փոքր սանդերի մեջ ծեծել և մշակել են ձավար, աղ, կանեփ, իսկ կավագործ ու ապակեգործ վարպետներն էլ՝ երբեմն ավազ և գալխախազ: Ուշադրության արժանի է այն, որ պեղումների ժամանակ միջնաբերդի բնակելի շինություններից մեկը բացելիս պարզվեց, որ շինությունը բակում, բնական ժայռի մեջ փորված էր միջին մեծություն սանդ:

Հնավայրում հայտնաբերված աղորիքներն ու երկանքաքարերը բազմազան են իրենց տարատեսակներով, սակայն բոլորն էլ ծառայել են միևնույն նպատակին: Նրանց գրեթե ճնշող մեծամասնությունը մաշված են, թերի, ոչ պիտանի:

Լոռե քաղաք-ամրոցի տարածքում մեզ հայտնի քարե սարքերից և առարկաներից աչքի է զարնում եկեղեցու մանրակերտ-մոզել հիցեցնող առարկան (2493/109, աղ. XLI(1): Այն պատրաստված է դյուրին մշակվող կարմիր գույնի քարատեսակից: Մանրակերտը թերի է: Նրանից պահպանվել է լուսամուտների և եկեղեցու գմբեթի մի մասը: Մանրակերտի վերևից ուղիղ կենտրոնում արված է մի անցք, որի մեջ, հավանաբար, տեղադրվել է երկաթե կամ բրոնզե խաչ: Գա-

գաթից ճառագայթաձև ակոսիկներ են արված, դրանց մեջ, հավանաբար, ընդելուզված սպիտակավուն քարերով:

Գմբեթի ու պատուհանների միջև արված է շուրջանակի անցնող երկու գիծ. նրանից ներքև յուրաքանչյուր ճառագայթաձև ակոսի դիմաց գալիկոնով արված է մեկական լուսամուտ-պատուհան (թվով ընդամենը ութ հատ):

Մանրակերտ-մոզելի շարունակությունը թերի է և դժվար է այն լրացնել, ամբողջացնել: Նկարագրված առարկան գտնվել է երկրորդ բաղնիքի մեծ լողարանի պեղումների միջոցին, 110սմ խորությունից: Մանրակերտի ջարդված մասի վրա պահպանվել են շաղախի հետքեր:

Հայաստանի միջնադարյան հնավայրերում ու վանական համակառույցներում շատ են գտնվել եկեղեցիների քարե փոքր մանրակերտեր: Դրանք սովորաբար պատկերված են տվյալ ճարտարապետական կառույցի հովանավոր ու պատվիրատու տիրակալի, իշխանի կամ հոգևոր վերնախավի ներկայացուցչի ձևերին: Այդպիսին է Աղթամարի տաճարի կառուցման պատվիրատու և հովանավոր Գագիկ Արծրունու արձանը՝ եկեղեցու մանրակերտը ձևերին,<sup>1</sup> Հառիճավանքում՝ Իվանեն ու Զաքարեն, Սանահնի վանքում<sup>2</sup> Սմբատ և Գուրգեն Բագրատունիները եկեղեցիների մանրակերտերի հետ միասին, Անիում՝ Գագիկ Առաջին արքան, Զվարթնոցատիպ եկեղեցու մանրակերտը բռնած երկու ձևերով:<sup>3</sup> Մեզ հայտնի են մի քանի դեպքեր, երբ եկեղեցու քարե մանրակերտը կերտված է առանց պատվիրատուի բարձրաքանդակի: Դրանց մի մասը գտնվում է Հայաստանի ՊԹ-ում, մեկը՝ Վայոց ձորի Նորավանք կոչվող մենաստանի գլխավոր եկեղեցու մեջ, մեկ ուրիշը հայտնաբերվել է նույն շրջանի Թանահատ-Գլաձորի պեղումների ժամանակ:<sup>4</sup>

Հայաստանում, բացի քարե մանրակերտներից, գտնվել են նաև ճարտարապետական հուշարձանների կավակերտ ման-

<sup>1</sup> И. Орбели, Избранные труды, Т-1, Москва, 1968, ст. 81-85, табл. 6, 9.

<sup>2</sup> Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 44: Նույնի, Հաղրատ, Երևան, 1963, էջ 15:

<sup>3</sup> И. Орбели, Избранные труды, Ереван, 1963, էջ 28-30:

<sup>4</sup> Ի. Ղարիբյան, Գլաձոր, Երևան, 1983, էջ 27:

րապատկերներ: Մանրակերտները, որպես հարթաքանդակ, կրում են հեծյալների, հետիոտների զարդապատկերներ, բուսական կամ երկրաչափական բարձրաքանդակներ: Այս առումով ուշադրութեան արժանի են Հայաստանի ազգային թանգարանի Անիի պահպանված գեոմեթրիկ կավակերտ մանրակերտները:<sup>1</sup> Դրանք որպես կանոն կարմրաներկ զարդամոտիվներ ունեն: Գուցե և նույն սովորութիւնը, ինչ-որ նկատելի է Անիում, օգտագործվում էր նաև Լոռեում. կարմիր գույնի, դյուրին մշակելի քարից պատրաստված մանրակերտը նմանակված է կավակերտ մանրակերտներից: Հավանաբար, միջնադարյան Հայաստանում սովորութիւն էր հոգևոր կառույցների մանրակերտ պատրաստելը:

Հնագետ Գր. Կարախանյանը կարծում է, որ ճարտարապետական հուշարձանների, առավել ևս վանական կառույցների կավից կամ քարից կերտված մանրակերտները ծառայել են իբրև դեկորատիվ հարթաքանդակներ հայ վերնախավի կամ ունեւոր դասի կենցաղում: Հակառակ պարագայում, հարկ չէր լինի խնդրո առարկա մանրակերտները փայլեցնել և հատուկ ներկել:<sup>2</sup> Մենք համամիտ լինելով Գ. Կարախանյանի այդ կարծիքին, կարող ենք հավելել, որ բացառված չպետք է համարել նաև այն հանգամանքը, որ այդ կավակերտ կամ քարակերտ մանրակերտները պատրաստվել են շինարար-ճարտարապետի կողմից՝ պատվիրատու իշխաններին, թագավորներին, կամ հոգևոր առաջնորդներին ցուցադրելու համար ապագա կառուցվելիք ճարտարապետական շինութեան ավարտուն տեսքը:

Լոռե քաղաք-ամրոցի պեղումների միջոցին հայտնաբերվել են նաև սրաքարեր: Մի մասը մանրահատիկ, մյուսները՝ խոշորահատ: Խոշորահատիկ սրաքարերը օգտագործել են գերանդի, մանգաղ և գյուղատնտեսական այլ գործիքներ սրելու համար: Մանրահատիկ սրաքարերով՝ ավելի նուրբ դանակներ, վարսավիրների ածելիներ և այլ գործիքներ սրե-

<sup>1</sup> Գր. Կարախանյան, Դվինի և Անիի պեղումներով հայտնաբերված անջնարակ, գարդարուն խեցեղենը, թեկնածուական ատենախոսութիւն, տես ԳԱԱ, հիմնարար գրադարան, Երևան, 1953, էջ 118-119:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 120:

լու համար: Սրաքարը ձեռք էր բերվում հատուկ, նման քարատեսակի հանքավայրերից: Նման սրաքարերը երկար ժամանակով օգտագործելուց խիստ մաշված են, հաճախ նաև կոտրված (2493/97, 2494/79, 2496/48, 2576/4, 2576/16 և այլն, աղ. XXI (2-3)):

Լոռեի հնավայրում գտնվել են նաև կավագործ-բրուտի քարե կոկիչներ (2493/108 և այլն), որոնց օգնութեամբ հղկում էին կավե անոթների մակերեսը, հատկապես այն նմուշները, որոնք պատված էին լինում գունավոր շփոթով՝ անգործով. ապա հղկելու ու կոկելու շնորհիվ ստանում էին փայլ և հղկվածք:

Պեղումների միջոցին հաճախ են գտնվել քարե կլոր գնդեր (բազալտ, տուֆ, մարմար), որոնք հավանաբար օգտագործվել են որպես կշռաքար: Լոռե քաղաք-ամրոցի պեղումների միջոցին գտնվել են նաև քարից պատրաստված, զանազան նպատակների համար օգտագործվող սարքեր և գործիքներ, որոնց առկայութիւնը հնավայրում ավելորդ անգամ հավաստում է, որ միջնադարյան Հայաստանում, մասնավորապես Գուգարք նահանգում զարգացած էր քարի մշակութիւնը, քարակոփութիւնը և նրա լայն կիրառութիւնը բնակչութեան տնտեսութեան մեջ ու կենցաղում:

## ԽԵՑՑԵՂԵՆ

Լոռե բերդաքաղաքի հնագիտական պեղումների միջոցին հայտնաբերված արհեստային արտադրանքի զանգվածային արգասիք հանդիսացող գտածոների շարքում կարևոր տեղ է զբաղեցնում միջնադարյան խեցեղենը:

Տակավին վաղնջական ժամանակներից Հայաստանը հռչակված էր խեցեղենի համար հումք հանդիսացող բարձրորակ կավահանքերով: Արևելքի երկրներում բազմատեսակ հանքանյութերի թվում մասնավորապես մեծ ճանաչում ունեն բարձրորակ կարմիր կավատեսակը, որն օտար գրավոր աղբյուրներում հայտնի էր «հայկավ» (թին արմանի) անունով: Հայերեն վիմագիր աղբյուրներում, նվիրատվական արձանագրութիւններում հետաքրքրական տեղեկութիւններ ենք գտնում վանք-մենաստաններին ու հոգևոր կենտրոններին



դրամից, արտադրական կառույցներից ու այգիներից բացի, մեծագին կավահանք նվիրելու մասին: Վայոց ձորի Պոռչյան նշանավոր իշխանական տան ներկայացուցիչ Պապաքր Կեչառիսի վանքին<sup>1</sup> է նվիրաբերել Մ (200) սպիտակ դրամական միավորով գնահատվող կավահանք: Ընդ որում, այն դեպքում, երբ մեկ նորատունկ պտղատու այգու գինը չէր անցնում 20 սպիտակից:

Լոռե քաղաք-ամրոցի պեղումներով հայտնաբերված հասարակ խեցեղենը ջնարակապատի հետ միասին բնութագրում են Գուգարքի տվյալ տարածաշրջանի արտադրողական ուժերի զարգացման մակարդակը: Այն հնարավորություն է տալիս պարզելու Գուգարք նահանգի կավագործ վարպետների հմտության աստիճանը, արտադրության տեսականին, արտադրանքի որակը, այն դիտարկելու Անդրկովկասի կավագործության արտադրանքի ոլորտում:

Լոռե բերդաքաղաքի խեցեղենի համակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում որոշակի գաղափար կազմելու միջնադարյան ավատական քաղաքի բնակչության սոցիալական շերտավորման մասին:

Կավագործության արհեստի արտադրանք կազմող անոթների ու առարկաների ուսումնասիրությունը կարևոր է նաև այն առումով, որ այդ արհեստի արտադրանքը միջոց է՝ պարզելու պեղվող հնավայրի բնակչության և նրա հարևան երկրների միջև գոյություն ունեցած առևտրական կապերը՝ միջին դարերում:

Հայաստանի միջնադարյան խեցեղենը համեմատաբար լավ է ուսումնասիրված: Այդ ոլորտում մեծ ավանդ ունեն Կ. Ղաֆաղարյանը,<sup>2</sup> Բ. Առաքելյանը,<sup>3</sup> Բ. Շելկովնիկովը,<sup>4</sup> Գր. Կա-

րախանյանը,<sup>1</sup> Տ. Իզմայլովան,<sup>2</sup> Ա. Քալանթարյանը,<sup>3</sup> Ա. Ժամկոչյանը,<sup>4</sup> Ֆ. Բաբայանը<sup>5</sup> և ուրիշներ<sup>6</sup>: Այդ հրապարակումներում տրված է խեցեղենի պատրաստման տեխնիկայի, կավանոթների ձևերի և զարդամոտիվների քննությունը, նրանց կիրառական նշանակությունը: Վերջիններս հիմնականում ներկայացված են Անիի, Դվինի, Գառնիի և Ամբերդի պեղումներից հայտնաբերված խեցեղենի ուսումնասիրության հիման վրա:

Մինչև վերջերս պեղումներ չէին իրականացվել Հայաստանի հյուսիսային սահմանագավառ Գուգարքի միջնադարյան հնավայրերում, որով պարզ կդառնար խեցեղեն արտադրանքի, վերջինիս տեղական բնորոշ առանձնահատկությունները: Այդ առումով Լոռե քաղաք-ամրոցի պեղումների միջոցին կուտակված խեցեղեն արտադրանքի նմուշները հնարավորություն են ընձեռում զգալի չափով լրացնելու այդ բացը, որը պեղումների հետագա շարունակվելու պարագայում ավելի կամբողջացնի, կճշգրտի մեր պատկերացումները ծայրագավառների արտադրության տվյալ ոլորտի զարգացման մակարդակի մասին:

Ինչպես հայտնի է, կավագործության վերաբերյալ հայ մատենագրության մեջ պահպանվել են սոսկ ընդհանուր տեղեկություններ: Այն հայտնի էր կավագործություն,<sup>7</sup> խեցե-

<sup>1</sup> Տե՛ս Էջմիածին, 1955, № 12, էջ 44:

<sup>2</sup> Կ. Ղաֆաղարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, Հ-Ա, 1952 և Հ-Բ, 1982:

<sup>3</sup> Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., Երևան, Հ-Ա, 1958, Հ-Բ, 1964:

<sup>4</sup> Б. Шелковников. Художественная керамика двинских раскопок, տե՛ս Տեղեկագիր ԳԱ Հայկական ֆիլիալի, 1940, № 4-5: Նույնի, Керамика и стекло из раскопок города Двина, տե՛ս ՀՍՍՀ ԳԱ պատմության պետական թանգարանի աշխատությունների ժողովածու, Երևան, 1952, № 4: Նույնի, Поливная керамика из раскопок города Ани. Ереван, 1957.

<sup>1</sup> Գր. Կարախանյան, Գառնիի միջնադարյան խեցեղենը: Տե՛ս Գառնի III, Երևան, 1962:

<sup>2</sup> Т. Измайлова, Керамика из раскопок в Амберде, Труды отдела Востока Гос. Эрмитажа, том IV, Ленинград, 1947.

<sup>3</sup> Ա. Քալանթարյան, Դվինի նյութական մշակույթը, IV-VIII դդ., տե՛ս ՀՀ Հանր. № 5, Երևան, 1970: Նույնի, Դվին I, Կենտրոնական թաղամասի պեղումները (1964-1970 թթ.), Երևան, 1976: Նույնի, Դվին II (1973-1980 թթ. պեղումներ) Կ. Ղաֆաղարյանի համահեղինակակցությամբ, Երևան, 2002:

<sup>4</sup> Ա. Ժամկոչյան, Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX-XIV դդ., տե՛ս ՀՀ Հանր. Հ-10, Երևան, 1981:

<sup>5</sup> Ֆ. Բաբայան, Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական խեցեղենի զարգացումը, Երևան, 1981:

<sup>6</sup> A. Kalantaryan, G. Karakhanyan, H. Melkonyan, H. Petrosyan, N. Hakobyan, F. Babayan, A. Zhamkochyan, K. Nawasrdyan, A. Hayrapetyan, Armenia in the cultural context of east and west, Ceramics and Glass (IV-XIV centuries), Yerevan, 2009: Այսուհետ՝ Հայաստանը Մերձավոր Արևելքի մշակութային համատեքստում:

<sup>7</sup> Սուրբ գիրք, Իմաստութիւն Սողոմոնի, գլ. ԺԷ, 7: Յոհան Ոսկեբերան, Մեկնութիւն Աւետարանին Մատթէոսի, գլ. Բ, 14:



գործութիւնը<sup>1</sup> և բրուտի արհեստ անուաներով, իսկ այդ արհեստով զբաղվողներն էլ կոչվել են կավագործ, խեցեգործ, բրուտ:<sup>2</sup> Ամենից ավելի միջին դարերում գործածական է եղել բրուտ անվանումը:<sup>3</sup>

Տեղական հումքի՝ կավի առկայութեամբ պայմանավորված խեցեգործութիւնը միջին դարերում ամենուրեք, մասշտաբային բնույթ է ստանում մասնավորապես IX դարից: Խեցեգործութեան զարգացումը, վերջինիս վերելքի առարկայական վկայութիւնն է Հայաստանի մայրաքաղաքների՝ Դվինի և Անիի, ինչպես նաև ամրոց-դղյակներ Գառնիի, Ամբերդի պեղումների միջոցին հայտնաբերված բազմատեսակ և վիթխարի քանակով հայտնի խեցեղենը: Խեցեգործութիւնը զգալի վերելք է ապրում ոչ միայն մայրաքաղաքներում ու նրանց մերձակա ամրոցներում, այլև ծայրագավառներում ու վանական համակառուցյաներում:

Այդ իրողութիւնն են հավաստում Որոտնավանքի,<sup>4</sup> Լոռե բերդաքաղաքի, Թանահատ-Գլաձորի<sup>5</sup> խեցեղենի գտածոները: Լոռե հնավայրի պեղումներով հայտնաբերվել է բազմատեսակ խեցեղեն, որը բաժանվում է երեք մեծ խմբերի, այն է՝ հասարակ, ջնարակած և շինարարական խեցեղենի: Խմբերից յուրաքանչյուրն իր հերթին կիրառութեամբ և պատրաստման յուրահատուկ տեխնիկայով ստորաբաժանվում է ենթախմբերի: Մեծ թիվ են կազմում ջնարակած կարմրախեցի և սպիտակախեցի՝ հախճապակյա անոթները, որոնց յուրաքանչյուր խմբի քննութեանը կանդրադառնանք առանձին-առանձին:

ա. ՀԱՍԱՐԱԿ ԽԵՑԵՂԵՆ. Լոռե քաղաք-ամրոցի պեղումների միջոցին ի հայտ եկած հասարակ խեցեղենը կազմում է գտածոների գերակշիռ մասը: Այն ըստ կիրառութեան բաժանվում է վեց ենթախմբերի.

1. Կարասներ՝ գինի և այլ նյութեր պահելու համար,

<sup>1</sup> Կիրեղ, Կոչումն րնծայութեան, գլ. ԺԳ:

<sup>2</sup> Սուրբ գիրք, Ղեւտական, ԺԱ, 33: Մարգարէութիւն Եսայեայ, գլ. Լ, 14:

<sup>3</sup> Բ. Առաքելյան, նշվ. աշխ., հ-Ա, էջ 212:

<sup>4</sup> Ա. Քալանթարյան, Որոտնավանքի խեցեղենը, Լրաբեր ՀԳ, 1967 № 4, էջ 67-78:

<sup>5</sup> Ի. Ղարիբյան, Գլաձոր, Երևան, 1983, էջ 81-100:

2. Կճուճներ՝ ճաշ պատրաստելու և տնտեսական այլ նպատակների համար,

3. Սափորներ,

4. Խոհանոցային սպասք (քրեղաններ, փոքրադիր կճուճներ, պուլիկներ, փարչեր),

5. Զիթածրագներ,

6. Ծխամորճներ:

ԿԱՐԱՍՆԵՐ – Լոռե հնավայրի պեղումների միջոցին գտնվել են մի քանի լայնափոր, գոտեզարդ կարասներ և վերջիններիս բազմաթիվ բեկորներ. շուրթեր, նստուկներ: Կարասները գոտեզարդ են, լայնաբերան, ցածրադիր, ունեն ուռուցիկ իրան. աչքի են ընկնում ուրույն դրոշմված զարդապատկերներով: Առկա նմուշների հարդարանքից դատելով, կարելի է պնդել, որ կարասների մի մասը գործածվել է հանդիսութիւնների ժամանակ, իբրև սեղանի սպասք:

Անդրկովկասի հնավայրերից հայտնի հար և նման գոտեզարդ կարասները սովորաբար ունեն 50–75սմ բարձրութիւն, 30–35սմ բերանի բացվածք, 18–22սմ հատակի տրամագիծ և 40–60 լիտր տարողութիւն: Սովորաբար նման կարասների շուրթերը փոքր-ինչ դեպի դուրս լայնացող են և հարթ: Կարասների գոտեզարդի լայնքը տատանվում է 40–60սմ-ի միջև: Որպես կանոն, նման կարասներն ունենում են երկուսից-չորս ձևավորված բլթակավոր կանթեր:

Դուրգի վրա ամբողջ կարասը պատրաստելն անհնար էր. նրա վրա պատրաստում էին կարասի մինչև ուռուցիկ փորամասը, ապա ամբողջացնում կավե պատրույգներով: Անոթների միայն ստորին մասը կավագործի դուրգի վրա պատրաստելը պայմանավորված էր վերջինիս չափերով՝ մեծութեամբ: Ինչ վերաբերում է կանթերին, ապա վերջիններս պատրաստվում էին առանձին, ապա տեղադրվում կարասի շուրթից անմիջապես ներքև: Սովորաբար նման կարասների կանթերը ձևավոր են: Նրանց վրա լինում են կեղծ, կիսաշրջան վերադիր զարդեր:

Կարասների՝ դեպի դուրս լայնացող պսակի ստորին մասում, դեռևս խեցու խոնավ վիճակում դրոշմում էին սեպաձև և ալիքաձև խորաքանդակ զարդեր: Երբեմն պսակի շուրջը

բուրորդ գոտու վրա արվում էր ատամնաշար, փոսիկաշար, որը հաճելի տեսք էր տալիս պսակին:

Խնդրո առարկա կարասները, որպես կանոն, կարմիր երանգով ներկելուց, թրծելուց հետո փայլեցվում էին հղկելու-կոկելու եղանակով: Հին Գանձակում գտնված դաջազարդ կարասների ուսումնասիրող Վ. Լևիատովը<sup>1</sup> գտնում է, որ կարասները նախ ներկել են, ապա թրծել, հակառակ որոշ ուսումնասիրողների, որոնք գտնում են, որ կարասները թրծելուց հետո են ներկել:

Կարմրաներկ, փայլեցված կարասների հիմնական զարդը իրանի լայնացող գոտկամասի վրա 3-5սմ լայնությամբ անցնող զարդագոտին է, որը սովորաբար առնվել է անոթի շուրջը պատվող երկու ուռուցիկ զուգահեռ շրջանագծերի մեջ: Գոտին հարդարվել է կենդանիների, մասնավորապես այծերի, եղնիկների, գայլերի, առյուծների, ուղտերի, թռչունների, երբեմն նաև մարդկանց կամ բուսական ու երկրաչափական պատկերներով: Կավանոթները դրոշմելու կամ դաջելու տեխնիկայով զարդարելը, ըստ հնագետ, իրանական արվեստի լավագույն գիտակ Արթուր Պոպի, առնված է մետաղագործությունից:<sup>2</sup>

Ըստ Բ. Առաքելյանի, կարմրավուն ներկված և փայլեցված կարասների գոտիները զարդարել են երեք եղանակով:<sup>3</sup> Առաջին՝ թաց կավի վրա արված գծազարդով. երկրորդ՝ գիշատիչների ու կենդանիների վերադիր ուռուցիկ պատկերներով: Այս եղանակները Հայաստանի պարագայում բնորոշ են Անիից հայտնի պատկերազարդ կարասներին: Երրորդ եղանակն է՝ կարասները դրոշմելու միջոցով զարդարելը: Դրոշմները սովորաբար լինում են փոքր-ինչ ռելիեֆ, հարթ մակերեսով, գլանաձև կամ շրջանաձև:

Դվինից հայտնի դաջազարդ կարասների վրա հանդիպում են զարդագոտուց վեր երեք-չորս ժապավենաձև դաջվածք-

ներ, որոնք ձգված են լինում դեպի անոթի պսակը, անցնելով կանթ-բռնակների միջև գտնվող մակերեսով: Պատահում են նաև օրինակներ, երբ կարասների կանթերի արանքում գոտուց վեր, դեպի շուրթը ձգվող ժապավենը փոխարինված է լինում երկրաչափական պատկերներով՝ բուլթ անկյուն, իրար կից երկու եռանկյուններ, որոնց մակերեսի վրա կավի թաց վիճակում սուր գործիքով փորվածքներ, խորաքանդակ գծիկներ են արված:

Գառնի ամրոցի պեղումների միջոցին գտնված գոտեզարդ կարասներին դառնալիս հնագետ Հ. Պետրոսյանը<sup>1</sup> նշում է, որ բուսական, կենդանական և մարդկային պատկերներով գոտիները տարածված էին նաև մերձավորարևելյան ու միջինասիական XII-XIII դդ. խեցեգործական արվեստում: Սակայն Անդրկովկասի հնավայրերից հայտնի դրոշմազարդ կարասները թե՛ իրենց չափերով, թե՛ պատրաստման մանրամասներով, գոտիների վրա վերարտադրված սյուսթներով առանձնանում են՝ կազմելով IX-XIII դդ. անդրկովկասյան խեցեղենի առանձին բնորոշ խումբ:

Լոռե ամրոց-քաղաքում գտնված դաջազարդ կարասներից ուշագրավ է 1967 թվականի պեղումների միջոցին «մատուռ-դամբարանի» ծածկի շաղախի մեջ գտնվածները (2493/18), պատրաստված կարմրավուն կավից: Խեցու մեջ նկատելի է քիչ քանակության կվարցիտային (գետի ավազ – Ի.Ղ.) ավազի խառնուրդ: Կարասը լավ մշակված է, փայլեցված, թրծումը՝ համաչափ և բարձրակարգ, կարմիր ներկով ներկված: Չափերն են. բարձրությունը 60սմ, բերանի տրամագիծը՝ 35սմ, հատակինը՝ 18 սմ, գոտու տրամագիծը՝ 45սմ է:

Կարասն ունի չորս ձևավոր կանթ, ամրացված իրանի նեղացող մասի վրա: Կանթերը պատրաստվել են առանձին, ապա անոթի թաց վիճակում ամրացվել: Կարասի պսակի ստորին մասում, արտաքուստ երկու ուռուցիկ շրջանագիծ կա, որի վրա սուր գործիքի օգնությամբ, դեռևս անոթի խոնավ վիճակում, արված են իրարահաջորդ մանր փոսիկներ: Շրջանագծի և պսակի միջև անցնում է ալիքաձև մեկ այլ երկրաչա-

<sup>1</sup> В. Левитов. Украшения на карасах из Старой Ганджи, տե՛ս Изв. АН. Азерб. ССР, Баку, 1945, стр. 51.

<sup>2</sup> Arthur Upham Pope. Ceramic Art in islamic times. A history. Տե՛ս A Survey of Persian Art, vol. II p. 1471-1472.

<sup>3</sup> Բ. Առաքելյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 224:

<sup>1</sup> Հ. Պետրոսյան, Գառնի IX-XIV դարերում, էջ 53:

փական զարդ, որը կարասին հաղորդում է հաճելի տեսք: Կարասն ունի դրոշմազարդ գոտի, լայնութունը 3սմ է: Գոտին հարդարված է գազանավազք պատկերող հարթաքանդակներով. վազք առած եղջերու և նրան հետապնդող երկու առյուծ, մեկը վազքի պահին, մյուսը՝ պատրաստ հարձակվելու-ցատկելու իր գոհի վրա: Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ Լոռեում գտնված կարասի գոտու վրա նշմարվում է կենդանիների դինամիկ շարժում, որն առանձնանում և դրանով իսկ տարբերվում է Հայաստանի հնավայրերից հայտնի նմանօրինակ դաջազարդ կարասների մեծ մասի ավանդական պատկերներից:

Կենդանիների պատկերների դրոշմումը իրականացվել է գլանաձև կնիքով,<sup>1</sup> թրծելուց առաջ, խեցու դեռևս խոնավ վիճակում և ստացել պարբերաբար կրկնվող քանդակադրոշմ պատկերներ: Քանդակները հենքի (աստառի) համեմատությամբ ուռուցիկ են թվում: Յուրաքանչյուր հատված մյուսից բաժանված է կենաց ծառի պատկերով:

Կարասը դրոշմազարդելուց հետո քիչ չորացրել են, ապա փայլեցրել կոկիչով: Կավանոթները կոկելու, փայլեցնելու կոկիչ-գործիքների նմուշներ են գտնվել Լոռե հնավայրի պեղումների միջոցին: Անոթները փայլեցնելուց հետո ներկվել են կարմիր գույնի օքրայով, որը հաճելի տեսք էր հաղորդում կարասներին:

Հայաստանի միջնադարյան հնավայրերից հայտնի դաջազարդ կարասներից Դվինում պատրաստվածների դրոշմազարդ գոտիները չեն ներկվել. Անիում ներկել են ամբողջ կարասը: Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ Լոռե քաղաքն իր աշխարհագրական դիրքով մոտ գտնվելով Անիին, քան Դվինին, նրա կավագործ վարպետները հետևել են Անիի խեցեգործ արհեստավորներին, ընդօրինակել նրանց:

Դաջազարդ կարասների շարքում առանձնանում է հետաքրքիր մեկ այլ բեկոր (2493/142): Չափերը 12x9սմ, խեցու

հաստութունը՝ 1,5սմ: Բեկորի վերին շրթից քիչ ներքև արված են իրար հաջորդող ութ թերթանի վարդյակի (հատած նուան?) և սուրանկյուն եռանկյան պատկերներ: Սրանց անմիջապես հաջորդում է շուրջանակի անցնող վերադիր գոտին, որի վրա ատամնաշար է արված (Աղ. XXII (2-3)):

Լոռե բերդամրոցից հայտնաբերված մեկ այլ բեկորի վրա (2496/77), որի չափերն են 11,5x10,5սմ, արված են խորաքանդակ իրար հակառակ դասավորությամբ եռանկյուններ, որոնք առնված են անոթի շուրթը բոլորող երկուական շրջագծերի մեջ: Չի պահպանվել շրջագծից դուրս վերին շուրթը: Եռանկյունները զբաղեցնում են 5,6սմ լայնութուն: Նրանց միջև խորաքանդակ փորագրությամբ առաջացել են կրկնակի եռանկյուններ, որոնց կենտրոնում ձևավորվել է ռելիեֆ սուրանկյուն երկրաչափական պատկեր: Եռանկյուններն իրարից բաժանված են խոր գծազարդերով, որոնք արված են ոչ այնքան վարժ ձևերով: Եռանկյունաձև զարդից ու շրջանաձև անցնող գծազարդից ներքև արված է վերադիր, կտրվածքում՝ սուրանկյուն գոտի, որի վրա սեղմելու միջոցով ստացվել է զարդագոտի՝ ողջ անոթի շրջագծի երկարությամբ: Քիչ ներքև, պահպանված բեկորի վրա նկատելի են երկու խորաքանդակ կլոր շրջաններ: Նման խորաքանդակ շրջաններով զարդարել են ողջ անոթի մակերեսի ազատ տարածութունը:

Դաջազարդ կարասի նման զարդապատկերի Լոռե հնավայրում հանդիպել է միայն մեկ անգամ: Նմուշը շատ ավելի հիշեցնում է Դվինից հայտնի նմանօրինակ զարդապատկերներով կարասը: Կարծում ենք, որ այն ներմուծվել է Դվինից:<sup>1</sup> Այդ հանգամանքը վկայում է այն իրողութունը, որ Գուգարքի վարչական կենտրոն հանդիսացող Լոռե քաղաքը առևտրական կապեր է ունեցել ոչ միայն մերձակա Անի քաղաքի, այլև Դվին խեցեգործական կենտրոնի հետ:

Կարասի մեկ այլ բեկորի վրա (2495/35) դարձյալ խեցութաց-խոնավ վիճակում, սուր գործիքի օգնությամբ արված են երեք շարք շուրջանակի անցնող փոքր փոսիկներ: Մի եր-

<sup>1</sup> Գլանաձև կնիքներ Անդրկովկասում մեզ հայտնի էր երկու հնավայրերից: Մեկը գտնվել էր Անիում, տես *И. Орбели*, Развалины Ани, СПб. 1911, էջ 52-53, մյուսը՝ Քանձակում, տես *Վ. Լեխտով*, նշվ. հոդվածը, էջ 51: Հետագայում նման կավի կնիքներ գտնվել են Օրեն-Կալայի պեղումներից, տես *МИА*, 67, էջ 238, նկ. 6 ա-բ: Ինչպես նաև Գառնի ամրոցում, տես *Հ. Պետրոսյան*, նշվ. աշխ., էջ 76-77:

<sup>1</sup> Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 196, նկ. 171ա:  
183

րորդ (2493/167) բեկորի վրա արված են բուսական և երկրաչափական զարդապատկերներ:

Լոռե ամրոց-քաղաքից հայտնի նկարագրված կարասների և նրանց առանձին բեկորների նման կարասներ հայտնի են միջնադարյան Հայաստանի նշանավոր հնավայրեր Դվինի,<sup>1</sup> Անիի,<sup>2</sup> Գառնիի,<sup>3</sup> Ամբերդի,<sup>4</sup> Բջնիի,<sup>5</sup> Որոտնավանքի,<sup>6</sup> Թանահատ-Գլաձորի<sup>7</sup> և այլ կենտրոնների պեղումներից: Նմանօրինակ կարասներ հայտնի են նաև Հայաստանին հարևան Վրաստանի<sup>8</sup> և Աղվանքի<sup>9</sup> ժամանակամերձ հուշարձաններից:

Դաջագարդ կարասների կիրառական նշանակությունը վերաբերյալ ուսումնասիրողները հայտնում են տարբեր կարծիքներ: Լ. Մուսխելիշվիլին (Դմանիսի) գտնում է, որ գոտեզարդ կարասները ծառայել են գինի պահելու համար:<sup>10</sup> Հին Գանձակը պեղող Վ. Լևիատովը պնդում է հակառակը, որ այդ կարասները օգտագործվել են հացահատիկ և սննդամթերք պահելու համար:<sup>11</sup> Հեղինակը նկատի ունի այն իրողությունը, որ մահմեդական կրոնն արգելում էր գինի օգտագործելը: Հին Գանձակում կամ Բայլականում (Փայտակարան – Ի.Ղ.) հաճախակի հանդիպող գոտեզարդ կարասների գոյությունը բնական է, քանզի միջնադարյան այդ քաղաքների բնակչության մի զգալի մասը կազմում էին քրիստոնյաները:

Դվինի կարասները Կ. Ղաֆաղարյանի կարծիքով ծառայել են որպես գինու անոթներ. հանդիսավոր խնջույքների ժա-

<sup>1</sup> Կ. Ղաֆաղարյան, Ա. Քալանթարյան, Դվին II, Երևան, 2002, էջ 83–84: Կ. Ղաֆաղարյան, նշվ. աշխ., էջ 186–198:

<sup>2</sup> Գ. Կյուսնով, Декоративное убранство анийских карасов, տե՛ս Христианский Восток, том V, выпуск I, Петербург, 1916, ст. 22–41.

<sup>3</sup> Գր. Կարախանյան, նշվ. աշխ., էջ 77–86: Հ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 52–56:

<sup>4</sup> Ս. Հարությունյան, Ամբերդ, էջ 97–99:

<sup>5</sup> Բջնիի նյութերը տակավին հրատարակված չեն:

<sup>6</sup> Ա. Քալանթարյան, Որոտնավանքի խեցեղենը, էջ 67–78:

<sup>7</sup> Ի. Ղարիբյան, Գլաձոր, էջ 85–90:

<sup>8</sup> Լ. Мухеллишвили, Раскопки в Дманиси, տե՛ս СА, 1940, № 6, ст. 280–282.

<sup>9</sup> Գ. Ахмедов, Неполитная керамика Орен-Кала IX–XIII вв., տե՛ս МИА 67, М–Л. 1959, ст. 96–196. Գ. Джидду, Средневековый город Шемаха IX–XVII вв., Баку, 1981, ст. 56–70.

<sup>10</sup> Լ. Մուսխելիշվիլի, նշվ. աշխ., էջ 282:

<sup>11</sup> Վ. Լևիատով, նշվ. աշխ., էջ 51:

մանակ դրվել սեղաններին, որոնցից օգտվում էին մասնակիցները մատուցակների օգնությամբ:<sup>1</sup>

Կարմրաներկ դաջագարդ կարասներն ունեն հարուստ հարդարանք և գնահատվել են համեմատաբար թանկ, ուստի չէին կարող ծառայել լոկ հատիկեղեն կամ չոր մրգեր՝ սննդամթերք պահելու համար: Հաշվի առնելով այդ հանգամանքը, մենք համերաչխ ենք Կ. Ղաֆաղարյանի արտահայտած կարծիքի հետ և Վ. Լևիատովի ենթադրությունը համարում ենք քիչ հավանական: Կ. Ղաֆաղարյանի տեսակետի ճշմարտացի լինելն է վկայում նաև կարասների գոտիների վրա դրոշմված կամ դաջագարդված պատկերների բովանդակությունը, որոնք ուրախ, տրամադրող տեսարաններ են ներկայացնում:

Դրոշմագարդ կարասների թվագրման խնդրում մասնագիտական գրականության մեջ կան տարբեր տեսակետներ: Տակավին 1916 թվականին Գ. Չուբինովն ուսումնասիրելով Շիրակի Բագրատունիների մայրաքաղաք Անիի պեղումներից առաջին անգամ հայտնաբերված դաջագարդ կարասների թվագրման խնդիրը, հանգել է կամայական, ոչնչով չհիմնավորված հետևություն, թե հայկական դրոշմագարդ կարասները դադստանյան պղնձե կաթսաներից փոխառություն արդյունք են: Քանզի Դադստանից հայտնի պղնձե կաթսաները թվագրվում են XIII դարով, հետևաբար, դաջագարդ կարասները կարող էին հանդես գալ միայն XIII դարից հետո:<sup>2</sup> Անիի և Դվինի խեցեղենն ուսումնասիրող Բ. Շելկովնիկովը հիմնավոր կերպով մերժելով այդ տեսակետը, գտնում է, որ հայկական դաջագարդ կարասները ոչ թե XIII դարից հետո են հանդես եկել, այլ պատկանում են XII–XIII դարերին:<sup>3</sup>

Առարկելով Շելկովնիկովին, Կ. Ղաֆաղարյանը, նկատի ունենալով Դվինի պեղումներից հայտնի գոտեզարդ-դրոշմագարդ կարասների գտնվելու լավ թվագրվող շերտագրությունը, հանգում է այն ճշմարիտ հետևություն, թե դրանք

<sup>1</sup> Կ. Ղաֆաղարյան, նշվ. աշխ., էջ 188:

<sup>2</sup> Գ. Չուբինով, նշվ. աշխ., էջ 36–40:

<sup>3</sup> Բ. Шелковников, Керамика и стекло из раскопок города Двина. Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ պատմության պետական թանգարանի աշխատությունների ժողովածու, Երևան, 1952, N 4, էջ 26::

Հանդես են գալիս Հայաստանում դեռևս IX դարից և հարատևում են մինչև XIII դարը:<sup>1</sup> Հնագետ Գր. Կարախանյանը, քննարկելով խնդրո առարկա անոթների թվագրման խնդիրը, գրում է. «Դրոշմագարդ կարասները շերտագրական տվյալներից, կոմպլեքս նյութից, օրնամենտալ մոտիվներից, անալոգիկ նյութերից ելնելով, թվագրվում են XI–XIII դարերով»:<sup>2</sup> Բ. Առաքելյանն արհեստներին նվիրված իր հիմնարար աշխատության էջերում ավելի է ընդարձակում Հայաստանի դրոշմագարդ կարասների գոյատևման ժամանակաշրջանը, այն համարելով X–XIII դարերի արգասիք:<sup>3</sup>

Բայլականի (Օրեն-Կալա, Ադրբեջան – Ի.Ղ.) հար և նման կարասները ուսումնասիրող Գ. Ահմեդովը դրանք թվագրում է XII–XIII դարերով: Վերջինս հիմնականում ելնում է այն ելակետից, որ իր կողմից ուսումնասիրվող հնավայրը բուռն ծաղկման և զարգացման է հասել այդ դարերում, հետևաբար դաջագարդ կարասներն էլ պետք է թվագրել XII–XIII դարերով:<sup>4</sup> Ա. Քալանթարյանը, Ֆ. Բաբայանը, Ս. Հարությունյանը, Հ. Պետրոսյանը հիմնականում հետևում են Բ. Առաքելյանի թվագրմանը:

Լոռե քաղաք-ամրոց հնավայրից հայտնի դաջագարդ կարասները, ելնելով նրանց գտնվելու տեղանքից (կարասներից մեկը գտնվել է XII դարում կառուցված մատուռ-դամբարանի ծածկի շաղախի մեջ) և Հայաստանի բազմաթիվ հնավայրերից (Անի, Դվին, Գառնի, Ամբերդ) ու մեր կողմից ուսումնասիրված Թանահատ-Գլաձորի վանական համակառույցի, Բջնի ամրոցի համապատասխան շերտագրությունից հայտնի զուգահեռ նյութերից, այն թվագրում ենք XI–XIII դարերով: Նման թվագրման օգտին է խոսում այն իրողությունը, որ Լոռեն հիմնադրվել է XI դարի 10–20-ական թվականներին, հետևաբար դրանից առաջ չէին կարող դաջագարդ կարասներ հանդիպել Լոռե բերդի տարածքում: Իսկ XI դարի հա-

մար ելակետ է հանդիսանում այն իրողությունը, որ դաջագարդ կարասը չէր կարող պատրաստվել և անմիջապես հայտնվել XII դարում կառուցվելիք մատուռի ծածկի շաղախի մեջ: Այն ակներևաբար որոշ ժամանակ օգտագործվել է Լոռեի բնակչության վերնախավի կողմից և կիրառությունից դուրս մնալով միայն կարող էր դրվել կառույցի շաղախի մեջ:

Լոռե բերդաքաղաքում հայտնաբերված խեցեղեն գտածոներից ուշագրավ է 1972թ. երկրորդ բաղնիքի հանդերձարանի պեղումների միջոցին գտնված բաց գույնի մանրահատիկ, լավ մշակված կավե անոթի բեկորը (2576/32): Չափերը. երկարությունը՝ 12սմ, լայնքը՝ 7,5: Բեկորը բավականին հաստապատ է՝ 0,8սմ: Նրա վրա պատկերված է ակներևաբար որթատունկ, ողկույզներով հանդերձ: Ակնհայտ է, որ կավանոթի այդ բեկորը զարդարված չէ կնքադրոշմի օգնությամբ: Ամենայն հավանականությամբ, խնդրո առարկա անոթը պատրաստվել է կաղապարով: Միայն այդ եղանակով կարող էր ստացվել այդքան բարդ և ոճավորված զարդաքանդակ: Բեկորի չափերը թույլ չեն տալիս վերականգնել զարդաքանդակի իրական պատկերը և տալ անոթի վրա պատկերի համոզիչ բովանդակությունը (Աղ. XXII (1)):

Հայաստանում միայն Դվինում և Անիում են գտնվել կաղապարի օգնությամբ զարդարված կավանոթներ: Ա. Քալանթարյանը<sup>1</sup> վկայում է, որ 1972–1980 թթ. Դվինում գտնվել են բուսական զարդերով հարդարված մեկ սափոր և երեք թասի բեկորներ, որոնք նույն արհեստանոցի արտադրանք են:<sup>2</sup> Թասերը հեռավոր նմանություն ունեն Լոռեից հայտնի նմուշի հետ:

Հեղինակը Դվինից հայտնի կաղապարով զարդարված անոթները թվագրում է IX–XI դարերով և համարում է տեղական արտադրանք: Կարծում ենք, որ Լոռեում գտնված անոթի բեկորը ամենայն հավանականությամբ ներմուծվել է Դվինից կամ Անիից, թեև բացառված չէ և հարևան որևէ

<sup>1</sup> Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 197:

<sup>2</sup> Գր. Կարախանյան, Դվինի և Անիի պեղումներով հայտնաբերված անջնարակ, զարդարուն խեցեղեն, թեկնածուական ատենախոսություն, Երևան, 1953, էջ 121:

<sup>3</sup> Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները, էջ 227:

<sup>4</sup> Գ. Ահմեդով, նշվ. աշխ., էջ 205, տե՛ս МИА 67:

<sup>1</sup> Կ. Ղաֆադարյան, Ա. Քալանթարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները (1973–1980թթ.), Երևան, 2002, էջ 82–83, նկ. 3:

<sup>2</sup> Н. Акопян, Ф. Бабаян, А. Жамкочан, А. Калантарян, К. Кафадарян, Г. Кочарян, Двин IV, Город Двин и его раскопки (1981–1985гг.), Ереван, 2008, էջ 36:

երկրից ներմուծված լինելու հնարավորությունը: Դրանք մեծ քանակով հայտնի են, ինչպես Ա. Քալանթարյանն է վկայում, Միջին Ասիայում, մոնղոլական հնավայրերում, Փայտակարանում (Բայլական), Բաքվում և այլուր:

Լոռե հնավայրում դաջազարդ կարասներից բացի, հայտնի են նաև այլ կարասներ ու վերջիններիս բեկորներ: Դրանցից ուշագրավ է «մատուռ-դամբարանի» ծածկի շաղախի մեջ հանդիպող մեկ այլ, իր չափերով համեմատաբար փոքր կարասը, որն ունի բերանի լայն բացվածք (2493/17): Շուրթը թեքված է դեպի դուրս, որը հաճելի տեսք է հաղորդում կարասին: Կարասն իրանի վրա ունի հինգ քիչ ուռուցիկ շուրջանակի անցնող շրջագծեր: Նրանցից առաջինի և երկրորդի միջև ամրացված են չորս փոքր կանթեր: Կանթերը կտրվածքում տափակ-ձվածիր են: Չափերն են՝ բարձրությունը 30սմ, գոտկատեղի տրամագիծը՝ 40սմ, բերանի բացվածքը՝ 33սմ, հատակինը՝ 15սմ: Կարասը պատրաստված է դուրգի վրա, բաց վարդագույն կավից, որը մանրահատիկ է, լավ մշակված: Թրծելուց հետո ներկվել է ու փայլեցվել: Ներկի միայն հետքերն են պահպանվել անոթի պսակի վրա, մնացյալ հատվածներում կողերի ներկն իր գույնը կորցրել է՝ շատ օգտագործված լինելու պատճառով:

Լոռե ամրոցի միջնաբերդի պեղումների շնորհիվ մեզ է հասել բաց վարդագույն կավից պատրաստված կարասի պսակի բեկորը՝ ուսով հանդերձ: Կավը բարձրորակ է, լավ մշակված ու փայլեցված: Պսակի շուրթը բավականին հաստ է: Կարասի շրթի և ուսի վրա պահպանվել են շուրջանակի անցնող երեք խորաքանդակ շրջանագծեր, որոնք հաճելի տեսք են հաղորդում կավանոթին:

Մեկ այլ կարասի պսակի և գոտկատեղի բեկորներ են պահպանվել «մատուռ-դամբարանից» հայտնի կավանոթների մեջ: Անոթը պատրաստված է աղյուսակարմիր կավից, թրծելիս լրացուցիչ մշակման է ենթարկվել: Իր ձևով և չափերով կարասը նման է դաջազարդ նմուշներին:

Ներկայացված անոթներն իրենց չափերով, մշակման տեխնիկական հնարքներով և արտաքին ձևերով շատ զուգահեռներ ունեն XI-XIII դարերին պատկանող հայկական հուշար-

ձանների համանման կարասների հետ, վերջիններս նույնպես կարող են թվագրվել նույն դարերով:

Ավարտելով Լոռե ամրոց-քաղաքի պեղումների միջոցին հայտնաբերված դաջազարդ կարասների և ընդհանրապես համանման անոթների քննությունը, կարելի է հանգել այն հետևություններ, թե Գուգարքի մայրաքաղաքի կավագործ վարպետներն իրենց արտադրանքով ի վիճակի էին ապահովելու ոչ միայն տեղական վերնախավի պահանջարկը, այլև մասնակցելու հարևան բնակավայրերի և երկրների միջև կատարվող առևտրին:

ԿՃՈՒՃՆԵՐ. – Կճուճները հանդիսացել են առտնին սպասքի կարևորագույն տարրերից և ունեցել են լայն գործածությունն առօրյա կենցաղում: Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ միջնադարյան որևէ հնավայր պեղելիս (Դվին, Անի, Բջնի, Գառնի, Դամասիսի, Օրեն-Կալա և այլն), նշված տեսակի խեցեղեն հաճախ է գտնվում:


Կճուճներն ունեն համեմատաբար լայն բերան և կարճ պարանոց: Իրաններն ուռուցիկ են, հատակները հարթ, պատերը հաստ: Կավամանների այս խումբը կրակի վրա շատ դրվելուց մրապատ է: Սովորաբար նման կճուճներն ունենում են երկու կանթ, թեև հանդիպում են նաև մեկ կամ նույնիսկ անկանթ կճուճներ:

Կճուճների կանթերը բաժանվում են երկու խմբի: Մի խումբը սովորական, տափակ լայն կանթեր են, միացված կճուճի իրանին ու շրթին: Վերջիններիս առանձին նմուշները երբեմն ունեն ելուստավոր զարդեր: Մյուս խումբը կիսաբոլոր և համեմատաբար փոքր կանթեր են, որոնք ունենում են ելուստավոր զարդաձևեր:

Հայաստանում կճուճներին հաճախ է տրվում նաև պուտուկ անվանումը, որը հանդիպում է միջնադարյան հայկական առակներում:<sup>1</sup>

Լոռե քաղաքի պեղումների ընթացքում գտնվել են նման տիպի կճուճների մի քանի նմուշներ, որոնցից ուշագրավ են հետևյալները:

<sup>1</sup> Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 218:



Նկար 11

2494/41 կճուճի բեկորը (չափ. 12x16սմ), պատրաստված է կարմիր աղյուսագույն կավից, մրապատ է: Պահպանվել է միայն շուրթը՝ կանթի հետ միասին: Վերջինիս շուրթը դեպի դուրս փռված է, որին միացված է կանթը: Կճուճը պարանոցի վրա կրում է շուրջանակի անցնող ուռուցիկ բոլորչի զարդագոտի, իսկ անմիջապես շրթի վրա, արտաքուստ, սուր գործիքով արված է ատամնաչար զարդ: Կճուճի իրանը կանթի միացման տեղից թեքվում է ներս, հատակը, ակներևաբար սկավառակաձև է եղել: Կճուճի վրա, դեռևս կավի խոնավ վիճակում, սուր գործիքով արված են 3սմ երկարությամբ ուղղահայաց գծեր, որոնք պարբերաբար կրկնվում է 5-7սմ ընդհատումներով:

Նման մրապատ կճուճի մեկ ուրիշ բեկոր էլ (2494/64) գտնվել է Ա-14 քառակուսում բացված հորից (չափերը՝ 20x15սմ): Այն նախորդից տարբերվում է նրանով, որ կանթը

չի միանում անմիջապես կճուճի շրթին, այլ նրանից մի փոքր ներքև՝ վզի վրա: Կճուճի ներսի կողմում երևում է դուրգի վրա պատրաստելու հետքերը: Նման տիպի կճուճի օրինակ է հանդիսանում նաև (2494/71) մեկ այլ կճուճի բեկոր իր կանթի հետ միասին: Այս նմուշը, նախորդի հետ համեմատած, ավելի ուռուցիկ իրան ունի. խեցին նուրբ է, ներսի կողմից՝ բաց մոխրավուն, արտաքուստ սև, որն առաջացել է կրակի վրա հաճախ դրվելուց: Որոշ տեղերում վատ թրծելու հետևանքով, այն դարձել է բաց վարդագույն: Կանթի վրա կա ձևավոր գարդ, իրանի վրա սուր գործիքի օգնությամբ արված են ուղղահայաց մանր գծեր: Քիչ ներքև, իրանի վրայով ձգվում է ալիքավոր զարդագոտին:

Վերը նկարագրված կճուճների բեկորները տարբեր իրերի հետ միասին գտնվել են միջնաբերդի բնակելի տարածության մեջ պեղված կենցաղային նշանակության հորերից մեկում՝ 120-180սմ խորություներից:

Նմանօրինակ կճուճներ մեծ քանակությամբ հայտնի են Դվին, Անի, Գառնի, Ամբերդ, Բջնի և Հայաստանի այլ միջնադարյան հնավայրերի պեղումներից, և ուսումնասիրողներն այն վերագրում են XI-XIII դարերին: Նույն դարերով են թվագրվում նաև Լոռեում հայտնաբերված կճուճները, մասնավորապես, մեր կողմից պեղված տնտեսական հորից գտնված հարակից նյութերը (ջնարակաձ խեցեղեն, ապակյա անոթներ, դրամ):

Նմանատիպ անոթներ հայտնի են նաև հարևան Վրաստանի<sup>1</sup> և Ադրբեջանի<sup>2</sup> ժամանակամերձ հուշարձաններում, որոնք նույնպես թվագրվում են նույն XI-XIII դարերով:

Երկկանթանի կճուճներից ուշագրավ է 1967 թվականին միջնաբերդի երկրորդ եկեղեցու պեղումների ժամանակ գտնվածը (2493/142): Պահպանվել է կճուճի մեծ մասը և հատակը: Այն սկավառակաձև հատակ ունի, արտաքուստ

<sup>1</sup> И. Гзелишвили и О. Ткешелашвили, Памятники материальной культуры г. Тбилиси (վրացերեն լեզվով, ամփոփումը ռուսերեն), Тбилиси, 1961, XXIV աղյուսակի 131 նկարը:

<sup>2</sup> Г. Ахмедов, Неполивная керамика Орен-Кала, (IX-XIII вв.) տե՛ս МИА № 67, էջ 189-190. Г. Джидду, Историко-археологический очерк крепости Гюлистан, Баку, 1962, էջ 17-18, նույնի, Средневековый город Шемаха вв., Баку, 1981, 58-59.



շատ գործածելուց սևացել է: Կանթերը լայն ու կոպիտ են, շուրթերը չեն թեքվում դեպի դուրս, այլ ուղղահայաց բարձրանում են վեր: Այս կճուճը պատրաստված է համեմատաբար կոպիտ, իսկ կավը, համեմատած նախորդներին, անորակ է: Եթե հաշվի առնենք այս կճուճի գտնվելու հանգամանքը (այն գտնվել է XV-XVII դարերում վերակառուցված եկեղեցու պեղումների ժամանակ), այն պետք է թվագրել XV-XVII դարերով:

ՍԱՓՈՐՆԵՐ. – Լոռե ամրոց-քաղաքի պեղումների միջոցին գտնված սափորները և վերջիններիս բեկորները մեծ թիվ չեն կազմում: Այդուհանդերձ, ողջ տեսականին կարելի է բաժանել երկու խմբի.

ա) Լայնաբերան, կարճ պարանոցով սափորներ, – սրանց մեջ կան լավ մշակված և թրծված բեկորներ: Ամբողջական սափորներ չեն հանդիպում: Հիմնականում պահպանվել են կանթերը, պսակներն ու հատակները: Դրանց առկայությունը հնարավորություն է ընձեռում պարզելու, թե Լոռե հնավայրի սափորները ունեցել են 26-35սմ բարձրություն, 12-18սմ բերանի բացվածք, 8-10սմ հատակի տրամագիծ:

Այս խմբից կարելի է առանձնացնել 1966 թվականին հետախուզական պեղումների միջոցին ձեռք բերված սափորի բեկորը: Այն գտնվել է միջնաբերդում, բնակելի թաղամասի նախնական պեղումների ժամանակ՝ 70-80սմ խորությունից: Սափորը պատրաստված է դեղնավուն կավից. արտաքուստ պատած է բաց վարդագույն ներկով: Կավը հիանալի մշակված է, անոթի իրանի վրա նկատելի է ուրվագիծ պատկեր: Վզի վրայով անցնում են երկու իրար գուգահեռ անցնող ուռուցիկ գծազարդեր: Սափորը թերի է, և հնարավոր չէ վերականգնել պսակի և հատակի ձևը: Մեր պրպտումները պարզեցին, որ նման մի սափոր գտնվել է հարևան Վրաստանում՝ Դմանխի քաղաքի պեղումների ժամանակ, որը հար և նման է մեր գտածոյին:<sup>1</sup>

Դմանխիում գտնված սափորը թվագրվում է XII-XIII դարերով, այն գտնվել է միջինասիական խորեզմշահ տիրակալ-

ների կողմից XIII դարի 10-ական թվականներին հատած պղնձե դրամի հետ միասին: Ըստ գուգահեռ նյութերի, Լոռեում գտնված լայնաբերան սափորը կարող ենք թվագրել XII-XIII դարերով: Հայկական ժամանակամերձ հուշարձաններում հանդիպող լայնաբերան սափորները նույնպես թվագրվում են այդ դարերով:<sup>1</sup>

Ուշագրավ է Լոռե հնավայրից հայտնի սափորներից մյուսը 2594/68 թերի (պահպանված են իրանի և պսակի բեկորները): Այն պատրաստված է աղյուսակարմիր կավից, ապա ամբողջապես հղկված է ու ներկված կարմիր ներկով: Պսակը միացվել է անմիջապես իրանի վրա վզիկի բացակայությամբ պատճառով: Միացման տեղում անցնում են երկշարք ակոսիկներ, որոնք հաճելի տեսք են տալիս սափորին: Այս տիպի սափորների մեծ մասը անկանթ են, մյուսներն ունեն մեկական կանթ:<sup>2</sup>

Այս խմբին պետք է դասել մատուռ-դամբարանի ծածկի շաղախի մեջ հանդիպող բարձրադիր և լայնափոր սափորը (2493/21): Նրա չափերն են. բարձրությունը՝ 48սմ, իրանի բացվածքը՝ 10սմ, գոտու տրամագիծը՝ 32սմ, հատակինը՝ 14սմ: Այն պատրաստված է կաթնասպիտակ կավահողից, որի հետ նկատելի է քիչ քանակությամբ կվարցիտային մանր ավազի խառնուրդ: Սափորն ունի գեղեցիկ, քիչ ետ փռված պսակ, որից 1,5սմ ներքև անցնում է ուռուցիկ շրջագծի զարդ: Շրջագծի վրա միանում է սափորի զանգվածեղ կանթը, որն ամրանում է սափորի իրանի լայնացող մասի վրա: Սափորը վզի վրա կրում է թվով չորս շուրջանակի անցնող ակոսներ: Կարմիր ներկի հետքերը նկատելի են միայն սափորի պսակի վրա: Սափորի ողջ մակերեսը չի ներկվել:

Հայաստանի ժամանակամերձ հուշարձաններում նման սափորներ հաճախ են հանդիպում և թվագրվում են XI-XIII դարերով:<sup>3</sup> Մենք հետևում ենք այդ թվագրմանը, հիմք ունենալով մոտումենտալ կառույցի XII դարին պատկանելը, որի շաղախի մեջ է գտնվել սափորը:

<sup>1</sup> Կ. Ղաֆաղարյան, նշվ. աշխ., էջ 185-187, նկ. 160, 162-164:

<sup>2</sup> Կ. Ղաֆաղարյան, նույն տեղում:

<sup>3</sup> Ա. Քալանթարյան, Որոտնավանքի խեցեղենը..., էջ 72-73, տախտակ 2, նկ. 4, 8, 11:

<sup>1</sup> Լ. Մուսխելիշվիլի, նշվ. աշխ., էջ 282, նկար 13:



բ) Երկարավիզ սափորներ: Նման տիպի սափորները Լոռե ամրոց-քաղաքի Հնավայրից, առայժմ հայտնի են մի քանի նմուշներով՝ 2493/5, 2494/37, 2576/30 և այլն: Պահպանվել են սափորների երկար պարանոցները կանթերի հետ միասին (նկ. 12): Դրանք պատրաստված են լավ հուսնցած կավից,



Նկար 12


որոնց խեցին նուրբ է և ունի միապաղաղ թրծվածք: Սափորների վզերի նեղացող մասի վրա ամրացված են կանթերը, որոնք պատրաստվել են առանձին և ապա միացվել: Սափորներն, ամենայն հավանականությամբ, դրսից լավ մշակվում էին և կարմիրով ներկվում:

Լոռե Հնավայրից հայտնի երկարավիզ սափորները հար և նման են Դվինի և Անիի պեղումների միջոցին XII-XIII դարերի հնագիտական մշակութային շերտով թվագրվող հարյուրավոր սափորների օրինակներին: Հարկ է նշել, որ Դվինի համանման սափորները պատրաստված են սպիտակ-շիկավուն կավահողից, իսկ Լոռեից հայտնի սափորներն ունեն թրծած աղյուսի գույն: Այդ հանգամանքով վերջիններս

ավելի մերձենում են Անիի արտադրանքին, քան որևէ կավագործական այլ կենտրոնի: Չենք կարծում, որ նմանօրինակ սափորները ներմուծված են Անի մայրաքաղաքից: Առավել հավանական է այն, որ ինչպես Անիի կավահանքերը, նույնպես և Գուգարքինը հարուստ են երկաթի օքսիդով, որը և հանգեցնում է թրծումից հետո աղյուսակարմիր երանգի: Սափորների ձևերը հավանաբար ողջ միջնադարի և նույնիսկ ավելի ուշ շրջանի համար միատեսակ են թե՛ չափերով և թե՛ մշակման ու հարդարման առումով: Հետևաբար սափորների նման ձևերը ոչ միայն թվագրվում են XI-XIII դարերով, այլև կարող են պատկանել նաև ավելի ուշ՝ XV-XVII դարերին:

ԽՈՀԱՆՈՑԱՅԻՆ ԽԵՑԵՂԵՆ - Լոռե ամրոցի պեղումների ընթացքում գտնվել են տարբեր տիպի և չափերի խոհանոցային ու սեղանատան սպասք, որոնք թեև քանակով փոքրաթիվ են, բայց բազմազան են իրենց կիրառական նշանակությամբ: Հակիրճ դառնանք դրանցից մի քանիսին:

ՔՐԵՂԱՆՆԵՐ - Համեմատաբար ստվար խումբ են կազմում քրեղանները: Մանրագնին քննությունը ցույց է տալիս, որ չնայած խոհանոցային խեցեղենի արտադրության վրա իրենց յուրահատուկ կնիքն են թողել առանձին կավագործական կենտրոններ, այնուամենայնիվ դրանք քիչ են տարբերվում իրարից: Օրինակ Լոռեում գտնված ծանծաղ քրեղանները (2494/58, 2494/54, 2493/152) գրեթե չեն տարբերվում նման տիպի անոթներից, որոնք հազարավոր օրինակներով գտնվում են Դվինի, Գառնիի և այլ միջնադարյան ժամանակամերձ հնավայրերից: Թերևս տարբերությունը կավի երանգի և թրծման որակի մեջ է:




Նկար 13

Ծանծաղ քրեղանները լավ

մշակված են. ունեն կարճ նստուկ (նկ. 13): Կավը կարմրա-խեցի է, մակերեսը փայլեցված: Պատերը վերին մասում ուղիղ են և շեշտակի թեքվում են դեպի հատակը: Պսակները տափակ են ու փոփած ներսի կամ դրսի կողմում: Չափերն են՝ բարձրությունը՝ 6-9սմ, բերանի տրամագիծը՝ 15-20սմ, հատակինը՝ 6-7սմ, խեցու հաստությունը՝ 0,3-0,7սմ: Քրեղանների շրթերը դրսից և ներսից ծածկված են կարմիր ներկով, իսկ հաճախ ամբողջությամբ է ներկված և փայլեցված: Թրծումը կատարված է բարձր որակով: Ծանծաղ քրեղանների մեջ կան նաև ներս թեքվող, կլորացող շրթով օրինակներ (2493/38, 2494/60), որոնցից վերջինս ունի փոքր կանթ: Կանթավոր քրեղաններ հիշեցնող անոթներ գտնվել են նաև Դվինի պեղումների միջոցին (ՀՊԹ 2305/112 և 2158/57), որոնք թվագրվում են VIII դարով:


Ծանծաղ քրեղաններից բացի, Լոռեի խեցեղենի ժողովածուում հանդիպում են նաև լայնաբերան խորը քրեղաններ. առայժմ այս խումբը ներկայացվում է մեկ նմուշով: 2493/138). խեցին գորշավուն է, շրթերը կլորացված, արտաքուստ ունի մի փոքր գոգավորություն: Քրեղանի դրսի կողմում, յուրաքանչյուր 1,5սմ-ի վրա, սուր գործիքի օգնությամբ արված են շուրջանակի անցնող շրջագծեր: Հատակը չի պահպանվել: Դատելով բեկորի չափերից (15x8սմ) կարելի է եզրակացնել, որ բերանի բացվածքը հավասար է եղել 23-25սմ-ի (նկ. 14):



Նկար 14

Գտնված քրեղաններն, ինչպես ասվեց, իրենց բազմաթիվ գուգահեռներն ունեն Անիի, Գառնիի, Արմավիրի միջնադարյան շերտերում գտնված խեցեղենի հավաքածուներում և թվագրվում են համեմատաբար լայն ժամանակահատվածով՝ IX-XIII դարերով: Լոռե ամրոցում գտնվածները ըստ շերտագրական տվյալների և համեմատական նյութերի, թվագրվում են XI-XIII դարերով:

ՓՈՔՐԱԴԻՐ ԿՃՈՒՃՆԵՐ – Այս կճուճները Լոռեի պեղումների միջոցին հաճախ են հանդիպում. իրենց ձևով ավելի հիշեցնում են կրակի վրա դրվող մեծադիր կճուճները: Հիմնականում պատրաստվել են դուրզի վրա: Հատակները սկավառակաձև են և ուղիղ կտրված: Սովորաբար նման տիպի կճուճներն ունեն կարճ վիզ և քիչ դուրս թեքվող պսակ: Իրանի և պսակի վրա ամրացված են փոքրադիր և տափակ (ժապավենաձև) կանթեր:



Նկար 15


Փոքրադիր կճուճների ամբողջական նմուշներ Լոռեում դեռևս չեն գտնվել: Կրակի վրա դրվելու հետևանքով կճուճների զգալի մասը մրապատ է: Նրանցից մեկը (2493/149) կարմրախեցի է, մյուսը՝ (2494/65) գորշավուն կավից է պատրաստված:

Փոքրադիր կճուճների թվագրման խնդրում դժվարություն չկա. գտնվել են XI-XIII դարերի շերտից, մոտ 80-120սմ խորություն վրա, վրաց Բագրատունիներից Ռուսուգան թագուհու պղնձե դրամի (XIII դարի 20-ական թվականներ) հարևանությամբ: Նկատի ունենալով այս հանգամանքները, փոքրադիր կճուճների հիշյալ նմուշները կարելի է թվագրել XI-XIII դարերով:

Փոքրադիր կճուճների մեջ կան և XIV-XVII դարերին պատկանող նմուշներ, որոնցից արժե հիշատակել 2493/4 մեկը (նկ. 15): Այն կլոր է, ունի բավականին զանգվածեղ կանթ և ուղիղ վեր բարձրացող պսակ: Կավը վատորակ է, թրծումը նույնպես. կտրվածքում նկատելի է խեցու սևացած միջուկը: Դուրզի վրա պատրաստվելու հետքերը բացակայում են: Այս կճուճի գտնվելու հանգամանքը միանգամայն համապա-

տասխանում է մեր ենթագրությանը, որովհետև այն գտնվել է 30-35սմ խորությունից: Իսկ այդ խորության վրա գտնված հարակից նյութերը ճշգրիտ թվագրվում են XIV-XVII դարերով:

Խոհանոցային խեցեղենի շարքին պետք է դասել քրեղանի նմանվող փիալան (2496/20, նկ. 16):



Նկար 16

Նրա խեցին բաց մոխրավուն է, հիանալի թրծված, բարձրորակ կավից և ամենակարևորը, լայնացող գոտկատեղից վեր զարդարված է բուսական և երկրաչափական զարդապատկերներով: Փիալան ունի ուղիղ դեպի վեր բարձրացող պսակ, որն իրանի հետ կազմում է մի ամբողջություն: Շրթից 0,5սմ ցած անցնում է երկու նուրբ շրջանագիծ: Շրջանագծերի միջև առաջացած 0,6սմ տարածությունը պատված է իրար հաջորդող պարուրաձև բազմաթիվ կլոր զարդերով, որոնք արված են անոթի դեռևս խոնավ վիճակում՝ սուր գործիքի օգնությամբ: Պարուրազարդից ներքև անոթը լայնանում է քիչ թեքությամբ մինչև գոտկատեղը: Գոտկատեղի և պարուրազարդի միջև գոյացած ողջ տարածությունը բռնում է իրար հակադիր ուղղությամբ պատկերված սուրանկյուն եռանկյունաձև զարդը: Եռանկյունիների դասավորության հետևանքով առաջացել են ձվածիր տերևանման ազատ տարածություններ, որոնք զուրկ են հարդարանքից, սակայն այնպիսի տեսք ունեն, որ ասես իրենցից զարդեր են ներկայացնում: Եռանկյունների մակերեսները սուր գործիքի օգնությամբ լցված են շատ փոքր և անկանոն շրջանագծերով, ինչը հաճելի տեսք է տալիս փիալային:

Անոթը գոտկատեղից թեքությամբ իջնում է դեպի նեղացող շատ փոքր հատակը, որի տրամագիծը ընդամենը 3սմ է: Այդ տարածությունը զուրկ է որևէ զարդարանքից: Անոթի չափերն են. բարձրությունը՝ 6սմ, գոտկատեղի տրամագիծը՝ 11,4սմ, բերանինը՝ 10սմ, խեցու պատերի հաստությունը՝ 0,2սմ է:

Տնտեսական նպատակներով օգտագործված բնական քարայրի մաքրման ժամանակ գտնված փիալան իր արտաքին

տեսքով, զարդարման հնարներով, խեցու որակով, երանգով և այլ մանրամասներով չունի իր նմանակները հայկական միջնադարյան հնավայրերի պեղումներից հայտնի խեցեղենի հավաքածուներում, ուստի այն պետք է վերագրել հարևան Իրան-Իրաքյան որևէ խեցեգործական կենտրոնի:

Լոռե ամրոց-քաղաքի պեղումների ընթացքում շատրվանոց ջրավազանների շրջանում, տնտեսական նպատակով օգտագործված բնական քարայրի պեղման-մաքրման աշխատանքների միջոցին հանդիպեցին վեց բեկորից բաղկացած նրբախեցի փոքր թասի կամ փիալայի մասեր (2496/35), որոնց վրա նույնպես կավանոթի պատրաստման պահին, սուր գործիքով արվել են գծազարդումով բազմաթերթ վարդյակներ, բուսական և երկրաչափական պատկերներ: Չի պահպանվել անոթի ոչ շուրթը, ոչ հատակը: Զարդապատկերները զբաղեցրել են անոթի միայն վերին մասը՝ ինչպես նախորդինը, սակայն սրա գոտկատեղով անցնում է շուրջանակի խոր ակոս: Խեցու որակը, թրծման աստիճանը և գծազարդման տեխնիկան հուշում են, որ Հայաստանի հնավայրերից անհայտ են նմանատիպ անոթների օրինակներ: Նմուշն ակներևաբար ներմուծվել է:

Լոռե բերդաքաղաքի պեղումների միջոցին գտնվել են նաև մի քանի կավե պուլիկներ (2496/70, 2496/71), փոքր փարչեր՝ մեկ օրինակ (2493/29), կաթնամթերք մշակելու լայնաբերան տաշտի մի բեկոր (2493/3), աղամաններ, պնակներ և այլն, որոնց սակավաթիվ լինելու պատճառով հատուկ քննության առարկա չենք դարձնում:

Հնավայրի պեղումների ժամանակ գտնվել են կավե կափարիչ-խփերի բազմաթիվ բռնակներ, որոնք հիմնականում երկու տեսակի են՝ կոնաձև և փոսիկավոր: Սրանց մեջ կան լավ մշակված օրինակներ, որոնք ներկված են կարմիր ներկով (2493/40, նկ. 17): Խնդրո առարկա կափարիչները և դրանց բռնակները ոչնչով չեն տարբերվում Հայաստանի գրեթե բոլոր միջնադարյան հնավայրերից հայտնի համանման առարկաներից, ուստի հատուկ քննարկման առարկա չենք դարձնում:



Նկար 17

Բազմազան են Լոռե քաղաք-ամրոցում պեղված տարբեր բնույթի ու չափերի կավանոթների կանթերը: Մի մասը կտրվածքում կլոր են, բավականին ձգված (2493/98, նկ. 18), ունեն բարձր որակի մշակում, որպես կանոն, կարմիր գույնով ներկված են, մյուսները ձվածիր են, կամ ժապավենաձև, լայն կամ նեղ, սևացած, հավանաբար կրակի ազդեցության հետևանքով (2493/93): Կան նաև նուրբ ու գեղարվեստական մշակում ունեցող կանթերի նմուշներ (2493/59 և այլն):



Նկար. 18

ՁԻԹԱՃՐԱԳՆԵՐ. — Լոռե բերդաքաղաքի պեղումների միջոցին ձեռք բերված հասարակ խեցեղենի մեջ հանդիպում են ձիթածրագների առանձին բեկորներ ու ամբողջական նմուշներ: Դրանք հիմնականում նավակաձև են, թեև երբեմն հանդիպում են նաև փոքր կճուճների տեսքով ձիթածրագներ: Ձիթածրագների պատրաստման համար հիմնականում օգտագործել են տեղական աղյուսակարմիր կավահողը, որի մեջ գերակշռում է երկաթի օքսիդը: 1972–1973 թվականների պեղումներով հաճախակի դարձան լայն նստուկով, բարձր ոտքի վրա վերին մասում նավակաձև ձիթածրագների նմուշները, որոնք որպես կանոն հիանալի մշակում ունեն, կաթնավուն կամ կանաչ ջնարակով և բավականին շոշափելի կանթ

բռնակով: Դրանցից մեկը՝ 2496/61 գրեթե ամբողջական է, թերի է միայն նստուկի մի մասը: Նմանատիպ ձիթածրագ մեզ հայտնի է Դվինի պեղումներից:<sup>1</sup>

Անջնարակ ձիթածրագների մի մասը պատրաստված է ձեռքով (2494/75), մյուս մասը՝ դուրգի օգնությամբ (2493/70): Այն ձիթածրագները, որոնք պատրաստվել են դուրգի վրա, իրենց չափերով փոքր են, ունեն համեմատաբար կլոր ձև, օժտված են հարթ հատակով, դեպի ներքև ձգված քիթ, որը սովորաբար ժամանակին ներկվել է. իր վրա կրում է պատրույգի այրման հետքեր:

Լոռե բերդաքաղաքում հանդիպող ձիթածրագներն աչքի չեն ընկնում ոչ քանակով, և ոչ էլ բազմազանությամբ: Այդ հանգամանքը թերևս հնարավոր է բացատրել նրանով, որ տեղում առավել շատ գործածական են եղել պղնձից պատրաստված ձիթածրագներ, որոնց նմուշները հայտնի են պեղումներից:

Գուգարքի մայրաքաղաք Լոռե հնավայրից հայտնի ձիթածրագների թվագրման խնդիրը դժվարություն չի հարուցում: Դրանք գտնվել են XI–XIII դարերով հստակ թվագրվող մշակութային շերտերից և հիմնականում վերաբերում են այդ դարերին: Թվագրումն առավել դյուրին է դառնում, քանզի հար և նման ճրագներ մեծ քանակությամբ հայտնի են ոչ միայն Հայաստանի, այլև հարևան Վրաստանի ու հարակից երկրների՝ Լոռեին ժամանակամերձ հուշարձաններում, որոնք նույնպես թվագրվում են XI–XIII դարերով:<sup>2</sup>

ԾԽԱՄՈՐՆՃԵՐ. — Հայաստանի Հանրապետության տարածքում միջնադարյան հնավայրերից կավե ծխամորճներ վերջին տարիների ընթացքում գտնվել են շուրջ 150 նմուշ. շարունակվում է ավելանալ դրանց թիվը: Ամենամեծ խմբաքանակը գտնվել է Գուգարքի Կյուրիկյան թագավորության մայրաքաղաք Լոռե ամրոցում, մեր կատարած պեղումների

<sup>1</sup> Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., հ. 2, Երևան, 1982, էջ 33, նկ. 14:

<sup>2</sup> Джанаридзе, Керамика XI–XIII вв. Грузии, Вестник гос. музея Грузии, Тбилиси, т. XVI, 1950, ст. 146. Н. Вактурская, Хронологическая классификация средневековой керамики Хорезма (IX–XVII вв.), *ис'у* Керамика Хорезма, Москва, 1959, ст. 293. И. Бентович, Керамика Пенджикента, Москва, МИА 37, 140–141.

միջոցին: Հայաստանի պատմութեան պետական թանգարանում պահպանող Լոռեից հայտնի ծխամորճների քանակը շուրջ վեց տասնյակ է: Առկա մեծաքանակ նյութը թելադրում է հանգամանորեն դառնալ ծխամորճներին:

Մի ստվար խմբաքանակ էլ (թվով 41 հատ) պահպանում է Երևան քաղաքի պատմութեան թանգարանում. որոնց մի մասը հրատարակել է հնագետ Ստ. Եսայանը:<sup>1</sup>

Գյումրիի գավառագիտական թանգարանում, մինչ 1988 թվի ավերիչ երկրաշարժը, պահպանում էր 16 նմուշ, Հայաստանի պատմութեան պետական թանգարանում, բացի Լոռե քաղաք-ամրոցից հայտնաբերվածները՝ ինը, Գավառ քաղաքի (նախկին Կամո) թանգարանում 7-ը, Կապանում՝ 3-ը, Եղեգնաձորում՝ 5-ը և այլն:

Այս ծխամորճները թանգարաններ են բերվել տարբեր ճանապարհներով: Մեծ մասը պատահական գտածոներ են, անհայտ ծագում ունեն: Բացառություն են Լոռեից և Գավառից բերվածները: Վերջիններս գտնվել են Գեղեոն Միքայելյանի՝ Գավառում կատարած հետախուզական պեղումներից:<sup>2</sup> Գ. Միքայելյանի հավաստմամբ, խնդրո առարկա կավե ծխամորճները գտնվել են քաղաքի ինչպես ժամանակակից թատրոնի շենքի հիմքերը փորելիս, նույնպես և «Բերդի գլուխ» կոչվող ուրարտական ամրոցի վերին շերտից, որը հնում միջնադարյան բնակավայր է եղել, իսկ այժմ վերածվել է քաղաքային հսկայական գերեզմանատան:<sup>3</sup> Գավառի թատրոնի շենքի հիմքերը փորելիս շուրջ 1,5-2,0 մետր խորությունում հանդիպել են, միջնադարյան ժամանակաշրջանով

(XII-XIII դդ.) թվագրվող կավանոթների ուղեկցութեամբ մի քանի կավե ծխամորճներ: Գ. Միքայելյանը պնդում է, որ դրանք հնարավոր է թվագրել նույնիսկ վաղ միջնադարյան ժամանակներով:<sup>1</sup>

Գառնի ամրոցի միջնադարյան շերտի տարբեր տարիների պեղումներից գտնվել է վեց,<sup>2</sup> Դվինում պատահական ձևով (ինչպես պնդում են հուշարձանը պեղող հնագետները) չորս, էջմիածնում և Արմավիրում՝ մեկական, Բջնի ամրոցի XIII-XIV դարերի շերտից երեք,<sup>3</sup> Արտաշատում՝ երկու, Աղցում՝ մեկ: Հառիճի միջնադարյան վանական համակառուցյի պեղումների ժամանակ, 1969 թվին գտնվել է մեկ ծխամորճ հայտատու արձանագրութեամբ, սելջուկյան XIII դարի դրամի ուղեկցութեամբ,<sup>4</sup> որի մասին մեզ ժամանակին տեղեկացրել է վաղամեռիկ հնագետ, պրոֆ. Թելման Խաչատրյանը:

Վերջերս հայտնի դարձավ, որ կավե ծխամորճներ են գտնվել Մեծամորի պեղումների ժամանակ, միջնադարյան շերտից, որի մասին մեզ տեղեկացրեց հնավայրը ուսումնասիրող հնագետ էմմա Խանզադյանը:

Կավե ծխամորճներ գտնվել են նաև Արուճի վանական համակառուցյի պեղումներից և Դովրի գյուղի միջնադարյան բնակավայրից: Այս մասին մեզ հաղորդեցին հնավայրերը ուսումնասիրող հնագետներ Բագրատ Սաղոյանը և Սիմոն Հմայակյանը:<sup>5</sup>

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնված ծխամորճները պատրաստված են բարձր որակի «յուղոտ», լավ հուսցած, ավազահատիկներից զուրկ, կարմրավուն կամ բաց շիկավուն կավից: Որպես կանոն դրանք շատ նուրբ են, ակնահաճո և լավ թրծված: Ծխամորճները պատրաստված են

<sup>1</sup> Տե՛ս Երևան քաղաքի պատմութեան թանգարանի իրերի կատալոգ, կազմեց Ստ. Եսայանը, 1964, էջ 34-35, հերթական համարները 114-124, աղ. ԺԴ, նկ. 1-11:

<sup>2</sup> Գ. Միքայելյան, Անանի ավագանի կիկլոպյան ամրոցները, Երևան, 1968, տե՛ս Հայաստանի հնագիտական հուշարձանները, հ. 1, աղ. 13, նկ. 1, 4:

<sup>3</sup> Այս մասին է, որ բազմամասնակի փնտրող Ս. Բարխուդարյանը գրում է. «... ուր շուրջով կանգնած են հիանալի քանդակներով խաչքարեր և մեծամեծ տապանաքարեր, որոնք պատկանում են տեղի տանուտերերին և նրանց տոհմակիցներին: Այստեղ առանձնակի է սր. Աստվածածին մատուռի մոտի խաչքարը Գավառի առվի և եկեղեցու շինության կարևոր արձանագրութեամբ (№ 200) 1374 թվականով»: Ս. Բարխուդարյանին հաջողվել է միայն այդ տեղից հավաքել 56 փմագիր, որոնք հիմնականում թվագրվում են 1374-ից մինչև 1596 թվականը: Հավանական է, որ Գավառի տարածքը բնակչությանից զրկվել է Շահ Արաաի 1604-1605թթ. «Մեծ սուրբունի» հետևանքով, որովհետև XVII-XVIII դարերից ոչ մի վիճագիր հիշատակություն չկա: Տե՛ս Դիվան հայ վիճագրութեան, հ. 4, Երևան, 1973, էջ 49, արձ. 200-256:

<sup>1</sup> Գ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 18-20 և 55:

<sup>2</sup> Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան, Գառնի 3, էջ 87-103, նկ. 35:

<sup>3</sup> Բջնի ամրոցում պեղումներ ենք կատարել 1977-1980թթ. նյութերը գտնվում են Երևանի պետական համալսարանի պատմութեան թանգարանում:

<sup>4</sup> Ս. Սաղոմյան, Փակագրությունը հայ վիճագրութեան մեջ, Լրաբեր, 1980, № 3, էջ 81: Ծխամորճն իր վրա ունի Հայաստան արձանագրութեամբ փակագիր:

<sup>5</sup> Հայաստանի տարածքում կավե ծխամորճների տարբեր տեղերում գտնվելու և նրանց քանակի մասին տեղեկացել ենք նաև տարբեր աղբյուրներից, անհատ անձանցից: Մեր այս տվյալները ծխամորճների մասին կարող է թերի լինել, այժմ դրանց գտնվելու վայրի աշխարհագրությունը ավելի ընդարձակ է և քանակն էլ ավելի:

երկփեղկ կաղապարների մեջ, որի հետքերը նշմարելի են վերջիններիս իրանի վրա: Ծխամորճ պատրաստող վարպետները, որպես կանոն, լրացուցիչ մշակման ժամանակ, փորձել են վերացնել փեղկերի միջև գոյացած երիզը:

Խնդրո առարկա ծխամորճների մեծ մասը գեղազարդված է կաղապարների մեջ արված զարդապատկերներով, մյուս մասը՝ կաղապարելուց հետո, ծխամորճի դեռևս խոնավ ժամանակ, կնքադրոշմների օգնությամբ: Ծխամորճները դաջազարդվել են հատուկ այդ նպատակի համար նախատեսված փոքր կնքադրոշմներով, որոնք իրենց վրա ունեցել են պատկերված բազմաթերթ վարդյակներ, ծաղկաթերթեր, բուսական և երկրաչափական պատկերներ:

Եթե առանձին մանրամասներից վերանանք, ապա Հայաստանում գտնված ծխամորճների ողջ քանակությունը կարելի է բաժանել չորս հիմնական խմբերի.

Առաջին խումբը փոքր գլխիկ, ուռուցիկ կոթուն և բարձր ու հաստ շուրթեր ունեցող ծխամորճներն են: Այս խումբը բավականին ստվար քանակ է կազմում: Դրանց շուրթերի և գլխիկի միացման ներսի մասը ծխելիքի (թերևս ծխախոտի կամ այլ նյութերի) վառվելու հետևանքով առաջացած ածխանման սև նստվածք ունի: Ծխամորճների գլանաձև մասերն առանձին են պատրաստվել և ապա միացվել կոթունին: Ծխամորճները դրսից լավ մշակված են, փայլեցված և ներկված են կարմիր կամ դեղնավուն օքրայով, որը յուրահատուկ տեսք է հաղորդում կերտվածքին:

Քննարկվող խմբի ծխամորճները զարդարված են կավի



Նկար. 19

դեռևս խոնավ ժամանակ: Սուր գործիքի, կամ կնքադրոշմի օգնությամբ արված են տարբեր տիպի երկրաչափական կամ բուսական զարդապատկերներ:

Դրանց մեծ մասը զարդարված է վերից վար անցնող ակոսիկներով (կանելյուրներով), որոնք շատ հաճելի տեսք են տալիս ծխամորճներին (նկ. 19): Նրանց կոթունի և գլխի-

կի միացման տեղը նման է լեզվակի, որի շուրջն անցնում է մանր կետազարդ: Նմանատիպ կետազարդ է նկատվում ծխամորճների շուրթերի վերին եզրերում:

Երկրորդ խումբը համեմատաբար փոքր չափերի գլխիկներ և քիչ բարձրացող շուրթեր ունեցող ծխամորճներն են: Սրանց քանակը չի անցնում մի քանի տասնյակից: Բոլորն էլ լավ մշակված ու փայլեցված են: Այս խմբի ծխամորճների մի մասի գլխիկը կոթունի հետ միացված է լեզվակի տեսքով, որի վրա հանդիպում են պատրաստող վարպետներին բնորոշ անհատական նշաններ, իսկ շուրջն անցնում է մանր վերադիր կետազարդ: Մյուսները միացման տեղում, ճնշելու միջոցով ստացել են ուղղանկյուն պատկեր: Երկրորդ խմբի ծխամորճների հիմնական առանձնահատկությունն այն է, որ գրեթե բոլորն անխտիր լավ դրոշմազարդված են: Նրանց վրա պատկերված են 8, 10, 12 թերթանի վարդյակներ կամ պարուրաձև զարդապատկերներ: Մի քանիսի վրա պատկերված են ինչ-որ լայնատերև ծաղկի թերթեր (նկ. 20):

Բոլոր ծխամորճների գլխիկները ներսի կողմում ածխանման նստվածք ունեն: Ինչպես առաջին խմբի ծխամորճներին, սրանց գլխիկները նույնպես պատրաստվել են առանձին կաղապարների մեջ և ապա միացվել կոթուններին: Հատկապես



Նկար. 20

այս խումբը պատրաստված է գեղարվեստական նուրբ ճաշակով, մեծ ջանադրությամբ և վարպետությամբ: Որպես կանոն բոլորն էլ ներկ-

ված են կարմիր ներկով:

Երրորդ խումբը կազմում են համեմատաբար փոքր քանակություն, որոնց գլխիկները, հակառակ առաջին երկու խմբերի, ոչ թե կլոր կամ ձգված են դեպի վեր, այլ տափակ են և ու-



Նկար. 21

րողություն: Սրանք

նույնպես զարդարանված են, իսկ մի քանի օրինակներն այն աստիճան են դաժված, որ ծխամորճների գլխիկների վրա հնարավոր չէ գտնել գեթ մի փոքր տեղ, որը պատված չլինի դաժվածքով՝ լոտոսի բացված ծաղիկներ, վարդյակներ, երկրաչափական պատկերներ և այլն, որոնք իրարից բաժանվում են վերադիր կետաշարերով: Այս խմբի ծխամորճները նույնպես լավ մշակված բաց դեղնավուն կավից են պատրաստված, հատուկ փայլեցված, սակայն առանց գունազարդման (նկ. 21):

Չորրորդ խմբի մեջ առանձնացրել ենք համեմատաբար պարզ, զարդապատկերներից զուրկ ծխամորճները, որոնք ոչնչով աչքի չեն ընկնում: Պարզ նկատելի է, որ սրանք պատրաստվել են առանց լրացուցիչ ջանքեր թափելու և վերջիններս գործածողները ակներևաբար հասարակութայն ընչազուրկ խավի ներկայացուցիչներ են եղել:

Խնդրո առարկա ծխամորճներից շուրջ մեկ տասնյակի վրա կան այն պատրաստող վարպետների անհատական նշանկների, իսկ Լոռեի հնավայրից գտնված երեք նմուշների վրա նկատվում է միևնույն վարպետի կնիքը (նկ. 22): Այն արված է ծխամորճի կոթունի և գլխիկի միացման տեղից քիչ վեր՝ դեպի կոթունի բարակացող մասը: Այս հանգամանքը մեզ հնարավորություն է տալիս ենթադրելու, որ Լոռե քաղաքը, հավանաբար, ունեցել է կավե ծխամորճների սեփական արտադրության արհեստանոց:



Նկար. 22

Հայաստանի Հանրապետության տարածքի վերոհիշյալ հնավայրերից բացի, կավե ծխամորճներ գտնվել են հարևան Վրաստանի (Դմանխսի, Թբիլիսի և Ախալքալաք) քաղաքների հնավայրերի պեղումներից:<sup>1</sup> Ադր-

բեջանից (հատկապես Բաքու քաղաքի պեղումներ,<sup>1</sup> Բայլական, Գյուլիստան<sup>2</sup>) ու Հյուսիսային Կովկասից (Դաղստան):<sup>3</sup> Դրանք ուսումնասիրող Ռաֆայիլ Ահմեդովը մանրամասն նկարագրում է այն, որից պարզ է դառնում, որ Բաքվի, Դաղստանի և Վրաստանի պեղումներից հայտնի ծխամորճների օրինակները հար և նման են Հայաստանում գտնվածներին՝ թե իրենց ձևերի բազմազանությամբ, թե՛ պատրաստման հնարքներով և թե՛ պատկերազարդումով: Բաքվում գտնված երեք ծխամորճի վրա ուսումնասիրողը ընթերցել է թերևս ծխամորճի տիրոջ կամ այն պատրաստող վարպետների՝ Փավրիզ, Յուսուֆ, Ասադ անունները: Իսկ այլ օրինակների վրա հանդիպում են ծխամորճը պատրաստող վարպետներին բնորոշ անհատական պայմանական նշանների կնիքներ:<sup>4</sup>

Այս ամենով հանդերձ մեզ հետաքրքրեց, թե նշված վայրերից բացի, էլ որտեղ են հանդիպում կավե ծխամորճներ: Պարզվեց, որ շուրջ 80 ծխամորճ է գտնվել Մոսկվա քաղաքի Յուզալայի գետափին ուսումնասիրված կավագործական արվարձանի պեղումներից: Ծխամորճներ են գտնվել նաև Մոսկվայի մետրոպոլիտենի կառուցման ժամանակ և Կրեմլի մոտակայքում:

Դրանք հրատարակող Ռ. Ռոզենֆելդը, ի մի բերելով Մոսկվա քաղաքի տարբեր վայրերում հայտնաբերված կավե ծխամորճները, այն բաժանում է երկու մեծ խմբի.

ա) ծխամորճներ՝ պատրաստված հարթ մակերես ունեցող կաղապարներում և

<sup>1</sup> Գ.Ա. Լոմտաձե, Тбилисская экспедиция, տե՛ս АО, 1967, Москва, 1968, էջ 307: Կ.Վ. Բարսեղյան, Позднефеодалная неполивная керамика из Восточной Грузии, см. Археологические памятники феодальной Грузии. т. 3, Тбилиси, 1978, էջ 132.

<sup>1</sup> Р.Д. Ахмедов, О курительных трубках средневекового Баку, տե՛ս Известия АН Азерб. ССР, 1979, № 2: Р. Ахмедов, Керамика средневекового Баку IX-XVIII вв., кандид. диссерт., Баку, табл. 28-30, 1981, էջ 125-131, 94. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարան: Նաև նույն հեղինակի, Разведка в зоне двухэтажного карвансарая XVI-XVIII вв. в "Ичери Шахар", տե՛ս АО, 1976, Москва, 1977, էջ 487.

<sup>2</sup> Г.М. Ахмедов, Средневековый город Байлакан (Историко-археологическое исследование), Автореферат докт. диссерт., Баку, 1972, էջ 122.

<sup>3</sup> А.А. Кудрявцев, Раскопки богатого здания VIII-XIII вв. в жилом квартале средневекового Дербента տե՛ս Археологические памятники раннесредневекового Дагестана, Махачкала, 1977, էջ 99, աղ. VII, նկ. 6.

<sup>4</sup> Ռ. Ախմեդով, նշվ. աշխ., էջ 128-130:

բ) ծխամորճներ՝ պատրաստված զարդարուն կաղապարներում:

Առաջին խմբի ծխամորճներն իրենց չափերով խոշոր են: Դրանք շուրջ 9-10սմ բարձրությու են ունեն ու բազմաքանակ են: Ըստ հեղինակի, դրանք առավել վաղ ժամանակներով են թվագրվում, քան երկրորդ խումբը:<sup>1</sup>

Չնայած քննարկվող խմբի ծխամորճները հասարակ են համարվում, սակայն արտաքինից ենթարկվել են լրացուցիչ զարդարման՝ կնքադրոշմների օգնությամբ:<sup>2</sup>

Ուսումնասիրվող կավե ծխամորճների խմբաքանակի մեջ հեղինակն առանձնացնում է հատկապես մեկը, որի գլխիկի շուրթին պղնձե օղակի հետքեր են պահպանվել: Կարելի է ենթադրել, որ այդ պղնձե օղակը ժամանակին ծխամորճի փակվող-բացվող կափարիչի մի մասն է եղել, որով սովորաբար կարգավորում էին օդի քանակությունը ծխելու ժամանակ՝ կրակը թեժացնելու կամ ընդհակառակը, թուլացնելու համար:<sup>3</sup> Կափարիչի բացակայությունը դեպքում օդի մատակարարումը կարգավորվել է ծխողի բուխ մատի օգնությամբ:

Մոսկովյան ծխամորճների ուսումնասիրության հեղինակի հավաստմամբ դրանց մեծ մասն ունեցել է պատրաստող վարպետի կնիք՝ տարբեր ձևերի ու տեսքի: Մի քանիսն էլ ունեցել են արաբատառ արձանագրությունների անընթեռնելի նմանակումներ: Ռ. Ռոգենֆելդտը պնդում է, որ այս ծխամորճներն արտադրվել են տեղում, քանի որ գտածոների մեջ կան ինչպես թերի մշակումներով, խոտանված, այնպես էլ բոլորովին չօգտագործված նմուշներ: Հետևաբար, արաբատառ անընթեռնելի արձանագրությունների առկայությունը պետք է համարել տեղական արտադրության նմանակման փորձ՝ ելնելով շուկայում վերջիններիս նկատմամբ եղած մեծ պահանջարկից:

Մոսկովյան տարածքից հայտնի ծխամորճների երկրորդ խումբը լրացուցիչ մշակման գրեթե չի ենթարկվել, քանի որ

<sup>1</sup> P. Розенфельдт, Московское керамическое производство XII-XVIII вв., Москва, 1968, տե՛ս Свод археологических источников, вып. Е 1-39, էջ 56-57 և 71-72.

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նշված աշխ., էջ 57:

վարպետները բավարարվել են կաղապարների հարուստ զարդապատկերներով: Իսկ դրանք շատ բազմազան են: Նույնիսկ հանդիպում է կանացի գլխի նմանությամբ ծխամորճ՝ հարդարված վարսերով և գլխանոցով: Հանդիպում են նաև բարձրակրունկ, ճտքավոր կոշիկի նմանությամբ ծխամորճներ:<sup>1</sup>

Հեղինակը մոսկովյան գտածոները թվագրում է XVIII դարով՝ առնչելով Պետրոս Մեծի եվրոպական նորամուծությունների հետ: Միաժամանակ նա առանձնացնում է ծխամորճների մի խմբաքանակ, որն անվանում է «հոլանդական» և հիմնավորում նրանց բերովի լինելու հանգամանքը: Ըստ Ռոգենֆելդտի՝ Հոլանդիայում ծխամորճների արտադրությունը սկսվել է XVI դարի երկրորդ կեսին: Հոլանդական համարվող ծխամորճները թե՛ ձևերով և թե՛ հարդարման եղանակներով խիստ տարբերվում են տեղական՝ ռուսական արտադրանքից. պարզունակ են և անզարդ:

Հետաքրքրական է այն իրողությունը, որ Ալեքսեյ Միխայլովիչ ցարը 1644թ. հատուկ հրահանգով արգելում էր իր տերության տարածքում ծխախոտ աճեցնելը, վաճառքը և ծխելը, հակառակ դեպքում զանցանքի մեջ բռնվողը ենթարկվում էր մարմնական պատժի:<sup>2</sup> Այդ հրահանգը չէր տարածվում Մոսկվայում ապրող օտարերկրացիների, հատկապես մահմեդականների վրա: Նրանց համար արվում էր բացառություն, թույլատրվում էր «խմել» ծխախոտ, ինչպես XVII դարում Ռուսաստանում անվանում էին ծխելուն:<sup>3</sup>

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 57, ադ. 19, 42 և այլն:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 72:

<sup>3</sup> Ի դեպ, արժե նշել, որ նույն «խմել» բառով են արտահայտել ծխելը նաև հայ ուլ միջնադարյան հեղինակները: Օրինակ՝ XVI-XVII դարերում գրված «Պատմություն պիղծ թուխունի» բանաստեղծության հեղինակ Յովհաննեսը գրում է.

Ջրաուխ դալուն է զարդարուն,  
Դրած բերնին՝ լափեն քան գուն,  
Խըմեն, հանեն գոռխն ի բերնէն,  
Քըթեն, յաչացն, յականջներուն...:  
Սուտ քահանայք կան յաշխարհի,  
Խըմեն, գեխին գայն պիղծ թուխուն...:  
Նատին, խըմեն հրապարակավ,  
Հաչեն գոռնան քան զգեղի շուն...»:

Տե՛ս Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա, Երևան, 1979, էջ 617-618: Մեր կարծիքով ծխախոտ «խմել» հասկացությունը ծագել է մահմեդական աշխարհում ընդունված դայլանի (կայլանի, գլգլակի) օգտագործման եղանակից, որը ծխում էին ջրի և երկար խողովակի օգնությամբ: Այժմ էլ որոշ մահմեդական երկր-



Հոլանդական կոչվող կավե ծխամորճների մի ստվար քանակութունն հայտնի է դարձել Լենինգրադի (Ս. Պետերբուրգ) 1952 թվականի պեղումներից, և ուսումնասիրող հնագետը դրանք թվագրում է XVIII դարով:<sup>1</sup>

Մոսկվա քաղաքի տարածքում գտնված տեղական արտադրության ծխամորճների մեկ այլ ուսումնասիրող<sup>2</sup> առանձնացնում է շուրջ 15 ծխամորճի վրա հանդիպող պատրաստող վարպետի նշան-կնիքներ՝ արաբատառ անընթեռնելի արձանագրությունների, զիգագանների, վարդյակների կամ այլ պայմանական նշանների տեսքով, իսկ մի դեպքում էլ առանձնացնում է ռուսական «А» տառին նմանվող կնքադրոշմ:<sup>3</sup>

Հանրահայտ է Ղրիմի տարածքում XIII-XIX դարերի ընթացքում հայկական գաղթօջախի գոյությունն փաստը, որի բնակիչները թողել են տարաբնույթ մշակութային արժեքներ, այդ թվում ճարտարապետական հուշարձաններ, վանական համակառույցներ, հին գերեզմանատուն-հանգստարաններ և այլ բնույթի կառույցների պերճախոս վկաներ: Դրանցից առանձնանում է Հին Ղրիմ քաղաքի տարածքում պահպանված XIV դարի Սուրբ Խաչ հոգևոր համալիրը, որը դարերի ընթացքում մի շարք նորոգումներից հետո է հասել մեր օրերը: Ղրիմի տեղական մարմինների և հայ հովանավորների նախաձեռնությամբ որոշվել է այն նորից վերանորոգել: Այդ նպատակով 1976-1977 և 1992-1993թթ. հնագիտական պեղումներ են իրականացվել համալիրի տարածքում: Պեղումներն իրականացնող հնագետ Ֆ. Բաբայանի վկայությամբ միջնադարյան նյութական մշակույթի տարաբնույթ նյութերի հետ գտնվել են նաև կավե և ոսկրե մեկ տասնյակից ավելի ծխամորճներ:<sup>4</sup> Ծխամորճների մի մասի վրա պահպանվել են դաջագարգման հիանալի օրինակներ, իսկ

մեկի վրա հայատառ հապավված մեկ բառ: Ղրիմում ի հայտ եկած ծխամորճները հար և նման են Հայաստանի հնավայրերից հայտնիներին: Դրանք պատրաստվել են լավ հունցված բարձրորակ կավից կաղապարի մեջ ու ենթարկվել են լրացուցիչ գեղազարդման կնքադրոշմների օգնությամբ: Ծխամորճները ըստ ձևերի դասակարգման չեն ենթարկվել հեղինակի կողմից: Պեղող հնագետը, ելնելով ծխախոտի՝ Եվրոպա բերվելու իրողությունից, Ղրիմի ծխամորճները թվագրում է XVI-XVIII դարերով:<sup>1</sup>

Ծխամորճների հարուստ հավաքածու առկա է Բուլղարիայի Վառնա քաղաքի պատմության թանգարանի պահոցներում՝ 370 հատ, Սոֆիայի հնագիտական թանգարանում՝ 350 նմուշ,<sup>2</sup> ինչպես նաև Բուխարեստի թանգարանում մի քանի տասնյակ հատ:<sup>3</sup> Կավե ծխամորճների հարուստ հավաքածու առկա է Մոլդովայի թանգարաններում:<sup>4</sup>

Վառնայի թանգարանի ծխամորճներն ուսումնասիրող հնագետ Մագդալինա Ստանչևան ամբողջ նյութը նույնպես բաժանել է չորս հիմնական խմբերի:

Առաջին խմբի մեջ նա միավորում է զարդարուն կոթուն ունեցող և փոքր գլխիկներով շուրջ 40 ծխամորճ: Այս խմբաքանակը հիմնականում պատրաստվել է զարդարուն կաղապարներում, հետագայում ենթարկվել լրացուցիչ մշակման: Հատկապես շատ են դրոշմակնիքների օգնությամբ զարդաբանվածները: Հիմնականում պատկերված են վեց-ութ թերթանի վարդյակներ, ծաղիկներ, բուսական և երկրաչափական զարդեր, շեղանկյուններ և այլ պատկերներ, որոնք իրարից բաժանվում են փոքր փոսիկազարդերի կամ ուռուցիկ կետազարդերի օգնությամբ:

ներում (Թուրքիա, Իրան, Սիրիա, Եգիպտոս և այլն) այն կոչվում է «նարգիլի խմել»: Պոլսահայերը XVIII-XIX դարերում և նույնիսկ վերջերս ծխախոտի գլանակ ծխելու փոխարեն օգտագործում էին «Ջղարա մր խմել» արտահայտությունը:

<sup>1</sup> А. Грач, Археологические раскопки в Ленинграде, М.-Л., 1957, էջ 13-14, աղ. 5-6.

<sup>2</sup> М. Рабинович, Гончарная слобода в Москве XVI-XVIII вв, տե՛ս МИА СССР 7, էջ 72-73, նկ. 22.

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Stéa Ф. Бабаян, Э. Корхмазян, Монастырь Сурб Хач как центр армянской культуры в Крыму, Ереван-Симферополь, 2008, էջ 33-34:

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> М. Станчева и Ст. Медарова, Производство на глинени лули у нас. Музей и пометници на културата, Варна, 1968, գիրք 4, էջ 4-13. Станчева Магдалина, Колекцията от лули във Варненската музей, տե՛ս Известия на пародная музей, Варна, գիրք VIII (XXIII), 1972, էջ 81-99.

<sup>3</sup> J. Jonascu – Vt. Zirra, Manastirea Radu Voda, si biserica Bucur, Bururestii de odinoara, 1959, p. 76, pl. LXVIII (68), 1-3.

<sup>4</sup> Al. Andronic – Eug. Neamtu, Cercetari archeologice petepitiul orasului Jasi en anii, 1956-1960. Archeologia Moldovei, II-III, 1964, p. 425; p. 428 fig. 141.

Այս տիպի ծխամորճները հեղինակը թվագրում է XVIII դարի սկզբներով և համարում է տեղական կավագործական արհեստանոցի արտադրանք:<sup>1</sup>

Նման հետեւության համար հեղինակը լուրջ փաստարկներ ունի, քանզի գրավոր վկայություն կա Սոֆիայում դեռևս 1604 թվականին կավագործական էսնաֆուլթյան (համքարության) հիմնադրման մասին:<sup>2</sup> Պատահական չպետք է համարել, որ քննարկվող ծխամորճների մեծ մասի վրա, որպես վարպետի նշան, նշմարվում է միևնույն կնքադրոշմը:

Երկրորդ խմբի մեջ միավորվում են սպիտակախեցի ծխամորճները: Այս խմբի ծխամորճների գլխիկը և կոթունը երկփեղկանի կաղապարի շնորհիվ մի ամբողջություն են կազմում: Դրանց վրա նույնպես կնքադրոշմների օգնությամբ դաջված են պատրաստող վարպետներին բնորոշ կնիքներ՝ արաբատառ հապավված բառեր, կամ պայմանական նշաններ: Ծխամորճներն առավել պարզունակ են, զարդարանքից զրեթե զուրկ:<sup>3</sup> Սոֆիայի թանգարանում քննարկվող խմբի ծխամորճների քանակն անցնում է հինգ տասնյակից:<sup>4</sup> Քանի որ դրանց մեջ կան նաև խոտանված նմուշներ, որոնք բոլորովին գործածությունից մեջ չեն եղել, ուստի ուսումնասիրողներն իրավացիորեն դրանք համարում են տեղական արտադրության արգասիք: Հետաքրքիր է, որ նման տիպի ծխամորճներից երկուսը ջնարակապատ է: Ջնարակապատ ծխամորճ հանդիպում է նաև Մոսկվայի և Բաքվի հավաքածուներում, իրողությունն, որ Հայաստանի և Վրաստանի հնավայրերից հայտնի չէ:

Երրորդ խմբի մեջ, հնագետ Մ. Ստանչևան առանձնացնում է կարմրախեցի, գրեթե անզարդ ծխամորճները, որոնք հիմնականում ունեն գլանի տեսք: Պատկերներ միայն նկատելի են ծխամորճների կոթունների և գլխիկների միացման տեղերում կետազարդի կամ փոսիկազարդի տեսքով: Չեն բա-

ցառվում նաև սրանց վրա այն պատրաստող վարպետներին բնորոշ պայմանական նշանները:<sup>1</sup>

Չորրորդ խմբի մեջ միավորված են այն ծխամորճները, որոնք պատրաստված են երկփեղկ կաղապարների մեջ, զարդարված են բուսական և երկրաչափական պատկերներով, հաճախ նաև ենթարկվել են լրացուցիչ մշակման:

Խնդրո առարկա ծխամորճներն աչքի են ընկնում ձևերի բազմազանությամբ. մի քանի օրինակներ նույնիսկ ոսկեգոծված են:<sup>2</sup> Դրանցից մեկը երկարաճիտ կոշիկի տեսք ունի:<sup>3</sup> Խմբաքանակում կան նաև պղնձե (բրոնզե) և արծաթե ծխամորճներ,<sup>4</sup> որոնց գլխիկի պատերը նուրբ են, բայց վրան կան արծաթագործության արհեստի մեջ հաճախ կիրառվող սևադելու կամ մետաղական գրչի օգնությամբ կատարած նկարազարդումներ:

Դրանք հաճախ ուղեկցվում են արաբատառ անընթեռների արձանագրություններով: Հարկ է նշել, որ Հայաստանի տարածքում բրոնզից ծխամորճ ընդամենը մեկ օրինակ է հայտնի՝ Թանահատ-Գլաձորի վանական համակառույցի մեր պեղումներից:<sup>5</sup> Հետաքրքիր է, որ այդ օրինակը զուրկ է որևէ զարդապատկերից:

Կավե և մետաղե ծխամորճների հետ Վառնայի հավաքածուի մեջ հանդիպում ենք մի քանի նմուշներ, որոնք պատրաստված են քարից (մարմար, թերթաքար), իսկ մյուս դեպքում՝ փայտից: Դրանք իրենց թե՛ ձևով և թե՛ զարդարման տեխնիկայով կրկնում են կավե ծխամորճները:<sup>6</sup>

Թեև Հայաստանում քարե կամ փայտե ծխամորճներ չեն գտնվել, սակայն դրանց գոյությունը մասին կան գրավոր տեղեկություններ ժամանակակիցների վկայություններում: Այսպես. XVI–XVII դարերի արդեն մեր կողմից հիշատակված բանաստեղծ Հովհաննեսն այսպես է նկարագրում ծխամորճը.

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 89, նկ. 13:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 94-96, նկ. 25:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 83-94, նկ. 5-6, 16-17 և 21-22:

<sup>5</sup> Ի. Ղարիբյան, Գլաձոր, Երևան, 1983, էջ 73, նկ. 32:

<sup>6</sup> Մ. Ստանչևան, նշվ. աշխ., էջ 97-98, նկ. 26:

<sup>1</sup> Մ. Ստանչևան, նշվ. աշխ., էջ 82, 87, նկ. 7, 8:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 82-93:

<sup>3</sup> Մ. Ստանչևան, նշվ. աշխ., էջ 82-83:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 87-88:

«Իւր զալիոնն է սև մարմար  
Կոթն ապանոս է և նախշուն»:<sup>1</sup>

Այսպիսով, բավարարվելով միայն Բալկանյան երկրների մի մասի, Մուլդովայի, Ռուսաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Դաղստանի և Հայաստանի թանգարաններում արդեն կուտակված կավե ծխամորճների հպանցիկ ծանոթությամբ, պարզ է դառնում, որ դրանք շատ տարածված են եղել ինչպես իրենց կիրառական նշանակությամբ, այնպես էլ ձևերի բազմազանությամբ ու զարդարման տեխնիկայով:

Չնչին բացառությամբ,<sup>2</sup> բոլոր երկրների ծխամորճ ուսումնասիրողները համակարծիք են, որ կավե ծխամորճները հանդես են եկել միայն XV դարից հետո և իրենց ծաղկման գագաթնակետին են հասել XVII–XVIII դարերում, կապելով այն ծխախոտի Ամերիկա մայրցամաքից Եվրոպա ներմուծելու հետ: Մեր դիտարկումները, հնագիտական հուշարձանների պեղումների շերտագրությունը, ուղեկցող լավ թվագրվող խեցեղենը և վերջապես նրանց ձևերի կատարելությունը դրանց թվագրման խնդրում տարակարծության տեղիք են տալիս:

Հայ հնագետներից ոմանք, որոնց թվում Գր. Կարախանյանը, Ստ. Եսայանը և ուրիշներ կարծիք են հայտնել, որ Հայաստանում գտնված ծխամորճները կարող են լինել վաղ միջնադարյան կամ ընդհանրապես միջնադարյան ժամանակաշրջանի արտադրանք:<sup>3</sup> Նման կարծիք էր հայտնում նաև հանգուցյալ պրոֆ. Կարո Ղաֆաղարյանը մեր մասնավոր գրույցների ժամանակ:

Դրան հակառակ մի շարք մասնագետ-հնագետներ կասկած են հայտնում, որ խնդրո առարկա կավե ծխամորճները, հավանաբար ուշ միջնադարյան ծագում ունեն, այն կապելով միայն ծխախոտի Եվրոպա ներմուծելու հետ (Ա. Քալանթարյան, Հ. Պետրոսյան, Ֆր. Բաբայան):

Նկատի ունենալով մեր կատարած հնագիտական պեղումները Լոռե և Բջնի ամրոցներում, Թանահատ–Գլաձորի վանական համակառույցում, այդ հուշարձանների շերտագրությունը, ծխամորճների գտնվելու տեղավայրերը, այն ուղեկցող, հնագիտական առումով լավ թվագրվող խեցեղենը, ծխամորճների ձևերի կատարյալ լինելը, զարդարման բազմազանությունը, հակված ենք հանգելու այն հետևությունը, որ Արևելքում ծխամորճները հանդես են եկել միջին դարերում և սկզբնական շրջանում կապ չունեն միայն ծխախոտ ծխելու հետ: Այլ խնդիր է, որ հետագա դարաշրջանում (XVI–XVIII դդ.), երբ ծխախոտն իր տեղը հաստատեց եվրոպական ժողովուրդների կենցաղում, արևելյան երկրներում այն նույնպես դարձավ սովորական երևույթ: Չնայած դա չէր կարող բացառել, որ ծխամորճներն օգտագործվեցին նաև իրենց նախկին նշանակությամբ:<sup>1</sup>

Նման տեսակետ պաշտպանելու համար ունենք հետևյալ կռվանները: Նախ. Լոռե ամրոցի պեղումների ժամանակ կավե ծխամորճների հիմնական խմբաքանակը գտնվել է XII–XIV դարերով թվագրվող միջնադարյան բաղնիքի և նրան հարող տարածքի շատրվանող ջրավազանների պեղումներից: Հնագիտական այդ շերտը հիմնավոր թվագրված է վրացական XII–XIV դարերի թագավորների հատած պղնձե դրամներով, ջնարակած և հախճապակե կավանոթներով, ապակե ջրամաններով ու փոքր սրվակներով, ալքիմիկոսների կողմից օգտագործած ալամբիկներով և վերջապես ճարտարապետական հուշարձաններով (բաղնիք, շատրվանող երկու ջրավազան, պալատական շինության, բնակելի շենք՝ որմնանկարներով հանդերձ և այլն):<sup>2</sup>

Կավե ծխամորճների քանակը հատկապես առատ էր շատրվանող ջրավազանների շրջապատի պեղումներից հայտնի նյութերի մեջ: Շատրվաններով ջրավազանները նախատեսված էր ամռան շոգ օրերին փոխարինելու միջնադարյան այնքան հայտնի բաղնիքներին որպես հանգստի վայր, գրու-

<sup>1</sup> Հայոց հին և միջնադարյան բանաստեղծությունը, էջ 1617:

<sup>2</sup> Բացառություն է կազմում Ս. Իսմիզադեն՝ կավե ծխամորճները թվագրելով XII–XIV դարերով, տե՛ս С. Исмизаде. Крепостное сооружение в Бакинской бухте, տե՛ս СА, № 1, 1966, էջ 281–282, նկ. 1, 3.

<sup>3</sup> Երևան քաղաքի պատմության թանգարանի կատալոգ, էջ 34:

<sup>1</sup> Մինչև այժմ էլ Հնդկաստանի երկրներում Հաշիշամոլները օգտագործում են այն ոչ թե ծխախոտի գլանակների ձևով, այլ ծխամորճների օգնությամբ:

<sup>2</sup> Ի. Ղարիբջան, Լոռի ամրոցի պեղումները, տե՛ս ԲԵՆ, № 3, 1970, էջ 250:

ցատեղի, հանդիպումների, առևտրական գործարքների, նարդի և շախմատ (ճատրակ) խաղալու, կամ ընդհանրապես ժամանցի վայր: Ձմռանը՝ ցուրտ օրերին, այդ դերը ստանձնում էին բաղնիքները, ինչպես ճիշտ նկատել և համապատասխան աղբյուրագիտական նյութերով հիմնավորել է մեծանուն հնագետ Հովսեփ Օրբելին:<sup>1</sup>

Լոռե բերդ-քաղաքը XVI–XVII դարերում կորցրել էր իր վաղեմի փառքը և ռազմական նշանակությունը, գրեթե զրկվել բնակչությունից և վեր էր ածվել սոսկ ռազմական հենակետի, չնչին թիվ ունեցող պահակախմբով:<sup>2</sup>

Դվին քաղաքում փաստորեն կյանքը դադարել է 1250-ական թվականներին և այլևս չի վերականգնվել: Ուստի այնտեղ ծխամորճների քանակի սահմանափակ լինելը միանգամայն բացատրելի է: Բջնի ամրոցը որպես խոշոր բնակավայր դադարեց գոյություն ունենալուց 1604 թվականին, երբ Շահ Աբասի հայտնի բռնագաղթի հետևանքով նրա բնակչությունը քշվեց Պարսկաստան: Հետևաբար, այդ հնավայրում գտնված հնագիտական նյութի, որոնց թվում նաև կավե ծխամորճների թվագրումը XV դարի վերջից չի կարող անցնել: Այն հնագիտական շերտը, որտեղ հանդիպում էին խնդրո առարկա ծխամորճները, զուգահեռ նյութերով և մոնղոլական տիրապետության շրջանին պատկանող դրամներով թվագրվում են XIII–XIV դարերով: Արժե հիշել և այն հանգամանքը, որ Իվանե Զաքարյանի տոհմաճյուղը, որն իր համար նստավայր էր ընտրել Դվինը, ստիպված 1250-ական թվականներին հրաժարվեց նրանից ու նստավայր դարձրեց Բջնին մինչև XV դարը ներառյալ:

Գառնի ամրոցը բնակչությունից նույնպես զրկվեց Շահ Աբասի վերոհիշյալ բռնագաղթի հետևանքով, այստեղ նույնպես գտնվել են կավե ծխամորճներ: Հառիճի վանական համակառույցի պեղման-մաքրման աշխատանքների ժամանակ գտնված կավե ծխամորճի հետ նույն շերտում գտնվել է սելջուկյան դարաշրջանին պատկանող դրամ, որի մասին արդեն վերը հիշատակել ենք:

Մեծամորի բրոնզեդարյան հնավայրն ուսումնասիրող հնագետ էմմա Խանզադյանը մեզ հայտնեց, որ այդ հուշարձանն ունի նաև բավականին շոշափելի միջնադարյան շերտ, որը լավ թվագրվում է մինչև XV դարը: Այս շերտի պեղումներից նույնպես գտնվել է կավե ծխամորճների մի քանի նմուշ, որոնք ուղեկցող նյութերով հուշարձանը պեղող հնագետի կողմից թվագրվում են XIV–XV դարերով:

Հնագետ Ս. Հմայակյանը Դովրի հնավայրի պեղումների ժամանակ նույնպես հանդիպել է կավե ծխամորճների, որոնք նրա պնդմամբ, նույնպես պատկանում են մինչև XIII–XIV դարի շերտին: Առավել քան հիմնավոր է այդ կարծիքը, քանի որ Դովրի հնավայրը դրանից ուշ դարաշրջանի հնագիտական շերտ չունի:

Արժե հիշել, նաև որ Բաքվի ծովածոցի միջնադարյան ամրոցն ուսումնասիրող հնագետ Ս. Իսմիգադեն իր պեղած մշակութային շերտը նույնպես թվագրում է XII–XIII դարերով, որտեղ հանդիպում են կավե ծխամորճներ: Շերտի թվագրման համար, հիմք են ծառայել ջնարակած և հախճապակե լավ թվագրվող կավանոթները, 1234–1235 թվականների արձանագիր տապանաքարը, ինչպես նաև Շիրվանշահ՝ Փարխուզի որդի Գերչասի պղնձե դրամները:<sup>1</sup>

Մյուս հնավայրերի առավել ստույգ թվագրման մասին, որտեղ գտնվել են կավե ծխամորճներ, առայժմ դժվարանում ենք հետևություն հանգել նյութի սակավության, դրանք գտնվելու տեղի և ուղեկցող նյութերի մասին ունեցած տեղեկությունների պակասի պատճառով:

Այդուամենայնիվ, միանգամայն իրավացի հարց է ծագում, եթե ծխամորճները միջնադարյան են, ապա մինչ ծխախոտի Եվրոպա ներմուծվելը, ի՞նչ էին ծխում արևելյան երկրներում:

Այդ հարցին պատասխան գտնելու համար դիմենք միջնադարյան Արևելքի բնակչության նիստ ու կացի, գրականություն ու արվեստի լավագույն գիտակ, բազմավաստակ Հով-

<sup>1</sup> И. Орбели, Бани и скоморах XII века, см. Избранные труды, Ереван, 1964, էջ 316:

<sup>2</sup> Ի. Ղարիբյան, Լոռի քաղաքը մատենագրության մեջ, էջ 213–214, տե՛ս ԲԵՂ, 1968, № 1:

<sup>1</sup> Ս. Իսմիգադեն, նշվ. աշխ., էջ 281–282: նույն դարերով է թվագրում իր գտածոն նաև Ա. Կուզրյավցևը, որը պեղումներ է կատարել Դաղստանում: Տե՛ս Ա. Կուզրյավցև, նշվ. աշխ., էջ 99:

սեփ Օրբելուն, որ նա արտահայտվել է Ամբերդ ամրոցի XII դարի բաղնիքի ուսումնասիրության առիթով: Մեծանուն արևելագետը, նկատի ունենալով արաբա-պարսկական, «Հագար ու մի գիշերներ» հեքիաթների և զրույցների ժողովածուի վկայությունները, ինչպես նաև այլ կողմնակի տեղեկություններ, հանգում է հետևյալին. «... մենք գիտենք Արևելքի բաղնիքներում, ովքեր նյութական հնարավորություն ունեին, ինչպես էին սիրում լողանալիս իրենց մարմինը օձել տալ բազմապիսի անուշահոտ յուղերով, կամ մերսում էին տարբեր օձանելիքներով, միաժամանակ շնչում էին ծխամաններում, խնկարկման անոթներում այրվող տարաբնույթ խեժերի հոտը»:<sup>1</sup>

Որպես վերջինիս ապացույց նկարագրում է Ամբերդի բաղնիքի հարկաբաժիններից մեկում գտնված բրոնզե փոքր հավանգների առկայությունը: Դրանց մեջ, ըստ Օրբելու, ծեծել ու մանրացրել են համապատասխան խեժեր և այրվելիք այլ նյութեր: Արդյոք չի՞ կարելի հավանական համարել և այն, որ այդ նպատակի համար կարող էին օգտագործել նաև կավե ծխամորճները և նարգիլները, որպես հաճույք ստանալու անհատական միջոցներ: Չէ՞ որ Արևելքի՝ Իրան, Հնդկաստան, Չինաստան, Սիամ, Միջին Ասիա և այլ երկրներում բնակվող ժողովուրդները հնուց ի վեր սովորույթ են ունեցել հոտավետ խեժերի հետ միասին օգտագործել նաև կակաչի սերմեր, կանեփ, քարաքոս<sup>2</sup> և այլն՝ հաշիշի (ափիոն) տեսքով, ծխելու կամ ծամելու համար: Իսկ հաշիշի օգտագործման խոր հնությունը մասին որոշակի տեղեկություն է հաղորդում Արևելքի անզուգական բանաստեղծ Ֆիրդուսին «Շահնամե» պոեմում:<sup>3</sup> Վերջապես, XV-XVI դարերի արաբալեզու ձեռագրերի

մանրանկարներում հանդիպում են նարգիլե, դայլան ծխող մարդկանց պատկերներ:<sup>1</sup>

Առավել հիմնավոր վկայություն կարող է հանդիսանալ գրավոր տեղեկությունը՝ ականատեսի տեղեկատվությամբ:

Հետաքրքրական է արաբ ճանապարհորդ և պատմաբան Իբն-ի Բատուտայի (1304-1378թթ.) հաղորդումը: Նա իր երկարատև ճանապարհորդությունների ընթացքում այցելել է Աֆրիկայի և Ասիայի բազմաթիվ երկրներ և քաջատեղյակ է այդ տարածքներում ապրող ժողովուրդների կենցաղին: 1360-ական թվականներին նա այցելում է Կիլիկիայի ծովափին՝ Ատալայի ծոցում հնագույն ժամանակներից հայտնի Կոռակեսիոն (հուն. «ագուավ» բառից) քաղաքը, որին Կիլիկիայի հայերը անվանում էին՝ Կալոնոոս: Հետագայում Իկոնիայի սուլթանի կողմից XIII դ. նվաճվելով՝ վերանվանվում է՝ Ալայա: 1363-ին Իբն-ի Բատուտան այցելելով Ալայա նկարագրում է տեղի բնակչության նիստն ու կացը, զբաղմունքը, հյուրասիրության բարձր մակարդակը, հագուստը: Մասնավորապես մեզ հետաքրքրող՝ հաշիշ ծխելու մասին բառացի գրում է. «Այս երկրի բոլոր բնակիչները իմամ Աբու Հանիֆայի դավանությամբ են... և հաստատ են սուննաթում. չկա նրանց մեջ ո՛չ կադարի, ո՛չ ռաֆիզի, ոչ մութագիլի, ոչ խարիջի և ոչ մուբթատի: Աստված բարձրյալն պարգևել է այս շնորհը նրանց: Միայն թե նրանք ծխում են հաշիշ և չեն խորշում նրանից (ընդգծումը մերն է – Ի.Ղ.)»:<sup>2</sup>

Այսպիսով, Ալայայում հաշիշի օգտագործումը այնքան տարածված է եղել, որ արաբ ճանապարհորդը մի քանի օր մնալով նրանց մեջ ականատես է եղել այդ իրողությունը: XIII-XIV դարերում Առաջավոր Ասիայում հաշիշ ծխելը հավանաբար լայն տարածում ուներ և այնտեղից թափանցել էր հայկական միջավայր: Հետևաբար, ծխամորճը պիտի լայն

<sup>1</sup> Հ. Օրբելի, նշվ. աշխ., էջ 319:

<sup>2</sup> Ավելորդ չէ հիշել, որ Հայրենական մեծ պատերազմի տարիներին, երբ ծխախոտի խիստ պակասություն էր գրգռվում, Հրազդանի շրջանի գյուղերում ընդունված էր ծխել ժայռերի, առանձին քարերի ու անտառի որոշ ծառատեսակների վրա գոյացող քարաքոսը և վայրի կակաչի (խաշխած) սերմերն իրար խառնելով: Այդ մասին ութսունամյա ծերունին հաճախ էր կրկնում. «Ճիշտ է սա թուփուն (ծխախոտ) չէ, բայց հազեցնում է ծխելու և ուտելու պահանջը և միաժամանակ թմրեցնում մարդկանց: Քարաքոս ծխելու սովորույթը ավանդվել է մեր պապերից, որոնք ապրել են Հին Բայազետի գավառի Արծաթի բերդավանում»: Այդ սովորույթը պետք է ավանդված լինի դարերի խորքից, մինչև ծխախոտը նրանց կենցաղ մուտք գործելը:

<sup>3</sup> Ֆիրդուսի, Շահնամե, Երևան, 1975, էջ 413:

<sup>1</sup> Հավաստի տեղեկություն կա, որ Իրանում միայն 1634 թվին է սկսվել առաջին անգամ ծխախոտի օգտագործումը: Դրանից առաջ այն հայտնի չի եղել Իրանում և նրան հարող երկրներում: Ի դեպ ծխախոտի առևտուրը Իրանում կազմակերպել են անգլիացիները, տե՛ս E. Pogosian, История табака и системы налога на него в Европе и Америке, СПб, 1871, էջ 19-19, 23.

<sup>2</sup> Իբն-ի Բատուտա, Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյանը, Երևան, 1940, էջ 15-17:

կիրառութիւնն ունենար մահմեդականներով շրջապատված, պետական ինքնուրույնութիւնը կորցրած Հայաստանում:

Այս ամենը մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ հայերն, իրենց հարևան ժողովուրդների հետ ապրելով հատկապես մահմեդական երկրներով շրջապատված տարածաշրջանում, «փոխ են առել» հարևան ժողովուրդների որոշ սովորութիւններ, ունեցել են անուշահոտ խեթերի ու տարաբնույթ թմրանյութերի օգտագործման սովորույթ և դրա համար օգտվել են ինչպես խնկարկելու անոթներից, այնպես էլ կավե ծխամորճներից:

Կարծում ենք միանգամայն բացատրելի է նաև այն իրողութիւնը, որ Հայաստանի այնպիսի նշանավոր քաղաքներ, ինչպիսիք Անին և Դվինն են, այդքան աղքատ են կավե ծխամորճների առկայութիւնից, իսկ որոշ տեղերում ընդհանրապես դրանք բացակայում են: Պատճառն այն է, որ ծխելու սովորույթը Իրան, Անդրկովկաս և Առաջավոր Ասիա ներմուծվեց մոնղոլ նվաճողների կողմից XIII դարի կեսերին: Հետևաբար, այն քաղաքները, որոնք ավերվեցին վերջիններիս նվաճումների միջոցին, դրանց բնակչութիւնը չէր կարող ունենալ ծխելու սովորույթ, հետևաբար՝ կավե ծխամորճներ: Իսկ այն քաղաքներն ու ամրոցները, որոնք շարունակեցին գոյատևել, բնական է, որ նրանց բնակչութիւնը վերնախավը, որը սովորաբար առավել շուտ է ընդունում օտարամոտ բարքերը, քան հասարակ ժողովուրդը, ենթարկվեցին նվաճողների սովորութիւններին և բնական է ծխամորճների մնացորդների այդ քանակութիւնը հնավայրերում:

Ի դեպ, պետք է նշել նաև, որ պատահական չէ Ռուսաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի, բալկանյան երկրների, Անդրկովկասի հնավայրերից հայտնի ծխամորճները հաճախ իրենց վրա կրում են արաբատառ անընթեռնելի արձանագրութիւններ, որոնք տեղական վարպետների կողմից դիտվել են որպես զարդարանք և ոչ թե անուն կամ պատկանելութիւնն ցույց տվող տեղեկութիւն, որի համար դրանք նախատեսված էին:

Նկատենք նաև, որ «հոլանդական» կոչվող ծխամորճները պարզունակ են, անզարդ և ոչնչով աչքի չեն ընկնում: Թեև հոլանդացիների և անգլիացիների միջնորդութեամբ ծխախոտը ներթափանցեց արևելյան երկրներ: Եթե Արևելքի երկրներում գտնված ծխամորճները կապված լինեին միայն ծխախոտի հետ, ապա պետք է կրկնեին եվրոպական երկրներից մեզ հայտնի ծխամորճների ձևերը և զարդարման տեսնիկան: Հակառակ դեպքում ստացվում է, որ ընդօրինակողները ի սկզբանե գերազանցեցին իրենց տարածողներին: Ծիշտ հակառակը, եվրոպան է աստիճանաբար հետևում Արևելքի, մասնավորապես մահմեդական աշխարհում արտադրված ծխամորճների ձևերին ու զարդարման եղանակներին: Մի՞թե հնարավոր է պատկերացնել, որ XVII–XVIII դարերում եվրոպայից Արևելք ներմուծվող ծխախոտի համար հանպատրաստից տեղերում սկսեցին պատրաստել այդքան բարձրարժեք սովորութիւնների ծխամորճներ:

Իսկ նարգիլի՛ ջրի և երկար խողովակի օգնութեամբ ծխախոտ ծխելու սովորույթը տարածված է միայն մահմեդական աշխարհում, նաև այն հայերի մեջ, որոնք շերտընդմեջ բնակվում են Թուրքիայի, Իրանի, Սիրիայի, Լիբանանի, Իրաքի և Եգիպտոսի տարածքներում:

Հիմք ընդունելով հիմնականում Հայաստանի և հարևան երկրների մի շարք բնակավայրերի պեղումների արդյունքները, դրանց հնագիտական շերտագրութիւնը, ուղղակի և անուղղակի այլաբնույթ տվյալները, հնարավոր ենք համարում պաշտպանել այն տեսակետը, որ կավե ծխամորճները Արևելքում հանդես են եկել դեռևս միջին դարերում (համեմայնդեպս XIII–XIV դարերում) և հարատևել են մինչև ուշ միջնադար, անկախ արևելյան երկրներ ծխախոտի ներթափանցումից:

Բ. ԶՆԱՐԱԿԱՊԱՏ ԽԵՅԵՂԵՆ: Կյուրիկյան ավատական թագավորութիւնի մայրաքաղաք Լոռե քաղաք-ամրոցի տարածքում իրականացված հնագիտական պեղումների միջոցին երևան բերված խեցեղենի մեջ իր ուրույն տեղն է զբաղեցնում ջնարակապատը, որը հայկական միջնադարյան արվեստի կերպարն է:

ձեռագրերում հայտնի է ապիկած անուկով:<sup>1</sup> Մասնագիտական գրականության մեջ այն հայտնի էր ջնարակապատ կամ ջնարակած, իսկ գավառաբարբառներում սուազոծ, շիրա տված, չինի, սարած աման անվանումներով:<sup>2</sup>

Լոռե հնավայրում հայտնաբերված ջնարակապատ խեցեղենի հավաքածուն թեև հարուստ է, այդուհանդերձ իրենից նշանակալից հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն զարգացած միջնադարյան ավատական փոքր թագավորության մայրաքաղաքի բնակչության գեղագիտական ճաշակը և արհեստավոր կավագործների հմտության մակարդակը պարզելու, այլև կարևոր նշանակություն ունի XIV-XVII դարերի անկայուն քաղաքական իրադրության պայմաններում գոյություն ունեցած տնտեսական և առևտրաարհեստագործական իրավիճակի մասին գաղափար կազմելու համար:

Լոռե քաղաք-ամրոցի պեղումների միջոցին գտնված ջնարակապատ խեցեղենի ժողովածուում առկա են պնակների, քրեղանների, փոքր թասերի, փիալաների, ըմպանակների ու խոհանոցային այլ սպասքի ամբողջացող և դրանց առանձին բեկորներ, որոնք օժտված են միագույն, երկգույն, իսկ հաճախ նաև բազմագույն ջնարակով:

Լոռե հնավայրում ձեռք բերված ջնարակապատ խեցանոթների մեջ ամենավաղ նմուշը անոթի բեկոր է (2493/33), որի (չափերն են՝ 7 սմx4,5սմ) գորշ հիմքի վրա երկնագույն (կապույտ) գծազարդեր ու ցայտազարդեր են արված: Բեկորը թվագրվում է XI-XII դարերով:<sup>3</sup>

Ակներևաբար խեցանոթը չի անգործապատվել, ինչի հետևանքով գույները բեկորի վրա խամրած են, խեցու մակերեսն անհարթ է: Հիշյալ բեկորը գտնվել է բնակելի թաղամասի Ա-14 քառակուսուց: Նմանօրինակ նմուշներ Անդրկովկասի միջնադարյան հնավայրերից մեզ հայտնի չեն:

Ջնարակապատ կավանոթների ժամանակագրական առումով հաջորդ խումբն իր տեսականի մեջ համեմատաբար բազմազան է: Վերջիններս առնթներ համանման նյութերով, գտնվելու տեղով, սելջուկյան ու վրացական պղնձե դրամների առկայությամբ և այլ համեմատական նյութերով թվագրվում են XI-XIII դարերով:

Խեցեղեն առարկաների վերոհիշյալ խումբն անգործապատ է. այդօրինակ կավանոթներն զարդարում էին անգործ հեռացնելու, գծազարդելու, փորագրելու և այլ հնարներով: Գծազարդման եղանակով զարդարված խեցանոթներից Լոռե հնավայրի հավաքածուում հետաքրքիր է քրեղանի հատակը (2494/62), որի նստուկը շատ փոքր է. չափերն են՝ 11սմx8,5սմ, նստուկի տրամագիծը 5սմ է: Քրեղանի ներսի կողմում իրար զուգահեռ զույգ գծերի հատումով ստացել են երկրաչափական պատկերներ (եռանկյուն, բազմանկյուն և այլն), այդ գծերի տեղում անգործ սուր գործիքի օգնությամբ հեռացվելով, անոթի բաց կապտավուն ֆոնի համեմատությամբ, ստացվել է մուգ դարչնավուն, գրեթե սև երանգ: Դրսից քրեղանը ջնարակապատ է մինչև շրթի տակը: Անոթը հավանաբար արտաքինից ամբողջությամբ ծածկված է եղել ջնարակով:

Մեկ այլ քրեղանի բեկորը (2494/48, չափերը՝ 4,5x8,5սմ) նույնպես հարդարված է գծազարդման եղանակով՝ սուրանկյուն եռանկյունիներով: Այդ եռանկյունիները հաջորդաբար պատված են կաթնավուն, մուգ կանաչ և դեղին երանգի ջնարակով: Եռանկյունիներն իրարից բաժանող գծազարդերը սև գույնի են. այն առաջացել է անգործ հեռացնելու եղանակով՝ թրծելու միջոցին ջնարակը հալվելով ավելի թանձր է կուտակվել գծազարդերի տեղում ու գունափոխվելով ստացել է սև երանգ: Քրեղանն արտաքուստ զուրկ է ջնարակից:

Փորագրման եղանակով է պատրաստված 2493/9 քրեղանի հատակը: Պահպանված մասը միայն ներքուստ է պատած կաթնավուն ջնարակով, որի մեջ մարգանցի օքսիդի կիրառությամբ հատակից դեպի շուրթը ուղղված մուգ երանգի, ճառագայթաձև զարդապատկեր է արված: Ջնարակը տեղ-

<sup>1</sup> Կ. Ղաֆաղարյան, Ալքիմիան պատմական Հայաստանում, Երևան, 1940, էջ 64, 72 և այլն:

<sup>2</sup> Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում, հ. Ա, էջ 230:

<sup>3</sup> Թվագրման խնդրում իր կարծիքը հայտնեց Անդրկովկասի միջնադարյան մշակույթի հմուտ գիտակ Ա.Լ. Յակոբսոնը մասնավոր գրույցի պահին:



տեղ պոկվել է, իսկ պահպանված մասերում ճաքեր են առաջացել:

Անգորը հեռացնելու եղանակով է պատված գորշ խեցի ունեցող մի բեկոր (1966/5),<sup>1</sup> որի մեջ տեղ-տեղ ամբողջությամբ հեռացվել է անգորը. արդյունքում ստացվել է մուգ շագանակի երանգ, իսկ այն հատվածներում, ուր անգորը պահպանվել է՝ բաց դեղնավուն է: Բեկորը մեծ չէ (չափերը՝ 5սմx3սմ-ի): Անոթի ներսում, հատակի վրա նկատելի է թրծման ժամանակ օգտագործված եռոտանու սուր ծայրերի հետքերը: Խեցանոթի բեկորն արտաքուստ նույնպես չի ծածկվել ջնարակով:

Փորագրելու եղանակով է պատրաստված մեկ այլ քրեղանի բեկոր (2493/164), որի վրա ստացվել է մուգ և բաց կանաչ գույների գուգակցում: Փորագրելու եղանակով պատկերվել է ծառ հիշեցնող բուսական զարդ: Բեկորը (չափ. 8 սմx4 սմ-ի) դրսից մինչև կլոր նստուկը նույնպես ջնարակապատ է:

Մեկ այլ քրեղանի բեկորի (2494/67) արտաքին երեսը պատված է սպիտակ կրաշփոթով, ներսը՝ կաթնավուն ու մուգ դարչնագույն երանգի ջնարակով: Քրեղանի հատակից դեպի շուրթերը տարածվող ճառագայթաձև գծազարդի օգնությամբ անոթի ողջ մակերեսը բաժանվել է մեծ եռանկյունիների, որոնց մեջ մուգ դարչնագույն ջնարակով արվել են բուսական խիստ ոճավորված աչք շոյող զարդամոտիվներ:

Գծազարդման-փորագրման եղանակով զարդարված համանման խեցեղենի բազմաթիվ օրինակներ են հայտնի ինչպես հայկական ժամանակամերձ հուշարձաններից հայտնի ջնարակապատ խեցեղենի հավաքածուներում, այնպես էլ հարևան երկրների հնավայրերի պեղումների միջոցին հայտնի խեցանոթների մեջ:<sup>2</sup> Որպես կանոն դրանք հիմնականում թվագրվում են որոշակի ժամանակահատվածով՝ XI-XIII դա-

րերով: Մասնավորապես Դվին քաղաքի պեղումներից հայտնի համանուն խեցեղենի մասին Կ. Ղաֆաղարյանը գրում է. «Այս խեցեղենի բնորոշ հատկանիշն այն է, որ սրա օրնամենտիկան (զարդանախշումը – Ի.Ղ.) արդեն միանգամայն կտրվել է իր ակունքներից՝ մեծ մասամբ բուսական և երբեմն էլ երկրաչափական ռեալիստական նկարներից և ճարտարապետական բարձրաքանդակներից և խիստ կերպով ոճավորվելով, ստացել է միանգամայն առանձին բնույթ, որ հատուկ է միայն կերամիկական խեցեղենին: Դվինում այս կավանոթների ջնարակը, համարյա թե առանց բացառությունների, գուգակցվում է անգորի վրա կատարված փորագիր զարդաքանդակներին, միայն հատ ու կենտ առարկաներ փորագիր զարդաքանդակներ չունեն: ... Քրեղաններն իրենց մեջ ունենում են նաև վարդյակների կամ բուսական այլ օրնամենտների խիստ ոճավորված փորագիր զարդաքանդակները»:<sup>1</sup>

Գառնի ամրոցի պեղումների միջոցին գտնված միջնադարյան խեցեղենն ուսումնասիրող Գր. Կարախանյանը հատկապես գծազարդ-փորագիր զարդանախշվածների մասին գրում է. «Խեցեղենի այս խումբը խիստ նմանություններ է դրսևորում Դվինում հայտնաբերված խեցեղենի հետ: Նմանությունն առկա է ոչ միայն ձևի, այլ նաև զարդամոտիվների, ջնարակի գույների հար և նման ձևերով գործադրելու մեջ: Դվինի XI-XIII դարերի ջնարակապատ խեցեղենը հիշեցնող Գառնիի հավաքածուի այս խումբը, ելնելով համանման զարդամոտիվներից, խեցանոթների ձևերի նմանությունից թվագրվում է XI-XIII դարերով»:<sup>2</sup>

Լոռե քաղաք-ամրոցում հայտ եկած փորագիր-գծագիր զարդապատկերով ջնարակապատ խեցանոթների վերոհիշյալ խումբը, ելնելով Դվինի, Գառնիի և ժամանակամերձ այլ հնավայրերից հայտնի խեցեղենի թվագրումից, այն վերագրում ենք XI-XIII դարերին:

Հարկ է նշել և այն, որ Լոռե բերդը թեև ավելի մոտ է գտնվել Անիին, որի խեցեղենի նմուշների վրա գերակշռում է կենդանապատկերը, պեղումների միջոցին հայտնաբերված

<sup>1</sup> Այս բեկորը չի բնագրվել թանգարան հանձնված նյութերի ցանկում, ուստի նշում ենք դաշտային մատյանի համարը:

<sup>2</sup> Կ. Ղաֆաղարյան, նշվ. աշխ., էջ 212-214: Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 236: Հ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 66, Ս. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 103, Վ. Զափարիձե, նշվ. աշխ., էջ 193: А. Яковсон, Художественная керамика Байлакана (Орен-Кале), (По материалам 1957-1955 гг.), էջ 230-231, табл. XIII, XVII, տե՛ս МИА 67: Գ. Զիրդի, նշվ. աշխ., էջ 58-59 և այլն:

<sup>1</sup> Կ. Ղաֆաղարյան, նշվ. աշխ., էջ 213:

<sup>2</sup> Բ. Առաքելյան, Գր. Կարախանյան, Գառնի III, էջ 91:



նմուշների վրա բացակայում է կենդանագարդը: Լոռեի կավագործ վարպետները առավել շատ հետևել են Դվինի օրինակին, որտեղ նման զարդապատկերով խեցեղենի քանակը նույնպես սահմանափակ է եղել:<sup>1</sup>

Լոռե բերդաքաղաքի կավագործ արհեստավորները ջնարակապատ խեցանոթները հարդարել են միջնադարում լայն կիրառություն բերող հայտնի տեխնոլոգիան՝ զարդանկարի ֆոնի անգորը հեռացնելու եղանակով: Այդօրինակ նմուշներից է ջնարակած պնակի շուրջ կեսը, որի վրա ներքուստ հեռացրել են անգորը և ստացել բուսական բավականին հետաքրքիր զարդամոտիվ: Դատելով նմանօրինակ նմուշներից, որպիսիք հայտնի են Դվինի և Անիի պեղումներից, պնակը XII-XIII դարերի արգասիք է:


Լոռե քաղաք-ամրոցի պեղումների միջոցին հայտնաբերված ջնարակապատ խեցեղեն անոթներից ուշագրավ է մեծ չափերի անոթի կափարիչի բռնակը, որի առկայությունը հուշում է հանգելու այն հետևություն, որ Լոռեի խեցեղենի հավաքածուում առկա են եղել անսովոր մեծ չափերի ջնարակապատ խեցանոթներ: Դատելով հարդարելու եղանակից՝ անոթը XII-XIII դարերի նմուշ է:

Այդ դարերով թվագրվող խեցանոթների բեկորներից ուշագրավ է կանաչ ջնարակով ծածկված պնակի հատակը, որի վրա ներքուստ անգորով պատած մակերեսի վրա գծագրվելու եղանակով վերարտադրված է երկգիծ իրար հատող եռանկյունիների երկրաչափական զարդապատկեր: Վերջինիս նմանօրինակ մեծ թվով խեցանոթների նմուշներ հայտնի են Դվինի XII-XIII դարերի հավաքածուներում: Ակներևաբար այս նմուշը ներմուծվել է Դվինից (աղ. XLVII (2)):

Ներքուստ հատակից ցրվող զարդապատկերներ ունեցող պնակների նմուշներից ուշագրություն արժանի է ենթաջնարակային հարդարանք ունեցող պնակի բեկորը, որի հատակին վերարտադրված է եռանկյունաձև երկրաչափական պատկերի մեջ խիստ ոճավորված բուսական զարդապատկեր: Եռանկյունների միջև հյուսվածքի զարդամոտիվն է, որը

նույնպես բնորոշ է միջնադարյան համաժամանակյա հնավայրերից հայտնի նմուշներին:

Կավանոթի հատակին արված հետաքրքիր մոտիվով ուշագրավ է միջնաբերդի բնակելի թաղամասում գտնված անոթի բեկորը, որի վրա գծագրվում ու տարբեր երանգի ջնարակումով արված են բուսական և երկրաչափական զարդապատկերներ (նկ. 23, 1):



Նկար 23

Հնավայրում հայտնաբերված ջնարակապատ խեցեղեն առարկաների շարքում հարդարման կատարելությամբ աչք է զարնում երկրորդ բաղնիքին հարող տարածքում, շատրվանող ջրավազանների հարևանությամբ գտնվող բնական քարայրի պեղումների միջոցին հայտնաբերված փիալան (նկ. 23, 2), որի հատակին կոբալտի երանգ ունեցող ջնարակով կաթնավուն ֆոնի վրա արված է բազմանկյան մեջ առնված բարդ զարդապատկերով կատարելությամբ աչքի զարնող նմուշը, որը կատարման մակարդակով տեղում հայտնի խեցեղենի եզակի օրինակներից է: Այդօրինակ զարդամոտիվը հատկանշական է արևելքի կիրառական արվեստի նմուշների վրա տարածում գտած զարդամոտիվներին:

Բացառիկ հետաքրքիր իրողություն է այն, որ Լոռե հնավայրի պեղումների միջոցին հայտնաբերված հնագիտական իրերի, գեղարվեստական խեցեղենի տեսականիում առկա են ծակոտկեն միագույն թասերի բեկորներ և մեկ այլ խեցանոթի կեսը ներկայացնող նմուշը, որը խոստում վկա է այն մասին, որ բերդաքաղաքի վերնախավի կենցաղում որպես շքեղ գեղարվեստական իր հայտնի է ծակոտկեն առարկան, որը վկայում է Դվին մայրաքաղաքից Լոռե բերդաքաղաք բերված լինելու մասին: Հանրահայտ իրողություն է, որ Դվին մայ-

<sup>1</sup> Կ. Ղաֆադարյան, նույն տեղում:

րաքաղաքում արտադրված ծակոտկեն խեցեղենի նմուշները XII-XIII դարերի արգասիք են: Պատմիչների վկայությամբ նմանօրինակ խեցանոթներ թեև արտադրվում էին Դվինում, սակայն վերջինս վաճառվում էր Միջագետքի երկրներում չինական արտադրանքի մակնիշով (աղ. LI (3)):

XIV-XV դարերում, թաթար-մոնղոլական լծի պայմաններում Լոռե բերդաքաղաքում չնայած երկրի տնտեսական կյանքի խաթարմանը, այդուհանդերձ շարունակվել է արդյունագործությունը, որի առարկայական վկայությունն է այդ դարերի ջնարակապատ խեցեղենի գոյությունը: Լոռե բերդի պեղումներով հայտնաբերված նյութերը հավաստում են, որ օտար տիրապետության տարիներին Հայաստան երկրի ոչ մեծ քաղաքներում նշանակալից չափով տնտեսական կյանքը շարունակվել է: Այս հետևություն փաստական ատաղձ են հանդիսանում XIII-XV դարերի խեցանոթների բեկորները, որոնք հայտնաբերվել են բերդաքաղաքի միջնաբերդի տարածքում: Այդ առումով ուշագրավ է ջնարակապատ օղակաձև նստուկով անոթը, որը ներքուստ և արտաքուստ հարդարված է կաթնավուն ֆոնի վրա արված երկնագույն թափանցիկ ջնարակով: Շուրթի վրա մուգ դարչնագույնով արված են երկրաչափական աղեղներ: Սակավ հետաքրքիր չէ նաև մեծադիր ափսեի շուրթի մեծ բեկորը, որի վրա սպիտակավուն աստառի կենտրոնից դեպի շուրթը տարածվող մասում արված են մուգ երանգի ջնարակի ցայտքեր, որոնք առնված են երկու կողմերից շուրջանակի անցնող գծազարդերի մեջ: Խեցին բավականին նուրբ է և կարծր: Նույն տեխնիկական եղանակով են հարդարված պնակների այլ նմուշներ, որոնց գծազարդերը շուրջանակի բոլորում են պնակի շուրթը, որի վրա մուգ դարչնագույն ջնարակի օգնությամբ արված է պայտաձև զարդաշղթա:

Պեղումներով հայտնաբերված խեցեղենի մեջ շահեկանորեն առանձնանում է կապույտ երանգ ունեցող անոթի շուրթը, որի պսակից ներքև շուրջանակի ձգվող հատվածի հարևանությամբ անոթը զարդարված է ուղղահայաց ուռուցիկ պատկերներով, որը գրեթե չի հանդիպում Հայաստանի համաժամանակյա հնավայրերից գտնված նմուշներում:

Քաղաքատեղիի պեղումներով հայտնի դարձած նյութերի շարքում ձևավորումով, ջնարակի երանգներով, ուշագրավ է XIV-XV դարերով թվագրվող պնակի նմուշը, որի օղակաձև հատակից դուրս փոփող մասերը մինչև շուրթը արտաքուստ և ներքուստ ծածկված են սրճագույն ջնարակի ստվար շերտով: Նմանօրինակ խեցեղենի օրինակներ հայտնի են Անդրկովկասի ուշ միջնադարյան խեցեղենից: Հնավայրում գտնված մեկ այլ ջնարակված քրեղանը հետաքրքիր է ներսի կողմում հատակի վրա արված քառանկյուն կոր գծազարդ պատկերներով կազմավորվող զարդամոտիվով, որի կենտրոնում արված է կլոր շրջանագիծ հիչեցնող զարդ: Սպիտակ աստառի վրա տարբեր երանգի ջնարակի գույներով անփույթ իրականացված է գունաբաժանումը: Խեցին կարմիր երանգ ունի, կավը խոշորահատիկ է, թրծումը՝ անօրակ: Անոթը աչքի չի ընկնում պատրաստման ու ջնարակման տեխնիկական հնարքներով (աղ. XLVIII):

Հետաքրքրական են նաև հնավայրում հայտնաբերված կապույտով սպիտակ ֆոնի վրա արված բուսական զարդամոտիվներով խեցեղենի նմուշները, որպիսիք հայտնի են ոչ միայն Հայաստանի ուշ միջնադարյան հնավայրերից, այլև պատահական գտածոներով (Երևան, Ամբերդ, Թանահատ, Գնդեվանք): Անոթի կենտրոնից դեպի շուրթերը տարածվող ճառագայթաձև զարդամոտիվով հարդարված անոթների բեկորներից հետաքրքրական է շատրվանող ջրավազանին հարող որմնակարներով հարդարված բնակելի շինության մեջ գտնված նմուշը: Անոթի ողջ մակերեսը զարդարված է բաց կապտավուն ջնարակով, իսկ դեպի շուրթը տարածվող ճառագայթները արված են առավել մուգ կապտավուն երանգով:

Նմանօրինակ խեցեղենը լայն տարածում է ունեցել Անդրկովկասի համաժամանակյա հուշարձաններում, և ամենուրեք նման խեցեղենը պատրաստման եղանակով և հարդարանքով վերագրվում է XIII-XV դարերին:

Գ. ՀԱՆՃԱՊԱԿԻ. – Լոռե քաղաք-ամրոցի խեցեղենի մեջ նշանակալից տեղ են զբաղեցնում սպիտակ կավահումքով կերտվածքները, որոնք մասնագիտական գրականության մեջ հայտնի են հախճապակի անունով: Պարզվում է, Լոռե մայ-

րաքաղաքի բնակչութեան առտնին կենցաղի ոլորտում ոչ պակաս կարևոր տեղ է ունեցել հախճապակե արտադրանքը: Այդ առումով իրենց պատրաստման եղանակով, հարդարման բազմազանութեամբ, մասնավորապես աչքի են ընկնում հնավայրի միջնաբերդի տարբեր հատվածներում պեղումներից հայտնաբերված հախճապակե նմուշները, որոնք հիմնականում XIV-XVII դարերի արտադրութեան արգասիք են: Զարմանք է հարուցում այն իրողությունը, որ նախորդ շրջանին պատկանող հախճապակե առարկաների նմուշներ հնավայրում շատ քիչ են հանդիպում: Դա ակներևաբար պետք է բացատրել այն հանգամանքով, որ այն համեմատաբար քիչ գործածելի է եղել Լոռեի բնակչութեան կենցաղում, կամ դեռևս պեղումներով հայտնի չէ:

Հնավայրի պեղումների միջոցին հայտնաբերված հախճապակե հավաքածուի մեջ հանդիպում են միագույն և բազմերանգ խեցանոթների բեկորներ: Դրանցից աչքի են ընկնում մի մեծ թասի երկու բեկորները (2494/59): Թասի հատակի մասը բավականին հաստ է, իսկ շրթնամասը՝ բարակ: Նրա ներսի կողմը պատած է կաթնավուն, հաստ ապակենման ջնարակով՝ արտաքուստ սպիտակ ֆոնի վրա կապույտ գույնի ջնարակով՝ վերջնարակման տեխնիկայով արված է բուսական հարուստ նկարազարդում: Մյուս օրինակից (2494/76) պահպանվել է միայն հատակի մասը, որի ներսի և դրսի սպիտակ ֆոնի վրա կոբալտի օգնությամբ, արված են խիստ ոճավորված բուսական պատկերներ: Արտաքուստ նստուկի վրա պահպանվել են թրծման ժամանակ օգտագործված եռօտանու հետքեր:

Ուշագրավ են մի այլ փոքր թասի (2493/128) երկու բեկորները, որոնք ներքուստ և արտաքուստ պատած են սպիտակ, ապակենման ջնարակով: Միայն շրթի վրա երկու կողմից երիզող կապույտ երանգի շուրջանակի անցնող զարդագոտի ունի:

Անհետաքրքիր չէ նաև երկու կողմից կոբալտով զարդարված հախճապակե ափսեի բեկորը (2493/32, հատակ): Վերջինիս ներսի կողմում սպիտակավուն ֆոնի վրա, արված են

խիստ ոճավորված զարդապատկերներ, որոնց մեջ նկատելի են մարդկային պատկերներ հիշեցնող տարրեր:

Գուգարքի բնակչութեան կենցաղում, ինչպես վկայում են գտածոները, XIV-XVII դարերում առավել գործածական էին նաև հանդիսությունների, տոնախմբությունների միջոցին գործածական հախճապակե գեղազարդ բարձրարժեք պնակները: Վերջիններս հարդարված են առավելապես բուսական շքեղ զարդամոտիվներով: Հիշատակենք այդօրինակ նմուշներից մի քանիսը:

Ամրոցի բնակելի թաղամասի պեղումների միջոցին հայտնաբերվածներից ուշագրավ է հախճապակե պնակը, որի դուրս փուփուղ շուրթի տակ ներքուստ ձգվում է պնակը շուրջապարող հյուսվածքային զարդ: Դեպի հատակը, պնակի տարածվող մակերեսին վերարտադրված է բուսական պտղազարդ:

Հետաքրքրական են հախճապակե մեկ այլ ափսեի բեկորները, որոնք սպիտակ ֆոնի վրա նույնպես զարդարված են ծաղկապտղազարդով: Ափսեի շրթից ներքև վարպետ-խեցեգործը պատկերել է բուսական զարդամոտիվներ, որոնք երբեմն վերածվում են ծաղկափնջերի: Հետաքրքրական է հնավայրի տարածքում հայտնաբերված մեկ այլ խեցանոթի բեկորը, որի սպիտակ աստառի վրա խեցեգործը մուգ երանգի ջնարակով պատկերել է ծաղկաթերթեր և ծաղկասերմեր:

Նկարագրված բոլոր օրինակները, դատելով առընթեր նյութերից, զարդամոտիվների և զարդարման տեխնիկայից, կարելի է թվագրել XIV-XVII դարերով: Նույն դարերի շրջանակներում են թվագրված հարևան Վրաստանի և Ադրբեջանի ժամանակամերձ հուշարձաններից հայտնի համանման հախճապակե գտածոները:<sup>1</sup> Անդրադառնալ վերոհիշյալ հախճապակե գտածոների նմուշների տեղական ծագման կամ ներմուծված լինելու հանգամանքին, առայժմ դժվար է, քանզի մեզ հայտնի նյութերում, որոնք գտնվել են Անդրկովկասի այն հնավայրերում, որոնք ժամանակակից են եղել Լոռե քաղաքին ակնհայտ չեն իրենց ծագումով:

<sup>1</sup> Г. Джидду. Уշվ. աշխ., էջ 90-91: И. Рапопорт. Керамика с росписью кобальтом XIV-XVII вв., в собрании Эрмитажа. Культура и искусство народов Востока. Ленинград, 1969, էջ 196-198:

Հարկ է նշել, որ այդօրինակ խեցանոթների արտադրությունը հավանաբար կազմակերպվում էր միջնադարյան շատ թե քիչ աչքի ընկնող բնակավայրում: Դրա լավագույն ապացույցը Գառնիի ամրոցն է, որն ունեցել է սեփական հախճապակու արտադրություն, ինչպես վկայում են տվյալ հնավայրի խեցեղենին նվիրված ուսումնասիրությունները: Թերևս Լոռեն նույնպես ունեցել է հախճապակու սեփական արտադրություն:

Հնավայրում հայտնաբերվել են նաև ներմուծված խեցեղենի նմուշներ, որոնց մեջ առանձնանում է ամբողջական սպիտակ ֆոն ունեցող գավաթը: Վերջինիս վրա արտաքուստ պատկերված է բուսական ոճավորված զարդամոտիվ: Նմուշն աչքի է ընկնում ոչ միայն շքեղ հարդարանքով, այլև անվիճելի միայն կառուցված կյանքի կոչված հումքով:


Ինչպես վկայում են գտածոները բնակչության կենցաղում նշանակալից տեղ են զբաղեցրել կոբալտի ջնարակով ծածկված, բարձր օղակաձև նստուկով փիալաները, որոնք արտաքուստ հարդարված են մուգ կապույտ երանգի ջնարակով: Գավաթ-փիալաներից մեկի վրա արտաքուստ պատկերված է նժույգին սանձող հեծյալի հետաքրքրական ուրվանկարը:

Թերևս սխալված չենք լինի, եթե ենթադրենք, որ Ձորագետի կիրճի եզրի տնտեսական նշանակություն ունեցող քարայրում գտնված ոչ մեծ չափերի շքեղ գավաթների օրինակները բերդաքաղաքի բնակչության վերնախավի կողմից օգտագործվել են որպես ըմպանակներ (նկ. 24): Խնդրո առարկա նրբակերտ ըմպանակների վրա առկա են ծաղկազարդի հետաքրքրական տարրեր: Նկարագարդումը արված է ըմպանակների թե՛ ներքուստ և թե՛ արտաքուստ մակերեսներին:

Կերտվածքների ձևերն ու զարդամոտիվները հնարավորություն են տալիս հանգելու այն հետևություն, որ վկայակոչված ըմպանակների նմուշները ներմուծված կերտվածքներ են՝ բերված Առաջավոր Ասիայի երկրներից (թերևս Սեֆյան Պարսկաստանից) և թվագրվում են XV-XVII դարերով:

Հարկ ենք համարում դառնալու նաև այն հետաքրքրական իրողությունը, որ Լոռե բերդաքաղաքի տարածքում հայտնա-

բերված խեցեղեն գտածոների մեջ հանդիպում են հեռավոր Չինաստանի բարձրորակ կարճր, նրբախեցի խեցեղենի՝ սելագոնի առանձին նմուշներ, որոնց քանակը թեև մեծ չէ, սակայն նրանց առկայությունը հավաստում է առևտրական ճանապարհով հեռավոր երկրից Հայաստան մուտք գործած հետաքրքիր առարկաների մասին:



Նկար 24

Լոռեում գտնվել է նաև իրանական շողյուն հախճապակու երկու բեկոր: Մեկը (2493/45, չափերը՝ 7 սմx6 սմ-ի) շրթնամաս է, որի ֆոնի վրա պղնձագույն ջնարակով արված են ոճավորված բուսական զարդեր: Մյուսը՝ նույնպես փոքր թասի բեկոր է (նրա չափերն են 2 սմx3 սմ-ի), զարդարված պղնձագույն ջնարակով, որի շնորհիվ ստացվել են երկրաչափական պատկերներ:

Պարսկաստանից ներմուծված այս հախճապակե թասերի բեկորներն իրենց զուգահեռներն ունեն Ս. Պետերբուրգի Պետական էրմիտաժում պահվող պարսկական ծագում ունեցող համանման նյութերի մեջ, որոնք թվագրվում են XIV-XVIII

դարերով:<sup>1</sup> Նման մեկ այլ թաս հրատարակված է նաև Արթուր Պոպի գրքում և թվագրվում է XVII-XVIII դարերով:<sup>2</sup>

Այսպիսով, չինական և իրանական հախճապակե խեցանոթների բեկորների նմուշների առկայությունը Լոռե հնավայրում անառարկելի վկայություն է վերջինիս մասնակցությունը միջազգային առևտրին:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԽԵՑԵՂԵՆ. - Լոռե ամրոցի պեղումների ժամանակ հայտնաբերված նյութական մշակույթի նմուշների մեջ որոշ տեղ է գրավում նաև չինարարական խեցեղենը՝ աղյուսներ, կղմինդրներ, տարբեր չափերի փողրակներ (գունգեր), ջնարակած սալիկներ և այլն: Դա կապված էր լայն ծավալ ստացած չինարարական աշխատանքների հետ:

Ինչպես նշել է Կ. Ղաֆաղարյանը, միջնադարյան հայկական քաղաքները փայտե հատակով շենքեր քիչ են ունեցել,<sup>3</sup> ուստի շինությունների հատակները սովորաբար ծածկել են աղյուսներով և սալաքարերով: Դրա լավագույն ապացույցն է Դվինում, Լոռեում և այլուր գտնված կավե մեծ չափերի աղյուս-սալիկների գոյությունը: Աղյուսե մի հետաքրքիր հատակ պահպանվել է նաև Թումանյան (նախկին Դսեղ) գյուղում:<sup>4</sup>

Պեղումները հավաստեցին, որ աղյուսե սալիկներով են պատած եղել Լոռե բերդաքաղաքի միջնաբերդի երկու բաղնիքի հատակները, որոնցից տեղում շատ քիչ են պահպանվել: Նրանց չափերն են 20x20x5սմ:


Լոռեում կավից են պատրաստվել նաև ջնարակած կավե աղյուս-սալիկները, որոնք օգտագործվել են շենքերի ներքին հարդարանքի համար: Դրանք հաճախ անվանվում են շքաղյուսներ:<sup>5</sup> Նման տիպի ջնարակած աղյուսներ հատկապես մեծ քանակով գտնվեցին Լոռե-բերդի երկրորդ բաղնիքի և նրանից ոչ հեռու գտնվող ամառային ջրավազանների պե-

ղումների ընթացքում: Շքաղյուսները բազմագույն են. հանդիպում են կապույտ, կանաչ, մուգ կապույտ, սպիտակ-կաթնավուն, սև, դեղին և այլ երանգներ: Ճիշտ չափերը վերականգնել հնարավոր չեղավ, որովհետև դրանք բեկորներ են: Իսկ հաստությունը չի անցնում 1,5-2սմ-ից, որը հուշում է այն մասին, որ աղյուսները օգտագործվել են հիմնականում շենքերի պատերի հարդարման համար:

Մեծ թվով ջնարակված սալիկներ են գտնվել Հայաստանում՝ Լոռեի ժամանակամերձ հուշարձանների պեղումների ընթացքում (Անի, Տիկնուռի, Գառնի, Եղվարդ):<sup>1</sup>

Լոռեում գտնված ջնարակված աղյուս-սալիկները, կարծում ենք, պետք է թվագրել XII-XIII դարերով, երբ կառուցվել են Լոռե քաղաքի բաղնիքները և այլ մոնումենտալ շինությունները: Հնավայրում օտար երկրներից ներմուծված շքաղյուսներ առայժմ չեն գտնվել:

Լոռեում հաճախ հանդիպում են կավե փողրակներ (ամբողջական կամ թերի): Նրանց կիրառությունը միջնաբերդում տարբեր է եղել (նկար 25): Երբեմն փողրակներն օգտագործվել են շինությունների մեջ կոմունալ կարիքների համար՝ պատի միջով ծուխը հեռացնելու, հորերի մեջ ջուր լցնելու և այլ նպատակների համար: Սակայն ինչպես ցույց են տալիս պեղումները, կավե փողրակները լայն կիրառություն ունեին, հատկապես, քաղաքի ջրամատակարարման



Նկար 25

<sup>1</sup> Տե՛ս Էրմիտաժի իրանական սրահում ցուցադրված ԽԼ 4011-64 համարի տակ գրանցված թասը:

<sup>2</sup> Artur Pope, Survey of Persian Art, 1938, volume V, էջ 798, նկ. 4.

<sup>3</sup> Կ. Ղաֆաղարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 229:

<sup>4</sup> Տե՛ս Պետրոսյանի հուշարձանների պահպանությունների բաժնի արխիվ, Այվերդու շրջանի հնագիտական հուշարձանների թղթապանակ 3, վավերագիր 19:

<sup>5</sup> Տե՛ս Գառնի 3, էջ 101:

<sup>1</sup> Կ. Ղաֆաղարյան, նշվ. աշխ., էջ 229: Գ. Կարախանյան, Գառնի 3, էջ 101: Ա. Ժամկոչյան, Ճարտարապետական հարդարանքի նմուշներ Տիկնուռի ամրոցից, Լրաբեր հաս. գիտ., 1970, № 12, էջ 48:

մեջ: Այդ է ապացուցում միջնաբերդում բացված ջրմուղի լայն ցանցը, որն ունեցել է մի քանի ճյուղավորում: Փողրակները (չափերն են՝ երկարությունը՝ 45-60սմ, տրամագիծը՝ 11-18սմ, նեղ մասում՝ 8,5-13սմ, պատերի հաստությունը՝ 1,5-2սմ) հաջորդաբար միահյուսվելով և կրաշաղախով ամրացվելով իր ջրաբաշխիչների հետ միասին կազմում են լայն ճյուղավորված մի համակարգ: Առայժմ Լոռեում չեն գտնվել մաքրման կետեր (փոսեր), ինչպես նաև կավե կրասաձև իջանցքներ (ЛЮК), դրանց գոյություն մասին տակավին վաղ է դատողություն անել:

### ԱՊԱԿԻ

Պատկառելի անցյալ ունի ապակեգործությունը Հայաստանում: Այն ծանոթ է տակավին մ.թ.ա. II հազարամյակից: Դրա վկայություններն են այդ հազարամյակների բնակավայրերում, դամբարաններում հայտնաբերված ապակե նյութերը: Ապակեգործությունը վերելք է ապրել մասնավորապես III-IV դարերում, երբ պատմիչի վկայությամբ Կապադովկիայից հետապնդվող Հռիփսիմեն և դավանակիցները ապաստան են գտնում Վաղարշապատ քաղաքի արվարձաններում:<sup>1</sup> Հին և միջնադարյան Հայաստանում ապակեղենի արտադրության հավաստի վկայություններ են Գառնիում, Դվինում, Անիում պեղումների միջոցին հայտնաբերված ապակեգործության նմուշները, որոնց իրենց ուսումնասիրություններում անդրադարձել են Բ. Առաքելյանը, Կ. Ղաֆաղարյանը, Բ. Շելկովնիկովը: Դվինի միջնադարյան ապակու համակողմանի և մանրակրկիտ քննության են նվիրված Հո. Զանփոլադյանի և Ա. Քալանթարյանի հրատարակումները:<sup>2</sup>

<sup>1</sup> Ազաթանգեղոս, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգման. և ծանոթագր. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, էջ 93-94: Բ. Առաքելյան, Գ. Տիրացյան, Ժ. Խաչատրյան, Հին Հայաստանի ապակին, տե՛ս ՀՀՀ հ. II, Երևան, 1969:

<sup>2</sup> Հո. Զանփոլադյան, Դվինի միջնադարյան ապակին IX-XIIIդդ., տե՛ս ՀՀՀ հ. VII, Երևան, 1974: Հո. Զանփոլադյան, Ա. Քալանթարյան, Միջնադարյան Հայաստանի առևտրական կապերը VI-XIIIդդ. (ըստ ապակեգործության տվյալների), տե՛ս ՀՀՀ, հ. 14, Երևան, 1988: Ա. Քալանթարյան, Դվինի նյութական մշակույթը IV-VIII դդ., տե՛ս ՀՀՀ հ. V, Երևան, 1970: Նույն հեղինակի, Դվին I, Երևան, 1976 և Դվին II, Երևան, 2002:

Հետպատերազմյան տարիներին, երբ համակարգված պեղումներ իրականացվեցին Հայաստանի հին և միջնադարյան հնավայրերում, Դվինի և Անիի ապակեգործության զարգացման ընթացքը հավաստող նյութերից բացի, ուշագրավ նմուշներ հայտնաբերվեցին նաև Գառնիի միջնադարյան հնագիտական շերտերում, որի գտածոների ուսումնասիրությունը տեղ է գտել միջնադարյան Գառնիին նվիրված գիտական հաշվետվությունների էջերում:<sup>1</sup>

Ապակեգործության առկայությունը հավաստող ուշագրավ արդյունքներով պսակվեցին Լոռե բերդաքաղաքում անցյալ դարի 60-70-ականներին կատարված հնագիտական պեղումները: Ի թիվս այլ հնագիտական հետաքրքիր նյութերի, ի հայտ եկան ապակե ամբողջական ջրամաններ, գավաթների, պնակների, ջահերի թասիկների բեկորներ, մեծ թվով ապարանջաններ, պատուհանի ապակի, որոնք իրենց հար և նման և հեռավոր գուգահեռներն ունեն միջնադարյան Հայաստանի, վերջինիս հարևան երկրների քաղաքներից ու բնակավայրերից հայտնի հավաքածուներում:

Լոռե բերդաքաղաքի ապակեղենի գտածոների մեջ հետաքրքրական գտածոներ են և առանձին խումբ են կազմում տանձաձև խոշոր ջրամանները՝ չորս ապակե անոթները, որոնք թեև թերի են, սակայն ուշագրավ են իրենց ձևերով: Գտնվել են հնավայրի տնտեսական բնույթ ունեցող հորերից մեկում և գրանցված են միևնույն համարի (2594/55) տակ: Դրանցից մեկի չափերն են, բարձրությունը՝ 20սմ, հատակի տրամագիծը՝ 12սմ, իրանի ամենալայն մասը՝ 19,5սմ, պարանոցի լայնությունը՝ 9սմ, իրանի և վզիկի միացման տեղը՝ 10,5սմ, իսկ պատերի հաստությունը չի անցնում 0,2սմ-ից, հատակինը՝ 0,6սմ-ից: Ջրամանը պատրաստված է թափանցիկ, անգույն ապակուց, որն իր վրա շատ քիչ տեղերում ունի իրիզացիայի հետքեր. պսակը չի պահպանվել:

Հաջորդը, որն իր տարողությամբ գիջում է առաջինին, բարձրությունը՝ 36սմ, իրանի լայնության մասի տրամագիծը՝ 16սմ, պսակի տրամագիծը 4,5սմ, իրանի նեղ մասի լայնու-

<sup>1</sup> Բ. Առաքելյան, Գր. Կարախանյան, Գառնի III: Հ. Պետրոսյան, Գառնի IX-XIV դարերում և այլ աշխատություններում:

թյունը՝ 10սմ, վզինը՝ 6սմ: Պսակից քիչ ներքև ունի վերադիր 1-1,3սմ լայնության հասնող զարդագոտի: Պատերի հաստությունը՝ երկու միլիմետր է, պսակինը՝ 4մմ: Ապակին թափանցիկ է և տեղ-տեղ ծածկված իրիզացիայի անթափանց շերտով: Հատակը ներծկված է դեպի ներս և բավականին զանգվածեղ է: Նկարագրվածին շատ նման է երրորդը, որն իր չափերով գրեթե նույնանում է նրա հետ:

Չորրորդ նմուշից (2594/56) պահպանվել են պսակը և իրանի վերին մասը: Այս ջրամանի ապակին քիչ դեղնավուն է, պսակը հաստ պատեր ունի (4-5մմ) և քիչ կլորանալով փոփոխվում է դեպի դուրս: Իրանի պահպանված մասի ապակու մեջ նկատելի են պղպջակներ, որոնք արդյունք են ապակու մշակման ցածր տեխնիկայի: Սա իրանի վրա ունի շուրջանակի բոլորող սպիրալաձև գեղեցիկ զարդագոտիներ:

Խնդրո առարկա ապակե ջրամանները գտնվել են միևնույն հորի միջից 100-130սմ խորության վրա: Սրանց հետ գտնվել է և վրաց Ռուսուղան թագուհուն պատկանող (1223-1247)<sup>1</sup> արծաթե դրամ: Ջրամանները պատրաստվել են փչելու եղանակով:

Նման ջրամանները ժամանակին կարող էին օգտագործվել հեղուկ նյութեր պահելու համար: Բացառված չէ և այն, որ սրանք կարող էին օգտագործվել նաև ալքիմիկոսի կողմից տարբեր լուծույթներ պահելու համար: Այդ վարկածի օգտին է խոսում այն, որ ջրամանների հետ գտնվեց ալքիմիկի կողմից օգտագործվող ալամբիկի մի բեկոր (2494/47):

Քննարկվող խմբի ապակե առարկաների թվագրման խնդիրը փոքր-ինչ դժվարություն է հարուցում: Նման տիպի առարկաներ մեզ հայտնի չեն ոչ միայն Հայաստանի, այլև հարևան Վրաստանի և Ադրբեջանի՝ Լոռեին ժամանակամերձ հուշարձաններից: Թեև Դվինում (1946/230, 1949/93, նկ. 26) և 1966 թվականին գտնված ապակե անոթներից մի քանիսը հեռավոր նմանություն ունեն մեր ունեցած օրինակների հետ, սակայն նրանք իրենց չափերով շատ ավելի փոքր են և ապակու որակն էլ բոլորովին այլ է: Դվինից հայտնիներն

ավելի դեղնակապտավուն են, իսկ Լոռեում գտնվածները գրեթե անգույն են և իրենց չափերով անհամեմատ մեծ: Դվինի ապակե ջրամանները թվագրված են Բ. Շելկովնիկովի կողմից XI-XII դարերով:<sup>1</sup> Լոռեում գտնվածները թվագրում ենք ինչպես տեղում գտնված վրացական դրամի առկայությամբ նույնպես և համապատասխան զուգահեռ՝ XII-XIII դարերի նյութերով:

Լոռեի պեղումների միջոցին շատ հաճախ են հանդիպում և մեծ թիվ են կազմում նման տիպի ապակե անոթների բեկորները, որոնց գոյությունը հիմք է տալիս ենթադրելու, որ վերջիններս տեղական ծագում ունեն:

Լոռե բերդաքաղաքում հայտնաբերված ապակե կերտվածքների մեջ առանձին խումբ են կազմում փոքր չափերի երեք սրվակները և վերջիններիս մի քանի բեկորները: Նրանցից մեկի՝ (2494/3) պսակի վրա առկա է վերադիր ոլորուն զարդագոտի: Զարդագոտու լայնությունը 4մմ է, պսակի տրամագիծը՝ 2,3սմ: Ապակին բաց-կապտավուն է ամբողջովին պատված իրիզացիայով: Այն գտնվել է երկրորդ բաղնիքի լողարանի պատի տակ՝ դրսից, 80-90սմ խորության վրա:

Երկրորդը՝ (2493/48), մի փոքր բեկոր է: Պսակը կլոր է և դեպի դուրս փոփոխ ուռուցիկություն ունի: Ապակին դեղնավուն է, մաքուր և թափանցիկ:


Ապակե նմուշների երրորդից՝ (2493/49), անգույն, թափանցիկ ապակե սրվակից միայն մի մասն է պահպանվել, որի վրա կա շուրջանակի անցնող կլոր, վերադիր զարդագոտի: Նման տիպի սրվակներ մեզ հայտնի են Դվինի պեղումներից, որոնք թվագրվում են XII-XIII դարերով:<sup>2</sup> Լոռեում գտնված սրվակների բեկորները պետք է թվագրել նույնպես XII-XIII դարերով, ելնելով թե՛ առընթեր նյութից և թե՛ Դվինի սրվակների հետ ունեցած նմանությունից:

<sup>1</sup> Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 2, Երևան, 1952 թ., էջ 186

<sup>1</sup> Б. Шелковников, Керамика и стекло из раскопок города Двина, տե՛ս Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի, հ. 4, Երևան, 1952 թ., էջ 23:

<sup>2</sup> Բ. Շելկովնիկով, նշվ. աշխ., էջ 28-29:





Նկար 26

Հետաքրքրական են Լոռե բերդաքաղաքում հայտնաբերված ապակեղենի սկավառակաձև նմուշները՝ հարթ մակերես ունեցող ապակու բեկորները, որոնք Հո. Զանփոլադյանի կարծիքով, ծառայել են որպես պատուհանի ապակի:<sup>1</sup> Մեկը՝ 2493/48, բաց դեղնավուն է, որի վերականգնված տրամագիծը հավասար է 16սմ-ի, իսկ եզրից ձգվում է քիչ ուռուցիկ մի շրջագիծ: Մյուսը (2493/160) երկտակ ծավված, բաց գուլյնի ապակի է, որից մի փոքր մաս է պահպանվել: Այն հավանաբար ունեցել է 13,5սմ տրամագիծ: Նման տիպի սկավառակաձև ապակու բեկորների թիվը մեծ է Լոռեում գտնված ապակե առարկաների ժողովածուում:

Նկարագրված սկավառակաձև ապակիները գտնվել են բնակելի տարածությունների ժամանակ՝ 80–100սմ խորություն վրա, որի առընթեր նյութը XI–XIII դարերին է պատկանում:

Պատուհանի ապակիների գոյությունը Լոռե ամրոցում, ցույց է տալիս, որ այնտեղ, հավանաբար, գոյություն են ունեցել երկու և թերևս ավելի հարկեր ունեցող կառույցներ, որոնց մեջ լույսը թափանցել է պատուհանների օգնությամբ:

Պատուհանի ապակի շատ է գտնվել Դվինում, հատկապես, միջնաբերդի պեղումների ընթացքում և թվագրվում են XII–XIII դարերով: Նույն ժամանակաշրջանով է թվագրվում նաև Լոռեում գտնված պատուհանի ապակիները:

Լոռե բերդաքաղաքում գտնված ապակու հաջորդ՝ չորրորդ խումբը փոքր թասեր են, որոնք իրենց վրա ունեն կապույտ երանգ ունեցող փոքր կանթեր:

Նման տիպի թասերն օգտագործվել են կենցաղում: Նրանց մի տարատեսակն ակներևաբար օգտագործվել է նաև պղնձե ջահերի համար որպես լուսատու թասիկներ: Հիշյալ խմբից ներկայացնենք միայն երկուսը: 2493/116 թափանցիկ ապակի է, վրան իրիզացիայի հաստ շերտով: Նրա վրա առկա է կապույտ գուլյնի ապակուց պատրաստված, վերադիր մի փոքր կանթ: Գրեթե համանման մի բեկոր է 1966/4 համարի տակ գրանցված թափանցիկ ապակին: Նրանց նախնական տեսքը վերականգնվում է ելնելով Դվինում,<sup>1</sup> Անիում<sup>2</sup> և Դամանիսում<sup>3</sup> գտնված նման թասերից: Սրանք գտնվել են հիմնականում եկեղեցիների պեղումների ժամանակ, որը մի ավելորդ անգամ հավաստում է նրանց ջահերի հարմարանք լինելու մասին:

Լոռեում հայտնաբերվածները, ելնելով գտնվելու պայմաններից, առընթեր նյութերից և հարևան երկրների ժամանակամերձ հուշարձաններից գտնված համանման առարկաների առկայությունից կարելի է համարել XII–XIII դարերի արտադրանք:

Լոռե բերդաքաղաքի պեղումներով հայտ եկած ապակե գտածոներից ուշագրավ է. 1967 թվականին, երկրորդ բաղնիքի հանդերձարանի պեղման միջոցին գտնված ապակե առարկայի բեկորը (2493/80), որի վրա կաղապարով դրոշմված է լատինատառ երկտող արձանագրություն: Չափերն են՝ 6x1,8սմ: Մեզ հասած բեկորից հնարավոր չէ պարզել նրա նախնական ձևը, ասենք միայն, որ այն պատրաստվել է կաղապարով:

Ապակին չնայած իր թափանցիկությունը զանգվածեղ է (5մմ): Վրան գրված է //°CANTC//, երկրորդ տողի վրա միայն երևում են AB տառերը: Պրոֆ. Բ. Առաքելյանի կար-

<sup>1</sup> Նշվ. աշխ., էջ 16–17

<sup>2</sup> Եվ. Մուշեղյան, Նշվ. աշխ., էջ 78, *И. Орбели*, Каталог анииского музея древностей, էջ 67–69. Տե՛ս *Избранные труды*, Ереван, 1963.

<sup>3</sup> *Л. Мусхелишвили*, Նշվ. աշխ., էջ 281:

<sup>1</sup> Հո. Զանփոլադյան, Նշվ. աշխ., էջ 19–20:



ծիքով այն պատկանում է ուշ անտիկ շրջանի ապակեգործական որևէ կենտրոնի (IV դար): Հռ. Զանփուլադյանը գտնում է, որ իր ձևով այն նման է բյուզանդական X–XII դարերի արտադրանքին: Մեր պրպտումները, գտնել համապատասխան որևէ առարկա Մերձավոր Արևելքի հնավայրերի պեղումներից, արդյունքով չպսակվեցին: Ուստի դժվարանում ենք այն թվագրել: Սակայն հարկ է նշել, որ այս ապակե առարկան տեղական ծագում չունի, ակներևաբար ներմուծվել է Առաջավոր Ասիայի որևէ քաղաքից:

Ներմուծված ապակե առարկաների թվին են պատկանում 2494/46 համարի գրանցված երեք բեկորները: Նրանք պատկանում են միևնույն անոթին և տեսքով հիշեցնում է դեպի վեր լայնացող իրանով և ետ փռված պսակով գավաթ: Թափանցիկ ապակու վրա արված են հիանալի զարդամոտիվներ էմալի, ոսկու և այլնի օգնությամբ: Կապույտ, շուրջանակի անցնող շրջագծով բաժանվող հատվածներում արաբատառ արձանագրություն է նշմարվում, իսկ որոշ տեղերում սպիտակով կետազարդ է արված: Այս գավաթը նույնպես գտնվել է տնտեսական նշանակություն ունեցող հորի մեջ:

Նման տիպի ապակե առարկաներ մեզ հայտնի են ոչ միայն Անիի և Դվինի պեղումներից, այլև հեռավոր Նովգորոդից:<sup>1</sup> Ուսումնասիրողները գտնում են, որ նման տիպի գավաթների արտադրության հայրենիքը սիրիական քաղաքներն են, մասնավորապես՝ Հալեպը. պատրաստման ժամանակը XII–XIII դարերն են:<sup>2</sup>

Նմանատիպ անոթների գոյությունը Հայաստանում՝ Փեռղալական փոքր թագավորություններից մեկի մայրաքաղաքում, հավաստում է նրա առևտրականների գործոն մասնակցությունն Առաջավոր Ասիայի առևտրին: Միաժամանակ այն վկայում է տեղական բնակչության վերնախավի կենցաղի բարձր մակարդակը, նրա ճաշակը:

Հոռե բերդաքաղաքից հայտնի ապակե կերտվածքներում զգալի տեղ են զբաղեցնում ապարանջանները: Նրանց թիվն

անցնում է երեք տասնյակից: Ըստ ձևերի ու տեսակների դրանք բազմազան են:

Ապակե ապարանջանները հանդիպում են գրեթե բոլոր միջնադարյան բնակավայրերում: Դրանց գոյությունն արդյունք է այն բանի, որ ապարանջանների պատրաստման համեմատաբար պարզ տեխնիկան հնարավորություն է տվել ապահովելու նրանց արտադրությունը յուրաքանչյուր քիչ թե շատ նշանակալից բնակավայրում: Դրա համար շատ բան չի պահանջվել: Անհրաժեշտ է եղել ապակին մածուցիկություն հասցնող կրակ և շատ պարզ գործիքներ: Ապարանջանների համար հումք են հանդիսացել կոտրված ապակե առարկաները և ապարանջանների բեկորները:

Հոռեում գտնված ապարանջանները կարելի է բաժանել մի քանի խմբի:

ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲ: Այս խմբի մեջ մտնում են ապարանջանների ամենապարզ ձևերը, երբ ձողիկը լրացուցիչ մշակման չի ենթարկվել, որի հետևանքով ստացվել է հասարակ, հարթ մակերես ունեցող ապարանջան: Ապակին հիմնականում լավորակ է, կիսաթափանցիկ և թափանցիկ, քիչ քայքայված: Գտածոներում ամբողջականները բացակայում են: Երանգների առումով բազմազան են: Սրանց մեջ կան սև, կապույտ, բաց կապույտ և կաթնավուն ապարանջաններ: Նրանց ծայրերը հատվում են իրար հետ և դեռևս տաք վիճակում ամրացվում: Միացման կարը հազիվ նկատելի է:

Առաջին խմբի ապարանջանները կազմում են մեր ունեցածի մի զգալի մասը: Գրեթե բոլորն էլ կլոր են. 0,5–0,6մմ հաստության հասնող կտրվածքով երկուսն են, որոնք ոսպնյակաձև կտրվածք ունեն (2493/143, 2494/11):

ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲ: Այս խմբին են պատկանում եռանկյունաձև և քառակուսի կտրվածք ունեցող ապարանջանները: Եռանկյունաձևերը պատրաստվել են հատուկ կաղապարների մեջ: Նրանցից մեկի ներսի կողմից անցնում է բաց կապտավուն մի գիծ (2494/44):

ԵՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ: Հնավայրում հայտնաբերված այս խմբի ապարանջաններն ամենատարածված և ամենաբազմապիսիներն են, որի հիմնական առանձնահատկությունը ոլորա-

<sup>1</sup> Ф. Гуревич, Р. Джанполадян, М. Малевская, Восточное стекло в Древней Руси, 1968, Ленинград, էջ 12–13 աղյուսակ 8 և 9:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 12:

պտուլտ մակերես ունենալն է: Պարույները լինում են տարբեր չափերի և քանակի, լայն ու նեղ, ակոսավոր ու միատարր, միագույն և բազմագույն:

Ոլորապտուլտ ապարանջաններ պատրաստելու համար միջնադարյան վարպետները կիրառել են երկու եղանակ. առաջինը, երբ դեռևս չսառած միագույն ապակե ձողիկը ձեռքի վարպետ շարժումով ոլորում և ստանում են ցանկացած չափի ու քանակի գալարներ: 2494/50 և 2494/26 ապարանջանների ձողիկները այնքան են պտտեցրել, որ տեղ-տեղ շատ է բարակել, դրան հակառակ, կողքին առաջացել է ուռուցիկություն, որից և առաջ է եկել մակերեսի անհարթությունը: 1968/11 1968/44 ապարանջանների բեկորները պտտեցված են հավասարաչափ և անհարթությունները բացակայում են: Երկրորդ եղանակը դա բուն ապակու միջուկի վրա տարբեր երանգի ապակե թելերը փաթաթելու և ապա ոլորելու միջոցն է: Այդ կարգի ապարանջաններից են 2493/153, 2494/44, 2494/50 համարի նմուշները: Սրանց հիմնական գույնը մուգ կապույտն է, կամ կաթնավունը, որի վրա բաց կապույտ կամ սև գույնի ապակե թելերով ոլորապտուլտ են արված: Սրանք գեղեցիկ են և հավանաբար մեծ պահանջարկ են ունեցել:

Լոռեում գտնված ապարանջանները բազմազան են իրենց երանգով. հիմնականը սևն է, կապույտը, կանաչը, դեղինը և դրանց համապատասխանաբար երանգավորումները, որոնք հաճելի տեսք են տալիս ապարանջաններին: Ռուս հնագետներից՝ Ջ. Լվովան, ուսումնասիրելով հին ռուսական Սարկել քաղաքի ապարանջանների հարուստ հավաքածուները, հանգում է այն հետևություն, որ այնտեղ գտնված սև գույնի ապարանջանները բերվել են Անդրկովկասից, և նրանց հայրենիքը Կովկասն է:<sup>1</sup>

Բազմազան ձևերով են միացվում ապարանջանների ծայրերը: Ինչպես նկատել է Դվինի ապարանջաններն ուսումնասիրող Հո. Զանփոլադյանը, սովորաբար վարպետները միացման տեղերը նմանեցրել են մինչ այդ գործածվող մետաղե,

հատկապես ոսկե և արծաթե ապարանջանների ձևերին: Հո. Զանփոլադյանը գտնում է, որ ապակե ապարանջանները պատրաստող վարպետներն առանձին արհեստանոցներ չունեին: Նրանք հիմնականում աշխատել են ոսկերիչի կամ պղնձագործի արհեստանոցում:<sup>1</sup>

Ապակե ապարանջաններ շատ են գտնվել Դվինում,<sup>2</sup> Գառնիում,<sup>3</sup> Բջնիում, ինչպես նաև հարևան Վրաստանի և Ադրբեջանի միջնադարյան հնավայրերում:<sup>4</sup>

Լոռեում գտնված ապարանջանները, հիմնականում իրենց գուգահեռներն ունեն թվարկված հնավայրերից հայտնաբերված ապարանջանների ժողովածուներում:

Ապակե ապարանջաններն ուսումնասիրողների կողմից թվագրվում են X-XIII դարերով, որը և համընկնում է Լոռե հնավայրի ճշգրիտ շերտագրական տվյալներին: Լոռե ամրոցում գտնված ապարանջանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այնտեղ զարգացած է եղել զարդեր պատրաստելու ապակեգործական արհեստը:

## ՈՍԿՐԵ ԱՌԱՐԿԱՆԵՐ

Լոռե բերդաքաղաքի պեղումների միջոցին շատ հաճախ գտնվել են մշակված ոսկորներ, որոնք սղոցված են, մշակված, հավանաբար գործիքներ, ինչպես նաև ոսկրե զարդեր պատրաստելու համար: Գտնվել են նաև ոսկրե ամբողջական առարկաներ, որոնց մեջ առանձնապես աչքի է ընկնում գորգագործի կտուտիչը (2593/106): Այն պատրաստված է եղջերուի եղջուրից: Երկարությունը 20սմ է: Մի ծայրը սղոցված է, մյուսի, ավելի հաստ ծայրի վրա արված են «մատներ»: Պահպանված մատների թիվը երկուսն է: Կենտրոնական մատը ջարդված է. երկարությունը 4սմ է:

<sup>1</sup> Յ. Լյովոვა, Стекланные браслеты и бусы из Саркела-Белой Вежи, տե՛ս МИА № 75, էջ 311:

<sup>1</sup> Հո. Զանփոլադյան, Դվինի ապակե ապարանջանները, Լրագիր հաս. գիտ., 1969, № 1, էջ 169:

<sup>2</sup> Հո. Զանփոլադյան, Դվինի միջնադարյան ապակին, էջ 21-22:

<sup>3</sup> Բ. Առաքելյան, Գառնի 3, էջ 68-70:

<sup>4</sup> Ղ. Մյսխելիսաբաև, նշվ. աշխ., էջ 281: Գ. Դձուծու, նշվ. աշխ., էջ 66-67, տաբլ. XV:

Կտուտիչն օգտագործելուց խիստ մաշվել է, ողորկվել: Այն գտնվել է 1967 թվականին, երկրորդ բաղնիքի պեղումների միջոցին, հողի լիցքի մեջ:

Հայաստանի և հարևան երկրների ժամանակամերձ հուշարձաններում նման գործիք չի գտնվել: Այս հանգամանքը և գտնելու պայմանները մեզ հնարավորություն են տալիս այն որոշակի թվագրելու: Սակայն նման գործիքի առկայությունը Լոռեում ցույց է տալիս, որ այնտեղ բազմաթիվ արհեստների թվում, զբաղվել են նաև գորգ, կարպետ գործելու ավանդական արհեստով:

Լոռեում գտնված ոսկրե իրերի մեջ, իր կատարյալ մշակմամբ, աչքի է ընկնում մի փոքր սանր (2593/105): Չափերն են՝ երկարությունը՝ 7սմ, լայնությունը՝ 4: Գտնվել է երկրորդ բաղնիքի պեղումների միջոցին: Սանրի չափերը և ձևը ցույց են տալիս, որ այն ավելի շուտ օգտագործվել է որպես գլխազարդ, քան որպես սանր: Սանրի մյուս կողմը ձևավոր է կենտրոնը՝ նույնպես:

Ոսկրե առարկաների մեջ կան նաև իլիկի գլխիկներ (2493/37), որոնք պատրաստվել են կենդանիների վերջավորությունների հողերի խնձորակներից մեծ մասը գտնվել են բնակելի տների, կամ էլ հողի լիցքի մեջ:

Լոռե հնավայրի ոսկրե առարկաներից առավել ուշագրավը գեղազարդ ոսկրե փոքր զարդատուփն է իր կափարիչով: Նրա վրա քանդակված է բացված բազմաթերթ ծաղիկ: Տուփը չունի իր համապատասխան զուգահեռները ո՛չ հայկական, ո՛չ էլ հարևան երկրներից հայտնի ոսկրե իրերի մեջ:

Վարագի կեռ ժանիքը, որ հանդիպում է Լոռե հնավայրի ոսկրե իրերի ժողովածուում, վկայություն է այն իրողության, որ Գուգարքի անտառներում միջին դարերում բազմանում էին վայրի խոզեր, վարազներ, որոնց որսն էլ հումք էր մատակարարում ոսկորը մշակող արհեստավորներին:

Հնավայրից հայտնի առավել հետաքրքիրն ու ուշագրավը կենդանու սրունքի ոսկորից պատրաստված սրնգի բեկորն է,

չորս ձայնանցքներով: Ոսկրե սրինգների նմուշներ հայտնի են նաև Դվինի<sup>1</sup> և Գառնիի<sup>2</sup> պեղումներից:

Հիշարժան է Լոռեում գտնված ոսկրե վերադիր հարդարանքի նմուշը, որը հմուտ վարպետի ձեռքի գործ է: Այն լավ մշակված, հղկված և գեղազարդված է:

Անկասկած ոսկրե այդ վերադիր առարկան զարդարել է ինչ-որ գործիքի բռնակ: Այս գտածոները համապատասխան զուգահեռներով թվագրվում են XII-XIII դարերով:

Վերջապես, Լոռե քաղաք-ամրոցի պեղումների ժամանակ գտնված ոսկրե նյութերի մեջ մեծ թիվ են կազմում մեծ ու փոքր չափերի վեգերը:

Այսպիսով, թեև ոսկրե իրերի ժողովածուն Լոռե հնավայրում գտնված հնագիտական իրերի թվում մեծ քանակություն չի կազմում, այնուամենայնիվ նրանց առկայությունը վկայում է, որ Լոռեի արհեստավարժ վարպետների համար խորթ չէր նաև կենդանիների ոսկրի մշակումը և վերջիններիս ծառայեցնելը կենցաղային տարբեր նպատակների համար:

<sup>1</sup> Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը..., Կ. Ա., էջ 177-178:

<sup>2</sup> Հ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 90:

## ԴՐԱՄՆԵՐ

Լոռե բերդաքաղաքից հայտնաբերված դրամները մեծ թիվ չեն կազմում, սակայն, ներկայացնելով միջնադարյան Հայաստանի դրամական շրջանառությանը բնորոշ դրամական խմբերը, մասն են կազմում X-XIII դարերի դրամական տնտեսությունը:

Հայաստանի դրամական գտածոների մեջ համեմատաբար փոքր խումբ են կազմում բյուզանդական X դարի՝ կայսեր անունից թողարկված դրամները, ինչպես օրինակ՝ Կոստանդին VII-ի (913-959) ֆոլիսը:

Ամենամեծ դրամական խումբը բյուզանդական XI դարի անանուն ֆոլիսներն են, որոնք լայն տարածում են ունեցել Հայաստանում մինչև XIII դարը:

XI դարի երկրորդ կեսին Արևելքում առաջացած «արծաթի ճգնաժամի» հետևանքով շուկայում աճում է բյուզանդական պղնձե դրամների նշանակությունը, քանի որ դրանք սկսեցին լայնորեն շրջանառել ոչ միայն Բյուզանդիային ենթակա տարածքներում, այլև այդ ժամանակաշրջանի մահմեդական տերություններում, Հայաստանում, Վրաստանում: Դա պայմանավորված էր դարերի ընթացքում ձևավորված Արևմուտք-Արևելք փոխհարաբերություններում դրամական քաղաքականության առանձնահատկություններով: Աբբասյան խալիֆայությունը և մյուս մահմեդական տերությունները, գտնվելով արծաթի շրջանառության ոլորտում, մեծ ծավալի պղնձե դրամներ չէին թողարկում և, որպես կանոն, հատվում էին փոքր տրամագծով և շատ բարակ հատածույլի վրա, ուստի ենթակա էին արագ մաշվելու և շրջանառությունից դուրս գալու: Հետևաբար, դրանք շրջանառության շատ սահմանափակ ոլորտ ունեին և գրեթե դուրս չէին գալիս թողարկման վայր հանդիսացող քաղաքի սահմաններից: Դրան հակառակ, Բյուզանդիան, հանդիսանալով ոսկու ստանդարտի տարածաշրջան, թողարկում էր մեծ քանակությամբ խո-

շոր պղնձե դրամներ ոչ միայն ներքին, այլ նաև արտաքին շուկայում շրջանառության համար, նպատակ ունենալով այդ ճանապարհով սահմանափակել ոսկու շրջանառությունը և դրանով կանխել վերջինիս լրացուցիչ արտահոսքը իր երկրից: Այդ է պատճառը, որ, երբ Արևելքում սկսում են նվազել արծաթե դրամները, միջազգային շուկայում մեծանում է բյուզանդական ոչ միայն ոսկե, այլև պղնձե դրամների՝ ֆոլիսների դերը, որոնք չափով ավելի մեծ էին և ծանր էին կշռում: X-XI դարերում հանդես են գալիս այսպես կոչված անանուն ֆոլիսները, որոնց դիմերեսին պատկերվում էր Հիսուս Բրիստոսը: Պղնձե դրամների այս վերջին խումբն էր, որ լայն տարածում գտավ և մինչև XIII դարը գերիշխող տեղ էր զբաղեցնում միջազգային շուկայում:

Լոռե հնավայրից հայտնաբերված սելջուկյան դրամները նույնպես XII-XIII դդ. թողարկումներ են:

Բյուզանդական պղնձե դրամների թե ծանր քաշը և լայն տրամագիծը, թե պատկերագրությունը իր ազդեցությունը թողեց ամբողջ տարածաշրջանի դրամական թողարկումների վրա: Սելջուկյանները հաստատվեցին այն վայրերում, որոնք գտնվում էին Բյուզանդիայի դրամական տնտեսության ազդեցության ոլորտում, որտեղ հաստատվել էր ավանդական վստահություն բյուզանդական դրամների նկատմամբ: Հետևաբար, սելջուկյանները, սեփական դրամները թողարկելիս, առանձին դեպքերում ստիպված էին տեղի բնակչությանը և ոչ միայն շրջանառության մեջ թողնել բյուզանդական անանուն ֆոլիսները, այլև թողարկել դրամներ բյուզանդական կշռային ստանդարտին համապատասխան:

Հայաստանի տարածքից հաճախ են դտնվում նաև վրացական XIII դարի դրամներ: Վրաց Ռուսուդան թագուհու (1223-1247) պղնձե դրամը Լոռե բերդից բնորոշ է հատկապես Վրաստանին սահմանակից Հայաստանին:

XIII դարում Հայաստանում շրջանառության մեջ են մտնում մոնղոլական հուլաղույան դրամները: Մոնղոլներին հաջողվեց հաղթահարել «արծաթի ճգնաժամը»՝ թողարկելով մեծ քանակությամբ արծաթե դրամներ: Հայաստանի տարածքից գտնված հուլաղույան դրամների գերակշռող մասը

արծաթե դիրհեմներ են: Սակայն Հայաստանի միջնադարյան բնակավայրերից գտնվում են նաև մոնղոլական պղնձե դրամներ՝ ֆելսեր, որոնք վկայում են այն մասին, որ դրանք հիմնականում օգտագործվել են ներքին առևտրում:

Լոռե բերդաքաղաքից գտնված մոնղոլական պղնձե դրամը կարող է վկայել այս բնակավայրում ներքին շուկայի և հատկապես դրանում դրամական առևտրի առկայության մասին:

1. 18481/2 Բյուզանդիա, անանուն ֆոլիս, XI դ.
2. 18481/3 Մոնղոլական ֆելս, Հուլիանոս խանի և Մանգու խանի անունով թողարկված թիֆլիսում 1255 թ.
3. 18481/4 Սելջուկյան ֆելս, XIII դ.
4. 18481/5 Վրաստան, Ռուսուդան (1223-1247)
5. 18481/6 Բյուզանդիա, ֆոլիս, Կոստանդին VII (913-959)
6. 18481/7 Բյուզանդիա, անանուն ֆոլիս, XI դ.
7. 18481/8 Սելջուկյան ֆելս, XIII դ.
8. 18481/9 Բյուզանդիա, անանուն ֆոլիս, XI դ.
9. 18481/10 Բյուզանդիա, անանուն ֆոլիս, XI դ.

Դրամագետ, Հ ՊԹ գիտաշխատող՝  
Արմինե Զոհրաբյան

## ԱՄՓՈՓՈՒՄ

Միջնադարյան Հայաստանի մանր թագավորություններից Բագրատունիների հարստության Կյուրիկյան ավատական թագավորության տնտեսական և քաղաքական կենտրոն Լոռե քաղաք-ամրոցին առնչվող մատենագրական տեղեկությունների, հնավայրում պահպանված ճարտարապետական կառույցների, ինչպես նաև կատարված հնագիտական պեղումների միջոցին հայտնաբերված ճարտարապետական ու կոմունալ-կենցաղային նոր հուշարձանների, նյութական մշակույթի առկա մնացորդների ուսումնասիրությունը թելադրում է հանգել հետևյալին:

Հնավայրում կատարված հնագիտական պեղումների միջոցին ի հայտ եկած նյութական մշակույթի ուսումնասիրությունը հավաստում է, որ Լոռե քաղաք-ամրոցի զբաղեցրած տարածքը բնակելի է եղել դեռևս ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանում (մ.թ.ա. XV–XIII դդ.): Այնուհետև մինչև մեր թվագրության X դարը ներառյալ, ամենատարբեր հանգամանքներով կյանքն ընդհատվել է ու վերսկսվել XI դարի սկզբներին, հարատևել է մինչև XVIII դարը: Այս ամենը հավաստի է դառնում նաև հայ և օտար պատմիչների գրավոր վկայություններով:

Մատենագրական և հիշատակագրական տեղեկությունները հիմնավորում են, որ Տաշիր-Չորագետի կամ Կյուրիկյան ավատական թագավորությունը հռչակվել է 979 թվականին Բագրատունի արքայատան Սմբատ Երկրորդ գահակալի օրոք ու գիտությունը, նրա եղբայր Գուրգենի նախաձեռնությամբ: Գուրգենը տեղական հորջորջմամբ գավառաբարբառում հայտնի է նաև Կորիկե-Կյուրիկե անվանումով: Այստեղից էլ սերում է այդ թագավորության «Կյուրիկյան թագավորություն» անվանումը:

Լոռե ամրոցի կառուցման անհրաժեշտությունը առաջացավ այն ժամանակ, երբ Տաշիր-Չորագետի հզոր տիրակալ

Դավիթ Անհողինը (989-1048թթ.), ընդհարվելով Անիի գահակալ Գագիկ Երկրորդի հետ, չունենալով անառիկ ամրոց, պարտութուն կրեց: Դա տեղի ունեցավ 1001 թվին: Դավիթ Անհողինը ստիպված էր XI դարի 10-20-ական թվականներին Բագրատունիների Անի մայրաքաղաքին իր անառիկությամբ չզիջող տեղանքում հիմնադրել ապագա մայրաքաղաքը: Եվ դա նրան հաջողվում է: Ուշագրավ է, որ ուսումնասիրողները Լոռեն համարում են «Փոքր Անի»: Դավթի որդին և հաջորդը՝ Կյուրիկե Երկրորդը (1048-1089) գրկվում է իր տերության նախկին մայրաքաղաք Շամշուղե ամրոցից: Լոռեն XI դ. 50-ական թվականներին հռչակվում է Տաշիր-Չորագետի՝ Կյուրիկյան թագավորության մայրաքաղաք: Այս նորաստեղծ թագավորության գահակալները ոչինչ չեն խնայում ամրացնելու, կառուցապատելու և արքայական շուք հաղորդելու իրենց մայրաքաղաքին: Շուտով Լոռե ամրոցը վեր է ածվում քաղաք-ամրոցի, որի բնակչությունը հասնում է 12-15 հազարի:

XII դարի առաջին քառորդում Կյուրիկյան թագավորությունը, անընդհատ զինաբախումների մեջ գտնվելով մերթ սելջուկ-թուրքերի, մերթ վրացիների ու հարևան իշխանությունների հետ, թուլանում է: Վերջապես 1123 թվականին Լոռե ամրոց-քաղաքն անցնում է վրաց Բագրատունիներից Դավիթ Շինարարի տիրապետությանը: Վերջինս այն որպես կալվածք տրվում է Օրբելյանների տոհմին:

1176-1177 թվականներին վրաց Գեորգի Երրորդ թագավորի դեմ ապստամբած ամիրսպասալար Իվանե Օրբելին ապստամբության ռազմական հենակետ է ընտրում Լոռե քաղաք-ամրոցը, քանզի տվյալ ժամանակաշրջանում, իր ռազմական առումով ու անառիկությամբ վերջինս մեծ համբավ էր ձեռք բերել: Ապստամբների կողմից Լոռե ամրոց-քաղաքը հենակետ դարձնելը լիովին արդարացված էր: Այն հաղթահարեց 208 օր տևած երկարատև պաշարումը և այդպես էլ թագավորական զորքերին չհաջողվեց գրոհով գրավել քաղաք-ամրոցը: Իվանե Օրբելին քաղաքը հանձնեց կամովին, որոշակի պայմանավորվածության հանգամանքներով:

Ապստամբության ճնշումից հետո Լոռեն իր հողերով տրվում է վրաց արքունիքում մեծ հեղինակություն վայելող Սարգիս Ջաքարյանին, նրա որդիներ Ջաքարե և Իվանե Ջաքարյաններին՝ որպես կալվածք: Ջաքարյանների իշխանական տոհմը Լոռեին տիրում է մինչև XIII դարի 60-ական թվականները: Հատկապես վերջիններիս տիրապետության շրջանում, մինչ թաթար-մոնղոլների արշավանքները, Լոռե քաղաքը ապրում է իր բուռն ծաղկման ու զարգացման երկրորդ՝ առավել բարգավաճ ժամանակաշրջանը: Ջաքարե Ջաքարյանն իր նորաստեղծ հայկական իշխանապետության մայրաքաղաք է դարձնում Լոռեն:

Թաթար-մոնղոլները XIII դարի 30-ական թվականներին արշավում են Անդրկովկաս: Լոռե քաղաք-ամրոցը լուրջ ավերման է ենթարկվում 1236 թ. հունիսի 30-ին թաթար-մոնղոլ Ջաղաթայ Նոյինի բանակի կողմից: Տևական պաշարումով թշնամուն հաջողվում է քանդել պարսպի մի մասը, աշխարհիկ ու հոգևոր ճարտարապետական կարևոր կառույցները, գրավում ողջ քաղաքը, թալանի ենթարկում այն: Մոնղոլներին հաջողվում է ձեռք գցել նաև Շահնշահ Ջաքարյանի գանձարանը, որի մասին մանրամասն հաղորդում է պատմիչ Կիրակոս Գանձակեցին:

XIV և XV դարերի առաջին կեսին Լոռե քաղաք-ամրոցի տեր են հիշատակվում Սյունիքի հայ Օրբելյան իշխանները: Սակայն սրանց տիրապետության օրոք Լոռեն սկսում է որոշ չափով անկում ապրել, որը պայմանավորված էր քաղաքական անկայուն վիճակով: Այդ են հավաստում թե՛ գրավոր աղբյուրները և թե՛ տեղում պեղումների միջոցին ձեռք բերված նյութական մշակույթի մնացորդների աղքատությունը: Այդուհանդերձ Լոռե քաղաք-ամրոցը պահպանում է խոշոր բնակավայրի և ռազմական հենակետի իր կարևոր նշանակությունը:

1460-ական թվականներից Լոռեն նվաճվում է Ադ-կոյունլու իշխանապետության գահակալ Ուզուն Հասանի զորքերի կողմից: Վերջինս նկատի առնելով Անդրկովկասին տիրելու համար Լոռե ամրոցի ռազմական կարևոր նշանակությունը, խոշոր զորաբանակ է պահում ամրոցում: Ակն-

երևաբար այս շրջանում է, որ քաղաք-ամրոցի բնակչութայն թվին ավելանում են մահմեդականներ: Այդ հանգամանքով բացատրելի է դառնում Լոռեի միջնաբերդում մահմեդական մզկիթի առկայությունը XV-XVI դարերում: Նշմարվում է օտար ծագում ունեցող արհեստային արտադրանքի որոշակի առկայություն:

XVI-XVIII դարերում Լոռե ամրոց-քաղաքը որպես խոշոր բնակավայր կորցնում է իր երբեմնի նշանակությունը՝ դառնալով սոսկ ռազմական առումով կարևոր ամրոց: Այնտեղ վրաց իշխանները, պարսիկներն ու թուրքերը պահում էին որոշակի քանակով ռազմական ուժ, հրանոթներ: Նույն դարի վերջում աղբյուրները վկայում են, որ այն վերածվել է փոքր բնակավայրի, ուր ապաստան են գտնում Հայաստանի տարբեր գավառներից տեղահանված գաղթականներ:

Լոռե քաղաք-ամրոցի միջնաբերդի տարածքում իրականացված հնագիտական պեղումներով հայտնաբերված նյութական մշակույթի մնացորդները հնարավորություն են ընձեռում Լոռե հնավայրի շինարարական, մշակութային և տնտեսական զարգացումը բաժանել երկու կարևոր շրջանների՝ XI-XIII և XIV-XVIII դարերի, որոնցից յուրաքանչյուրն ունի երկրի քաղաքական ու տնտեսական վայրիվերումներով պայմանավորված ծաղկման և անկման շրջաններ:

Առաջինը համընկնում է Կյուրիկյան-Ջաքարյան տիրապետության ժամանակահատվածին, երբ կյանքի են կոչվում ամրոցի անառիկ պաշտպանական համակարգը, քաղաքացիական բնույթի կառույցներ, պալատներ, եկեղեցիներ, քաղաքի վերնախավի պահանջներին պատշաճող կոմունալ-կենցաղային կառույցներ՝ բաղնիքներ, շատրվանող ջրավազաններ: Ամրոցը պաշարման դեպքում արտաքին աշխարհի հետ կապ պահպանելու և խմելու ջրի պաշար ձեռք բերելու համար կառուցվում է գաղտնուղի:

Քաղաք-ամրոցի բնակչության քանակական աճը ստիպում է տիրակալներին Լոռին շրջապատող կիրճերում հոսող գետի վրա կառուցել հզոր կամուրջներ, որով հնարավորություն է ստեղծվում կառուցապատելու քաղաքի արվարձաններ՝ Ամ-

րակիցը և Կենտագեղը: Ձորագետի և Միսխանայի կիրճում հիմնվում են ժայռափոր այրեր ու բնակելի տներ:

XI-XIII դարերի հնագիտական շերտը բավականին հարուստ է նյութական մշակույթի մնացորդներով, ճարտարապետական հուշարձաններով, ինչպես նաև վիմական արձանագրություններով: Մշակութային շերտի թանձրությունը տատանվում է 80-100-ից 170-220սմ-ի միջև: Հնագիտական պեղումների միջոցին հայտնաբերվել են արհեստային արտադրանքի արգասիք հանդիսացող խեցեղեն առարկաներ, մետաղական գործիքներ ու զենքեր, դանակներ ու նետասլաքներ, ապակե բազմաբնույթ անոթներ ու ապարանջաններ, վերջիններիս բեկորներ: Գտնված առարկաները, գործիքները, հատկապես խեցեղենը (հասարակ, ջնարակած, հախճապակի) իրենց զուգահեռներն ունեն միջնադարյան Հայաստանի XI-XIII դարերի նյութական մշակույթի համանման նյութերի մեջ: Առավել բնորոշները դաջազարդ կարասներն ու անոթներն են, որոնք լայն տարածում ունեն միջնադարյան Հայաստանում:

Բերդաքաղաքի գոյությունը հաջորդ՝ XIV-XVIII դարերի շրջանը համընկնում է հայ Օրբելյանների տիրապետության տարիներին և թուրք-պարսկական անընդմեջ փոփոխվող գերիշխանության ժամանակներին: Այս դարաշրջանի նյութերը թե՛ քանակով և թե՛ որակով զիջում են նախորդ ժամանակահատվածի նյութական մշակույթին: Երկրորդ շրջանի մշակութային շերտի թանձրությունը տատանվում է 20-ից 80սմ-ի միջև: Այն հարուստ է հատկապես ջնարակված խեցեղենով, հար և նման Գառնիի ժամանակամերձ մշակութային շերտում հայտնաբերված խեցեղենին: Բազմաթիվ են հախճապակե թասերի, փոքր գավաթների բեկորները, որոնք իրենց զուգահեռներն ունեն Անդրկովկասի և Առաջավոր Ասիայի քաղաքներից ու ամրոցներից հայտնի նյութերում:

Առանձին, մեծ խումբ են կազմում զարդարուն, հաճախ՝ դաջազարդ կավե ծխամորճները, որոնք բնորոշ են ինչպես այս, այնպես էլ նախորդ շրջանին: Ծխամորճների առատությունը, գտնվելու հանգամանքները, հարդարման ու պատրաստման տեխնիկան, ուղեկցող նյութերը, հատկապես նո-

րահայտ դրամները, լրացվելով գրավոր աղբյուրների տեղեկություններով, հնարավորություն են տալիս վերջիններս թվագրել XIII-XVIII դարերով: Ի դեպ կավե ծխամորճների գոյությունը կապված էր միայն ծխախոտ ծխելու հետ:

Հասարակ խեցեղենը նախորդ շրջանի հետ համեմատած դառնում է անշուք: Լոռե քաղաք-ամրոցի նյութական արտադրանքում XIV-XVIII դարերում նկատելի են անկման որոշակի նշաններ: Այդ երևույթը պայմանավորված էր ինչպես Հայաստանի, այնպես էլ ողջ Անդրկովկասում տիրող քաղաքական անկայուն վիճակով, տիրողների վարած տնտեսական քաղաքականությամբ, որն ի վերջո հանգեցրեց քաղաքի բնակչության քանակական նվազման ու բնակիչների՝ այն լքելուն: XIX դարի սկզբին Լոռե բերդաքաղաքում հաստատվեց Հայաստանի տարբեր գավառներից, բնակավայրերից տեղահանված գաղթականություն, թեև վերջինիս քանակը չէր անցնում մի քանի տասնյակ ընտանիքներից:

Հնավայրում 1966-1973 թվերին իրականացված հնագիտական պեղումներով հայտնաբերված նյութական մշակույթի մնացորդները հնարավորություն են ընձեռում պարզաբանելու Լոռե քաղաք-ամրոցի առևտրական և տնտեսական կապերը, ոչ միայն Հայաստանի միջնադարյան խոշոր և միջին մեծությունների ու ամրոցների, բնակավայրերի ոլորտում, ինչպիսիք էին Դվինը, Անին, Բջին, Գառնին, Ամբերդը, այլև հարևան Վրաստանի (Թբիլիսի, Մցխեթա, Դմանիսի, Ուրբնիսի) ու Ադրբեջանի (Բայլական, Գյուլիստան, Գանձակ), նույնիսկ հեռավոր, առաջավորասիական ու միջին ասիական նշանավոր քաղաքների (Ռեյ, Սուլթանաբադ, Հալեպ, Փենջիքենդ, Աֆրասիաբ) հետ:

Լոռե հնավայրի պարիսպների մեծ մասը, տեղում պահպանված միջնադարյան կոմունալ-կենցաղային ու հասարակական կառույցներն ավերվեցին XIX-XX դարերի 30-40-ական թվականներին, երբ տեղի բնակչությունը, նեղվելով խմելու ջրի նվազելուց ու ընդարձակվելու համապատասխան տարածքների բացակայությունից, ստիպված հեռացավ բուն հնավայրից ու հիմնեց «Լոռի բերդ» անունով նոր բնակավայր, նոր գյուղ:

**ИГИТ ГАРИБЯН**

## **ГОРОД-КРЕПОСТЬ ЛОРЭ И ЕГО РАСКОПКИ**

**РЕЗЮМЕ**

Изучение письменных сведений и сохранившихся архитектурных сооружений на месте экономического и политического центра одного из малых царств средневековой Армении – города-крепости Лорэ, бывшего в составе Кюрикийского феодального царства династии Багратидов, а также всестороннее исследование выявленных в результате последних археологических раскопок новых памятников архитектурного и коммунально-бытового характера и остатков материальной культуры, позволяет сделать следующие выводы.

Археологический материал свидетельствует, что территория города – крепости Лорэ была заселена еще в эпоху поздней бронзы (XV-XIII вв. до н.э.). Далее, жизнь была прервана вплоть до X в. н.э., восстановилась в начале XI в. и непрерывно продолжалась до XVIII в. Все это подтверждается также данными армянских и иноязычных источников.

Согласно рукописным и коммеморативным источникам, Ташир-Дзорагетское или Кюрикийское феодальное княжество было провозглашено “царством” в 979г. по инициативе Гургена, в царствование и с ведома его брата, царя царей Смбата II Багратуни.

Имя Гурген в фонетической передаче местного диалекта звучит как Корице-Кюрике. К этому же времени и восходит название “царства” Кюрикян.

Необходимость в строительстве крепости Лорэ возникла тогда, когда правитель Дзорагета Давид Анохин (Безземельный) (989-1048), столкнулся с царем Ани Гагиком Вторым и, не имея надежных фортификаций, в 1001г. потерпел поражение. Давид Анохин в 1010-1020 гг. основал свою будущую столицу в местности, не уступающей по



своей защищенности резиденции Багратидов городу Ани. Примечательно, что многие исследователи называют Лорэ “Малым Ани”.

Сын и наследник Давида - Кюрике II (1048-1089) вскоре лишился центра своих владений в крепости Шамшулде и перебрался в Лорэ. В 50-х гг. XI в. Лорэ был провозглашен столицей Ташир-Дзорагетского или Кюрикийского царства. Правители нового царства ничего не жалели для укрепления, застройки и парадного блеска своей столицы. Вскоре крепость Лоре превратилась в город-крепость с 12-15-и тысячным населением.
